

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՂԱԻՔ ԱՌԻՅԱԿՈՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԱԿՈՒՄՆ ԱՐԿԵԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ՀՈՒՄԱՆԻՏԱՑՔԵԼԱԶԱՆԵՆԻ ԳՐԹԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐԹԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ԱՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:  
ՑԱՆՎԱԿՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

كتاب  
العلماء

---

عبدالله بن محمد



ԱՆՐԻ.  
ԿԵՆՆՈՅ

---

*Երանյան*

ԿԵՊ

«ԽՈՐՀՐԳՍԹԻՆ ԳՐՈՂ»

ԵՐԵՎԱՆ 1989

ԳՄԴ 84.4Ծ-4

Վ 466

Ֆրանսերենից թարգմանեց  
ՍՈՖԻ ԱՎԱԳՅԱՆԸ

Վեռնոյ, Ա.

Վ 466 Մայրիկ: Վեպ/Անրի Վեռնոյ: [Ֆր. թարգմ. Ս. Ավագ-  
յանը].— Եր.: Խորհրդ. գրող, 1989.— 240 էջ.

Ֆրանսահայ հանրահայտ կինոռեժիսորի ինքնակենսագրական  
այս գիրքը հուզիչ պատում է ճակատագրի բերումով Ֆրանսիայում  
ապաստանած հայ ընտանիքի մասին:

Անծանոթ աշխարհի անտարբերության և սառնության օղակում  
մի բուռ մարդիկ ապավինում են իրենց անսահման աշխատասիրու-  
թյանը և բարությունը, դրանով իսկ նվաճում վերապրելու իրենց  
իրավունքը:

Վ  $\frac{4708010100 (70)}{705 (01) 89}$  148—89

ԳՄԴ 84.4Ծ-4

ISBN 5—550—00881—7

© «Խորհրդային գրող» հրատարակչու-  
թյուն, թարգմանված է հայերեն, 1989

Henri Verneuil, Mayrig Éditions Robert Laffont, Paris, 1985.

Traduit en arménienne par Sophie Avakian.

1.

Մայրիկը մեռնում էր: Այնպես, ինչպես ապրել էր, զուսպ, առանց որևէ մեկին նեղություն տալու: Ես նայում եմ նրան. սպիտակ սավաննե-  
րի մեջ պռակած, հեզիկ, մաքուր, խաղաղ, մեն-մենակ մահ-  
վան դեմ, քանի որ հիմա գիտեմ, որ մարդը մեռնում է մե-  
նակ: Չգիտեմ ինչու, այս անսահման վշտի պահին, երբ ար-  
ցունքները խեղդում են, բավական է մի աննշան շարժում,  
որ թափվեն այտերիս, ես հիշեցի այն մեծ ողբերգություն-  
ների մասին, որոնց հերոսներն արտասանում են վերջնա-  
կան խոսքեր և սպասում են խոսքի վերջակետին, որպեսզի  
ընդմիջտ փակեն աչքերը: Դա խաբեություն է, որ այսօր  
վրդովում է ինձ: Մարմնի մեծ մեքենան խափանվում է:  
Զարկերակների, երակների, անոթների ցանցը հրաժարվում  
է արյունը տանել դեպի սիրտն ու ուղեղը, և դեռ ուզում ենք,  
որ հոգեվարքի վիճակում մարդիկ արտահայտվեն Ռասինի  
կամ Շեքսպիրի նման: Ոչ, մայրս այլևս չէր խոսելու:

Նրա խեղճ, նիհարած մարմինը, որ ցնցվում էր ընդհատ  
ու խզվող շնչառությունից, հուսահատ կերպով աշխատում  
էր մի քիչ թթվածին ընդունել և էլի մի քանի բոպե մնալ ինձ  
հետ:

Զնայած կորցրած տասը կիլոյին, նա դարձյալ ընտանե-  
կան սիրո իմ մեծ «լեդին» էր, իր նուրբ, աղջկական մաշ-  
կով, որի վրա ոչ մի կնճիռ չկար:

Երբ նրան հաճոյախոսություն էին անում ժամանակի  
նշանների այդ բացակայության համար, նա որոշ սեթևե-  
թանքով պատասխանում էր. «Գիտեք, ես երբեք դեմքս չեմ

խնամել, նույնիսկ շարք չեմ գործածել: Երբեք: Հենց այդ քիմիական նյութերն են ավերում մաշկը»:

Հաճախ եմ լսել, որ ծանր հիվանդի մասին ասել են. «Ախ, եթե տեսնեք, ուղղակի անճանաչելի է դարձել»:

Ես մտածել եմ, թե տխուր բան է, որ մարդը, փոխելով մարմնի ուրվագծերն ու ծավալը, դատապարտվում է անճանաչույթյան վիճին:

Պիտի որ այդ «անճանաչելին» քիչ բան թողած լինի մեր հիշողության մեջ, երբ մեր կողքին է եղել, երբ ասել, խոսել, ծիծաղել է մեզ հետ, քանի որ ամեն ինչ կորել է նրա մարմնից պակասած մի քանի կիլոյի հետ:

Մահվան ուրվականը անգոր է նրանց դեմ, ովքեր օժտված են գերագույն շնորհով. պահպանելու ներքին, փոքրիկ լույսը, քանի դեռ կան աչքերը, հայացքը, ժպիտը:

Սիրո, անձնվիրության, քնքշության համարյա մեկդարյա բարձունքում, մինչ կփակվի կյանքի մեծ փակագիծը, այստեղ իմ դիմաց ծեր Մայրիկս է. անփոփոխ, անխաթար: Պարզապես ծավալն է փոքրացել, ուրիշ ոչինչ: Կրկնակի վարագույրներով կիսափակ պատուհանի մոտ տիկին Սպակսը՝ դիպումավոր հիվանդապահը, կարդում է արկածային հաստափոր մի վեպ: Ժամանակ առ ժամանակ նա թողնում է իր հերոսներին, գալիս, Մայրիկիս ճակատին դնում իննսուն տոկոսանոց օդեկոլոնով թրջված անօգուտ մի սրբիչ, ուղղում վերմակը, որ տեղից ամենևին չի շարժվել, այնուհետև շարունակում է իր վեպը, սպասելով գիշերային հիվանդապահին: Նրա առերևույթ ուշադրության տակ թաքնված է մի սիրտ, որ կարծրացել է մշտապես հիվանդ խնամելուց:

Այսօր, թերևս, մի քիչ ավելի եռանդ է ցուցադրում, որովհետև ներկա եմ ես՝ մեռնողի որդին՝ սննդի և սոցիալական ապահովության ծախսերի ամենօրյա չեկերը ստորագրողը: Նա փորձեց խոսակցություն բացել այսպիսի նախադասությամբ. «Կյանք է, սիրելի պարոն, արդեն ութսունյոթ տարեկան է լինում»:

Որևէ ցանկություն չունեմ բացատրելու, թե ինձ չի մի իթարում Մայրիկիս տարիքի հանգամանքը, նա շուտով հեռանալու է ինձնից: Հարազատներին նվիրված տաքուկ ու հավատարիմ սիրո ութսունյոթ տարիները պետք է վերջա-



նային մի քանի վայրկյանում, ահա թե ինչն էր կարևորը: Հիվանդապահը հասկացավ, որ հարկ չկա ինձ խոսեցնելու: Ա՛հենեհին: Դուան զանգը երկու անգամ ղողանջեց: Նա գնաց րացելու: Մեր բժիշկն էր:

Մայրիկիս համար չի եկել: Ոչ, ինձ համար, ողջ-առողջիս համար է կատարում բարեկամական այցը: Նա ձեռքս սեղմում է սովորականից ավելի ուժեղ: Այնուհետև ականատես եմ լինում նրա վարժ, մեքենայական շարժումներին, որոնք արդեն անգիր գիտեմ: Արյան ճնշումը, դեռևս տրոփող զարկերակը, սիրտը, սիրտը, որ այնքան աշխատել է և չի ուզում թողնել կյանքը... Եվս մի քանի րոպե, մի ժամ, թերևս, մի երեկո, ո՛վ գիտե:

Առանձնապես խոսելիք չունենք այս բարի բժիշկ Արմանի՝ «հիվանդանոցային նախկին պրակտիկանտի, նախկին գլխավոր բժշկի, դատական բժշկի, հրավերով այցելող ներքին հիվանդությունների մասնագետի» հետ:

Մայրս չի տառապում այսպես կոչված «երկարատև ու ծանր հիվանդությամբ»: Ոչ, նա հանդարտ հանգչում է «հատնումից» անմնացորդ այրվող մոմի նման:

Որովհետև անվայել կլինեն, եթե բժիշկը հեռանար առանց բժշկական ձեռագրով դեղատոմս գրելու, նա հանձնարարում է չգիտեմ հակաինչական քսուք:

Նրան ուղեկցում եմ մինչև դուռը: Հրաժեշտից առաջ մի պահ վարանում է, ապա խորհուրդ է տալիս Մայրիկին փոխադրել մի լավ, շքեղ հիվանդանոց, որտեղից ավելի հարմար կլինենր...

Ճիշտ այդ պահին, հազարամյակներ առաջ ջրասույզ եղած կարծեցյալ Իս քաղաքի եկեղեցիների զանգերի նման, որոնք իբր խաղաղ եղանակներին դեռ հնչում են ծովի խորքից, գլխիս մեջ ղողանջեցին մեր եկեղեցիների զանգերը՝ ինձ հիշեցնելով մեր արմատները, մեր ծագումը, մեր ավանդությունները: Ես հայ եմ, մեզ մոտ մայրերը մեռնում են տանը:

Ոչ, իմ մայրը չի մատնվի ապրողների այն փոքրագությանը, որ պարտադրում է վերջին ճամփորդություն դեպի հրաշագործ հիվանդանոց, որտեղից, քաջ գիտենք, այլևս չի

վերադառնալու: Չի լինի սուր և միալար շշակով ավտոմեքե-  
նան, որ քաղաքով մեկ ծղրտալով շտապում է այլևս ան-  
օգուտ օգնության:

Հիվանդապահը ուսերին է գցում վերարկուն և դեղատոմ-  
սը ձեռքին դուրս է գալիս:

— Անմիջապես կվերադառնամ, պարոն:

Գուռը փակելուց հետո հետ եմ գալիս մորս մոտ՝ վեր-  
գտնելու մեր մտերմությունը:

Չնայած անսահման թուլությանը, նա ձեռքը դանդաղ հա-  
նում է վերմակի տակից: Գուցե այլևս չի էլ տեսնում ինձ,  
սակայն ուռած երակներով ձեռքը խարխափում է սավանների  
վրա, մինչև հանդիպում է իմին: Տենդորեն ծվարելով սիրո  
այդ հեղեղի մեջ, սեղմում եմ նրա բարակ մատները, որ հա-  
վատացնեմ, թե այստեղ եմ:

Դրսում վառվում են քաղաքի լույսերը: Բայց արդեն գի-  
տեմ, որ այլևս ոչ ոք ինձ չի զգուշացնելու գիշերային զո-  
վից, ոչ ոք այլևս ինձ չի մեկնելու այն շնչին բողբոջ հագուս-  
տեղենը, որ այնքան բարկացնում էր ինձ... Եվ ահա խղճի  
խայթ եմ զգում նրա շափազանց անհանգստության դեմ իմ  
բարկության համար:

Մեծ վշտերի ժամանակ երբեմն մի քիչ դերասանություն  
ենք անում: Ինչ-որ բառեր ենք ասում ինքներս մեզ, բառերը  
դառնում են բովանդակություն, և մենք ականատես ենք լի-  
նում մեր ներքին, փոքրիկ թատրոնին, հետո դժբախտու-  
թյունը օգնության է գալիս, արցունքները հոսում են, պար-  
փակվում ենք այդ վշտի մեջ, մեծացնում և տարվում նրա-  
նով:

Այս երեկո իմ վիշտը խղճի խայթի ժանրին է պատկա-  
նում: Ես փակել եմ իմ թատրոնը, մահվան... կամ համարյա  
մահվան պատճառով: Արցունքների ժամանակը կգա հետո:

Ժամանակի հոսքի մեջ պարզ տեսնում եմ, որ բոլոր այս  
տարիներին, երբ մենք այդքան սիրել ենք իրար, երբեք չենք  
ասել, թե սիրում ենք:

Ընդհանուր խոհեմովյամբ վախենում էինք հատուկ ընդ-  
գծել բացահայտ, շարունակական, անառարկելի ճշմարտու-  
թյունը, բառերի միջամտությունը ավելորդ էր թվում:

Իրար սիրում էինք ի ծնե:

Մնացյալը դառնում էր ավելորդ ենթավերնագիր:

Սիրո այս դարբնոցում ես սովորեցի իմը համարել այն անձկությունը, որ ունենում էր մյուսը: Ես սովորեցի ցավ զգալ (ֆիզիկական ցավ), ինչ նույն պահին զգում էր մյուսը:

Մեր ընտանիքում հինգ հոգի էինք, և ուսյալ բժիշկները երբեք չիմացան, թե մեզ խնամում են շատ էժան գնով, որովհետև բուժելով մեզնից որևէ մեկին, միանգամից բուժում էին հինգ մարդու, ընդամենը ստանալով մի հոգու վճար:

Աստված իմ, որքան ծանր եմ ապրելու Մայրիկիս բացակայությունը: Գրելով նրա անունը, ես շափում եմ ֆրանսերեն «T» տառի անզորությունը՝ հաղորդելու հայկական շատ հարուստ հնչունաբանության քաղցրությունը: Լեզուները իրենց գեղեցկությունը պահպանում են միմիայն շթարգմանված վիճակում:

Այս երեկո իմ տխրության խորքից բառերը կբխեն ինքնաբերաբար, ինչպես երբ սրտի լեզվով հետ ես մղում նորածե սեթևեթանքները: Ավելի ուշ, երբ արցունքների միջնարարների ընթացքում հարկ կլինի տեղ գրավել մեծ կատակերգության մեջ, ժամանակ շատ կունենանք վերգտնելու սեփական շարությունները, խորամանկությունները, խարդավանքները, մեքենայությունները, ճկունությունը, «խելոք երևալու» աղվեսությունը:

Այգը բացվում էր, բայց կյանք հնձող ցերեկը ինձ համար դարձյալ մնում էր գիշեր:

Այսքան արագասահ ժամերը պահելու համար ես շուռ տվեցի կյանքի ավազե ժամացույցը, որպեսզի հետ-հետ քայլելով միանամ իմ սիրառատ մանկությանը:

Մանկություն՝ մեծանալու անհագ ցանկությամբ, պատանություն՝ աճող ձգտումներով, որոնք կեղեքում են քեզ ու մի երեկո առաջնորդում սիրելիներիդ հոգեվարքին, որոնց ծերանալը չես նկատել, մինչդեռ նրանց ամեն մի սպիտակած մազը կանխագուշակում է մի դարունքի գերեզման:

Երբ անունդ Պրուստ չի, սևեռուն հիշողությունդ մանկության առաջին հուշերիդ մեջ արձանագրում է լոկ մեծ ցընցումները, որոնք ապրել ես մեծերի աշխարհում:

Ղա կարող է լինել ուժեղ վախ, խիստ պատիժ՝ ինչ-ինչ հիմարության համար, սքանչացում որևէ հայտնության առջև, սոսկում կոպիտ արարքից կամ առաջին վիրավորանքից ծնված ցավ:

«Որքան խորանում եմ հուշերիս մեջ...», դասական այս արտահայտությունը, դեպի պատանություն «Մեղամբ», համետ մարդկանց առջև բացում է վառ գույներ:

Միագույն նկարի նման գունատ հիշողությունները հաճախ հորինվում են շատ ավելի հետո, որպեսզի մանկանն օժտեն սուր դիտողականությամբ, որն արդեն ազդարարում է ասլագայի մեծ մարդուն:

Միայն հանճարին է վիճակված ունենալու վերանայված ու սրբագրված մանկություն: Այդ դեպքում արվեստի և իրականության խաբեությունը՝ գերագույն ալքիմիայի շնորհիվ միաձուլվելով, մեզ առաջնորդում է դեպի դարը լուսավորող մի ստեղծագործություն:

«Որքան խորանում եմ հուշերիս մեջ...», առաջին պատկերը, որ դրոշմել է իմ միանգամայն սովորական, մանկական հիշողությունը, դա ամենհի փոթորիկն է:

Մենք՝ մայրս, հայրս և իմ երկու մորաքույրը, բեռնանավի վրա ենք: Այդ փոթորիկից առաջ ոչինչ չեմ հիշում: Ալիքների շաշյունը նավակողերին, հուլավակների ճոխնչը, նավի ամբողջ իրանի շարագուշակ ճոճոցը ինձ նախանշաններ էին թվում, թե ուր որ է նավը ճեղքվելու է երկու մասի, մեզ գցելով ալիքների երախը:

Իմ երկու մորաքույրը՝ Աննան ու Գայանեն, իրար կպած նստել էին անցուղու հատակին, ինձ պառկեցրել իրենց ծընկներին: Երբեմն-երբեմն գալիս էր հայրս, ինձ հանգստացնելու համար ձեռքը դնում ճակատիս, ապա նեղ անցուղու երկարությամբ պառկած մարմինների վրայից լոք տալով գրնում իր խուցը: Այնտեղ՝ մահճակալի եզրին, պառկած էր

սִֿրթնած մայրս, նա տանջվում էր մի ցավով, որ կոչվում է ծովային հիվանդութունն:

Ես մի մորաքրոջս թևերից անցնում էի մյուսի թևերին, բրպեսզի այտիս տեղը փոխվեր, և կես-քնած, կես-արթուն հանկարծ բացում էի աչքերս, մինչև որ, ծովի ալեկոծությունից թմրած, վերջապես քնեցի:

Երբ մարդ վարժվում է աղմուկին, լինում են լուսթյուններ, որ արթնացնում են նրան: Երբ աչքերս բացեցի, նավն այլևս չէր շարժվում: Մեքենաների աղմուկը դադարել էր: Անցուզին ազատվել էր գիշերվա մարմիններից: Բաց լուսանցույցից երևում էր շքեղ ծիածանը՝ գույնզգույն գոտին պարզած փոթորկից հետո խաղաղված երկնքին: Ուժքեր դեռ կարող էին մնալ ոտքի վրա, մուսյլ կանգնել էին կամրջակին:

Մեր շուրջը փռվել էր հանդարտված ծովի ազդեցիկ լուսթյունը: Եկան երկու նավաստի՝ ձեռքներին մի տախտակ: Տախտակը հորիզոնական դիրքով դրեցին նավակողին, մի եզրը դեպի ծով, մյուսը՝ դեպի կամրջակ:

Հանկարծ բոլոր դեմքերը դարձան դիմացի խցիկի բացվող դռանը: Չորս մարդ բերեցին մարդկային մարմնի ձև ունեցող սպիտակ մի փաթեթ, դրեցին տախտակի վրա: Նավապետը (թեզանիքին ոսկե տրեզներ), երկու սպայի ուղեկցությամբ (որոնց տրեզները քիչ էին), իջավ կամրջակից: Մի զառամյալ հայ քահանա, երկար, սպիտակ մորուքով, սև, լայն սքեմով, խաչը ձեռքին՝ աղոթք կարդաց: Դա այն ժամանակներն էին, երբ Աստծո սպասավորները գերագույն պաշտոնյաների նման չէին հագնվում և հպարտ էին իրենց կոչումի տարբերությամբ: Մինչ սպասանրի սուքերից ծանրություն էին կապում, ներկաներից ոմանք սկսեցին երգել շատ զեղեցիկ ու տխուր ինչ-որ երգ: Մի մարդ լաց էր լինում:


Այնուհետև նավի շշակը երեք անգամ կատաղի ոռնաց, ամեն անգամ գոլորշի ժայթքելով երկինքն ի վեր: Նավաստիները տախտակը թեքեցին ծովի կողմը: Մորաքույրս իր լայն շալով ծածկեց դեմքս, և շալի սևության տակ ես լսեցի անկումի շոր ճողփյուն:

Ահա այսպես են «թաղում» մեռելներին երկարատև ծովազնացության ժամանակ:

Ես չգիտեմ, թե քանի օրուգիշեր տեեց տարագրության այս ճամփան:

Առավոտյան հայրս ինձ արթնացրեց շատ վաղ: Չնայած հոգնությունից այտերը փոս էին ընկել, և օրեր շարունակ չէր սափրվել, այնուամենայնիվ դեմքը շողում էր:

— Ե՛կ, նայի՛ր, ՄԱՆՉՍ:



«ՄԱՆՉՍ»:

Այս բարբարոս, շորս բաղաձայն և ընդամենը մեկ ձայնավոր ունեցող բառի մասին ուզում եմ որոշ բացատրություն տալ... Այս բառը շունի «mon fils»<sup>1</sup>-ի վերամբարձությունը, ոչ էլ «fils à moi»<sup>2</sup>-ի քերականական սխալը: Սա ոչ «fiston»<sup>3</sup> է, ոչ էլ՝ «mon garçon»<sup>4</sup>, որ վերապահվում է սոցիալական որոշ շերտի մարդկանց համար, ոչ էլ «mon trésor»<sup>5</sup>-ն է, կամ «mon petit»<sup>6</sup>-ը, որոնք անհետանում են երեխայի մեծանալու հետ:

Սա հոր ու մոր էության խորքից եկող բառ է և ընդմիշտ, մինչև մահ ու գերեզման նրանց կապում է այդ տղային՝ իրենց իսկ մասնիկին: Տգեղ թե անարժան, փայլուն թե անշնորհք, ուրիշներին դուր գա, թե ոչ, միևնույն է, կմնա այդ տղան, որին պարտական են ամեն ինչ, փոխարենը չսպասելով ոչինչ:

Այս «մանչս» բառը կյանքի գրավական է: Զերծ է գոռոզությունից, սնապարծությունից, շափազանցված զղացմունքայնությունից, արական սեռի գերազանցությունից իգականի վրա, որովհետև այս արականը լրիվ հավասարազոր է «աղջիկս» բառին:

---

<sup>1</sup> mon fils — որդյակ իմ

<sup>2</sup> fils à moi — իմին տղա

<sup>3</sup> fiston — տղա

<sup>4</sup> mon garçon — տղաս

<sup>5</sup> mon trésor — գանձս

<sup>6</sup> mon petit — փոքրիկս

Արևմուտքում, որտեղ գտնում են ամենաքաղցր, ամենաքնքուշ բառեր իրենց նորածինների համար և ամենափաղաքուշ անուններ երեխաների համար, սկսած նրանց սլատանության շրջանից, երբ հայտնվում են անկախության առաջին նշանները, երեխան դառնում է անուն, նրան դիմում են այնպես, ինչպես կդիմեն մտերիմ բարեկամի:

— Ռընե, շմոռանաս փակել դուռը:

— Փյուլիեթ, շատ շուշանաս:

Եվ փոքր-ինչ վերանում է ծագման կապը:

Հայերի համար, երբ գալիս է սլատանության ու հասունության ինքնամփոփ շրջանը, այս «մանչսը» շարունակում է մնալ իբրև բացարձակ սեր, լցնելով լուսթյունը և մտերմացնելով:

Քանի՛-քանի՛ հիմարություններից է խույս տալիս այդ երեխան, որ ընկերներից ոչնչով ավելի չի, միայն թե շհանդիպի հոր տխուր հայացքին, միայն թե չլսի.

— Մանչս, ինչո՞ւ արեցիր:



...Այսպես, ուրեմն, հայրիկիս հետևից ղնացի նավի կամ ըրրչակով: Առավոտ էր: Ծագող արեգակի լույսից սպիտակում էր հորիզոնը: Ծնվող օրվա մեջ դժագրվում էր ծովափը:

— Նայի՛ր, մանչս, Ֆրանսիան:

Երկար, շատ երկար մնացինք նավի բազրիքին կպած, աչքներս սևեռած անընդհատ մոտեցող ափերին: Հայրս, այդ հեռավոր արևելքցին, պատմում էր իր առասպելական Ֆրանսիայի մասին: Խոսում էր մի ժամանակի մասին, որ կասեցրել է իր թոռիքը, Ռոզ (Վարդ) անունով մի փոքրիկ աղջկա մասին, որ ապրել է այնքան, որքան վարդերն են ապրում, ընդամենը մի առավոտ, պատմում էր նաև բազում նավաստիների ու նավապետների մասին, որոնք ուրախ սրտով մեկնել էին հեռավոր ափեր և տեսել հազար ու մի փորձանք:

Սա պարզասիրտ Ֆրանսիան էր, ծածկված քմծիծաղի քողով, քանի դեռ ամեն ինչ գեղեցիկ էր:

Հայերեն թարգմանված այդ կիսատ-պռատ ոտանավորները ինձ նման երեխայի համար ոչ մի իմաստ չունեին,

բայց ականջիս հնչում էին իբրև բռների ներդաշնակ միասնություն և իրենց ութմերի շնորհիվ երևան էին հանում բավական հաճելի երաժշտություն:

Ահա այսպես մենք խարխալ գցեցինք Ֆրանսիա երկրում:

Եվ շո՛տեինք, որ հենց այդ օրը սլարոն Գաստոն Դումերզը ընտրվել էր հանրապետության նախագահ, որ լենին անունով մի մարդ էր մահացել Գորկիում, որ դուլարը արժեք տասնհինգ ֆրանկ, որ ոմն Մորիս Շվալիե երգ էր երգում փառքիկ տուտիկներով վալանթինի մասին, և որ Ֆրանսիայի կինոէկրաններին Ս. Մ. էյզենշտեյնը ցուցադրում էր իր «Պոտյոմկին զրահանավը»:

### 3.

Այդ Ֆրանսիան տվյալ պահին կոչվում էր Մարսել: Այսօր էլ տեսնում եմ մեզ՝ ափին կանգնած հինգ փխրուն կերպարանքներ, որոնք իբրև ուղեբեռ ունենին մի վիթխարի կապոց՝ անարժեք ինչ-որ գորգով փաթաթված և ամեն կողմից խաչկապ արված:

Մայրս հենց ոտք դրեց ամուր գետնին, անմիջապես վերագտավ այտերի վարդագույնը: Հայրս իրարանցման մեջ էր: Վարձու սենյակ գտնելու հույսով մեկ հունարեն ու թուրքերեն, մեկ հայերեն հարցուփորձ էր անում նավահանգստում աշխատող մարդկանց: Մորաքույր Աննան մրմնջաց.

— Փա՛ռք քեզ, Աստվա՛ծ:

Նա գոհություն էր հայտնում Աստծուն:

Մորաքույր Գայանեն ինձ տվեց քնջովի պաքսիմատներ, մեր ճամփի պաշարի վերջին մնացորդները:

Մենք երջանիկ էինք:

Ես՝ մանկական պատրանքներով:

Ծնողներս, որ վերջապես ոտք էին դրել այս երկրի հողին, որտեղ «գնողունակությունը» փոխարինում էր մեր լքած բարբարոս երկրի «ապրելու ունակությունը»:

Ֆրանսիան ես պատկերացրել էի իբրև ամբողջովին սպիտակ քաղաք:



Մեզ տարան ամբողջովին գորշ մի գրասենյակ, ոստիկանական ինչ-ինչ ձևակերպումների համար: Խոժոռադեմ մի մարդ երկար քննեց մեր նանսենյան անձնագրերը (այն նորվեգացու անունով, որ Գրենլանդիան ու Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը կտրելուց հետո նվիրվել էր ապաստան որոնողների խնդիրներին):

Ես այն ժամանակ աշխարհին էի նայում հնգամյա տղայի ցածրակետից: Մեծահասակը աչքիս ավելի մեծ էր թվում, քան կար: Եվ, անշուշտ, ավելի ազդեցիկ, քանի որ պետք է անընդհատ, ենթակայի կեցվածքով, աչքերս վեր բարձրացնեի նրա սանտիմետրանոց և ժամանակավոր հեղինակության դիմաց: Թերևս այդ էր պատճառը, որ գրասենյանի առջև նստած մարդը ինձ շատ կարևոր անձնավորություն թվաց: Նրա ձեռքին մի մեծ կնիք կար: Նա կնիքը պահել էր օդում, անձնագրերի վրա, և ստուգում էր մեր նմանությունը ինքնություն վկայականների լուսանկարների հետ:

Այդ կնիքից, որ պիտի իջներ մեր թղթերին, կախված էր «մեր մնալու հնարավորությունը»:

Եվ կնիքը իջավ:

Աչքերս հետևեցին վայրէջքին, մինչև որ կնիքը հասավ անձնագրին: Ոչ մի բան: Թղթին ոչինչ չտպվեց: Մարդը բարկացավ: Եվս մեկ անգամ, երկու անգամ, երեք անգամ խփեց կնիքը: Զարկերը, ավելի ու ավելի ուժեղանալով, արձագանք էին տալիս գլխիս մեջ, ամեն անգամ ստիպելով, որ թարթեմ աչքերս: Կնիքի ներկատուփը ցամաք էր:

Դարակի խառնաշփոթի միջից մարդը գոավ մի նոր տուփ: Այս անգամ անձնագրի վրա հայտնվեց մահագրություն. դա քառանկյունու մեջ ամփոփված մի բառ էր:


Այդ բառը ես կարողացա կարդալ միայն շատ հետո:  
**ԱՆՉԱՅՐԵՆԻՔ:**

Դրսում, կապուտակ երկնքի Ֆոնին նկատվում էին վերամբարձ կոռնկների ուրվագծերը: Երկար, որքան աչքդ կտրում էր, ձգվել էին սև պատերով նավանորոգանոցները: Այդ պատերից այն կողմ եռում էր քաղաքը՝ տրամվայներով, խայտաբղետ ամբոխի ժխորով, շրջիկ վաճառականներով, ձիաշկառքերով... Այս ամենը առայժմ դեռ մի քիչ Արևելք էր:

Մայրս կանգ առավ երկու շենքերի միջև գտնվող մի ծա-

ծուկ անկյունում: Նրա հագի պարզ զգեստը առջևում կոճկըվում էր նույն կտորից կարված ութ կոճակներով: Նա արագ շուրջը նայեց, արագ պոկեց ամենացածի կոճակը և մեկնեց հորս: Իր պատյանից ազատվելով՝ կոճակը փոխվեց ոսկեդրամի:

Մայրիկիս զգեստի ութ կոճակները մեր «վերապրելու ունակության» գինն էին:



Մարդու մատները վերցրին հորս գեղեցիկ ոսկեդրամը և նոր կնքված անձնագրերը մեկնեցին հորս:

Կառչելով գրասեղանի եզրից, որ սրահը բաժանում էր երկու մասի, ասես թույլ շտալով անջրպետն անցնել, ես թաթերիս ծայրին բարձրացած նայում էի սեղանի ողորկ մակերեսին, որտեղից անհետացել էր դրամը:

Այս անջրպետից այն կողմ, որ ծածկում էր տեսադաշտը, սեղանին դրված գրամեքենաների աղմուկի միջով, ես գուշակում էի մի ուրիշ աշխարհի գոյությունը:

Նորից հայտնվեցին մարդու ձեռքերը՝ մի քանի կույտ կեղտոտ, ծայրերը ոլորված, գնդասեղներով ամրացված թըղթերով:

Ես հարցասեր երեխա չեմ եղել, թե՛ «Ասա, հայրիկ, ինչո՞ւ է սա այսպես», կամ՝ «Ասա, մայրիկ, այս ի՞նչ է»:

Որ լսեմ պատասխան.

«Այս գոռոշներով հայրիկը պիտի համ-համ առնի իր տղայի համար, համեղ-համեղ անուշեղեն առնի»:

Առանց տկարամիտների բնորոշ այս բնաձայնությունների ես առանձնապես մեծ բան չէի կորցնում միջազգային գրամական համակարգը ըմբռնելու հարցում:

Ես ամեն ինչին նայում էի հափշտակությամբ, ազահությամբ, ապա հորինում էի սեփական պատասխաններ կյանքի երևույթների մասին: Ամենից ավելի խելահեղ կերպով աշխատում էի լուծել ցերեկվա ու գիշերվա առեղծվածը, լուսաբանում էի արեգակի ու լուսնի գաղտնիքները և աշխարհը տեսնում էի յուրովի, հարթ ու անշարժ: Ամեն ինչ իր ժամանակն ուներ, և պարոն Գալիլեյը պատրաստ սպասում էր

հարմար պահի, որ ինձնից խլեր մանկական երազներս և ինձ տաներ ճշմարտության ուղիներով:

Տվյալ պահին անհետացող ոսկեդրամի կապակցությամբ ես լուռ, բայց միանգամայն հստակ եզրակացրի, որ հայրս շատ վատ գործ բռնեց:

\* \* \*

Ճանապարհդ գտնելու համար պարտադիր չէ իմանալ երկրի լեզուն, երբ ձեռքիդ թղթի կտորի վրա հասցե կա: Սիրալիր տեղացին, եթե իհարկե կանգ առնի, կկարդա, գլուխը շուռ կտա բոլոր ուղղութիւններով, դիրքը կճշտի ըստ նշված հասցեի, կթորի ծնոտը, մտմտալով առավել հարմար խորհուրդը տալ, ապա գործի կդնի ձեռքերը: Եվ այլևս ձայնը հարկավոր չի:

Մեր պարագայում ձեռքի շարժումը ասում էր. «ուղիղ-ուղիղ»: Ձեռքի ափը ցույց էր տալիս ուղղութիւնը, իսկ դաստակի ոլորապտույտ շարժումը նշանակում էր, թե դեռ շատ հեռու է մեր որոնած տեղը: Իսկ երբ դաստակը և բազուկը հանկարծ ուղիղ անկյուն կազմեցին, ես հասկացա, որ արդեն վերջացել է «շատ հեռուն» և հարկավոր է ձախ թեքվել...

Եվ նորից մեր առջև բացվեց ծովը: Հին նավահանգստի նավամատույցը փոքրիկ ծոցի նման զույգ թևերով օղակել էր ծովը, ասես ցանկանալով ավելի բարեկամական, ավելի մեղմ դարձնել այն: Թույլ ծփում էին ալիքները, օրորելով առագաստանավերը, ասես հիշեցնելով, որ սա ոչ թե «փոստային բացիկ» է, այլ կենդանի, շնչող գեղեցկութիւն:

Փոքրիկ թիանավերի ու մոտորանավակների շարանը երթևեկում էր երկու նավամատույցների միջև, խուսափելով միանալ միմյանց, որպեսզի պարոն Պանյուի Մարիուսին հնարավորութիւն տար երազելու առասպելական նավերի մասին, որոնք այս լայն բացվածքից դուրս էին գալիս դեպի հեռավոր երկրներ: «Այս նավերը հեռուներն են լողում, բայց, ավա՛ղ, երբեմն շատ խորն են իջնում...»:

Դեպի մեծ արկածախնդրութիւն տանող այս բացվածքի վերևում, երկաթից, թիթեղից, գերաններից, հեծաններից,

ձողերից, ճոպաններից ու նիզերից կազմված մի հսկայական շարվածք ծովի վրայով միացնում էր երկու նավամատուցները: Եվ երեսուն մետր բարձրությամբ երկաթի ու պողպատի ամբողջ այս խառնիճաղանջը... ծառայում էր ընդամենը ճապաններից կախված մի հարթակի, որ ծովի վրայով մի ափից գնում էր մյուս ափը:

Տեսարանը փշացնող տգեղությունն այս գլուխգործոցը կոչվում էր շարժական կամուրջ:

Պատերազմի օրերին կանաչ համազգեստավոր մարդիկ կամուրջը քանդեցին: Ռումբի համար երկաթ ու պողպատ էր հարկավոր:

Անցնող տարիների հետ շարժական կամուրջը աստիճանաբար վերականգնվում էր հիշողությանս մեջ: Կամուրջը պատերազմի զոհ էր դարձել: Այնուհետև երկար ժամանակ դարձել էր լուսանկարվելու վայր զբոսաշրջիկների համար. «Համբույրներ Մարսելից»:

Եվ դեպի երկինք կարկառված մետաղաճոպանների սև կմախքը, ի վերջո, պարոն Սյուարեսի շնորհիվ գտավ իր վիրջաբանը. «...երկաթյա ցանցերն է պարզել, որ աստղեր որսա»:

Հայրս, քրտինքի կաթիլները դեմքին, ինձ մեկնեց մեր ոսկեդրամի փոխանակումից հետո կատարած առաջին գնումը՝ վանիլով ու պիստակով համեմված պաղպաղակի զույգ գնդերով եղջրիկը:

— Հապա դո՞ւ: Դու չե՞ս ուզում, հայրիկ:

— Մանչս, նայիր որքան եմ քրտնել: Քրտնած ժամանակ պաղը լավ չի:

Պաղպաղակի եղջրիկը ձեռքիս ես շուռ եկա մայրիկիս կողմը, մորաքույրերիս կողմը... անհարմար էի զգում միայն ինձ վերապահված պաղպաղակային առանձնաշնորհի համար: Նրանց մեկնեցի իմ քաղցրավենին՝ կիսելու մտադրությամբ: Անմիջական գործողությունների ժամանակ լավ դաստիարակությունը կամ ազնվությունը ոչ մի դեր չունի: Այստեղ հրամայողը սիրտն է, միմիայն սիրտը: Մեզ շաղկապում էր սերը: Հարատև սերը, որն ընդունելն այնքան հաճելի է, իսկ կրելը՝ ծանր:

Այսօր էլ աչքիս առջև են նրանք, չորսն էլ՝ Վիյո-Պորտի նավամատուցին կանգնած, պատրաստ հորինելու հազար ու ռի արտառոց պատմութիւն՝ իրենց մերժումն արդարացնելու համար:

— Գիտե՞ս, Ֆրանսիայում ընդունված չի, որ մեծերը ուրիշների ներկայութեամբ լեզուն դուրս գցած պաղպաղակ լիզեն:

Այդ բացատրութեամբ բավարարված, ես սկսեցի պատահաներով համտես անել պաղպաղակը, որ դուրս չգցիմ արգելված լեզուն: Զրի պարունակութիւնը պաղպաղակի մեջ ավելի շատ էր, քան կաթինը, բայց սառն էր ու բուրավետ:

Ինձ թվում էր, թե այն երկրում, որտեղից եկել էինք, ես սրանից ավելի լավ ու ավելի կարագոտ պաղպաղակ էի կերել:

Այդ պահին բազմաթիվ մեծահասակներ էին հեռանում վաճառողի մոտից և լեզուները դուրս գցած չպպոցով պաղպաղակ էին ուտում: Մտքումս թաքուն եզրակացրի, թե սրանք Ֆրանսիայի ֆրանսիացիներ չեն:

Հայրս շալակն առավ ծանր կապոցը: Վերջացել էր մեր դադարը: Մայրս, մորաքույր Աննան, մորաքույր Գայանեն խաշակնքեցին իրենց դեմքը: Նրանք աչքները հառել էին բարձր բլուրի վրա, քարե պատվանդանին կանգնած շատ մեծ, ոսկյա աստվածամորը, որ շողշողում էր արևի տակ: Դա Նոթր դամ-դը-լա-գարդն էր, որ ասես պահպանում էր Մարսելը:

#### 4.

Ինչպես բոլոր փողոցները, մեր հասցեի փողոցը նույնպես սկսվում էր 1 համարով: Նորից բավական քայլեցինք, մինչև հասանք 109 համարին: Երբ հայրս ուսի շարժումով շալակի բեռն իջեցրեց մի դարպասի մոտ, հասկացա, որ տեղ ենք հասել: Մայրիկս ուշադիր կարդաց պատահաններից մեկին փակցված ստվարաթղթի վրայի ձեռագիր հայտարարութիւնը, «Վարձու սենյակ՝ կահավորված: Բոլոր հարմարութիւններով»: Էմալե մի փոքրիկ կապույտ ցուցանակի

վրա սպիտակով գրված էր. «Ձուր, գազ, էլեկտրականութիւն բոլոր հարկերում»: Տան ճակատը գորշ էր, մի քիչ ճաքճքած, վերջին հարկն ուներ երկաթյա պատլիկ պատըզգամբ:

Գայանեն ու Աննան մնացին դրսում, մեր կապոցի մոտ: Ես գնացի հորս ու մորս հետևից: Նրանք ծեծեցին առաջին հարկի դռներից մեկը: Մուտքի մոտ տարածված էր սուր սխտորահոտ: Դուռը կիսատ բացվեց, և անմիջապես կոկորդներս բռնեց սաստկացող դարշահոտութիւնը:

Սկզբում տեսա մի զույգ մաշված հողաթափ՝ քիթը ներբանից անշատված, ապա վերևում, փեղկերի արանքում՝ կանացի կիսադեմ:

Զգիտեմ տանտիրուհին էր, շենքի կառավարչուհին, թե սեփականատիրուհին: Մարտելի տներում բարապան չկա: Լսելով հայրիկիս արտասանած մի քանի աղճատված բառերը, կիներ լայն բաց արեց դուռը, և տիկին Պելեգրենը հայտնրվեց իր ամբողջ գունդուկորութեամբ. հսկա, հաստափոր, ւլսպղուն, ուրախ, շատախոս: Նրա ընդհանուր ուրվագիծը հիշեցնում էր իրար վրա շարված երեք անհամաչափ գունդ: Մինչ կմազլցեինք շոբս հարկ, ես լիուլի ժամանակ ունեցա հաշվելու նրա սև զգեստի բազում յուղաբծերը: Նրա ուռուցիկ, նրբերշիկի շարոցի նման կարճ մատները կառչում էին բս զրիքից, որպեսզի տեղափոխեն ծանր մարմինը:

Ներքևի ցուցանակի խոստումները պահված էին: Իսկապես կար մի սենյակ, քանի որ կար առաստաղ, որտեղից կախված էր էլեկտրալար՝ ծայրին խեցեղեն լուսամփոփ, որի տակից երևում էր լամպը: Կար նաև հատակ՝ ծածկված ութանկյուն, մանր սալիկներով, որոնք երևի ժամանակին կարմիր են և զել (մի քանիսը սլահպանել էին նախնական գույներ): Կային պատեր՝ գունավոր թղթով պաստառված, որոնք տեղ-տեղ պոկված էին. կար մի լուսամուտ, որ բացվում էր երկաթյա փոքրիկ պատշգամբի վրա և, վերջապես, անկյունում կասկածելի մաքրութեամբ կոնք և ծորակ, որոնք մեզ ապահովում էին արդի հարմարավետութեամբ:

Սենյակը նաև կահավորված էր, երկտեղանոց մի մահճակալ, բազմոց, սեղան, երեք խարխուլ աթոռ, պահարան: Ժամանակի հաշիվը կորցրած միջնորմը և մի փոքր երևա-

կայութիւնը համարյա կարող էին հավատացնել, թե սենյակը երկուսն է:

Գազն էլ ճիշտ էր: Սանդուղքի գլխին եղած սենյակը շուայլորեն անվանվում էր «խոհանոց», երկու աշքանի գազօջախի պատճառով, որ պիտի սպասարկեր հարկի երկու վարձակալներին:

Տիկին Պելեգրենն անվերջ խոսում էր: Կյանքում առաջին անգամ «Ֆրանսերեն» էի լսում մոտիկից:

Երբ տիկինը մատնացույց արեց ինձ, կարծեցի, թե լավ բան է ասում անուշիկ, փոքրիկ, գանգրահեր տղայի մասին, որպիսին ես էի: Մայրս պատասխանի հետ շոյեց մազերս: Ենթադրեցի, թե շնորհակալութիւն է հայտնում:

Ավելի ուշ իմացա, որ տիկին Պելեգրենը զզվանք է արտահայտել չար տղաների հասցեին և զգուշացրել է, որ հանկարծ ես չաղմկեմ սանդուղքի վրա, և մայրս հանգստացրել է նրան, նկարագրել խելոք և հանգիստ երեխայի, որպիսին ես էի:

Տանտիրուհու դեպի պատշգամբ տնկված թմբլիկ մատը ինձ ենթադրել տվեց, թե խոսքը ծաղկի թաղարների մասին է, որոնք պիտի զարդարեին մեր տեսարանը: Այնինչ նա պարզապես զգուշացնում էր, թե արգելված է լվացք փռել պատշգամբում:

Իմ առաջին շփումը այս սքանչելի լեզվի հետ երկարատև թյուրիմացութիւնն եղավ:

Մայրս, ասես թե լավ տեսնելը օգնում է լավ հասկանալուն, աշքերը շատ լայն բացած, որ հանկարծ չթարթի, հուսահատ հռուել էր տանտիրուհու հաստաշուրթ բերանին, որտեղից ժայթքում էր սխտորով ու քրքումով համեմված այդ մլթոներենը: Ըստ երևույթին, արևելքում սովորած ֆրանսերեն երեք բռնից հազիվ մեկն էր օգնում մի կերպ ըմբռնելու այդ ճառախոսութեան ընդհանուր իմաստը: Հաղորդակցման դժվարութիւնը ամենեւին չէր մտահոգում այդ գունդուկոր շաշանակին, քանի որ ինքն իր երկրում էր և, ի վերջո, մենք էինք պարտավոր հասկանալու իրեն:

Երբ հայրս իր ոլորված թղթերի խուրձից հանեց մի քանիսը տանտիրուհու համար, ես հասկացա, որ մենք ձեռք էինք բերել ապաստանի իրավունք:

Սանդուղքի վրա խաղարկվեց ևս մի տեսարան՝ մորաբույրերիս սլատճառով: Տիկին Պելեգրենը կարծել էր, թե մենք երեք հոգի էինք, այնինչ հինգն էինք: Բայց նա այլևս ցանկություն չուներ վերագարձնելու արդեն գրպանը մտած փողերը, և լրացուցիչ մի գումարով հարցը լուծվեց:

Մայրիկիս զգեստի վրա դեռ կար յոթ կոճակ, որ պատվարի պես կանգնած էին անորոշ ապագային դեմ-հանդիման:



Ինչպես մեր ճանապարհը գտնելու համար, այնպես էլ մեր առաջին անհրաժեշտ զնումները կատարելիս, բառերի բացը լրացրին ձեռք ու ոտքի շարժումները:

Հայրս շատ արտահայտիչ շարժուձև ուներ, որոնք հնարավորին չափով վերցված էին կյանքից: Տնտեսական ասպարանքների խանութում նա սեղմված բռունցքը գետնին քսելով՝ ապահովեց մի շիշ ժավելի հեղուկ, հատակ լվանալու լաթ և ավել: Մի ձեռքով պատկերելով ծորակ, ապա ձեռքի ափերը իրար շփելով լվացվելու շարժում արեց և վաճառորդի ծիծաղի հետ ստացավ երկու մեծ կտոր մարսելյան օձառ:

Մնջախաղի դերասանի նման նա շարժուձևով բառեր էր քանդակում և մեր մոմլաթե պայուսակը լցվում էր առաջին անհրաժեշտության առարկաներով:

Խնդիրը լրջացավ մսավաճառի խանութում: Հայրս նայում էր վաճառասեղանին ցուցադրված մսերին, բայց ակներևաբար փնտրածը չէր գտնում: Երբ հերթը հասավ մեզ, հայրս աշխատեց բացատրել, թե ինչ է ուզում: Նա մատնացույց արեց միսը, ապա ձեռքերով օդի մեջ գծեց երևակայական մի պատկեր: Բայց այստեղ «մարմներեն» թարգմանված նրա խոսքը չհասկացվեց: Հայրս նաև բառեր ասաց երեք լեզուներով, բայց ոչ ոք թուրքերեն, հունարեն և հայերեն չէր հասկանում:

Հաճախորդները, մսավաճառի աշակերտը, գանձապահը աչք դառած նայում էին տարաշխարհիկ այս մարդուն, որ օդի մեջ շարժելով թևերը, հավանաբար խոսում էր Ֆրանսիայում անհայտ առասպելական ինչ-որ անասունի մասին:



Հանկարծ խոր լռություն տիրեց խանութում: Հուսահատ-  
ված հայրս երեք անգամ ուժգին խփեց աջ ազդրին և ոչ-  
խարի նման մայեց:

— Բե՛ե՛ե՛:

Միանգամից բոլորի շրթունքից դուրս թռավ միևնույն  
բառը: Ոչխարի ազդր է ուզում այս մարդը:

Մնջախաղի տեսարանն ավարտված էր:

Մնջախաղի վարպետն ու որդին բռնեցին տունդարձի  
ճանփան:

Այսօր ես ամաչում եմ այնօրվա իմ ամաչելու համար:



Արևի մուտքը դեպի մեր սենյակ արգելված էր փոշու  
բազմաթիվ շերտերից ու ճանճերի ծերտերից անթափանց  
դարձած ապակիների պատճառով: Անձրևը այդ ամենը շա-  
ղախել դարձրել էր ապակիներին կպած ու չորացած լափ:  
Սենյակի մյուս մասը նույնպես, ինչպես երևում էր, ավելի  
ու խոզանակի երես չէր տեսել:

Անհրաժեշտ եղավ օրվա մեծ մասը հատկացնել հատակը  
լվանալու, ապակիները քերելու, կահույքը փայլեցնելու, պա-  
տից պոկվող պաստառները սոսնձելու գործին: Սեղանին  
հսյտնված ասեղնագործ սփռոցը, մահճակալներին փռված  
մեր ձյունաթույր սավանները, բազմոցի վրա գցված գուլյնը-  
դույն ծածկոցը և նորից թափանցիկ դարձած ապակիներից  
ներխուժող արևը սենյակում ստեղծեցին աշխույժ տրամա-  
դրություն:

Մաքրությունը բուրմունք ունի:

Մեր տանից մաքրություն էր բուրում:

Մորաքույր Աննան, որ ստանձնել էր տնտեսության ու  
լուսհանոցային գործերը, պահարանի հարկաբաժիններից մե-  
կի վրա դրեց մի մեծ պուտուկ մուրաբա, որ պատրաստված  
էր մեր թողած երկրի վարդի թերթիկներից: Ոչ ոք իրավունք  
չունեի ձեռք տալու մուրաբային, որովհետև դա վերապահ-  
ված էր միմիայն իմ նախաճաշերին:

Ոչ ոքի չխանգարելու համար ես ապաստանել էի մեր  
փոքրիկ պատշգամբում և նայում էի իմ երեք ժրաջան մե-

դուներին, որոնք հերթով անցնում էին մի կարասիից մյուսը, բնդնացնելով մեր երկրի եղանակներից մեկը:

Մանկական մի զիւ, հարցասեր ձայն հանկարծ անշարժացրեց փեթակը: Ձայնը գալիս էր սանդղահարթակից: Նախադասութիւնը հարցական էր, և մայրիկս իր իմացած ֆրանսերենով թարգմանեց հարցը.

— Ասա, մայրիկ, ի՞նչ է հայր:

Մենք շսեցինք պատասխանը, բայց երեխան երկու անգամ բացեց դուռը, գլուխը ներս մտցրեց՝ տեսնելու ուրիշ մոլորակից եկած այդ մարսեցիներին: Նա հուսախաբ էր եղել, նկատելով, որ մենք էլ իր նման միևնույն տեղում ունեինք քիթ, ունեինք աչքեր՝ տեսնելու համար, ոտքեր՝ քայլելու համար, ժպտուն դեմքեր և լայն շարժումներ, որոնք իրեն ներս էին հրավիրում: Բայց մի ձայն նրան կարգադրեց վերադառնալ մայրական ապահով գիրկը, և տղան շքացավ: Մի կարճատև պահ մեր հայացքները խաշաձևվեցին: Նա այդպես էլ շիմացավ, որ Աննա մորաքույրը ձեռքը պահարանի դռնակին դրած սպասում էր, որ նրան հյուրասիրեր մեր համեղ վարդի մորաբայից:

Ներս մտավ հայրս:

Նրա թևերը բեռնված էին նոր փաթեթներով, դեմքին շողում էին բարի լուրեր: Բայց, սովորութիւն համաձայն, շէր շտապում հաղորդել: Նա թեք ընկավ բազմոցին, ապա դանդաղ գրպանից հանեց տպագիր մի թերթիկ, որի վրա ձեռքով գրված էր իր անունը: Նա աշխատանքի էր ընդունվել Սեն-Լուիի շաքարի գործարանում, այնտեղ, ուր նպարեղենի խանութի համար արտադրում էին կապույտ տուփերի մեջ դասավորված հավասար, սպիտակ քառանկյուն կտորներ:

Նա մանրամասն պատմեց, թե ինչ է արել կեսօրից հետո: Հայրիկս ամեն ինչ ներկայացնում էր հոյակապ պատմողի պրիզմայի միջով և ամեն ինչ նրա շուրթերին դառնում էր ավելի գեղեցիկ կամ ավելի ծիծաղելի: Մարդ ուզում էր անվերջ լսել նրան: Հետո պատմեց, որ հանդիպել է ուրիշ հայերի: Եվ մեկի տնազն արեց, որ դեմքի մկանակծկում

ուներ, ապա մի ուրիշի, որ մեծալուրջ ու խոժոռ տեսք ուներ։ Հետագայում որքան եմ զսպել ծիծաղս, հանդիպելով այդ մարդկանց, այնքան որ տնազը համապատասխանում էր իրականությանը։

Հետո սկսվեց մայրիկիս ու մորաքույրերիս ծանոթ մարդկանց անունների շարանը։ Նրանք ապրում էին Թապի վեր փողոցում, Բեռնար Դյուլ-Բուա փողոցում, Դոմինիկեն փողոցում, Սենթ-Բարբ փողոցում։

Բոլոր այս մարդիկ շուտով պիտի այցելեին մեզ, ըստ հայկական սովորության՝ առանց նախապես իմաց տալու։

## 5.

Աննա մորաքույրը ներկայացրեց իր գլուխգործոցը։ Ալյու-մինե ձվաձև սինիի կենտրոնում տեղ էր գրավել ոչխարի ազդրը՝ շրջապատված պոմիդորի, դոմիկի, կարտոֆիլի շերտերով, որոնց վրա կարագի փոքրիկ կտորներ էին դրված։ Այս զարդարուն ցուցադրությունը գոռոզ տեսք ուներ և նշանավորում էր մեր առաջին ախորժագրգիռ ընթրիքը Ֆրանսիայում։

— Աննա, — ասաց հայրս, — կարտոֆիլդ շատ բարակ է կտրտված։ Մինչև միսը եփվի, կարտոֆիլդ կայրվի, կդառնա շիպս։

Մորաքույրը պատասխանեց, թե վզին սանտիմետր չի դցել, որ կարտոֆիլը չափի, հետո կտրտի և եթե ցանկանում ենք...

Մեր քրքիշը միանգամից վերջ տվեց նրա բարկությանը։ Դիսի ընկավ, որ նորից ընկել է հորս թակարդը։ Հայրս հաճույք էր ստանում՝ ծաղրելով լավ խոհարարի նրա համբավը։

Մորաքույրս չքացավ խոհանոց տանող միջանցքում, բայց անմիջապես ետ եկավ սինին ձեռքին։

— Դիմացի վարձակալները ճաշում էին դաղօջախի մոտ։ Չուզեցի խանգարել։

Այնինչ, որոշակի համաձայնության էինք եկել, որ կերակուր եփելիս պետք է խոհանոցից օգտվեինք հերթով, ապա պետք է կերակուրը տանեինք մեր սենյակները։ Բայց մեր

հարկի միակ վարձակալները՝ մարդ ու կին և իրենց փոքրիկ տղան, դեռևս մեր գալուց առաջ սովորույթ էին դարձրել ճաշել խոհանոցում և միտք շունեին փոխելու այդ սովորույթը: Այդպիսով ձեռք էին բերել մի սենյակ ևս հատուկ օգտագործման համար:

Երկու անգամ, նախ Գայանեն, հետո Աննան, ամոթխած, ժպտոով բացեցին խոհանոցի դուռը՝ իրենց սինին ձեռքին, բայց նրանք կայել էին աթոռներին, արմունկները հենել սեղանին, որ պատենշի նման ցցված էր գազօջախի առջև, և տեղից չէին շարժվում: Իրենց ճաշը վերջացրել էին վաղուց, և տղամարդը գրգռիչ անտարբերությամբ սիգարետի ծուխը լայն օղակներով փչում էր առաստաղն ի վեր:

Մենք համբերությամբ նորից սպասեցինք՝ լուռ, ընկճված այդ անհողողող բթույթյան ցեմենտե պատի առջև, որի վրա ոչ ոք չի կարող հարձակվել առանց ջարդ ու փշուր լինելու: Հայրս մի վերջին փորձ արեց:

Այս քաղաքը ոտք դնելու պահից մայրս մեզ սովորեցրել էր երեք արտահայտություն. «s'il vous plaît», «pardon», «merci beaucoup»<sup>1</sup>: Հայրս շուտասելուկի նման միանգամից արտասանեց այդ երեք արտահայտությունը և ձեռքի սինին մեկնեց գազօջախի կողմը:

Հորս շարժումն այնպիսի անմարդկային ունոց առաջացրեց, որ ես ահից քարացա: Այդ սոսկալի լսողական զգացողության արձագանքը, իրեսուն տարի հետո, եկավ հասավ ինձ Կալիֆոռնիայի Սան Դիեգո քաղաքում: Այդտեղի կենդանաբանական այգում ցույց տվեցին մի ալուաթ՝ կարմիր կապիկ, որն ապրում է հարավային Ամերիկայի անտառներում և կոչվում է նաև «ոռնացող կապիկ»: Կապիկի այդ տեսակը կոկորդում ունի ոսկրոտ մի թմբուկ, որի գոգավորությունը ուժեղացնում է ձայնը: Դա մանկության օրերին լսած այն բռնացող մարդու ձայնն էր: Զգալով իր չափազանցված վայրենի զայրույթը, մարդը բռունցքով հարվածներ էր տեղում սեղանին, և որպեսզի շեշտեր իր խոսքի խանգարումը և ավելի համոզիչ թվար, նա ձայնը գլուխն էր գցել, մեկ ուժեղացնում էր, մեկ բազմապատկում, մեկ ցածրացնում:

<sup>1</sup> «խնդրում եմ», «ներողություն», «շատ շնորհակալություն» (Ֆր.)

Բայց դոնից տեսնում էի հայրիկիս խոհանոցում կանգնած, սինին զույգ ձեռքով բռնած: Նա անզորությունից օրորեց, օրորեց գլուխը, ապա վերադարձավ մեր սենյակը:

Ի վերջո համոզվելով, որ մենք բռունցքի շենք դիմի, մարդը դուրս եկավ սանդղահարթակ: Նա կլինեի երեսուն տարեկան, ճաղատ, դուրս պրծած աչքերով, փոքրակազմ, գիրուկ, պիծամայի վարտիքի վրայից բրդյա շապիկ էր հագել: Նա շարունակեց բղավել ինչ-որ խոսքեր, որոնք ոչ մի իմաստ չունեին մեզ համար: Սակայն հատակին ուղղված ցուցամատը, որ հետո ուղղվեց աստիճաններին, մեզ պարզորոշ հասկացնել տվեց, թե ինքը գտնվում է իր երկրում՝ Ֆրանսիայում, և եթե մենք գոհ չենք, կարող ենք... և այլն: Այս վերջին տեսարանի վրա մեր դուռը ծածկվեց:

Հայրս, իր սովորության համաձայն, այդ երեկո նույնպես խնայեց մեզ, խոսքեր չասաց իր խորտակված պատրանքների մասին, խոսքեր, որ խառնվում են կարոտին և բաց են անում զսպված արտասուքի դոները, խոսքեր, որոնք լաց են լինում, լաց, որ խոսում է, անհանգստացնում, բրզկրտում, ապա լքում քեզ, ինչպես թռչունի խրտվիլակի:

Այդ թմրեցնող, քիչ-քիչ դեպի վհատություն տանող խոսքերի փոխարեն հայրս սիրում էր ասել ապրեցնող բաներ:

Նա որոշեց վաղնեկ զնել նավթի վառարան, կողքին հարմարեցված փոքրիկ օգամուղով, որն օգտագործվում է առաջին բոցերը բորբոքելու համար, ապա հարկավոր էր զնել փայտե սեղան, որը կգրվեր լվացարանի մոտ, և մի թարեք, որը կգրվեր անկյունում: Այդ ամենը կանջատվեր միջնորմով և մեզ կապահովեր անկախ խոհանոց:

Այդպիսով Ֆրանսիան կմնար իր ծղրտան աքլորին, որ հույսերի այգ երկիրը սահմանափակում էր զավթված խոհանոցով:

Մայրս համրեց մոտը մնացած թղթադրամների բարակ կապը և թաքուն մի կոճակ պոկեց զգեստից:

Երբ մարդ քաղցած է լինում ծայրահեղ շքավորությունից, դա ողբերգական վիճակ է, որի պատճառը հարաբերելով արդյունքի հետ, ունենում է որոշ արդարացում: Բայց այս սենյակում, երբ բավական է սեղմես մի կոճակ, որ լույս լինի, չորս մեծ մարդ և մի մատ երեխա շվարել մնացել էին ախոր-

Ժազրգիռ սինիի մոտ, որին ընդամենը մի քիչ կրակ էր հարկավոր՝ ուտելիք դառնալու համար:

Մենք այլևս մեր քնթրիքի տերը չէինք, այլ կրակ մուրացողներ էինք:

— Պարոն, մի քիչ կրակ չէի՞ք ունենա, կամ՝ մի փոքրիկ ջեռոց:

Եվ բարձրյալին հուզելու համար կարող էինք ավելացնել. «Աստված կհատուցի ձեզ»:

Բայց բարձրյալը իբրև կրակի փոխհատուցում կարող էր նրանց ուղարկել գրողի ծոցը կամ իր դժոխքը, որտեղ ավելի շատ կրակ կար:

Բոցկլտացող կրակ և ջեռոցով փուռ: Միտքը ծագեց անակընկալ. հացի փուռը: Խանութը մեր տանը շատ մոտ էր: Գիշեր էր արդեն, երբ սինին ձեռքներիս մոտեցանք փոին. կրպակի սլատուհանի երկաթյա փեղկն իջեցված էր: Մայթի լ՛րա ընկած էր քառանկյուն լույս, որ գալիս էր գետնին հավասար մի երդիկից:

Կոացա նայեցի վերից վար և տեսա ոտքից գլուխ սպիտակ հագած մի մարդու, որ խմորեղենի մեծ սինիները հրում էր փոխ մեջ: Ես նշանացի կանչեցի հորս: Գլուխ գլխի տված ներս էինք նայում: Աչքներիս առջև միևնույն տեսարանն էր՝ փուռը և սպիտակ հագուստով մարդը:

Հայրս գլուխը ներս մտցրեց բացվածքից:

— Pardon, monsieur... pardon...

Մարդը գլուխը բարձրացրեց, մի պահ վարանեց, ապա մի շարժասանդուղք բերեց, հենեց պատին և հայտնվեց մեր դիմաց:

Հայրս մեր սինին դրեց երդիկի եզրին.

— S'il vous plaît... merci beaucoup.

Գետնին շոքած սպասում էինք նրա որոշմանը:

Արդյոք մեր ակամա բարեպաշտ կեցվածքն էր պատճառը, թե նախապես հայտնված շնորհակալությունը շմատուցված ծառայության համար, թե պարզապես ճանաչեց մեղ (այդ առավոտ մի քանի նշանացի շարժումներով մի կիլո հաց էինք գնել իրենից), մարդը ժպտաց: Մատնացույց արեց

աջ կողմի առաջին դուռը, ապա միջանցքը, սինին վերցրեց և սպասելու նշան արեց: Ես մի քանի քայլ ետ գնացի: Հաստատ գիտեի, որ եթե գլուխս բարձրացնեմ, վերևի փոքրիկ պատշգամբում կտեսնեմ իմ երեք մայրերի ներքև հակված, մտահոգ հայացքները: Իսկապես այնտեղ էին: Ուրախ, հուսադրող, ձեռքով արեցի նրանց և գնացի հորս հետևից:

Կարճ էր մեր ճամփան շորրորդ հարկից մինչև հացթուխի գետնահարկը, բայց մենք հեռացել էինք թշնամական Ֆրանսիայից և ոտք էինք դրել ավելի սրտալի Ֆրանսիա:

Կառավարական մեծ շենքերի վրա փորագրված նշանաբանը մեզ տվել էր ապրելու ազատություն: Եղբայրության և հավասարության փոխարեն, որ ավելի հեշտ էր հայտարարել, քան իրագործել, մեզ լիովի կբավարարեր մի քիչ բարեկամությունը:

Այդ մի քիչ բարեկամությունը մենք այդ երեկո գտել էինք հացթուխի փոռում:

Երբ հացթուխը բացեց փոռի դռնակը, հրաբորբ կրակը լուսավորեց մեզ, և մեր սինին գնաց միանալու թխվածքներին՝ հազարաթերթիկներին, էկլերներին, խնձորով տորթերին:

Հացթուխի Ֆրանսերենը ինձ շատ դուր եկավ: Ես նրա ասածներից ավելի չէի հասկանում, քան մեր ղժլժան հարևանի և մեր գնդիկ տանտիրուհու ասածներից, բայց մեր հացթուխը կարծես երգում էր իր լեզուն: Նրա խոսքի ընթացքի մեջ կարծես «Մարսելյեզից» ինչ-որ բան կար, որ սքանչելիորեն ձգվում էր ճամփաների վրա: Այն ճամփաների վրա, որտեղ ես հետագայում հանդիպեցի Միստրալին, Դոդեին, Պանյոլին, Ժիոնոյին և նրանց ամբողջ դյուխական Պրովանսին:

Հայրս, որոշ համարձակությամբ, փորձեց բավական զրժվարին զրույց, ցանկանալով մեր հացագործին բացատրել արևելյան հազարաթերթիկի՝ փախլավայի, բաղադրությունը, որի միակ ընդհանրությունը Ֆրանսիական թխվածքի հետ այն էր, որ ոչ մեկը, ոչ էլ մյուսը հազար թերթիկ չունեին: Այս սրակումի մեջ նույն սխալը կար, ինչ հազարոտանու, հազար շնորհակալության, հազար ներողության և այլնի մեջ:



«Փախլավայի» օրը, անշուշտ, կիրակի, հարկավոր էր արթնանալ շատ վաղ և առնվազն մի ամբողջ կեսօր հատկացնել դրան:

Երբ խմորը պատրաստ է լինում, գունդ են անում, ալյուր ցանում վրան, որ շկպշի սեղանին: Գրտնակում են և հնարավորին շափ բարակ բացում: Այնուհետև գրտնակին փոխարինում են ձեռքերը: Մայրիկս, երկու մորաքույրերս, հայրս շուրջանակի նստում էին մաքուր սփռոցի առջև, բացված խմորը առնում էին ձեռքերի մեջ և սկսում էին քաշքրշել, ընդ որում սկսում էին մեջտեղից, մատների զգույշ շարժումներով հասցնում էին մինչև եզրերը: Եվ խմորը աչքիդ առաջ բարակում էր, մակերեսը մեծանում, ծավալվում էր, հաստությունից բան չէր մնում: Եթե հանկարծ մեկնումեկի անզգույշ շարժումից խմորի թերթը ծակվում էր, տեղիք էր տալիս մյուսի ուրախ բողոքին, և այդ մյուսը նույնպես իր հերթին էր ընկնում այդ միևնույն հանցանքի մեջ: Կարևորը կրկնությունից խույս տալն էր:

Այս գործողության համար անհրաժեշտ էր հմտություն, ճկունություն, թեթևություն, բաներ, որոնք կախարդում էին ինձ: Հիշողությանս խորքից, ինչպես նկարահանված ինչ-որ պարի դանդաղեցրած կադրեր, ես վերստին տեսնում եմ այդ մատները, որոնք շոյում էին խմորը, հպվում, շոշափում, երբ որևէ կոշտության էին հանդիպում, իսկ իրանները խմորի փափկությամբ ծակվում էին, թեքվում մերթ թեթև, մերթ քմայքոտ:

Այսօր արդեն գիտեմ, որ խմորեղեն պատրաստելը պարզապես առիթ էր մեր վերապրած յուրաքանչյուր օրը դարձնելու տոնական, և այդ անասելի դյուրիշ ընտանեկան պարը պարում էին միասին լինելու երջանկությունից:

Խմորի գունդն այժմ իր շափից տասնապատիկ մեծացած, վերածված թափանցիկ ալյուրաթերթի, դրված էր պղնձե կլայնկված սինու վրա: Այդ առատորեն յուղված թերթիկը, որ ծւծկվում էր ծեծված ընկույզի շերտով՝ վրան շաքար ու դարչին, կազմում էր ապագա բուրգի առաջին հարկը: Հետո վերցնում էին խմորի նոր գունդ նոր թերթիկի համար:



Անշուշտ, ոչ հազար թերթիկ, բայց մոտ հիսուն թերթիկ շարում էին իրար վրա, յուրաքանչյուր թերթիկի վրա նորից ու նորից փոելով կարագի, ընկույզի, դարչինի շերտը, և սինին բերնեբերան լցվում էր:

Մի մեծ դանակ, փայտյա քանոնի ուղեկցությամբ փափուկ խրվում էր խմորի մեջ և խմորը բաժանում փոքրիկ, հավասար շեղանկյունների:

Ծրբ վարդագունած, ոսկեզօծ, կսկուծ սինին դուրս էր գալիս ջեռոցից, վրան լցնում էին եռացրած շաքարաջուր:

Մեր փոքրիկ ընտանիքը, խոնարհված այդ «ձեռակերտ» գլուխգործոցի վրա, չէր դիմանում համտես անելու ցանկությանը, որպեսզի համոզվի, թե հաջող է ստացվել: Շեղանկյունիների վերածված ամբողջ սինու միայն եզրամասերում էին մնում մի քանի քառորդ կամ կես շեղանկյուն կտորներ: Այդ կիսատ կտորները սահմանված էին համտեսի համար: Միայն ես էի բացառություն կազմում, ինձ սկզբից ևեթ տալիս էին մի լրիվ շեղանկյուն: Եվ ամեն մեկս տալիս էինք մեր բարձր գնահատականը:

Իսկ եթե որևէ մեկս քննադատական խոսք ասեր, պատասխանում էին.

— Համբերի մինչև երեկո, շաքարաջուրը դեռ իր գործը չի տեսել:

Եվ շաքարաջուրը աշխատում էր մինչև երեկո: Թափանցում էր դանդաղ, մտնում էր բոլոր ճեղքերը, ներծծվում յուրաքանչյուր թերթիկի մեջ և սառչում յուրաքանչյուր կտորի շորս բոլորը: Այս արքայական քաղցրավենին մատուցելու պահին ավելացնում էին բարձրագույն պսակը:

Մի լայն, կլայեկված, ոչ խոր ափսեի մեջ, ամեն առավոտ համբերությամբ հավաքվում էր կաթի երեսին բռնած սերը և դրվում էր գիշերվա զովին: Օրերի ընթացքում սերը թանձրանում էր, հետո դանակով կտրում էին փախլավայի շեղանկյունիների չափով:

Եվ մեր «հիսունթերթանին», պսակված կաթնասերի գրլխարկով, տիրականորեն բազմում էր ափսեներում:

Անհայրենիք, վզի կապը կորցրած անտեր շների նման

կծկվում էինք այդ փոքրիկ երջանկությունների շուրջբոլորը, որպեսզի համարձակ դիմագրավեինք մի նոր աշխարհի և անորոշ վաղվա անձկությանը:



Ահա իմ կարծիքով այս էր, որ հայրս այդ երեկո ուզում էր բացատրել մեր բարի հացթուխին: Բայց նրա բառապաշարը, որ սահմանափակված էր լոկ «pardon», «s'il vous plaît» և «merci beaucoup»-ով, մեր նրբահամ «հազարաթերթիկը» վեր էր ածում շաքարաշրած, անհրապույր խառնուրդի: Մեզնից հրաժարվող մեր լեզուները շուտով մատնվեցին լռության, և սպիտակ հագուստով հացթուխը նորից սկսեց խմորը հունցել իր ձևով:

Երբ եփվելու ժամանակը լրացավ, մեր սինին հանվեց փոից. սքանչելի էր: Ուժեղ կրակից ազդրամիսը պատվել էր մուգ կեղևով, թաքցնելով ներսի վարդագույնը: Կարտոֆիլը կարմրել էր, պոմիդորներն ու դդմիկները տապակվել էին:

Մեր հացթուխը լսել անգամ չուզեց կրակի գնի մասին: Նա հրաժարվեց փող ընդունել և հասկացնել տվեց, թե իր փոում հաճույքով կընդունի մեր առաջիկա «փախլավան»:

Հորս լեզուն հանկարծ բացվեց:

— Merci beaucoup... merci!

6.

Մեր սենյակում երբեք լիակատար մթություն չէր լինում: Անվարագույր լուսամուտից միշտ երևում էր երկնքի մի քառանկյուն, ուր մինչև լույս երևում էին թափառական աստղերը:

Մենք՝ անորոշ կարգի ուղևորներս, Ֆրանսիայում առաջին գիշերն անցկացրինք մեր ննջարան-վագոնում, անհարմար մահճակալների վրա, որոնք, սակայն ծածկված էին մեր շքեղ, ասեղնագործ սավաններով: Հայրս քնում էր նեղլիկ բազմոցին, մայրս և Աննա մորաքույրս, պառկելով երկտեղանոց մահճակալի ցանցին, իրենց ներքնակը տվել էին ինձ

ու Գայանե մորաքրոջս: Հրեշտակի նման իմ Գայանեն, որ ամբողջ կյանքն ապրել է ուրիշին նեղութիւն շտալու մտահոգութեամբ և միշտ պատրաստ է եղել կյանքը զոհաբերելու հանուն հարազատի մի ժպիտի, աշխատում էր քիչ տեղ գրավել լայն ներքնակի վրա: Կծկվում, ծնկները ծալում էր կզակի տակ և անշարժ պառկում մի անկյունում: Առավոտյան նրան տեսնում էի նույն դիրքով:

Բայց այդ երեկո, շնայած քունս տանում էր և կոպերս ծանրացել էին, ես լողում էի քնի և արթնութեան սահմաններում: Մի տեսակ թմբիր էր պատել ինձ: Կարճ, հպանցիկ պատկերները խառնիխուռն, անկարգ հաջորդում էին միմյանց. նավը, տիկին Պելեգրենի դեմքը, մեռելը ծովը գցելը, հարևանի ճղճողոցը... հատակին փռված իմ ներքնակը վերովար էր անում: Սրեցի ականջներս: Թվաց, թե այլևս չեմ լսում մերոնց շնչառութիւնը: Այս որտե՞ղ էի: Մենակութիւնից վախեցած ես անդիմադրելի պահանջ զգացի հավաստիանալ, որ մերոնք իրենց տեղում են:

Անլսելի ձայնով շշնջացի.

— Քնա՞ծ եք:

Ինձ թվաց, որ ես չեմ լսում ձայնիս հնչյունները: Տագնապած, զարհուրած գիշերվա անթափանց լռութեան սառնութիւնից, ես պիտի վերգտնեի Գայանեին: Նա էր իմ փրկութեան խարիսխը: Ձեռքս մեկնեցի նրա կողմը և հանդիպեցի դատարկութեան: Ձեռքս պարզապես չէր հասել անկյունում կծկված Գայանեին: Այս անգամ ավելի բարձրա՞ ձայն կրկնեցի.

— Քնա՞ծ եք:

Ձգված զսպանակի նման իր բնից ազատվելով, Գայանեն դուրս թռավ անկողնուց: Վառվեց լույսը, որ ինձ կուրացուցիչ թվաց, թեև մեր սենյակի միակ լույսն էր: Մայրիկը, մորաքույր Աննան, անկողինների մեջ նստած, վեր կենալու սրտառաստ, անհանգիստ, նայում էին ինձ: Հայրս խոր քնած էր:

— Կավ չե՞ս: Որե՞ք բա՞ն ես ուզում:

Այս պարզ, անպաճույճ, սիրո խոսքերը ինձ ազատեցին գիշերալիս ստվերներից:

Ինձ հարկավոր չի այն տխմար ավազավաճառը, որ երևա-

կայական րուն է բաշխում: Քնաբեր այդ խաղալիքների փոխարեն, որ հորինել են մեծերը փոքրիկների համար, ես գերադասում էի իմ սուրբ ժամապահների դեմքերը: Մայրիկ, Աննա և Գայանե: Սիրո երրորդություն, իմ երեք մայրերը, երեքն էլ շաղախված միևնույն սիրուց, իրենց անկողիններում նստած, անքուն, համբերությամբ սպասում էին մինչև իմ քունը տանի: Աստիճանաբար այդ պատկերի ուրվագծերը մեղմացան, հետո անհետացան անուշ մի փափկության մեջ: Ես քնում էի:



Առաջին քորը գրգռեց վզիս թե դեմքիս ինչ-որ մաս, բայց բնական պաշտպանության ռեֆլեքսը ստիպեց մեքենայաբար քորելու խայթի կետը, առանց քունս խանգարելու: Քնած տեղս կծկված, միանգամից զգացի բազմաթիվ, ավելի զրոզրոհ խայթեր և արթնացա:

Կիսամութի մեջ, — լուսամփոփի վրա սրբիչ էին գցել, անտարակույս, ինձ շարթնացնելու համար, — ես զանազանեցի իմ ներքնակին խոնարհված մայրիկիս, Աննայի և Գայանեի կերպարանքները: Հետո մոտեցավ հայրս, մի փոքր դուլլով ջուր բերեց դրեց հատակին:

— Մի վախենա... բան չկա:

Ահա այդ պահին քնատ աչքերս նկատեցին առաջին գազանին: Սուրճի մի հատիկի շափ, բայց կարմիր, նոր ներծծած արյունից ուռած, դանդաղ առաջանում էր իմ սպիտակ սավանի վրայով: Հայրս մի սպիտակ թուղթ դրեց նրա ճանապարհին, սա բարձրացավ վրան, հայրս թուղթը շրջեց դուլլի վրա, գազանը ընկավ ջուրը, խեղդվեց: Ահա, սա է, որ կոշվում է փայտոջիլ, որին ոչ մի դեպքում չէր կարելի ճրգմել, թե չէ սավանի վրա կմնար արյան հետք և կտարածվեր գարշելի հոտ:

Բայց փայտոջիլը միայնակ մակաբույծ չէ: Գիշերային այդ փոքրիկ արյունախումբների մի ամբողջ հարդա էր ներխուժել մեր անկողինները: Երկտակված, մի-մի կտոր թուղթ ձեռքներիս, բոլորս մասնակցում էինք այդ անսովոր, անվերջանալի որսորդությանը: Պարազիտաբանության իմ դասերը

սկսվեցին այդ գիշեր, գործնական պարապմունքով: Ես մոտիկից տեսնում էի բոլոր այդ արյուն ծծողներին, որոնք վեց թաթերը հավասարապես շարժելով՝ սնունդ էին փնտրում մարդկային մաշկի վրա, շցանկանալով սնունդի այլ միջավայր: Իրենց զգայական օրգանի միջոցով շոշափում էին մաշկի մակերեսը, հայտնաբերում իրենց ախորժակին հագուրդ տալու հարմար տեղ: Ապա բերանի պոմպը ծակում էր և ներքաշում արյունը: Այդ ծակոցի և ներքաշման ընթացքը լինում էր առանց ցավի, և նրանք կարողանում էին չքանալ՝ առանց ենթարկվելու իրենց զոհի անմիջական վերաբերմունքին: Քորը սկսվում էր մի քանի վայրկյանից հետո, արթնացնելով քեզ և մաշկիդ վրա թողնելով բլիթներ, որոնք անցնում էին հաշորդ առավոտյան: Բայց իր արյուն-ճաշից գերսնված, տոզած արյունարբուն այնքան դանդաղ և անճոռնի էր շարժվում, որ կարելի էր նրան վերցնել, ոչնչացնել, ասլամի կերպ քնել, մինչև երկրորդ խումբը գար՝ կնճիթները մեկնած, գրոհի պատրաստ:

Քանի որ փայտոջիլի գործունեությունը բացառապես գլշերային է, իրենց օրը նրանք անց են կացնում պատի ճեղքերում, կահույքի, մահճակալների անկյուններում թաքնված և ամենաչնչին փոսիկն անգամ կարող է պարունակել հարյուրավոր անիծներ, որոնք պատրաստ են բացվելու Փայտոջիլը բազմանում է ապշեցուցիչ, անկասելի արագություն:

Եվ ամեն գիշեր, հակառակ մեր անկողինների շուրջը դրված բոլոր խոչընդոտներին, այդ արյունախումները միշտ ներկա էին, ներկա էին իրենց առօրյա ընթրիքին:

Դեղանյութերի խանութում, լեզու շիմանալու պատճառով «հակափայտոջիլային» դեղամիջոց ձեռք բերելու համար ստիպված եղանք շարժումներով նկարագրել փայտոջիլը: Վաճառասեղանին իջած մեր հինգ մատները պատկերում էին առաջացող գազանիկի ոտքերը: Ոչ, մրջյուն չէր... Ուտիճ էլ չէր: Երբ սկսեցինք քորել մեր մաշկը, որ նկարագրենք քորը, վաճառորդը մեզ առաջարկեց «հակամժեղային» միջոց: Հարկ եղավ մերժել նաև ճանճի թուղթը, «հակաոջիլային» լուծույթը և սարդ ոչնչացնող փոշին: Վերջապես, երբ ճշտվեց միջատի տեսակը, պարզվեց, որ դեղամիջոցը ազդում է միայն ողջ և «քայլող» փայտոջիլի վրա, իսկ պատի պաստառների

տակ կամ կահույքի ու մահճակալների ձեղքերում դրված անիծների վրա ոչ մի ազդեցություն չի գործում:

Դրանց բնաջնջման համար խորհուրդ տվեցին դուռ-լուսամուտ ամուր փակել, ամեն տեղ առատորեն ցանել ծծմբափոշի և առնվազն վեց օրով հեռանալ սենյակից:

Հեռանալ սենյակից, ո՞ւր գնալ:

Մանավանդ, խոսք լինել շէր կարող տանտիրուհուն բողոքելու մասին, նա այնպես հպարտ էր իր տնով ու իր «բնակիչներով»: Աննա մորաքույրս ճիշտ եզրակացրեց.

— Կասի՛ սրանք հայկական փայտոջիլներ են, դուք եք բերել:

Այս գիշերային մղձավանջը տևեց, որքան գիտեմ, երեք երկար ու ձիգ ամիսներ, մինչև ուրիշ բնակարան տեղափոխվելը:



Տարիներ անց, այս կասկածներս ունեցած հիշողություններս ինձ վարձահատույց եղան դպրոցում:

Մեր ուսուցիչը միապաղաղ ձայնով թմրած դասարանին սլատմում էր կիսակարծրաթևերի և տարաթևերի մասին: Եվ, անշուշտ, իր պատանի լսարանը արթնացնելու համար, ամպրոպաձայն գոռաց.

— Ո՞վ կարող է գրատախտակին նկարել cimex lectularius, որ հասարակ կոչվում է փայտոջիլ:

Ջարմացած դասարանի առջև ես վեր կացա տեղիցս և գնացի ուղիղ դեպի գրատախտակ: Սպիտակ կավիճիս տակ, սև գրատախտակի վրա հայտնվեց մակաբույժը բոլոր մանրամասնություններով և դպրոցական օրագրիս մեջ բերեց տասնութ թվանշան քսանի վրա, որը վաստակել էի արյան գնով:

## 7.

Անհայրենիք մարդիկ, այս ոչ մի երկրի չպատկանողները, դատապարտված են միաժամանակ ապրելու երկու մանկութուն:

Անհրաժեշտ է, որ նրանք յուրացնեն իրենցը՝ բնօրինակը իր մշակույթով, սովորույթներով, կյանքի երևույթները ընկալելու եղանակներով, բայց անհրաժեշտ է նաև, որ իրենց բնօրինած երկիրը ոտք դնելուն պես յուրացնեն կրկնօրինակը՝ այդ երկրի բարքերն ու լեզուն: Չթուլացող աշալրջությամբ, այնպես, որ բնօրինակի սովորույթները չվիրավորեն նոր միջավայրը, և ոչ էլ այս նորը իր զորեղ ազդեցությամբ ուրացման մեղքի մեջ գցի իրեն, երեխան ի վերջո կորցնում է իր տարիքի անմեղության ու անհոգության իրավունքը:

Տարրերությունների այս բախման մեջ ես երազում էի մնալ աննկատ, բայց սրպեսզի ձեռք բերեի Պարոն Անհատ կոչումը, անհրաժեշտ էր ամենայն շտապողականությամբ իմ խոսելաձևը փոխարինել ուրիշով:

Ես ոչ մի պակասություն չունեի. ոչ կույր էի, ոչ խուլ, ոչ համր, ոչ էլ անդամալույծ, սակայն այն հողավոր հնչյունների դեմ, որոնք շէին պատկանում իմ ընկալման համակարգին, ես թե կույր էի, թե խուլ, թե համր: Նախ սկսում էի երկչոտ վեր բարձրացնել ուսերս, որ խոսակցիս ցույց տայի, թե իրեն չեմ հասկանում: Այդ դեպքում նա վերսկսում էր խոսքը, դուրս գցելով բոլոր հոդերն ու ածականները: Եվ բոլոր բայերը օգտագործում էր անորոշ եղանակով, այդպիսով ստեղծում լեզվի մի տեսակ՝ հետամնաց անդհադետի համար:

«Ես ձեզ տալ... դուք վերցնել... չգնալ...»

Ավելի շէի հասկանում, թեև զգացվում էի այդքան բարյացակամությունից և ստիպված ցույց էի տալիս, թե հասկանում եմ և հեռանում էի սպառված, խեղճացած, հուսահատված այդ լեզվի անմատչելիությունից:

Ժամանակավոր այդ պակասությունս բուժելու համար, մայրս մեր գալստյան առաջին օրվանից ինձ տեղավորեց մի «արական դպրոցի մանկական դասարանում»:

Ուսուցչուհու անունը տիկին Օրթուլի էր: Դասընթացների մակարդակը բարձր էր մանկապարտեզի մակարդակից, բայց բավական ցածր՝ տարրականից: Իմ մակարդակը ոչ մի բանի չէր համապատասխանում:

Ինձ նստեցրին շարքի վերջում, մյուսներից առանձին, առջևումս՝ տետրակ, գրիչ և նստարանի մեջ փորված թանա-

քաման: Յուրաքանչյուր էջի առաջին տողի վրա գրված էր օրինակ, որ ես պիտի արտագրեի մինչև վերջին տողը: Մինչ տիկին Օրթոլին տարրականի աշակերտների համար դաս էր վարում, իմ դասընկերների գլուխները ստեպ-ստեպ շուռ էին գալիս իմ կողմը՝ դիտելու այս փոքրիկ, նիհար ու թուլակազմ Տարզանին, որ ծառերից իջել է քաղաքակրթվածների աշխարհը:

Թեք, գուգահեռ, համաշափ ձողիկներ էին շարվում էջերըս ի վար: Հետո եղան կիսաշրջանակներ ու շրջանակներ: Շրջանակները միանալով ձողիկներին, աստիճանաբար դառնում էին տառեր, տառերը դառնում էին բառեր, բառեր, բռնոք բաց էին անում խոսքի ճամփան: Օրվա վերջին տիկին Օրթոլին խոնարհվեց տետրակիս վրա: Ակներևաբար գոհ էր, թիթիացրեց ուսիս, որպես խրախուսանքի նշան: Սրանք եղան դպրոցական օրագրիս առաջին գնահատականները:

Իմ առաջադիմությունը շափում էի ամեն օր կանգ տունելով մեր փողոցի անունը կրող ցուցանակի առջև, որի կապույտ ֆոնի վրա շոկվում էին սպիտակ տառերը: Օրվա ընթացքում սովորած տառերով ես քիչ-քիչ կարդում էի այդ բառը: Բավական շուտ, ես հասել էի «Rue ... ARADIS»-ին, բայց անունը ամբողջանալու համար դեռևս մի տառ էր պակասում: Այբուբենը չէին սովորեցնում Ա, Բ, Գ, Դ-ի դասական կարգով, այլ ըստ տառերի ձևի նմանություն և յուրահատկություն: Վերջին տառը եղավ պ-ն: Այդ պ-ն նախ փոքրատառ, ապա մեծատառ գրելու երջանկությունը եղավ իմ մանկության ամենամեծ ուրախություններից մեկը:

Այդ օրը գրելով PAPILLON, PAPERASSE, PAMPLEMOUSSE, PAPYRUS, վերջնականապես ազատագրվել էի, իսկ PARALLELEPIPEDE<sup>1</sup>-ը մի բառում իր երեք պ-երի պարով, ինձ ուղղակի արբեցրել էր հպարտությունից:

Տիկին Օրթոլին ինձ համար տեղ բացեց երկրորդ շաքոմ. արդեն նստած էի մյուս աշակերտների հետ և, ինձ թվում էր, վերջնականապես:

Դասերից հետո վաղեցի մորս կողմը և գոչեցի.

<sup>1</sup> Թիթեռ, խզբզոց, թուրինջ, պապիրոս, գուգահեռանիստ



— Մայրիկ, ես գրել գիտեմ և արդեն ամեն, ամեն, ամեն  
ինչ կարող եմ կարդալ:

Հասնելով մեր փողոցի անկյունը, մատս տնկեցի ցուցա-  
նակի կողմը, պահասող տառը գտել էր իր տեղը, և ես բարձ-  
րաձայն կարդացի:

— RUE PARADIS<sup>2</sup>:

Ամբողջ փողոցն ի վեր ես գոռալով կարգում էի խանութ-  
ների ցուցանակները. միս, նպարեղեն, կարագ, պանիր,  
ատաղձագործական, սպասարկու, վերանորոգում:

Հետո սկսեցի դրանք երգել իմ հորինած երաժշտությամբ.  
ապակեգործ Բուշարդոն, առաջնակարգ դեղագործ, ատամ-  
նարույժ-վիրարույժ:

Գետնին կպած այդ Պարադի (Դրախտի) փողոցը, որ հի-  
շեցնում էր մի ուրիշ աշխարհի հավիտենական գեղեցկու-  
թյան մասին, այդ օրը իմ աչքին միանգամայն տանելի երե-  
վաց, շնայած փայտոջիլներով լցված իր դժոխքին:

Այդ նշանավոր օրը տոնելու համար, մայրս, որին խլաց-  
նում էի նոր սովորած գիտելիքներս գոռալով, կանգ առավ  
լրագրավաճառի կրպակի մոտ և ինձ առաջարկեց Լինթրե-  
պիդ՝ մանկական պատկերազարդ հանդեսը, որի կերպարների  
րերանից սղաջակներ էին դուրս գալիս: Լուրջ դեմքով խընդ-  
րեցի թույլ տալ, որ ես ընտրեմ: Ընտրությունս կատարեցի  
երկար և դժվար: Թաթերիս ծայրին կանգնած զննում էի կըր-  
պակի ճակատին լվացքի սեղմակով ամրացված հրատարա-  
կությունները:

Ես ընտրեցի «Գիտություն և կյանքը», որովհետև այդ  
վերնագիրը ինձ դուր էր գալիս, մանավանդ, նկատեցի, որ մի  
պահ հպարտության վարդագույնով ծածկվեցին մայրիկիս  
այտերը:

Այբուբենով արբած, հանդեսը թևիս տակ, վերնագիրը՝  
անցորդների կողմը, ես ինձ համարում էի շափահասների  
աշխարհից:

Այդ երեկո բավականությամբ թերթում էի լուսանկար-  
ներով և ուրվանկարներով լի փայլուն էջերը, բայց ոչինչ

<sup>2</sup> Դրախտի փողոց

չհասկացա գիտութեանն ու կյանքին վերաբերող այդ դավաճան բառերից, այդ նախնական ընթերցումից: Ես դեռ շունեի այն տարիքը, որ մեծերի թատրոնում դեր խաղայի:

Ես ուզում էի տասնհինգ տարեկան լինել, թեև ընդամենը վեց տարեկան էի, և Մոցարտ չէի:

Արգելված այդ աշխարհից տխուր ետ դարձա իմ մանկական վիճակին:

— Լսիր, հայրիկ, մի պատմություն պատմիր:

8.

Տարիներ շարունակ առասպելական ասացող հայրս եղավ թե իմ կինոն ու հեռուստացույցը, թե իմ պատկերազարդ գիրքը: Կենսահորդ այդ գետը վերարտադրում էր իր հերոսներին, նրանց հարց ու պատասխանը, շարունակ ընդմիջվելով իմ հարցերով:

— Հետո՞... վերջն ի՞նչ եղավ:

Հանգուցյցը, ամեն անգամ նոր, ստիպում էր, որ զարմանքից վեր թռչեմ: Նա նվագում էր իր պատմության ստեղների վրա, հետևելով դեմքիս արտահայտությանը: Աչքերիս մեջ նկատելով տխրության ամենափոքրիկ նշույլներ, որոնք հետո պիտի վերածվեին արցունքների, նա անմիջապես սահուն անդանտեն վերափոխում էր աշխույժ ալլեգրեսոյի: Ամբոխի մեջ կորած երեխան գտնում էր հորը, փոքրիկ, սովալուկ աղջիկը համեղ նախաճաշի սեղան էր նստում ազնրվաշուք իշխանի հետ:

Այդ երեկո հայրս պատմությունն սկսեց երգով.

Կռունկ, մեռ աշխարհեն խաբրիկ մը շունի՞ս:

Սա ժողովրդական շատ գեղեցիկ կարոտի երգ է, հինավուրց բանաստեղծության խոսքերով, որ հայրս պատմում էր առասպելի նման, ինձ ավելի մատչելի դարձնելու համար:

Աշուն է:

Պանդուխտը աչքը երկնքին հառած նայում է չվող թռչուններին, որոնք լայն թևերը բացած թռչում են հեռավոր երկրներ:

Թողել եմ ու եկել մուրերս ու այգիս,  
Կոռնկ, պահ մը կացիր՝ ձայնիկդ ի հոգիս,  
Թղթիկ մը գրեմ, քեզ տամ ամանաթ,  
Տարեալ հասուցիս զայդ իմ սիրելյաց:

Բայց կոռնկը պատասխան չի տալիս, թեին տալով թըռ-  
չում գնում է, ականջ չդնելով պանդուխտի ողբին:

Հենց կզակս սկսեց դողալ, մայրերիս երրորդությունը, որ  
այդ երեկո ավելի զգոն էր, քան հայրս, հոնքերը կիտեց և  
ծածուկ նախազգուշացրեց, թե նիագարայի ջրվեժը պատ-  
րաստ է թափվելու:

Հայրս իսկույն, առանց վայրկյան իսկ շփոթվելու, ան-  
վըրդով ինքնավստահությամբ պարզապես լրիվ փոխեց եր-  
րորդ տունը:

Հանկարծ մի կոռնկ անջատվում է երամից և երկնքում  
սքանչելի ութ գծելով, իջնում է պանդուխտի մոտ, կեռ կտու-  
ցով վերցնում նրա թղթիկը և խոստանում է, որ գարնանը  
նրան լուրեր կբերի իր հեռավոր երկրից:

Հակառակ բոլոր զգուշություններին, այս վերջին տունը  
լսելիս հեկեկանքները խեղդեցին ինձ: Արցունքները ողողել  
էին դեմքս:

Աննա մորաքույրս, որ միշտ անզիջում էր, երբ հարցը վե-  
րաբերում էր ինձ պաշտպանելուն, ահեղ հայացքով շափեց  
պատմողին:

— Ես գիտեի, որ այսպես է լինելու: Տասը րոպե անընդ-  
հատ զգուշացնում եմ:

Հայրս գիրկն առավ ինձ:

— Մանչս, դու լավ շհասկացար, կոռնկը իջավ, պատաս-  
խանեց պանդուխտի կանչին:

Հեկեկանքներիս միջից հորս բացատրեցի, թե չեմ մտա-  
ծում թաց աչքով ու քարսիրտ այդ պանդուխտի մասին, ես  
մտածում եմ խեղճ թռչունի մասին, որ այդքան տարածու-  
թյունը պիտի անցնի նամակը կտուցից կախ:

Ներիր, իմ հայրենիքի հնօրյա բանաստեղծ: Այդ երեկո  
հայրս, որ երբեք դավաճան չի եղել, ավելացրեց ևս մի բան:

Հյուզոսական անլուսին մի գիշեր, երկինքը թրատող կայ-  
ծակների մեջ մեր կոռնկը խիզախորեն պայքարում էր աշ-

խարհակործան փոթորիկի դեմ, մինչ իմ հուսահատության արցունքները կհոսեին սանձակոտոր օվկիանոսի մեջ:

Մեր կռունկը ոչ ճայ էր, ոչ արծիվ: Նամակը կտուցին՝ զգում էր, որ ուժերը լքում են իրեն: Խոստումին հավատարիմ մնալու համար, վերջին ճիգով մի քիչ էլ սավառնեց, ապա այլևս շկարողացավ թափահարել թևերը, և սկսվեց անխուսափելի անկումը օվկիանոսի հրեշավոր ու փրփրադեզ ալիքների խորխորատներն ի վար:

...Ճիշտ այդ ժամանակ, նրա ուղղահայաց անկումի պահին, հայտնվեց մի սպիտակ շոգենավ և իր երեք կայմերը պարզեց ուժասպառ թռչունին:

Ի վերջո հանգստանալով պատմության նման վախճանից, արցունքներս ցամաքեցին, ես քնեցի իմ կռունկի հետ: Նա իմ վեց տարեկանի Զեյմս Բոնդն էր, իմ մանկության Գոլդորակը:

## 9.

«Պահանջվում են տնայնագործ բանվորուհիներ»: Հայտարարությունը փակցված էր շապկագործի պատլիկ կրպակի ցուցափեղկին, Ռուվիեր փողոցի № 4-ում:

Հայրիկիս աշխատավարձը չափազանց քիչ էր հինգ հոգի ապրեցնելու համար: Մայրիկիս զգեստի ութ ոսկե կոճակներից մնացել էին հինգը:

Շաբաթներ շարունակ մայրիկը և Գայանեն թափառում էին խանութներով երիզված առևտրական թաղամասերում. լա Կանըբիեո, Սեն-Տերեզ փողոց, Հոոմի փողոց...

Նրանք զննում էին ցուցափեղկերը, ցուցադրված ապրանքները, դռներին փակցված փոքրիկ հայտարարություններ:

«Փնտրվում են վաճառորդուհիներ: Ներկայանալի արտաքինով»:

«Հարկավոր են փորձառու գանձապահուհիներ»:

«Պահանջվում են որակյալ հաշվետարներ»:

Վաճառորդուհիները պետք է հավաստեին «English Spo»

ken»<sup>1</sup>, հաշվետարները պետք է լինեն «իրազեկ», ապրանք մատակարարողները՝ «երիտասարդ», դերձակուհիները՝ «մասնագետ»... բայց աշխատանքի այս հրավերները երբեք չէին հասնում մինչև «փնտրում ենք սքանչելի մայր» կամ «անձնվեր հրեշտակ մորաքույրեր» մակարդակին:

Ռուվիերի փողոցի № 4 տան առջև կանգնած Մայրիկը Գայանեին մեկնաբանում էր հայտարարութայան նրբությունները:

«Պահանջվում են տնայնագործ բանվորուհիները» քանի որ գրված է հոգնակի, ուրեմն հարկավոր են մի քանի հոգի, իսկ եթե «տնայնագործություն» է, ուրեմն երեք քույրերով կարող էին միասին աշխատել տանը:

Ոչ ոքի չխանգարելու համար նրանք սպասել էին, մինչև հաճախորդները հեռանան խանութից, ապա մայրս ներս էր մտել, իսկ Գայանեն երկշոտ սպասել էր դռան մոտ:

— Բարև, պարոն, ես եկել եմ ձեր հայտարարութայան վրա:

— Դուք շապկագործ եք, տիկին:

Մայրս վարանել է մի պահ, ապա քաղաքավարի պատասխանել:

— Մենք երեք քույր ենք, պարոն, եթե շապիկի օրինակը տաք, խոստանում ենք ճիշտ նույնպիսի աշխատանք կատարել:

Կան վստահութայան անմեկնելի վայրկյաններ՝ չգիտակցված, շտրամաբանված, երբ կարող ես նայվածքի մեջ կարդալ վստահություն, անկեղծություն ու հավատարմություն: Այդպիսի անկրկնելի մի վայրկյան այդ օրը հոսեց հօգուտ մայրիկիս: Այդ վայրկյանը պիտի տեսեր քսան տարի, որի ընթացքում մեր ամբողջ ընտանիքն աշխատեց այդ մարդու համար՝ փոխադարձ հավատարմութայան, բարեկամութայան ու հարգանքի մթնոլորտում:



Այդ գիշեր, մինչ Պարագի փողոցը քնած էր, մեր շորրորդ հարկի պատուհանը մինչև լույս մնաց լուսավոր:

<sup>1</sup> Անգլերեն խոսելը (անգլ.):

Շապիկ-օրինակը բացված, փռված, սեղանի երկու կողմերից թևերը կախած, թույլ էր տալիս, որ երեք մայրիկներս վրան խոնարհված, զգուշորեն ձեռքերը շարժեն այդ անտարբեր դիակի վրա: Գիազննությունը կատարվում էր Աննա մորաքրոջս ղեկավարությամբ, որ ավելի գիտակ էր երևում կարի մեջ, քան քույրերը: Օձիքը, եզրածալը, թևերը, թեզանիքները, ուսադիրները, լանջապանը, օղակները քննրվեցին այնպիսի մանրամասնությամբ, այնպիսի ուշադրությամբ, որ այդ անգլուխ և անմարմին շապիկը ի վերջո մարդու կերպարանք առավ:

Յուրաքանչյուր մաս գծվեց փաթեթավորման գորշ թղթի վրա: Մայրիկը նշում էր ուրվագծերը, Աննան ավելացնում էր կարաբաժինը, Գայանեն ձևում էր, հետևելով վերջնական գծագրին: Շապիկի մանրամասները թղթե ձևվածքի վերածելուց հետո իրենց վստահված կտորը փոքեցին սեղանի վրա:

Կան թվեր, որ ընդմիջտ դրոշմվում են հիշողության մեջ. բազմապատկման աղյուսակը, Մարինյանի ճակատամարտը՝ 1515 թ., Վաթերլոոն՝ 1815-ին... Այդ կտորը 2,80 մետր էր, լայնքը՝ 0,80:

Այդ հրամայական տարածության վրա իմ երեք մայրերը տեղադրեցին թղթի տարբեր ձևվածքները: Կատարյալ գլուխկոտրուկ էր ապագա շապիկի բոլոր մասերի տեղավորումը՝ այսքան երկայնքի և այսքան լայնքի կտորի սահմաններում: Երբ կտորի ամբողջ մակերեսը զբաղված էր, մայրիկի ձեռքին դեռ մնացել էր մի թև և դեռ Գայանեն մի օձիք ու մի թեզանիք ուներ տեղավորելու: Եվ նրանք վերսկսեցին իրենց գործը՝ տեղափոխելով որոշ մասերի տեղերը, որպեսզի լրացուցիչ տարածություն բացեն մնացած կտորները տեղավորելու համար: Երբ վերջապես բոլոր կտորները գտան իրենց տեղերը, Աննա մորաքույրը վերցրեց մեծ մկրատը, կտրիչները հեռացան իրարից, Մայրիկը և Գայանեն ստուգեցին, որ ոչ մի կտոր վրիպած չլինի իրենց ուշադրությունից, հետո մի պահ լռություն տիրեց, ապա մկրատը ճզզոցով սկսեց ագահորեն կրծել կտորը:

«Ձեռքով կարված» վերնաշապիկի անծանոթ գնորդ, դու երբեք չես իմանա, թե որքան երկար եղավ այդ գիշերը կարի վրա խոնարհված երեք դերձակուհիների համար. հա-

դարմատնյա նրանց ձեռքերը շնորհալի ճախրումներով մանրակարեքով կատարում էին մեքենայի աշխատանքը: Գիշերային ասեղնագործուհիները քո մասին ոչինչ չեն իմանա, բացի քո անվան սկզբնատառերից, որոնք երկու գույնով ասեղնագործվում էին շապիկի ձախ կրծքին:

Առավոտյան, տիկին Օրթուլիի դպրոցը գնալուց առաջ, ես նորից նայեցի այդ փոքրիկ, ձեռակերտ գլուխգործոցին: Սադափե կոճակները կարված, ամեն ինչ ավարտված, բոլոր ավելորդ թելերը կտրտված, թարմ արդուկված շապիկը հանգըստանում էր ստվարաթղթե գեղեցիկ տուփի մեջ՝ պատրաստ հանձնվելու:

Շապիկ-նմուշից մինչև փորձնական նմուշ աշխատանքը կատարված էր հաջողությամբ:

Այնուհետև, աշխարհի բոլոր գործվածքները՝ կրեպդեշին թե ճապոնական մետաքս, շղարշ ու շալ, թե օքսֆորդյան կտորեղեն, պերկալ ու պոպլին, հերթով մուտք էին գործում երջանկության այդ արհեստանոցը, որը կարելի է անվանել «Տղամարդու երջանկություն»:

Իրենց ընտանեկան պալատի երեկվա թագուհիները, իրենց թշվառ վանդակի հլու բանտարկյալները, հավելյալ մի քանի ֆրանկի համար, գիշերները, երբ պիտի հանգստանային ցերեկվա հոգսերից, մնում էին իրենց աթոռներին և ժպիտներով քողարկելով հորանջը, աշխատում էին՝ գլուխները հակած ձեռքերին, որոնց ցուցամատները կոպտացել էին և ասեղներից ծակծկվել:

Իմ գիշերային ողիներ, ձեր ուրվագծերը թափանցում էին միջնորմի հետևից, որ դնում էիք ներքնակիս դիմաց՝ ձեր աղոտ լամպից ինձ պատսպարելու համար, ես այսօր էլ տեսնում եմ ձեզ, իմ երեք քնքուշ Մարիամներ, իմ անմեռ կուռքեր, մինչդեռ հայրիկը քնած էր լինում բազմոցին, վաստակած տղամարդու խոր քնով:

## 10.

«Ապաստանյալ՝ ծագումով հայ»:

Այսպիսին էր ձեռագիր նշումը՝ տպագիր «Ազգությունը» հարցի դիմաց, որը տրված էր ակորդեոնի պես ծալված այդ

ինքնության վկայականներում, և որը պիտի ստանայինք ոստիկանատանը:

Փայտե նստարաններով հսկայական սրահներում մենք սպասել ենք օրերով, մինչև որ կանչվել ենք Ֆրանսիական արտասանությամբ աղավաղված, ապա ձևափոխված գրությամբ անունով:

Որքան եմ մորաքույրերիս ու մորս ուղեկցել դեպի այդ թշվառության նստարանները, կյանքը գրասենյակներում անցկացրած պաշտոնյաների առջև ահից դողալով, ընկճված՝ նրանց լեզուն շիմանալուց և հաճախ շափազանցելով նրանց իշխանության սահմանները:

— Թողեք տիկինը խոսի:

— Տիկինը իմ մորաքույրն է և Ֆրանսերեն վատ է խոսում, պարոն:

— Է՛հ, թող դպրոց գնա: Դպրոցը հո շների համար չի, գրողը տանի:

— Կգնա, պարոն:

— Ինքնության թղթերը, ծննդյան վկայականը:

— Մենք ապաստանյալներ ենք, պարոն, նա միայն անձնագիր ունի՝ Ֆրանսիական վիզայով:

— Ինձ հարկավոր է ինքնության թղթերը: Գրեք ձեր ծննդավայրի քաղաքապետարան:

«Հաջորդը» վերջ է դնում հարցաքննությանը: Եվ մենք գնում ենք դեպի ուրիշ սպասարաններ, դեպի ուրիշ նստարաններ, որոնելու այդ անգտնելի «կյանքի թղթերը»:

Դիմել մեր ծննդավայրի քաղաքապետարան, նշանակում էր դիմել երեկվա մեր դահիճներին, հավաստել, որ մենք ողջ ենք, որ մենք խուսափել ենք 1.500 000 հայերի հավաքական կոտորածից:

Նորից ետ եկանք ապաստանյալների գրասենյակ, հինգ վկաներով, որոնք պատվոս երդում տվեցին, թե մեր անունը իսկապես «այս» է, որ մենք այնինչի տղան ենք... ծնված... այսինչ թվականին, և մեր հավաստված, կնքված անցյալով վերադարձանք երկար սպասումների ելման կետը՝ ոստիկանատան պր՛ֆեկտություն:

Սրահի խորքից մեկը գոռաց.

— Դուք Ֆրանսիայի երկնքի տակ եք:



Գրասեղանի հետևում ուռա-հայրենասերի հեղինակավորությամբ մի մարդ վիճարկում էր ինչ-որ վկայականի իսկությունը:

Ճաղավոր լուսամուտներից երևացող աշխարհի բարձր հարկի մի փոքրիկ կտոր հիշեցնում էր, որ յուրաքանչյուր ազգ կտրել է իր բաժին երկինքը, որպեսզի պարզի սեփական գրոշը, և որ մենք գտնվում ենք վեցանկյուն և եռագույն երկնակամարի տակ:

Մի երկնակամարի տակից մի ուրիշ երկնակամարի տակ տեղափոխվելը ճամփորդի արյունը վերափոխում էր «օտարական» ռեզուս-գործոնի, այդ ազգայնացված մի կտոր երկրների բաժնետերերի մեջ առաջացնելով անվստահություն և հազար զգուշություն ընդդեմ «ներմուծյալի»:

Օրենքի բոլոր պահանջներով անհրաժեշտ էր անցաթուղթ, անձնագիր, ինքնության վկայական, աշխատանքային գրքույկ, պայմանագիր աշխատավայրից, տեղեկանք բնակավայրից, էլեկտրականության վճարի անգորրագիր, ինքնությունը հաստատող լուսանկարներ, տեղեկանքներ, որոնք կրկնել էին այն ամենը, ինչ մյուս թղթերն արդեն հաստատել էին, և հարցարաններ, որոնք հարկավոր էր լրացնել տեղնուտեղը, մերժվելու վախի տակ:

Մտողներս, ընկճված թղթակույտերի, քաշքշուկի և բժախնդրության ալիքից, դիմում էին ընտանիքի գիտունին, որն հիմա արդեն գրել կարգալ գիտեր:

Հակված գույնզգույն թղթերի վրա, որոնցից բազմաթիվ օրինակներ կային, ես զգուշությունից պատասխանը գրում էի մատիտով. ԱՆՈՒՆ-ի դիմաց՝ «Մայրիկ»... ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ես բնորոշեցի այսպես. «Գեղեցիկ վերնաշապիկներ է կարում տղամարդկանց համար», բայց տարածությունը քիչ էր, և ես շկարողացա ավելացնել մորաքույրերիս, մի բան, որ իմ կարծիքով անարդարացի էր: ՀԱՍՑԵ-ից ես վրեժս լուծեցի, տեղեկացնելով Պարագի փողոցի 109 տան փայտոջիլների մասին, ԱԶՔԵՐԻ ԳՈՒՅՆԸ հարցին տվեցի քնարական պատասխան, իսկ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆՆԵՐԸ... ինձ թույլ տվեցին ասել, որ նրան սիրում եմ:

Բայց ինքնության վկայականը լուրջ բան է, և ավելի խելոք մարդիկ խորհուրդ տվեցին լրացնել այլ կերպ: Ռեալիստ

ջնջեց իմ մանկական պատասխանները, ես գրիչով արտագրեցի վարչականորեն ավելի համապատասխան տեքստ, մըտքումս արձանագրելով, որ «Զունի» բառը ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆՆԵՐԻ դիմաց հաստատապես ավելի պակաս գեղեցիկ է, քան իմը: Ես ուղղակի քարացա հարցարանի վերջին տողից.

«ՎԵՐՋ»... լրացվում է վարչության կողմից»: Իմ բառաւյաշարը, որ նոր էր հարստացել Լաֆոնտենի առակով, որտեղ հերոսը ՎԵՐՋԱՆՈՒՄ է, մի պահ ինձ թվաց կյանքի վերջ՝ Նախապես պարտադրված, որոշված ինչ-ինչ պարոնների կողմից, որոնց ձեռքին են իշխանության լծակները:

Ինձ համար Մայրիկը ինչ-որ թելերով կապված էր հավերժությանը, և մարդիկ ուզում էին, որ ես վեր հանեմ կանխակալ տարեթիվ: Հաստատապես, իմ գիտելիքները քիչ էին՝ ընկալելու բազում նշանակություն ունեցող այդ բառի ճկունությունը, և այս «վերջը» վերաբերում էր երեք տարին մեկ նորոգվող ձանձրալի թղթակերության ավարտին: Բայց մանկական իմ վախը գալիս էր շատ ավելի հեռվից: Դա ծագում էր մի ժողովրդի ընդերքի խորքից: Այդ բառի դիմաց, որ առաջացրեց իմ մանկական խուճապը, մի օր մինիստրները դրել են. 1915, ապրիլի 24, իրականացնելով մարդու որսի ամենավայրագ հալածանքը...

«...Առանց խտրության կանանց, երեխաներին և ծերունիներին... անհրաժեշտ է վերջ դնել նրանց գոյությանը»:

Ստորագրված՝ Թալեաթ փաշա, ներքին գործոց մինիստր»:

## 11.

Երեկույթն սկսվեց այդ ծածկագրված հեռագրի ընթերցմամբ, որ թուրք հրեշը ուղարկել էր իր բոլոր գավառապետներին:

Այդ երեկո, մի սրահում, որի բեմը ծածկված էր սև պատառներով, հավաքվել էին կոտորածներից փրկված մոտ երկու հազար հոգի, հիշելու իրենց մեռելներին: Բոլոր այդ հրաշքով փրկվածները խոժոռադեմ, վշտոտ, զարմացած, որ

ողջ են մնացել, երբ ամեն ինչ խնամքով ծրագրված և հիմնավորապես կազմակերպված էր իրենց բնաջնջման համար, լուռ լսում էին մի շատ ծեր հայ բանաստեղծի:

1927 թվականի ապրիլի 24-ն էր: Ես յոթ տարեկան էի: Հայրս երկար տատանվում էր՝ ինձ տանի՞ այդ երեկույթին, թե ոչ, բայց մեր ընտանիքում երբեք մեծերը չէին օգտվում իրենց արտոնություններից և չէին պարտադրում իրենց կտրական որոշումը. «դու մնում ես տանը, և վերջ»:

Մորաքույր Աննան սիրով առաջարկեց մնալ ինձ հետ, մայրս անհանգստություն հայտնեց, թե շատ երկար ճառեր կլինեն, Գայանեն մեջտեղ բերեց իմ փոքր լինելը, մի խոսքով այդ երեկո օդում գաղտնի ծածանվում էր յոթ տարեկան անչափահասին մերժելու հոտը: Ես գտնվում էի այն հեղինակների ազդեցության տակ, որոնց գրքերը նոր էի կարդացել: Նոր էի հեռացել տիկին դը Սեգյուրից և նրա վարդս գույն գրադարանից, որպեսզի գնամ Միշել Ստրոգոֆի արկածների հետևից և երազում էի ճամփորդել «80 օր աշխարհի շուրջը», պարոն ժյուլ Վեռնի ուղեկցությամբ: Ի՞նչ էր ուրեմն այդ պատմությունը, որ աշխատում էին ինձնից թաքցնել:

Հանդարտ, բայց խիստ ձայնով հայրս պատասխանեց.

— Գիտես, մանչս, այն պատմության մեջ, որ երեկոյան լսելու ես, համոզված չեմ, թե քո կոունկը կընկնի սպիտակ շոգենավի թևին: Այ, եթե խոստանաս լաց չլինել, կարող ես գալ...

Ես երկար մտածեցի: Միթե՞ ընդունակ կլինեի այդքան փուխր սիրտս արագորեն փոխարինել բրոնզե սրսով: Բայց հաստատ և վճռական ձայնով պատասխանեցի.

— Լաց չեմ լինի:

Զբաղեցնելով աթոռի քառորդ մասը, հայրիկիս կալած, ուս ուսի տված թիկունքների շարքերի հետևում, գլուխների արանքներից նայում էի բեմին:

Եվ մարդիկ խոսում էին աշխարհի կործանման պատմությունից. մի ժողովուրդ խաղաղ ապրում էր իր նախնիների երկրում, մի մոլեռանդ հորդա, «վայրենացած», կոտորածից հարբած, չարագուշակ մի առավոտ խուժում է նրա քաղաքները, գյուղերը և նրա ծաղկածիծաղ դաշտավայրերը... Հե-

տո մահվան ծանր լուսթյուն, մոխրացած դաշտեր, ծխացող ավերակներ ու հողեր, և այլևս անօգուտ կիրակիներ՝ հըրկիզված եկեղեցիներով:

Սև վարագույրի հետևում, որ կախված էր բեմում իբրև սգո նշան, այդ երեկո ես տեսա մարտիրոսների ուրվականներ՝ մտրակված դեմքերով, ժայռերի վրա փշրված երեսաների գանգեր, փորոտիքը թափված մայրերի գողգոթա, անպատվությունից խուսափելու համար մահին հանձնված աղջիկներ, և Եփրատը, որ տանում էր հազարավոր խոշտանգված դիակներ:

Խելացնոր բունակալները իրենց պանթուրքիստական զանաանցանքի մեջ, երազելով օտոմանյան տիրակալություն ասիական տարածքով մեկ, նոր էին իրենց զավթողական ցնորքների ճանապարհին հաղթահարել առաջին խոշընդոտը՝ հային: Այդ արևելյան եվրոպացին, առաքելական եկեղեցու այդ քրիստոնյան, իսլամացման շենթարկվողը պետք է բնաջնջվեր, որ բարբարոս նվաճողներին թողներ Հայաստանը... առանց հայի:



Պատմության դպրոցական դասագրքերից, հաճախ աշակերտի հիշողության մեջ մոռացվում կամ շփոթվում են արքաների պարտություններն ու հաղթանակները, առաքինություններն ու խենթությունները, արքաներ, որոնք կյուղովիկոսից մինչև Հենրիխ, հաջորդում են միմյանց հերթական համարներով:

Դրա փոխարեն աշակերտը առանց դժվարության այս կամ այն պատմական անձնավորությանը հիշում է որևէ արտառոց, զվարճալի կամ դաժան պատմությունից եկող տպավորիչ մականունով:

Նա կհիշի Ֆրանկների արքա Կլովիսին՝ Սուասոնի սկահակի պատճառով: Կառլոս Մեծը կմնա իր «ծաղկած մորուքով», իսկ ասպետ Բայարը՝ «անվեհեր ու անբասիր» վարքով: Աթիլլան հռչակավոր կմնա սրանով. «Որտեղ ոտք էր դնում նրա ձին, այլևս խոտ չէր բուսնում»:

Արևելքից կհիշվի Աբդուլ-Համիդը՝ «կարմիր սուլթան» մա-

կանունով, ի Գիշատակ արյան, որ այդպես էլ նա ժամանակ չունեցավ շորացնելու ձեռքերի վրա: Նա սկսեց հղեռնի արյունոտ գործը, սրի քաշելով 300 000 Գայի:

Արդու-Համիդին գահընկեց արեցին և խոստացան մի նոր Թուրքիա՝ հղբայրական, խաղաղասիրական, բարգավաճ: Այնուհետև 1905 թ. գարնանային մի առավոտ, երկրի նոր տերերը՝ «Թուրքիան միայն Թուրքերին» ձիշով, Կիլիկիայում մարթեցին 30 000 Գոգի:

Վերջնական կոտորածը եղավ 1915 թվականին:

Աթիլլան, վայրագ կովի այդ առաջնորդը՝ «Աստծո պատուհաս» մականվամբ, իր իշխանության սարսափը տարածելով Արևելքից մինչև Արևմուտք, համենայն դեպս, տեղի տալով պապի միջամտությանը, խնայեց Հոռմը:

Տասնհինգ դար հետո, մի ուրիշ պապ՝ Բենեդիկտոս 15-րդը, դիմելով նրանց, ովքեր սրի սայրով որոշել են մի ամբողջ ժողովրդի ճակատագիր, հռչակում է իր մարգարեական կանխատեսությունը. «Թող քաջ գիտենան, ազգերը չեն մեռնում: Նվաստացած, ճնշված, նրանք սարսուռով կրում են պարտադրված լուծը և պատրաստում են իրենց հատուցումը, սերնդեսերունդ փոխանցում ատելության ու թշնամանքի տխուր մի ժառանգություն»:

Աթիլլան հրեշտակ էր նոր բարբարոսների համեմատությամբ, որոնք ոչինչ չխնայեցին:

1915 թվականի վերջերին ավարտվում էր հայերի բնաջնջման հիմնական գործողությունը 1 500 000 մահով:



«Այս անգամ առիթը բարենպաստ է»:

Ահա այս բառերով է այդ տարի սկսվել Թուրք առաջնորդների համագումարը:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիան բռնել էր Գերմանիայի կողմը: Այլևս չվախենալով օտարերկրյա ուժերի միջամտությունից, ոչ էլ համաշխարհային մամուլի բողոքներից, որոնք զբաղված էին ուրիշ ճակատներում, նա հայտարարեց սրբազան պատերազմ, մոլեռանդ մուսուլմաններին ոտքի հանելով քրիստոնյաների դեմ:

Մինիստր Թալեաթը եզրակացնում էր. «...ինչ վերաբերում է հային, ապա այն բնակավայրը, որտեղ ապրել է, այլևս չի ճանաչի նրան, և թուրքը կժառանգի նրա բարիքներն ու երկիրը...»: Ցեղասպանությունը «Պետական ժառանգության» որոշմամբ իրագործվեց նախապես կշռադատված, ծրագրված, նախորդ սպանդներում փորձարկված պլանով:

Ըստ խնամքով պատրաստված մի անվանացանկի, մտավորականները՝ մամուլի աշխատողներ, բժիշկներ, իրավաբաններ, արվեստագետներ, գրողներ, դարձան առաջին վտարվողները, որպեսզի չկարողանային իրենց ձայնը բարձրացնել աբտաքին աշխարհում:

Եվ որպեսզի կանխեին դիմադրության կամ ինքնապաշտպանության որևէ շարժում, տասնութից մինչև քառասուն տարեկան բոլոր տղամարդիկ նախ կանչվեցին թուրքական բանակ, ապա զինաթափ սրվեցին և մեկուսացվեցին աշխատանքային ճամբարներում, հետո գնդակահարվեցին հարյուր հոգիանոց խմբերով:

Երբ մնացել էին միայն կանաչք, երեխաները և ծերունիները, հուշակվեց ղեկրետ «փրկության նպատակով» բնակչության տեղահանման մասին դեպի Միջագետք՝ Օտոմանյան կայսրության ամենադաժան վայրը: Օտարերկրյա դեսպանների, հյուպատոսների, նաև Թուրքիայի դաշնակից Գերմանիայի ներկայացուցիչների վկայությունները, պատմաբանների կամ Կարմիր խաչի հասարակ հիվանդապահների պատմածները ստիպում են սոսկումից փշաքաղվել, ի տես սովալլուկ, ծարավ, զզզված մարդկային երկար շարանի, որն առաջանում էր հեծյալ ոստիկանների մտրակի շառաչունի տակ:

Գալիս էին... տասնյակ հազարներով դալիս էին Զեյթունից, Մոկսից, Ուրֆայից, Տեր-Չորից... Այդ քայլող կմախքները վայր էին ընկնում ճանապարհի եզրերին, և նրանց անմիջապես պատառ-պատառ էին անում ոռնացող շները, որոնք սպասում էին նրանց վերջին հառաչին:

Այդ անդարձ ճամփորդության ժամանակ, խստագույն հրամանով, ողջ մնացածներին տանում էին Հալեպով, որպեսզի քողարկեն սարսափելի ճշմարտությունը և հարց բարձրացնող հյուպատոսների միջոցով ապացուցեն աշխար-

հին, թե այդ տարագիրները ահա ողջ են, պարզապես ենթարկվում են տեղափոխության:

Երբ վերջին ուրվականները՝ դալուկ, փոս ընկած այտերով, հիվանդություններից հյուծված հասնում էին անապատ՝ բնաջնջման դաշտը, անարգել գործի էին անցնում սովն ու համաճարակը:

Մինիստր Թալեաթի կրկնակի պահանջների վրա, որ անվերջ հայտարարում էր «գործի արագացում», կացինը, բահ ու բրիչները փոխարինում էին դանդաղ մահվան:

Մի զինվորական բժիշկ բացականչել է. «Ես փախչում եմ՝ անսքան տառապանքներ ամռքելու անզորությունից հուսահատ»:

*Մահվան այդ ճամփաներին մի բանաստեղծ գոչել է.*

Օհ, շտոկաֆ, երբ անպատմելի պատմությունս  
ձեզի պատմեմ...  
Թող մարդերը հասկանան, մարդու ռեիրը  
մարդուն դեմ...  
*...*

Մորթված մի ժողովրդի մոխրացած բանաստեղծը շէր իմանալու, որ մարդկային աշխարհը սոսկումով փախել էր դժոխքի վրա բացվող պատուհանի մուտից:



Այդ 1927 թվականի ապրիլի 24-ին, այն հասակում, երբ կյանքը հորինում ես կարդացածդ դրքերի հերոսների պատկերով, ես կոպտորեն խլվել էի իմ հեքիաթային աշխարհից:

Անշարժ նստած աթոռին, լսում էի այդ տխուր մարդկանց, որոնք հիշում էին իրենց մեռյալներին, մինչդեռ իմ դեմ բարձրանում էր աշխարհը իր արյունոտ բնազդներով, անտարբերությամբ ընդդեմ անարդարության, փոքրոգությունների հանուն պետական շահերի, ազգային եսամոլությունների, չպահված խոստումներով, բարեգութ, ճառերով սահմանափակվող մեծահոգություններ:

Մարսելը՝ մահից փրկվածների համակենտրոնացման քաղաքը, այդ երեկո ուղարկել էր իր ներկայացուցչին: Նա հիշատակեց հայ իշխանուհիների, որոնք անցյալ ժամանակ-

ներում ամուսնացել էին Լուսինյան իշխանների հետ, այնուհետև խոսեց Ֆրանս-հայկական բարեկամության մասին և մշակութային ու պատմական հարաբերությունների անխզելի կապերի մասին, որոնք հասնում են մինչև խաչակրաց արշավանքներ...

Մի սևազգեստ երիտասարդ կին երգեց իսկական «Կոունկը»: Երկու թե երեք անգամ հորս հայացքը թաքուն խաչվեց իմի հետ: Մենք այլևս չէինք համարձակվում նայել միմյանց աչքերի: Նա ամաչում էր վարդագույն ջրերի մասին իր տարբերակի համար: Ես էլ ամաչում էի իմ մանկական արցունքների համար:

Բայց հեքիաթների և շարաճճիությունների ժամանակն ավարտում էր իր անցողիկ գոյությունը իրականության դեմ: Ես կորցրեցի իմ մանկական հայացքը:

## 12.

Հիշատակի երեկոյի այդ պատկերները երկար ժամանակ ինձ հետապնդում էին աշակերտական նստարանիս:

Ես չեմ հիշում այդ ժամանակվա իմ ընկերներից ոչ մեկի անունը: Մեր հարաբերություններն ընդհատվում էին դըպրոցի մուտքի մոտ, որտեղ, դիմացի մայթին, մի կողմ կանգնած ինձ էր սպասում Մայրիկը, Աննան կամ Գայանեն: Լեզվի պատնեջը խանգարում էր ծնողական այն կարճատև հանդիպումներին, որոնք ավարտվում էին հինգշաբթի օրերի նախաճաշի հրավերով:

Ես երբեք չեմ հրավիրվել:

Իմ ակամա մենակության մեջ ես հորինում էի խաղեր՝ առանց ընկերոջ: Պատերը, որոնց նետում էի գնդակս, փոխվում էին անհաշտ հակառակորդների, և առագաստները պարզած երևակայական նավի վրա ես միաժամանակ հրամանատար էի, հրամանատարի օգնական, հրետանավոր կամ սովորական նավաստի:

Եթե իրար հետ խաղացող երեխաների ճիշերը, ծիծաղն ու զվարթությունը ջնջում է նրանց խաղի կանոնների խենթությունը, ապա մեն-մենակ խաղացող երեխայի մեջ որոշ



տխրութիւն կա, և այն խենթութիւնները, որով նա զվարձանում է, ավելի են աչքի ընկնում:

Այդ մանկական տարիներից, դասարանի իրարանցումից հեռու, հիշում եմ մեծանալու անհագ մի ցանկութիւն՝ միախառնված տարօրինակ զգոնութեանը:

Ես քաջ գիտակցում էի, որ ոչ մի լուրջ բան հնարավոր չի ձեռնարկել, քանի դեռ ես, տրամվայի տոմսավաճառի նման, մի հին պայուսակ ուսովս գցած, տոմս կբաժանեի դատարկ աթոռների առջև, որոնք շարված էին լինում ուղևորների նստարանների նման:

Բայց պարանները, որ քաշում էի՝ «Ջրնգ, զրնգ, զրնգ» գոչելով, որպեսզի շարժվեին երևակայական փոխադրամիջոցները, երազային լիմուզինները, որ ես վարում էի մետաղալարից սարքված ղեկին նստած, ֆիլհարմոնիայի նվագախմբերը, որ ես ղեկավարում էի դպրոցական քանոնով, ամեն անգամ ինձ ետ էին տանում մանկութեանս վիճակին, որ ավելի ուժեղ էր, քան ժամանակի փուլերի վրայով թռչելու ձգտումը: Ես սպասում էի հարմար պահի, որ վերջապես պիտի գար, և այդ խաղերը ի վերջո պիտի թվային դատարկ ու անիմաստ:

Ամեն երեկո խաղալիքներս դնում էի մահճակալիս տակ՝ այլևս դրանց ձեռք չտալու հաստատ որոշումով:

Ամեն առավոտ արթնանում էի ինքնաթիռս նստելու անդիմադրելի ցանկութեամբ. մի տեղանոց ինքնաթիռ էր՝ դեմդիմաց դրված երկու աթոռներ, որոնց պահում էր մի կոտորված խոզանակ: Սարքերի մի տախտակ-վահանակ, որի վրա ամրացրել էի մի շարք անջատիչներ, հեղույսներ ու այրված լամպեր, լրացնում էր օդաչուի իմ խցիկը: Ես շունեի ամենակարևորը՝ օդաչուի մեծ ակնոց:

Ամիսներ շարունակ աչքս մի թափանցիկ, տափակ ու կլոր փայլարե տուփի վրա էր, որ լի էր սպիտակ հարերով:

Համբերութեամբ սպասում էի տուփի դատարկվելուն, որպեսզի կատարյալ լինեի օդաչուի իմ հանդերձանքը, բայց դրա համար անհրաժեշտ էին խմբական և տեական գլխացավեր, որ իմ բաղձանքի առարկան ազատվեի իր ասպիրիններից:

Սպասումներիս մասին թաքուն խոստովանեցի մորաքույր Աննային, որ աննկատելիորեն անհետացրեց հաբերը:

Կափարիչն ու տուփը մետաղալարով միացվելով՝ վերափոխվեցին օպտիկական ապակիների, որոնք անցկացրի գըլխիս շուրջը առաձգական ժապավենով:

Այն ժամանակներն էին, երբ խաղալիքները էլեկտրոնային մասնագիտության դիսլոմ շէին սլահանջում: Երկնքի հերոսների ժամանակներն էին: Նյունժեսերը և Կոլին իրենց սպիտակ թռչուններով նոր էին անհետացել Ատլանտյան օվկիանոսի մեջ, Լինդբերգը վայրէջք էր կատարում Բուրժուում, Պելլեթիե-Դուազին քառասունվեց օրում Փարիզը միացնում էր Տոկիոյի հետ, իսկ Մերմոզը կտրում էր Անդերի լեռնաշղթան:

Հսկայական ակնոցս ճակատիս բարձրացրած, սլատրաստ էի վեր խոյանալու դեպի նոր ցուցանիշներ: Ես ինքնաթիռս բարձրացնում էի բազմոցի վրա և օդաչվի խցիկի բարձունքից դիտում էի կարի վրա խոնարհված երեք մայրերիս գլուխները: Որոտացող ձայնս փոխարինում էր շարժիչին. կտրուկ շարժումով պաշտպանական ակնոցս քաշում էի աչքերիս: Փայլարե «ակնոցիս» պղտորությունը շատ շուտով մշուշում էր իրական ուրվագծերը, և ես մխրճվում էի մետաքսի ու մարմաշի ծվենների սպիտակ ծածկույթի մեջ: Դա իմ ցնորքների երկինքն էր: Մահճակալիս զսպանակները օդային փոսեր էին, և ես շուտով թռչում էի օվկիանոսների վրայով դեպի Ամերիկա, ըմբոշխնելով հաղթանակս: Միայն վայրէջքի ժամանակ էր ամեն բան փչանում: Դուրս գալով լուսնի կեղծ շողերից, երբ հանում էի ակնոցս, որ ողջունեմ ոգևորված ամբոխին, հանդիպում էի միայն Գայանեի, Աննայի կամ Մայրիկի դորովալի հայացքին. «Խաղա, տղաս, ժամանակդ է»:

Մակայն գիտեի, որ նրանց ներողամիտ աչքերը սպասում են անցման հասակիս փխրուն տարիքի ավարտին և երազում են ավելի փայլուն ապագաներ: Մեծահասակների այս աշխարհում, ակնհայտ հանցանքի մեջ բռնվելուց ստորացած, որ ես արհեստական ձևով ստեղծել էի, նեղսրտած իջնում էի թառից, ամաչելով իմ խենթ խաղերից, առլեցուն որոշում-

ներով, որոնք պարտութիւնն էին կրում վաղահաս պատանութիւնից:

Իմ մեծանալուն խանգարող այս խաղերի և դրանց հետևող զղջումների գոյակցումից շփոթված, նստում էի իրենց գործի վրա կուսցած իմ երեք սուրբ դերձակուհիների դիմաց. նրանց ասեղները մանրիկ ծակոցներով կտցահարում էին փոքրիկ ճեղքվածքի եզրերը, որ պիտի ընդունեն սադափե կուճակը: Ձեռքով գործված այդ օղակները «չափը չափին» կոչվող վերնաշապիկների մենաշնորհն էր:

Մի օր սպասեցի փոքրիկ օղակի ավարտին և թելի վերջին ձգումին ու կտրելուն պես հարցրի Մայրիկին.

— Նկատո՞ւմ ես, որ վերջերս քիչ եմ խաղում:

Աննան ու Գայանեն՝ սփոփող ու հուսադրող անմեղ ստեղծարարները, միաձայն պատասխանեցին, թե ինչ սկսել եմ մեծանալ, համարյա այլևս չեմ խաղում: Եվ անհաջող սուտը քողարկելու, ավելի «ճշմարտանման» դարձնելու համար ավելացրին մի մանրամասնութիւն.

— Այս առավոտ հենց այդ էինք խոսում մորդ հետ:

Մայրիկը ժպտալով անցավ մի նոր օղակի, և ինձ թվաց, թե լսում եմ լռութեան թևաբախումը:



«Հուլիս, 1929: Արդեն մի շաբաթ է չեմ խաղում: Խառն առարկաների արկղը, որ կոչված է ստեղծելու իմ արհեստական աշխարհը, ընկած է մի կողմ, և ես ցանկութիւն շունեմ մոտենալու դրանց», գրել էի իմ օրագրում, ինչպես կգրեն հետմահու հրատարակութեան հույսով:

Իրագարծութիւնը կարևոր էր: Ես սպասեցի ճաշի ժամին, որ ամբողջ ընտանիքի առջև հայտարարեմ: Մեծալուրջ հայացքով բարձրացրի աղբամանի կափարիչը, ասլա, երբ համոզվեցի, թե բոլորը լավ հասկացել են շարժումիս իմաստը, պարզորեն ավելացրի.

— Վերջ, այլևս չեմ խաղա:

Ընտրել էի դիտողական ոճ, ընդգծված, հակիրճ խոսք, որ տպավորութիւնն ավելի ուժեղ լինի:

Հայրս ու մայրս, հետեւելով ինձ, նույնքան հակիրճ պատասխանեցին:

— Լավ է... շատ լավ է:

Քայց նրանց աչքերում վառվող երկու փոքրիկ լույսերը հակասում էին ընտանեկարի տոնին:

Աննա մորաքույրս, խաղողի տերևով պատրաստված համեղ տոլման ցույց տալու պատրվակով, ինձ քաշեց խոհանոցի անկյունը, ձեռքը դրեց ճակատիս: Առանց սնդիկի այդ ջերմաչափը, որ զարմանալի ճշգրտութեամբ որոշում էր իմ ջերմաստիճանը, գլխի թեթև շարժումով Գայանեին հասկացրեց, թե բուրոսվին ջերմութունն շունն է:

Իմ բարի և անուշիկ Աննան ու Գայանեն, իմ հոգնակի մայրերը, որոնք ընդմիջտ իրենց ճակատագրերը կապել էին մերին, իրենց ուրախութունը կապել իմ երջանկությանը, այդ երեկո ավարտվող մանկութեանս խոնարհ սպասավորները անտարբեր էին լքված խաղերիս նկատմամբ, նրանց լիուշի բավարարում էր իմ առողջ լինելու գիտակցութունը:



Տիկին Օրթոլիի դպրոցում սովորելու շրջանն ավարտվել էր ուսումնական տարվա հետ, տնօրինուհու կազմակերպած լիմոնադով, նարնջի ջրախառն հյութով ու պաքսիմատով խնջույքով: Նա մեզ մաղթեց փայլուն հաջողութուններ՝ մեր ապագա դպրոցներում, բայց ճառի վերջին խոսքերը կուզնացին դեպի բուՖետ խուժող երեխաների վայրենի արշավանքի ոռնոցի մեջ:

Մի անկյունում անշարժ կանգնած, արհամարհանքով դիտում էի այդ աղմկոտ ու գիշատիչ հրոսակախմբին, որ հարբել էր մեծ արձակուրդի հեռանկարից: Քանի որ երբեք ես չէի ընդունվել նրանց կողմից, համերաշխության ոչ մի նշան ցույց չտվեցի: Լուսանցքի վրա մնացողի գերագույն սնափառութեամբ առանձնության մեջ ճաշակում էի իմ և նրանց տարբերության արբեցուցիչ պտուղները:

Երբ անկշտում խումբը հեռացավ սեղանից, այնտեղ ոչ մի փշրանք չէր մնացել, ոչ էլ մի կաթիլ լիմոնադ: Եվ ես

ընդհանուր անտարբերութեան մեջ խրոխտ ու հպարտ սըր-  
ւով, լուռ և ընդմիջտ հեռացա իմ առաջին դպրոցից:

18.

— Ո՞րն է Մարսելի ամենամեծ դպրոցը:

Մայրս, ջեշտելով իր արևելյան ծորուն ր-ն, այդ հարցը քսան անգամ տվել էր մեր թաղամասում: «Դելմաս-մթերա-  
յին» խանութի տիրուհին՝ տիկին Դելմասը, առանց տատան-  
վելու պատասխանել էր.

— Մելիզան ուսումնական հաստատությունը:

Առաջնակարգ դեղագործը հիացմունքով հաստատել էր,  
մեր հացթուխը թևերը տարածել էր, կարծես ուզում էր ասել՝  
«դրանից լավը չկա», և մի հարեանուհի, որի ամուսինն աշ-  
խատում էր քաղաքապետարանի գրասենյակներից մեկում,  
ամփոփել էր.

— Դե պատկերացրեք, տիկին, Այնինչի տղան, X-ի երե-  
խաները, տիկին Y-ի զարմիկը, Z-ի կրտսեր երեխաները...  
Բոլորն էլ հաճախում են այդ դպրոցը:

Մինչ ակնածանքով թվարկվում էին մարսելյան բարձրաշ-  
խարհիկ մարդկանց անունները, մայրս իր որդու համար  
երազում էր փայլուն ապագա՝ նրանց երեխաների ընկերակ-  
ցութեամբ:

Բայց բոլորը միաձայն զգուշացնում էին. «Միայն շատ  
թանկ է»: Տարօրինակ զուգադիպութեամբ մենք ապրում  
էինք «Պարադի» (Դրախտ) կոչվող փողոցի անշուք մի սեն-  
յակում, իսկ դպրոցը գտնվում էր «Ֆորթյունե» (Երջանիկ)  
փողոցում:

Այդ դպրոցի նկատմամբ եղած ընդհանուր հիացմունքը,  
անշուշտ, վերաբերում էր ուսման բարձր մակարդակին,  
սակայն կարևոր էր նաև աշխարհագրական դիրքը: Պարադի  
փողոցը, իր հինգ հարյուր համարներով, Մարսելի ամենաեր-  
կար փողոցներից էր: Փողոցի երկրորդ մասը միանում էր  
Սեն-Փինիսին՝ քաղաքի ամենահարուստ թաղամասին, որտեղ  
բնակվում էին քաղաքի նշանավոր մարդիկ: Մասնավոր այդ  
դպրոցի մոտիկությունը, որտեղ տրվում էր նաև կրոնական


դաստիարակութիւնն, ցույց էր տալիս այնտեղ հաճախող աշակերտների սոցիալական դասը:

Մենք ապրում էինք փողոցի նվազ ազնվական մասում, բայց դա շուրջ էր տալիս ազնվական մասի շարունակութեանը:

Տիկին Դելմասը խոստացավ հարուստների այս դպրոցի գների մասին տեղեկանալ իր հաճախորդներից մեկի միջոցով, որի ամուսինը, թե աներձագը մատակարարում է շգիտեմ ինչ, շգիտեմ ում, ունի ընկերներ, որոնց տղան և այլն, և այլն:

Չնայած այս բարդ միջնորդութիւններին, նա շատ շուտով հաղորդեց այնքան ցանկալի դպրոցի եռամսյա վճարի մասին:

Այդ թիվը ինձ համար ոչ մի իմաստ չունեի, բայց մայրիկի անակնկալ գունատվելուց հասկացա, որ վարձը շատ բարձր էր:



Այդ երեկո, ընթրիքի ժամին խոսում էին միայն այդ դրպրոցի մասին, դպրոց, որ կրթում էր ապագայի մեծ մարդկանց, քանի որ քաղաքի բոլոր մեծամեծերը այնտեղ էին ուղարկում իրենց որդիներին: Ընդհանուր ոգևորութեան մեջ մոռացել էինք, որ հաջողութիւնը ժառանգական չի:

Փողի մասին ոչ մի խոսք չեղավ: Գոնե մինչև այն պահը, երբ ինձ զգուշացրին, թե քնելու ժամն է:

Ահա այդ ժամանակ միայն սկսվեց ընտանեկան խորհրդակցութիւնը: Միջնորմի հետևում ականջներս սրած սպասում էի, որ մի բան լսեմ, բայց նրանք սեղանի մոտ նստած ցածր զրուցում էին և պիտի մեկնումեկը ձայնը բարձրացնէր, որ ինձ հասնէր նախադասութեան մի ծվին:

Գաղտագողի սողացի մինչև շարժական միջնորմը, որ խանգարում էր լսելուս, և ականջս հպեցի ալիքաձև դրված շրջանակի ճեղքին: Մորաքույր Աննան առաջարկում էր գնալ գործարան, որպէսզի իր աշխատավարձն ավելացնէր տան ընդհանուր եկամուտին, Գայանեն հույս ունէր կրկնապատկել վերնաշապիկների քանակը, վարձելով մի կարի մեքենա, մայրիկը միտք ունէր աշխատավարձի փոքրիկ հավելում

խնդրել երկու տարուց հետո... Այսպես, մինչև ուշ գիշեր խոսեցին: Այնուհետև երկար լռություն տիրեց... և նորից լավեց հորս ձայնը:

— Ոչ, ուրիշ լուծում չկա...

Խոսքի շարունակությունը կորավ խուլ ու խառնաշփոթ բզզվունի մեջ. նա մեջքը դարձրել էր իմ դիտման կետին և խոսում էր ցածր: Խոսքը շատ կարճ էր, և ես եզրակացրի, թե չեմ գնալու մեծ մարդկանց հատկացված այդ դպրոցը:

Աշխատելով լսել անլսելի շնչյունը, ականջս այնքան ամուր էի հենել միջնորմին, որ միջնորմը սասանվեց և ուժեղ զղրոցոցով փովեց սենյակի մեջտեղում, ինձ երևան հանելով ներքնակիս վրա չոքած, գավեշտական դիրքով:

Մայրս անմիջապես օգնության հասավ, գոնե ամոթից փրկելով ինձ:

— Զուգարան ես ուզում... գնա:

Ես բռնեցի ինձ մեկնված օգնության ձեռքը և դուրս եկա սանդղահարթակ, գնացի զուգարան, որտեղ բացարձակապես բան չունեի անելու: Տրամաբանական որոշ ժամանակ անց, մի կերպ արդարացնելու համար իմ ավելորդ տեղափոխությունը, գլուխս կախ վերադարձա սենյակ: Հայրս բռնեց ուսերիցս, երկար նայեց աչքերիս և ուղղակի ասաց.

— Դու կգնաս այդ դպրոցը:

Ես չգիտեմ հանկարծ ի՞նչ հրաշքով լուծվեցին դրամա՛յան խնդիրները, բայց այդ գիշեր, բաց աչքով, երկար երազեցի գիտության այդ կաճառի մասին, որ մատուցվում էր ինձ: Մենք չգիտեինք, որ ոմն պարոն Ժյուլ Ֆեռիի բարերարությունը Ֆրանսիայում գործում էր ձրի ուսումնական հաստատություն և որ հենց մեր տան մոտ գտնվում էր պարոն Թիերի անվան հրաշալի լիցեյը:

## 14.

Իմ մեծ արձակուրդի օրերն անցնում էին արդարադատության պալատի զբոսայգում, որտեղ ամեն օր ճաշից հետո ինձ «օգափոխության» էր տանում Աննա մորաքույրս:

Կողք կողքի նստում էինք որևէ նստարանի, որ միշտ ներկ-

ված էր լինում կանաչ, թերևս փոխարինելու համար բացա-  
կայող բուսականությանը: Մեր շուրջը, ավազի վրա, անիվ-  
ները ճռճոացնելով պտտվում էին երկանիվ ու եռանիվ հե-  
ծանիվներ ու ինքնասահեր: Երեխաները սուր ծղրտում էին  
և տեղի անտեղի զնգզնգացնում զանգերը: Աննա մորաքույրս  
նստելուն պես պայուսակից հանում էր մի քանի վերնաշա-  
պիկ, որ օղակները լցնի, այսինքն՝ ե՞րբ եմ տեսել նրան  
առանց ասեղի, եթե չհաշվենք այն պահը, երբ գազօջախի  
առջև զբաղվում էր եփել-թափելով:

Նա ինձ էր մեկնում կտավե դրամապանակը, որի փակա-  
նի զույգ կտուցները իրար էին միանում շոր ճռթոցով:

— Գնա մի բան առ քեզ համար:

Նա մատնացույց էր անում կրպակը, որտեղ, բացի քար-  
թու խմորեղեններից, շաքարաջրով պատրաստված պաղպա-  
ղակներից, թթվաշ մոմպասներից, կային նաև վարձով տրը-  
վող երկանիվ ու եռանիվ հեծանիվներ:

— Հեծանիվ չե՞ս ուզում:

Ոչ, իսկապես ոչինչ չէի ուզում:

Տանը երբեք չէինք խոսում Ֆրանսիայից առաջ ունեցած  
մեր նախկին կյանքի մասին: Հասարակական զբոսայգու  
նստարանին նստած, ասեղի երթևեկի հետ Աննա մորաքույրս  
քիչ-քիչ պատառիկներ էր բացում այդ անցյալից: Մեր գե-  
ղեցիկ տունը՝ սպասավորներով, այգին՝ վարդերով լի, որի  
թերթիկներից մուրաբա էին եփում, փոքրիկ շատրվանը, որ-  
տեղից ժայթքում էր վճիտ ու սառնորակ ջուր... Հանկարծ մի  
խուսափուկ պատկեր էր հայտնվում աչքիս: Ես ավելացնում  
էի մի որոշակի մանրամասնություն նրա նկարագրության  
մեջ. փոքրիկ շատրվանը և ավազանը երիզող վարդագույն  
մարմարը... Հետո ամեն ինչ մթնում էր հիշողությանս մեջ:  
Երբ մորաքույրս խոսում էր հորս արհեստի մասին, — նա եղել  
է ձկնորսանավերի սեփականատեր, — ես չէի հիշում ոչ նրա  
քսան նավերը, ոչ էլ նավաստիներին, բայց հիշողությանս  
մեջ հառնում էր Աբգար անունով մեկը, որն ինձ ուսերին  
դրած տանում էր քաղաք՝ զբոսանքի, նրա գլխից անպակաս  
էր բուխարի գորշ փափախը... Եվ նորից ամեն ինչ ընկղմվում  
էր մոռացության սև վիհի մեջ:



Մի օր մորաքույրն ընդհատեց խոսքը և իմ կողմը մեկնելով ասեղը՝ ասաց.

— Մենք առաջ այսպես շենք ապրել:

Շատ էի սիրում, երբ պատմում էր այն «ուրիշ» երկրի մասին, որտեղից եկել էինք:

Երբ պալատի ժամացույցը հինգ անգամ խփում էր, մենք վեր էինք կենում նստարնանից և, շրջանցելով ուղիղ ճանապարհը, ամեն օր գնում էինք Ֆորթյունե փողոցով, որ մի պահ կանգ առնենք «Մելիզան ուսումնական հաստատություն» փակ դարպասների առջև:

Ծառուղու խորքը քաշված բարձրահարկ շենք՝ բակով, որ իմ կարծիքով խաղահրապարակ էր, որովհետև երկու կողմում ֆուտբոլի դարպասներ կային:

Ինչպես բոլոր դպրոցներն արձակուրդի շրջանում, իմ ապագա դպրոցը նույնպես աշակերտներից լքված, խոր տըխրություն էր արտահայտում: Բայց իմ տխրությունն ուրիշ պատճառ ուներ: Արդյոք ինձ՝ ուրիշ դասակարգի երեխային, կընդունեի՞ն մարսելյան ընտրանիին հատկացված այդ հաստատությունը:

Ես նույնիսկ չգիտեի՝ ի՞նչ գործ է անում հայրս Սեն-Լուիի շաքարի գործարանում, իսկ մայրս ընդամենը տնայնագործ վերնաշապիկ կարող էր: Իմ մոտավոր հաշվումներով այս կուշումները ոչ մի «Սեզամ, բացվիր» չէին խոստանում: Ճիշտ է, մենք ապրում էինք հանրապետությունում, բայց աշխարհի բոլոր վարչակարգերն էլ ունեին իրենց վերնախավը, որին մենք չէինք պատկանում:

Վերադարձի ճամփին երազում էի ներողամիտ բարյացակամության մասին, երբ հանկարծ մի փայլուն միտք ծագեց իմ մանկական գլխում: Աննա մորաքույրս կգար պարոն տնօրենի մոտ և կասեր. «Գիտե՞ք, պարոն, մենք առաջ այսպես շենք ապրել»:

\* \* \*

Այդ արձակուրդը նշանավորվեց երկու կարևոր իրադարձություններ: Առավոտյան, երբ մայրս սովորաբար արդուկում էր ուշ գիշերով վերջացրած վերնաշապիկները, կախված տե-

ղից իջեցրեց զգեստը, որ պահված էր այցելությունների և հազվադեպ զբոսանքների համար: Մայրիկը պարզ էր հագնւ-  
վում, հիմնականում կրում էր գորշ երանգներով, աչքի շքե-  
նող զգեստներ:

Հետագայում, շատ հետո, երբ ճակատագիրը շատ բան էր  
փոխել մեր կյանքում, հիշում եմ, իմ համառ խնդրանքով  
մայրիկը համաձայնել էր մի նշանավոր դերձակի մոտ պատ-  
վիրել ամառային զգեստ, որտեղ երևակայությունը պիտի  
որոշ դեր ունենար, բայց պարտադիր պայման էր դրել, որ  
հազիվ նկատվող ծաղիկների եզրագծերը լինեն խամրած բեժ  
գույնի:

Այդ առավոտյան, երբ հագել էինք մեր կիրակնօրյա  
զգեստները, Մայրիկն ասաց, որ այսօր մեզ ընդունելու է  
պարոն Մելիզանը: Ցանկալի ժամը եկել էր, և ես տազնապա-  
հար մեխւել էի տեղումս: Աննա մորաքրոջս ամենօրյա հա-  
գուստն ասում էր, թե ինքը մեզ հետ չի գալու: Ես որոշել  
էի ճանապարհին մորս հուշել, որ պարոն Մելիզանին պատմի  
մեր անցյալի մասին. դա օգնության կգար մեր անփառունակ  
ներկային:

Բացվեց մի պսալիկ գրասենյակի դուռ, և հայտնվեց պա-  
րոն Մելիզանը. մարմնեղ, ոչ գեր, հաղթ իրանով, փոքր-ինչ  
կարճ սրունքներով, խնամքով սանրված արծաթավուն մա-  
զերով, թավ բեղերով. իմ կարծիքով, կլիներ հիսուն տարե-  
կան: Մինչ կնստեր թղթապանակներով ու գրքերով ծանրա-  
բեռնված գրասեղանի մոտ, ես ուշագրություն դարձրեցի նրա  
խստաոճ, գորշ քարածխի գույնի բաճկոնին և զուլավոր տա-  
բատին, որի ծալքերը անխնամ արդուկի պատճառով ոլոր-  
վում էին ծնկների վրա:

Նրա դեմքի սառն հեղինակավորությունից այնպես էի  
ազդվել, որ անկարող կլինեի պատասխանելու նույնիսկ ամե-  
նաչնչին հարցին: Բայց հարց չտվեց:

Տարիներ անց, դպրոցի նախկին սաներից մեկը, որ նրան  
ճանաչում էր մոտիկից, հավատացնում էր, թե շատ մեղմ ու  
բարի մարդ է: Ես տեսել էի միայն նրա խստաբարո և խոժոռ  
արտահայտությունը: Միաժամանակ լինելով ուսման տնօրեն,  
ընդհանուր տնօրեն և վերակացու, թերևս ինքն իրեն պար-

տաղրել էր այդ ցառն ու անհաղորդ տեսքը, որպեսզի վախ  
և հնազանդութիւնն ներշնչի այն երեք հարյուր անդադրում  
չարաճճիներին, որոնք շուտով լցվելու էին դպրոց:

Այդպես, տարիների ընթացքում խստութեան դիմակով  
կաղապարված այս դեմքը պիտի որ այդպես անշարժ մնար,  
նույնիսկ աշխատանքային կյանքից դուրս:

Պարոն Մելիզանը մորս հարցրեց իմ ուսման մակարդա-  
կի մասին, հետաքրքրվեց իմ վերջին դպրոցով, զգույշ խոսք  
դրեց ուսման վարձից և երկար խոսեց կրոնից: Կաթուղի<sup>1</sup> է  
էինք, հավատացյալ<sup>2</sup>, հաճախում էինք արդյոք ծխակաւն եկե-  
ղեցի...

Մայրս պատմեց մեր ժողովրդի ողբերգութիւնը, մեր  
առաքելական եկեղեցու մասին, ուրիշներից շատ առաջ մեր  
քրիստոնեութիւնն ընդունելու մասին, որ այնքան մոտ է կա-  
թուղիկութեանը...

Պարոն Մելիզանը, կզակը հենած ձեռքի ափին, արմունկը՝  
դրասեղանին, լսում էր: Որոշ ժամանակ լռութիւն տիրեց,  
հետո նա առաջին անգամ շրջվեց իմ կողմը.

— Լավ, երիտասարդ, ձեզ կտեղավորենք 9-րդ դասարա-  
նում: Ձեր ուսուցչուհու անունը օրիորդ Պողոսի է: Գրքերն  
ու տետրերը կստանաք դպրոցից, բացման առաջին օրը՝ հոկ-  
տեմբերի 1-ին, ժամը 9-ին:

Նա վեր կացավ տեղից, բանակցութիւնն ավարտված էր:

Դռան շեմին մայրս բացեց պայուսակը՝ վճարելու առա-  
ջին եռամսյակի ուսման վարձը, բայց պարոն Մելիզանը քա-  
ղաքավարութեամբ ասաց.

— Մի անհանգստացեք, տիկին, կվճարեք դասերն սկըս-  
վելիս:

Երբ արդեն դրսում էինք, թեթևութեան և ազատութեան  
այնպիսի զգացում ապրեցի, որպիսին մարդ ճաշակում է  
բժշկի առանձնասենյակից դուրս գալիս, երբ ծանր հիվան-  
դութեան կասկածով բժիշկը ունեցնանակարը զննելուց հե-  
տո հայտարարում է.

— Լավ է, ոչ մի բան չկա: Կարող եք հանգիստ սրտով  
արձակուրդ գնալ:

Երկնքի կապույտը աչքիս ավելի կապույտ թվաց, ծառերը՝  
սովորականից ավելի կանաչ: Այս կեսօրից հետո, արդարա-

դատութեան պալատի զրոսայգիներում, որոնք փոխվել էին  
լազուրյա ափերի, ինչպես իմ փոստային բացիկներում,  
թերևս ցանկանայի Աննա մորաքրոջս առաջարկով մի ժամ  
վարձու հեծանիվ բշել:



Այս արձակուրդը նշանավորող երկրորդ իրադարձությունը  
մեր որոհն էր «Լա Բել ժարդինիեր» խանութ, որտեղ պիտի/  
համալրեի ապագա դպրոցիս հանդերձանքը:

Գայանե մորաքույրս, գամված կարի մեքենային, որ ի  
վերջո վարձել էինք, այլևս գործից աչք չէր կտրում, և իրար  
վրա դարսվում էին վերնաշապիկները: Մայրս Աննա մորա-  
քրոջը խնդրեց գալ մեզ հետ, որպեսզի իր հեղինակավոր կար-  
ծիքը հայտնի գնվելիք կոստյումիս մասին:

Մանկական բաժանմունքն զբաղեցնում էր մի ամբողջ  
հարկ, և կախիչների վրա կողք կողքի կախված հագուստների  
անվերջանալի շարքերը ստեղծել էին նեղ միջանցքներ, որ-  
տեղով քայլում էինք: Աննա մորաքույրը շոշափում էր գործ-  
վածքը, որոնելով «մաքուր բուրդ», մայրս գնի կողմն էր շուռ  
տալիս թևերից կախված պիտակները: Հետաքրքիրն այն էր,  
որ նրանք երբեք կանգ չէին առնում իմ հավանած հագուստ-  
ների մոտ:

Նրանք ցածրաձայն խորհրդակցեցին և մի քանի երթևե-  
կից հետո ընտրեցին մի կոստյում, որի կարճ տաբատի փող-  
քերը ուռչում էին ծնկների վրա, և որը կոչվում էր «Գոլֆ»:  
Ես զգուշորեն դիտողութուն արեցի, թե դպրոցում դեռ չեմ  
սեսել նման կոստյումով որևէ աշակերտի: Նրանց ընտրու-  
թյան չափանիշը հասնելով մինչև ծնկներս, պիտի ձմեռվա  
ցրտից պաշտպաներ ինձ: Կիրակի օրերի համար ես իրա-  
վունք ունեի լրացուցիչ կարճ տաբատի միլենույն գործվածքից,  
և մերոնք սրունքներս ծածկելու համար որոշեցին գնել մի  
զույգ բրդե գուլպա «աղջիկների» բաժանմունքից:

Այդ աղետից փրկվելու մի հույս ունեի. թերևս հետո մո-  
րանան այդ գնումը: Վերարկուս հոյակապ էր. իրար վրա  
եկող փեշերով, շտախանդական բրդյա վանդակավոր գործված-

քից, միայն իմ ճաշակի համեմատ մի քիչ երկար էր, բայց մտածում էի, թե մեր մեկուսի զբոսանքների ժամանակ Աննա մորաբորոջս կխնդրեմ, որ մի տասը սանտիմետր կարճացնի:

Գնեցին նաև շատ գեղեցիկ, անտարկտիկյան արշավանքի վայել պուշուկեր և մի զույգ սև, սուր թթուվ, կաշվե ներբաններով ոտնամաններ:

Երբ խանութի պիտակները կրող ստվարաթղթե տուփերով ծանրաբեռնված դուրս եկանք պոտադոնով, ես անբացատրելի տագնապ էի զգում: Հանկարծ Աննա մորաբորոջս բացականշեց.

— Տե՛ր աստված, գուլպաները մոռացանք:

Պտտվող դռան թմբուկը մեզ նորից ետ մղեց խանութ՝ «աղջիկների» բաժանմունք:

Տարտամ անհանգստությունը, որ ապրում էի իմ ապագա հագուստների համար, առաջանում էր ոչ միայն երկու մայրերիս ինձ ամեն կերպ տաք հագցնելու ցանկությունից: Ի վերջո՝ ես կարող էի օրն օրին իմանալ օդի ջերմաստիճանը և նրանց «հանկարծ շմբես»-ին առարկել՝ «բայց եղանակը շատ մեղմ է»:

Իմ տագնապն առաջանում էր օտարոտի և տարտամ բնաղդից, ինչ-որ խորհրդավոր նախաղգացումից, թե ես հագնված չեմ լինի մյուսների նման:

Այսքան տարիներ անց դարձյալ ինձ տեսնում եմ նոր կոստյումով, նոր կոշիկներով, թևերս կախ, խանութի հայելու առջև կանգնած: Վաճառողը առևտրական շողոքորթությամբ պտտվում էր շուրջս, իսկ Աննայի և Մայրիկի դեմքերը ծաղկել էին հպարտությունից:

Ինչ արած, այդքան զոհողություններով ձեռք բերված դստմից չհիասթափվելու համար լայն ժպտալով ասացի.

— Սա շատ գեղեցիկ է:

Թեև այդ գեղեցկության փոխարեն կգերադասեի ոսկեզ ծկոճակներով մի համազգեստ, պարտադիր ու հավասարիցնող համազգեստ, որ սոցիալական բոլոր դասակարգերը միախառնելով իրար, կարող էր ինձ աղատել երկշտությունից:

Սեպտեմբերի 30-ի գիշերը կարճ եղավ և անհանգիստ: Այն մի քանի ժամը, որ մնում էր ինձ մինչև դպրոցի բացվելը, խանգարում էր քունս: Երկու անգամ վեր կացա անկողնուց՝ ժամը ստուգելու մորս ժամացույցով, որ ամեն երեկո դրված էր լինում խոհանոցի սեղանին:

Ժամը վեցին արդեն ոտքի վրա էի: Գայանե մորաքույրս աչքերը բացեց և մեղքի մեջ բռնվածի նման իրեն գցեց թեյամանի կողմը: Մայրիկը և Աննա մորաքույրը խոր քնած էին: Ես շնչացի:

— Չէի ուզում քեզ արթնացնել:

— Ժամը քանի՞սն է:

— Օհ... համարյա... յոթը:

Հանգստանալով՝ նա մատնացույց արեց մի մեծ քառակուսի փաթեթ, որ դրված էր ներքնակի և միջնորմի արանքում: Կամաց, աչքի պոչով նշան արեց, որ բացեմ: Վաղեմի սովորությամբ նախ փորձեցի քանդել փաթեթը շրջափակող մեջտեղի հանդույցը, որ հետո թելը կծկեմ: Այդպես կերկարացնեի անակնկալի պահը, և թելն էլ կմնար հետագա օգտագործման համար: Բայց այս անգամ խաչածև կապը չքանդվեց: Փաթեթի պարունակությունը տեսնելու շտապողականություն թափով քաշեցի թուղթը: Պատովող թղթի ձայները վաղորդյան լուսնյան մեջ արթնացրեց Մայրիկին ու Աննա մորաքույրը, նրանք ընդոստ նստեցին անկողիններում: Գանդաղ բարձրացրի սովարաթղթե կափարիչը. մուգ կարմիր, հրաշալի մի պայուսակ՝ ուսափոկերով, դրված էր մետաքսաթղթի վրա: Փականից կախված էր պիտակը՝ «խկաջ կան կաշի» երաշխավորությամբ:

Երիտասարդ տարիների իմ Մայրիկը, իմ Աննան, իմ Գայանեն որքան վերնաշապիկ, օղակ և կոճակ են կարել գիշերային աղոտ լույսով, որպեսզի կարողանան ինձ պարգևել այդ միամիտ ուրախությունները:

Եվ եթե ճշմարիտ է, որ ես գիտակից երեխա եմ եղել և ոչինչ չեմ խնդրել, թերևս նաև այն պատճառով, որ նրանք շատ են տվել:

Նախաճաշս արեցի՝ շոյելով պայուսակիս կաշին, դյուրե-

ված պատլիկ ու ծիծաղելի բանալիով, որ բանտարկում էր  
Կրքերս ու տետրերս: Մայրս պատրաստվում էր ուղեկցելու  
ինձ: Ժամացույցը կապելով դաստակին, մի քանի անգամ  
շարժեց, մոտեցրեց ականջին: Փոքրիկ ժամացույցը խելոք  
տկտկում էր և եթե վեցից մի քիչ ավելի էր ցույց տալիս,  
վաղորդյան այդ անկարգության միակ մեղավորը իմ նյար-  
դային վիճակն էր: Մի քիչ ամաչելով, որ այսքան վաղ արթ-  
նացրել եմ բոլոր տնեցիներին, պայուսակս մեջքիս, դուրս  
և կա մեր փոքրիկ պատշգամբը՝ սպասելով գնալու ժամին:

Անցնելով բազմոցի մոտից, հանկարծ նկատեցի, որ հորս  
անկողինը բացված չի: Հստ երևույթին տանը չէր գիշերել:

Կոթնած մեր փոքրիկ պատշգամբի բազրիքին՝ աշխատում  
էի որևէ տրամաբանական պատասխան գտնել այդ միան-  
գամայն անբնական բացակայության համար, սակայն գի-  
շերվա նրա արտասովոր վարքը ինձ անբացատրելի էր թվում:

Ներքևում դանդաղ արթնանում էր Պարադի փողոցը: Ան-  
ցորդները դեռևս հազվադեպ էին, բայց տրամվայները արդեն  
սահում էին ուղիների վրա, նրանց երկար ձողերը շեղակի  
բարձրանում էին վեր՝ հոսանք ստանալու երկինքը կտրուտող  
հաստ մետաղալարերից:

Մի տրամվայ կանգ առավ:

Մի մարդ իջավ ծանր ճոճվելով: Չորրորդ հարկի բար-  
ձունքից չէի ջոկում այդ կռացած կերպարանքի ընդհանուր  
ուրվագծերը, բայց մարդը կարծես ցավից երկտակված լի-  
ներ: Մի քանի քայլ գցեց դեպի դիմացի սոսին, մեջքը հե-  
նեց բնին, ասես ուզում էր մի քիչ ուժ առնել ծառի հզորու-  
թյունից, և կամաց ուղղեց ողնաշարը: Երկար սլահ մարդն  
ու ծառը մնացին միաձուլված, հետո մարդը դիտահակ, ծանր  
քայլերով կտրեց փողոցը և դուրս եկավ իմ տեսողաշտից:

\*\*\*

Մեր սենյակի դուռը բացվեց:

Եվ պատշգամբից երևացող կռացած մարդը ներս մտավ:  
Հայրս էր:

Մեջքը փայտի նման ուղիղ, աչքերում քնքշության ցուրքեր  
և հոգնությունը քողարկող ժպիտ: Նա համբուրեց ինձ: Այդ

ծակող, քրտնքահոտ համբույրը հանկարծ բացահայտեց «որոշումը», որ այն երեկո, միջնորմի հետևում, շնայած ահանջներս սրել էի, չկարողացա լսել: Նա ցերեկային աշխատանքը փոխել էր գիշերայինի, որ կրկնապատկի աշխատավարձը:

Երբ սիրո մեծ հանրագիտարանում սպառված լինեն միմյանց որոնող շրթունքների, միախառնվող փսիինքի, հաճույքների պատմությունները, որոնք լավագույն դեպքում ավարտվում են կարճ ջղակծկումով, երբ անցողիկ սիրո համար հիշատակված կլինեն հավերժական երգումներն ու կաշժակնահար սրտերը, երբ սիրային պատմությունների մեջ հովերգված կլինի միայն նրա գերագույն պահի սքանչելի սկիզբը, որը վերսկսելու ցանկություն է առաջացնում, երբ ամեն ինչ ասված կլինի իշխանների կամ այս աշխարհի մեծագույն գայթակղիչների սերերի մասին, երբ ի վերջո մարդկային հիշողության մեջ բանաստեղծներն ու երաժիշտները մետաքսյա սանդուղքի վրա անմահացրած կլինեն ոռոմեոսներին կամ տրիստաններին, որոնք հիանալի մեռնել գիտեն ոսկեհեր իզոլդանների համար, սիրո հերոսների այդ վիթխարի համաշխարհային հանրագիտարանում ի՞նչ է պատմվելու ծառին հենված այս մարդու գողգոթայի մասին:

Գունատ, ճակատին խոր կնճիռներ, աչքերի տակ փոսեր, մի քանի օր շափրված մարդու սիրո համեստ պատմությունը, մարդ, որ գործարանում երկար գիշերների ստրկությունամբ պիտի փող աշխատեր իր զավակի լավագույն վաղվա համար:

Այս կուացած մարդուց կմնա լուկ մի անցյալ՝ զավակի հիշողության մեջ, որը իր հերթին զուր չի կորցնի ժամանակը: Եվ այդ անծանոթ հոր շիրմին... մի անուն՝ ջնջված վայրի խոտերից ու ժամանակի բորբոսից:

## 16.

Դպրոցի բացման հենց առաջին ժամերից անմիջապես հասկացա, որ ես լինելու եմ «կիսաընդունված» և որ դեռ երկար քարշ կտամ իմ «տարբերության» բեռը: Իմ վախը «լա՞ Բել ժարդինիերից» կատարելապես ճշտվեց, ես հագնված չէի մյուսների նման:



Ապագա ընկերներին մակարդակին հասցնելու համար ինձ շրջապատել էին առաջնակարգ բրդեղենով, գործվածքեղենով ու կաշվով, թեև այդ շքեղութիւններից խաբուծյան հոտ էր դալիս: Ընկերներս իրենց բամբակեղենով, մեխավոր սանամաններով ու մաշված կոշիկներով կարող էին ցուցադրական «փնթիութիւն» տպավորութիւն ստեղծել, առանց կասկած թողնելու իրենց սոցիալական՝ դիրքի մասին: Ես ընդունվեցի ընդհանուր երկակի սուլոցով. հիացական և հեղնական, բայց ես միացա նրանց ծիծաղին, մնջախաղով ընդօրինակելով մեծ խանութների ցուցափեղկերի անշարժ մանեկիկներին: Առաջին կես ժամն անցավ գրեհական պիտույքների՝ տետրերի, մատիտների, ռետինների, գրիչների բաժանման ուրախ մըթնոլորտում: Մեր նոփ-նոր դասագրքերից դեռ գալիս էր տպագրական ներկերի հոտ:

Սեղանին իջած քանոնի հարվածով վերականգնված լուծիւն մեջ օրիորդ Պողոյին սկսեց ներկա-բացակա անել: Ռոբերին, Անրիին, Պոլին ու Ֆրանսուային հաջորդող Մերսիե, Մարթեն, Պաօ, Ֆարր, Գարսեն-ները «եռագույն» տողանցում էին, երբ հանկարծ մեր ուսուցչուհին, խզելով անունների արտասանութիւն կանոնավորը ոխմը, մի վայրկյան կանգ առավ, կոացավ ցուցակի վրա, և այդ համարյա աննկատելի դադարի ժամանակ ես հասկացա, որ հերթը իմն է:

— Ակոտ Մալաքյան:

Իմ անվան շ տառը արտասանվեց իբրև կ: Զգուշորեն, որպեսզի այդ սխալն ինձ չհետապնդի ամբողջ տարին, ուղղեցի արտասանութիւնը, բայց արդեն շշունջները, կշկշոցները, զսպված ծիծաղները վերածվել էին զվարթ աղմուկի: Կատակներն անցնում էին շարքից շարք, մեր ութամյա ծաղրասերների միտքը թռչում էր իմ Աշոտ անվան շուրջը, որ փոխվում էր «Օ շող»-ի (տաք ջուր), «շո լե Մարտին»-ի (տաք շագանակ), կամ շոշոտի: Հանկարծ ծիծաղն ու անանուն ճիչերը մեկեն կտրվեցին, ասես կաշժակ խփեց և հաստատվեց կատարյալ լուծիւն: Զեռքերը մեջքին, հայտնվեց պարոն Մեկիզանի հաղթ կերպարանքը: Բոլոր աշակերտները մեկեն ոտքի ելան: Օրիորդ Պողոյին շիկնեց:

Խուսափուկ հայացքների հանդեսի մեջ մեր տնօրենը սպառնաց, որ հինգշաբթի օրը ամբողջ դասարանին կպահի

դպրոցում, եթե նման դեպք մեկ էլ կրկնվի: Երբ դուռը ծածկըվեց տնօրենի հետևից, հաստատված խաղաղության մեջ նորից սկսվեց ներկա-բացական:

Մինչ կապույտ, սպիտակ, կարմիր<sup>1</sup> անունները հաջորդում էին միմյանց, ես մտածում էի իմ գեղեցիկ անվան մասին, որ հիշեցնում էր մեր հռչակավոր թագավորին: Բայց այդ առավոտյան ոմն անհռչակ Լուի կամ Անրի ինձ կարող էր լիովին բավարարել:



Եթե դեռ որոշ հույսեր ունեի, թե կընդունվեմ դասընկերներիս կողմից, դասամիջոցին այդ հույսերը վերջնականապես ի դերև ելան, երբ սկսեցին Փուտբոլի թիմեր կազմել: Դասարանի երկու ուժեղներին շնորհեցին թիմի ավագի կոչում, նկատի առնելով, որ նրանք դպրոցի հներից էին, ապա ընտրեցին յուրաքանչյուր թիմի խաղացողներին, ինձ անտեսելով: Ես ոչ բողոքեցի, ոչ էլ ցանկություն արտահայտեցի մասնակցելու նրանց խաղին, բայց նրանք պահանջ զգացին արդարացնել այդ մեկուսացումը իրենց հեգնական մտահոգությամբ, թե իմ «գեղեցիկ, սրածայր կոշիկները կփչանան»:

Ես գաղափար անգամ չունեի այդ խաղի կանոնների ու պայմանների մասին և իմ նկատմամբ եղած անարդարությունը ոչ մի ցավ չպատճառեց ինձ: Ես ավելի շուտ համակվել էի անորոշ տխրությամբ:

Տիկին Օրթոլիի դպրոցը ինձ համերաշխության ու եղբայրության տիպար էր թվում այս դպրոցի համեմատությամբ, որ ես այնքան բարձրացրել էի իմ երևակայության մեջ, և որը առաջին իսկ ժամից մեկուսացրեց ինձ:

Օրիորդ Պողոսին, որ հեռվից զննում էր ինձ, անկասկած տխրությունս վերադրելով Փուտբոլից զրկվելուն, եռանդով միջամտեց:

Նա ընդմիջեց խաղը.

---

<sup>1</sup> Հեղինակը նկատի ունի ֆրանսիական դրոշը (ժ. թ.)

— Մալաքյան, եկ այստեղ:

Ես հեռացա բակի ճաղավոր ցանկապատից և մոտեցա նրան: Նա կանգնած էր խաղացողների մեջ: Օրիորդ Պողոսին հեղինակավոր ձևով ցույց տվեց խաղադաշտը և որոշեց, որ ես պիտի մասնակցեմ խաղին:

Նա ավելացրեց մի քանի խոսք անթույլատրելի, ամոթալի, անբարյացակամ վարքի մասին և հեռացավ, երբ վերսկսվեց խաղը:

Ուսուցչուհուս շհասթափեցնելու համար ես մի քիչ վազվրզեցի տարբեր ուղղություններով, շիմանալով ինչ պիտի անեմ, երբ սուր սուլոցը կանգնեցրեց խաղացողներին: Կսվեց «պենալտի» բառը: Եղան բողոքներ և վեճեր, բայց սուլոզը բարձր դասարանցի էր և պարտադրեց իր հեղինակութունը: Բոլորը կենտրոնից հեռացան, շարվեցին դաշտի եզրերին: Դաշտի կենտրոնում մնացել էր միայն կլոր գնդակը, դարպասներից մոտավորապես տասներկու մետր հեռավորությամբ: Լոռիցյան մեջ զնգաց թիմի ավագի ձայնը:

— Մոտեցիր, Ակոդ, ցույց տուր տեսնենք ինչ գիտես, միայն զգույշ, կոշիկներդ չփչացնես:

Նա դիտավորյալ կերպով անունս արտասանեց կ-ով և խուսափեց ազգանունիցս, որ ավելի քիչ էր ծակում ֆրանսիացու ախանջը, մանավանդ, մեր դասարանում կար մի Մալիբրան:

— Ուժեղ հարվածիր:

Մեր թիմի խաղացողներից մեկի խրախուսական այս բացականչությունից մոտավորապես գլխի ընկա, թե ինչ են ուզում ինձնից:

Դանդաղ մոտենալով գնդակին, հակառակորդի դարպասի առջև տեսա միակ խաղացողին, որ մի ոտքից մյուսին էր անցնում, ձեռքերը պատրաստ՝ գնդակը որսալու: Եվ ես միանգամից հասկացա, թե ինչ պետք է անեմ: Երկու-երեք քայլ հետ գնացի, թափ առա և աջ ոտքիս ամբողջ ուժով հարվածեցի գնդակին:

Կոշիկիս սուր քիթը, որ այնքան ծաղրի առարկա էր դարձել, պատահաբար դիպավ կլոր գնդակի ուղիղ կենտրոնին, և գնդակը, թնդանոթային ուռմբի նման տապալելով դարպասապահին, մտավ դարպասի ուղղահայաց ղույգ ձողերի արանքը:

Իմ թիմի ուրախ բացականչությունների և հակառակորդ թիմի հարգանքի մեջ ես բմբոշխնեցի հերոսներին վերապահ-ված արբեցումի բուսաներ: Արդեն մոռացել էին «օտարը», կոշիկներս, անունս: Ես վայելում էի աշխարհի մեծագույն շեմպիոնատների այն կարճատև պահը, երբ մարդ պատրաստ է դիմագրավելու ցեղային բոլոր պատենշները, միայն թե խաղաղաշատում ունենա «շնորհալի հարվածողին»:

Տվյալ ազգային դրոշով զարդարված գունավոր ցեղի մարդը, և թե միայն ուժեղ հարվածել գիտի ոտքով կամ բռունցքով, հանկարծ մարդկայնորեն դառնում է մեր եղբայրը... հանուն գոլի: Արդի լեփ-լեցուն խաղասպարեզներում ազմկոտ, ոռնացող, սուլող, փողհարող, պոռթկացող, երջանիկ կամ սգավոր ամբոխը՝ նայած մրցողների հաղթանակին կամ պարտությունը, պատրաստ է հիմար սնապարծությունը ազգայնացնելու, փառաբանելու այլ տեղերից ժամանած մարդադաշտերի այս աստվածներին, միայն թե նրանք կրեն իրենց սիրելի թիմի դրոշը:

Իմ ակամա, բայց աննման գուլը ընձեռել էր այն երանելի վիճակը, որի լրիվ շրջադարձը արդարացնում էր իմ ծագումը և ներում նախնիներին:

Չուրկ լինելով այն ամենափոքր հատիկից, որ ստեղծում է ապագա շեմպիոնին, ես շատ շուտով կորցրեցի պահի առավելությունը:

Մեր փոքրիկ մարդադաշտում ես կուտակում էի բոլոր ձախորդությունները, որոնք ամեն անգամ ընդգծվում էին խստ-ընկերներիս անողորմ ոռնոցներով: Ես վրիպում էի ինձ ուղարկվող բոլոր գնդակները, և եթե պատահամաբ դրանք հասնում էին ինձ, փոխանցում էի հակառակորդներին... մինչև մի հարված, որ այս անգամ ճակատագրական եղավ ինձ համար:

Չգիտեմ ինչպես, գնդակը առջևումս էր, դարպասից ընդամենը մի քանի մետր հեռավորությամբ, ինձ հիշեցրեց առաջին հաղթանակս:

Դարպասապահը անտարբեր հենվել էր ուղղաձիգ ձողին, ցույց շտալով նույնիսկ ամենատարրական զգոնություն: Այդ ժամանակ, իմ հրաշագործ ոտնամանի սուր քթի ուժեղ հար-

վածով գնդակն անվրեպ նետեցի ուղիղ դիմացի դարպասի մեջ:

Նախ տիրեց ցնցող լուսթյուն, ապա հետևեցին սուլոցներ, հայհոյանքներ, գոռում-գոչյուններ՝ միախառնված հակառակորդների ծաղրական «բռավոներին»: Մեր թիմի ավագը, կատաղությունից փրփրելով, ընդհանուր ազմուկից ձայնը խզված, փոշու ամպի մեջ ոտքը շղային գետնին էր խփում:

Գոռում-գոչյունի այդ փոթորկի մեջ, որտեղ հայհոյանքները խաչվում էին ու բարդվում իրար վրա, ես կարծես հասկացա, որ ըստ «կիսախաղի» կանոնի, որի մասին գաղափար անգամ չունեի, դաշտերը փոխվել էին, և ես գնդակն ուղարկել էի սեփական դարպասը:

Առանց սպասելու անխուսափելի վտարման, հեռացա դաշտից և գազան հետապնդող որսորդների նրանց հարայհրոցից ու ծաղրուծանակի նետերից:

Ութամյա հասակիս թանկագին ընկերներ, արդյոք ի՞նչ եք դարձել մեր այս ցմփոր տարիքում:

Հիշո՞ւմ եք արդյոք ֆուտբոլի այն խաղը, այն անունը, որ ձեզ շատ ծիծաղելի էր թվում, շիոթահար այն տղային, որի անճարակությունը համառորեն կապում էիք նրա օտար ծագման հետ և աշխարհագրական ձեր գիտելիքների սահմանափակությամբ նրա ծննդավայրը տեղավորում էիք Ալի-Բաբայի քարանձավում:

Այն հոկտեմբերի 1-ին հաջորդած հիսուն տարիները, անտարակույս, ձեր հիշողությունից ջնջած կլինեն այդ նշանավոր օրը: Իմ հիշողությունը, որ այնքան դեմք է տեսել և մոռացել, ահա, ավելի քան կես դար հետո անեղծ պահպանել է ձեզանից յուրաքանչյուրի հիշատակը:



Կեսօրին մայրս եկավ իմ հետևից:

Դրսեկ աշակերտների վարձը, բնականաբար, ավելի ցածր էր, քան նրանցը, ովքեր ճաշում էին դպրոցում: Պայմանավորվել էին, որ ես դպրոցում կնախաճաշեմ միայն բացառիկ դեպքերում, ասենք, անձրևոտ եղանակին:

Դպրոցից դուրս գալիս նկատեցի, որ ես միակ դրսեկն եմ: Այսինքն՝ ես նաև միակ օտարն էի, միակ տարբեր հագնվածը, միակ ոչ կաթուղիկը և միակ անտեղյակը Ֆուտբոլի կանոններից: Բոլոր այս «միակները» ստեղծում էին միայնակութուն...

Վերադարձի ճանապարհին մայրս հազարավոր հարցեր տվեց այդ առաջին առավոտվա մասին: Հարկ եղավ հորինել հազարավոր ստեր, որոնք պիտի մեր դասարանցիներին վերափոխեին սիրելի ընկերների, իսկ մեր դասարանը՝ համերաշխ եղբայրության օրինակի:

Միայնակութունն ինձ լավ ծանոթ էր դեռևս նախկին դպրոցից, բայց այլևս անկարող էի դիմանալ մորս դեմրի տխրությանը, երկու մորաքույրներիս խոնարհ հայացքներին, դործարանի ճամփան բռնած գլխահակ մարդու՝ հորս շարշարանքին: Ուստի, այդ դպրոցում սովորելու հինգ տարիների ընթացքում ստեցի: Ստեցի, որ նրանց աչքերում տեսնեմ ապագայի երազներ, հորինեցի պատմություններ փոխադարձ հարգանքի և բարեկամության մասին, որ այլևս կասկած չմնա, որ ես ընդունված եմ «high society»<sup>1</sup>-ի կողմից:

Այնքան հեշտ է խաբել հույս որոնող արարածներին: Մինչև ուշ գիշեր ձգվող գորշ առօրյայի մեջ իմ պատմությունները նրանց համար դառնում էին տոնական պահեր: Ասեղները կարի վրա պահած, պայծառացած հայացքով լսում էին բյուրավոր մանրամասներով զարդարված փաստագրություններս, որոնք դպրոցս ներկայացնում էին իբրև ապագա հաջողությունների քուրս:

Ֆուտբոլի նշանավոր խաղս, հարմարեցնելով, ծաղկեցնելով ըստ հանգամանքների, պահպանել էր միայն հաղթանակս ամփոփող առաջին գուլը և առնական դունչ դնչի ողջագուրանքները:

Ես գիտեի, որ իմ երևակայության ամբողջ այս հորինվածքը պիտի բառ առ բառ կրկնվի հորս, երբ նա առավոտյան տուն գա:

---

<sup>1</sup> high society (անգլերեն) — բարձր հասարակություն (ծ. թ.)



— Հայրդ ի՞նչ գործի է:

Ես կարող էի մեր տարիքին հատուկ միամտությամբ խուսափողական պատասխան տալ. «Քեզ ինչ»: Բայց անխոհեմաբար ասացի մի կիսասուտ.

— Զկնորսանավերի տեր է:

Դա ճիշտ էր այն երկրում, որտեղից եկել էինք:

Անմիջապես խոսքս տարածվեց, ձևափոխվեց և կորավ բրաձկների, թյունիկների, սարդիկների, տառեխների և ջրային այլ կենդանիների վերաբերյալ կատակների մեջ, ինձ հատկացրին ձկների լպրծուն թեփուկների մեջ անցնող կյանք, երբ ամեն նախաճաշի ձկնապուր եմ ուտում:

Այդ օրվանից որոշեցի մեկընդմիջտ սահմանափակել իմ հարաբերությունները դպրոցական մաքուր ու պարզ համակեցությամբ... այլևս դասամիջոցներին դուրս չէի գալիս:

Հինգ տարիների ընթացքում երբեք, ոչ մի անգամ, չեմ իջել մեր զվարճություններին ու հանգստին հատկացված բակը:

Ի վերջո ինձ համար սիրելի դարձան ժխորից ազատված, դատարկված դասարանները:

Իմ ամենից ավելի անհրապեհ երազները սնող մեղմիկ լոտթյան մեջ դասարանի դուռը բացվում էր, երիտասարդ մի կին՝ հավերժորեն գեղեցիկ ու ժպտուն, զարմանալով, որ մենակ եմ, գալիս նստում էր կողքիս: Այս անմեղ սպասումներիս մեջ շկար երկիմաստություն: Միևնույն է, որևէ դուռ պիտի բացվեր, և ես կգերադասեի, որ դա լիներ կանացի նուրբ ու թեթև ձեռքով:

Երբեմն իսկապես բացվում էր դասարանի դուռը, հայտնվում էր որևէ ծեր ուսուցչի գլուխը և ձեռքը՝ դուռն բռնակին, ապա լսվում էր հարցը, ասես բռնվել էի հանցանքի վայրում:

— Ի՞նչ եք անում այստեղ:

Գրիպի կամ անգինայի պատրվակը լիովի բավարարում էր կողմնակի այդ մարդկանց հետաքրքրասիրությունը, և ես նորից ստանում էի մենություն մեջ սուզված փոքրիկ, առեղծվածային սֆինքսի կեցվածքը:

Երբ միջանցրից ոտնաձայներ էին լսվում, նշանակում էր դասամիջոցը վերջացել է: Ամեն ոք գալիս գրավում էր իր տեղը, սերտում դեպարտամենտների և նրանց գլխավոր քաղաքների քարտեզը կամ մի քանի նամակներ Դոդեի ջրաղացից:

Այն ժամանակ ես վերադառնում էի մենության մեջ ստեղծված իմ փոքրիկ աշխարհը... այս անգամ բնակեցված:

Առաջին եռամսյակի ընթացքում ես մի քանի անգամ առաջին աշակերտն եմ եղել շարագրությունից, մի ուրիշ անգամ՝ շորրորդը կամ վեցերորդը, բայց քառորդի գնահատականների թերթիկում մտնում էի «առաջին հնգյակի» մեջ:

Այս փխրուն երկդիմությունը, որ բռնում է առաջինի փեշից, մշուշի մեջ պահելով հստակ տեղը, սնափառության ամենից ավելի խարդախ արտահայտություններից մեկն է:

Ուրեմն համեստորեն խոստովանենք, որ ես հինգերորդն էի: Տեղացու համար այս աստիճանը միանգամայն բավարար է, բայց անբավարար՝ ըստ ռոմանտիկական այն պատկերացման, թե աղքատը պետք է լինի զուսպ, ազնիվ, համեստ, քաջ, ուսման առաջավոր, ի հեճուկս շար, կողմնակալ և օտարատյաց ուսուցչի:

Մինչդեռ օրիորդ Պոզոլին անհույս կերպով ազնիվ էր և ինձ պակասում էր չորս փոքրիկ աստիճան, որ հանդես գալի ժողովրդական այն մեծ մելոդրամաներում, որտեղ, ի վերջո, անմեղությունն է հաղթանակում:

Այդ հինգերորդ տեղով ես առանձնապես նախանձ չէի շարժում, ոչ էլ հաստատված կարգն էի խախտում:

<sup>16</sup> Դպրոցական այս կարճատև ուսման հետ, որ մեզ պիտի տար բակալավրի սուտիճան, անհրաժեշտ էր նաև նախապատրաստել մեր հոգիները, այս անգամ հավիտենություն համար:

Այդ դժվարին պարսականության ծրագիրը կազմված էր շարաթական պատարագից, որը տեղի էր ունենում դպրոցի մատուռում (չբացառելով կիրակնօրյա սլատարագը ծխական եկեղեցում), խոստովանանքից, հաղորդությունից, կրոնի դասից և կրոնական դաստիարակությունից:



Կրօնի ուսուցիչը արբա Ֆ-ն էր, շատ ծեր մի քահանա, որի նիհար կերպարանքը հարց էր առաջացնում, արդյո՞ք դա խոստակրոն, խոստաբարո, ժուժկալ ու շափավոր սպրևլակերու պի հետևանքն էր, թե ներժոր գեղձերի պաշարների անբանջ վարարությունն:

Նա ուներ մի երիտասարդ օգնական՝ արբա Գ-ն:

17.

Իմ մենավոր դասամիջոցներից մեկի ժամանակ կանգնել էի դասարանի լուսամուտի դիմաց, երբ առաջին անգամ տեսա արբա Ֆ-ին: Անցնում էր բակով, գլուխը խոնարհած աղոթագրքի վրա, որը ժամանակ առ ժամանակ թերթում էր: Կոյուղին էին նորոգում, և բացված փոսերի շուրջը թափթըփված էր հազար տեսակ քար ու խիճ: Քիթը խրած սուրբ գրքի մեջ, որի տառերն այնքան մանր էին, որ քայլվածքի սովորական երեբումից կարող էին դառնալ անընթեռնելի, արբա Ֆ-ն ճանապարհի քարոտ մասն անցավ առանց որևէ խիճ անգամ տեղից շարժելու: Այնքան խորասուզված էր ընթերցանության մեջ, որ թվում էր, լրիվ կտրված է իրական աշխարհից, սակայն ոտքերը վարժ «սահում» էին և խոչընդոտներից խուսափելով գտնում լավագույն ճամփան:

Ավելի ուշ, երբ նրան տեսնում էի դպրոցի միջանցքներում թափառելիս, շարունակ խոնարհված աղոթագրքին, չէի կարողանում չհիշել նրա ճանապարհից խույս տվող քարերի փոքրիկ հրաշքի մասին:

Կրօնի առաջին իսկ դասից ակներևաբար զգալի դարձավ արբա Ֆ-ի թշնամանքը «բարբարոս հերետիկոսի» նկատմամբ, որ ես էի:

Մեր գլուխները մանրագնին ուսումնասիրելուց հետո նշեց յուրաքանչյուրիս տեղը:

Առաջին շարքերն զբաղեցրին իր սիրեցյալ տղաները, որոնց ամեն անգամ, շինծու ժպտալով, հարցնում էր նրանց ձեռողների թանկագին որպիսությունը:

Տարօրինակ էր այդ ժպիտը: Շատ բարակ շրթունքները, թվում էր, բացվում էին զսպանակավոր սարքով, երևան հանելով լնդերը և կարճ ատամնաշարը: Բայց ասես գայլիկուսնով ծակված նրա խեցգետնային աչքերը խամրած էին և անմասն հոգու ուրախ կամ երջանիկ վիճակից, որ նա աշխատում էր արտահայտել:

Եվ այս դեմքի վրա, ուր բերանն ու աչքերը տարանջատված էին, ակամա հարց էր ծագում, թե ե՞րբ է վերջանում ժպիտը և երբ է սկսվում ծամածռությունը:

Երբ հասավ ինձ տեղավորելու հերթը, ես դեմ առա քար ու կապանի: Նա մատն ուղղեց վերջին շարքի վրա և կարգադրեց, որ միշտ նստեմ այդտեղ: Այսպիսով դատապարտված էի փոքրիկ, անհատական դժոխքի, դասարանի մնացյալ մասից անջատվելով դատարկ նստարանների երկու-երեք շարքով: Մենակությունը, որ ի վերջո դարձել էր իմ հպարտությունը, հանկարծ դարձավ անտանելի ծանր, բարոյական այն կարանտինի պատճառով, որ ինձ ակներևաբար անջատում, մեկուսացնում էր մյուսներից:

Նրա մոտից անցնելիս, մինչ կհասնեի դասարանի խորքը, վերջին անգամ նրան տեսա մոտիկից: Հայացքը վրդովմունք էր արտահայտում իմ անարժան ներկայություն համար՝ կաթոլիկ աստծո այս փոքրիկ զավակների մեջ:

Կրոնի դասը ավելի շատ հուշատետրի դեր էր կատարում և ամփոփում մտահայեցական հաստատումների մի ամբողջություն, որ անհրաժեշտ էր անգիր անել: Մի կողմում դժոխքն էր, մյուս կողմում՝ դրախտը, որտեղ կարող էր առաջնորդել միմիայն կաթոլիկ կրոնը, քավարանում թույլ տալով մի կանգառ, իբրև հուսո հանգրվան վերջին ժամին զղջացողների համար:

Աբբա Ֆ-ի քարոզներում երբեք չէր հիշատակվում քրիստոնեական բառը, որ ընդգրկում էր իրեն շատ մերձավոր ուրիշ եկեղեցիներ նույնպես: «Համարյա նրա նմանը» քեզ պաշտոնապես դասում էր հերետիկոսների շարքը: Անտարակույս նա վախենում էր, որ կփլվի իր ազանդավորական դոգմատիզմի շենքը, եթե դուրս քաշվի ամենափոքր մի մասնիկ:



Աբբա Գ-ն շատ ավելի երիտասարդ էր և իմ աչքին՝ ավելի մարդկային: Դպրոցում իմ տաման ամբողջ ընթացքում նա միշտ անտեղյակ էր ձևանում, որ ես կաթոլիկ չեմ ի ծնե: Երբեք չընշափեց այդ խնդիրը: Գերադասեց հեռու մնալ դրանից: Նրա պարտականությունը երգչախմբի ղեկավարումն էր և եկեղեցական փոքրիկ երգչախմբի համալրումը նոր աշակերտներով:

Բոլոր դասարանների աշակերտները հինգ-հինգ կանչվեցին մատուռ, երգեցիկ ձայների ստուգման համար: Անհրաժեշտ էր ֆիզհարմոնի նվազակցությունը նույն վանկի վրա արտաբերել ամբողջ մի ձայնաստիճան՝ թավից մինչև ամենաբարձրը: Չայնալարերիս թրթռումները, հավանորեն, նրան գոհացրին: Թեև գովասանքի ոչ մի խոսք չասաց, բայց նրա ուսի վրայից թաքուն նայեցի և նկատեցի, որ հարցաթերթիկիս համապատասխան որակավորումների դիմաց՝ ճիշտ երգեցողություն, չավ ձայն, հնչեղ, մաքուր, մեղեդային և այլն, խաչ է դնում:

Հարցրեց, թե արդյոք հաճախե՞լ եմ երգի դասերի: Ժրխտական պատասխան տվեցի, իհարկե առանց նշելու, որ ամեն կիրակի երգում եմ Ստանիսլաս-Տորանի փողոցի փոքրիկ հայկական եկեղեցում: Մեր ամբողջ դասարանից միայն ինձ ընդունեցին երգեցիկ ընտրանիի խմբում: Մի տասնյակ հոգի էինք, խմբվում էինք արբա Գ-ի ֆիզհարմոնի շուրջը՝ մատուռի խորքի նեղ ամբիոնի վրա: Իսկ արբա Փ-ն այդպես էլ երբեք չիմացավ, որ իր «Dominus vobiscum»<sup>1</sup>-ին, «Et cum spiritu tuo»<sup>2</sup> պատասխանողների թվում ես էլ կամ: Մի շեշտաշարժ, այս անգամ աստվածանարգության դեմ, մեզ նախազգուշացրեց հակառակը:

Երկու օրհներգերի արանքում հայացքս գցեցի նստարաններն զբաղեցրած աշակերտներին և ցնցվեցի, տեսնելով, թե զինվորական ինչպիսի անողոր խստություններ են կատարվում նրանց ակամա վարժությունները:

<sup>1</sup> Dominus vobiscum (լատ.) — խաղաղություն ամենեցուն

<sup>2</sup> Et cum spiritu tuo (լատ.) — ընդ հոգվույդ քո (ծ. թ.)

Շաշուկի շոր աղմուկը արձագանք տալով զնգում էր ականջներիս մեջ և ազդանշան էր տալիս մի մարդու նման վեր կենալ, նստել, շոքել: Նյարդային կերպով շարժվող զանգակը ստիպում էր խոնարհել գլուխները, եթե զնգզնգոցները դառնում էին ընդհատ-ընդհատ, ուրեմն հարկավոր էր գլուխները հակել հատակին, իսկ զանգակի տեական ղողանջը թույլ էր տալիս նորից բարձրացնել դեմքերը:

Բալետի նման, վայրկենարար կարգավորված արարող, լ-թյան մեջ, ջերմեռանդությունն ու ստիպողական կարգապահությունը միախառնվում էին անորոշ համաշափությամբ, քանի որ հարաբերությունն Աստծո հետ յուրաքանչյուր մարդու անձնական գործն է:

Եթե շարժումը բնազդական է, բնական ու պարզ, վեր է հանում խորապես ներշնչված մի հոգի, որ շտապում է բացահայտել իրեն: Ցուցադրական շարժումը, ըստ պայմանական ծեսի, վերածվում է նշանակված ժամին կատարվող սրբազան մարմնամարզության, և ամեն մարդ կարող է ինքն իրեն հարց տալ, թե ինչպիսի անձնական զրույց ունեցավ աստծո հետ:

Ինձ թվում էր, թերևս հանիրավի, թե պատարագը պարզապես դպրոցական ծրագրի մասն էր, և մատուռից դուրս գալու պահից դարձյալ գտնում էի իմ փոքրիկ աշխարհը, որ առաջվանից ոչ ավելի լավն էր, ոչ էլ՝ վատը:

18.

Առաջին հաղորդության խնդիրը շատ էր անհանգստացնում աբբա Յ-ին, որովհետև այդ նշանավոր օրվա համար նա ապահովել էր բարձր սրբազնություն եպիսկոպոսի արտակարգ ներկայությունը: Այս իրադարձությունը վերաբերում էր հատկապես մեր դասարանին, որ հաղորդությունն ընդունելու տարիքին էր: Եթե կրոնական կյանքի այս կարևոր փուլը որոշ տեղ էր դրավում ընդհանուր իրարանցման մեջ, ապա բավական շատ էր խոսվում սպիտակ թեկապերով նոր հագուստի մասին, կնքամոր կողմից նվիրվող ոսկեզօծ կողերով ժամագրքի մասին, հասուկ ընտրվող սրբապատկերի մասին, որի հակառակ երեսին սղաղթված է լինում հաղորդվողի աղ-

գանունն ու ծիսակատարութեան թվականը, տատիկի արծաթ-  
յա վարդարանի և մանավանդ առաջին ոսկե ժամացույցի  
մասին, որ անպայման կնվիրեն հայրիկն ու մայրիկը: Եվ  
այս առիթով աստվածը պիտի մայիս օրով՝ ձմեռ պսակի  
զգեստ հագներ:

Արբա Ֆ-ն զբաղվում էր բացառապես հոգիներով, անդա-  
դար հարցեր տալով կրոնի մասին: Դասարանի խորքից տես-  
նում էի, որ նրա մատները վեր են բարձրանում, անհամբեր  
ճրթնում, որպեսզի երգեցիկ ձայնով արտասանել տային անգլի-  
արված բանաձևերը:

Թեև հաստատա գիտեի, որ երբեք չէի մասնակցելու եր-  
ջանիկ ընկերներիս պատմութեանը, սակայն ապահովութեան  
համար կետ առ կետ սովորում էի այդ ամենը, շնայած ինձ  
երբեք չէին հարցնում: Համենայն դեպս, յուրաքանչյուր քա-  
ռորդի գնահատականներիս թերթիկում հայտնաբերում էի  
խորհրդավոր 8-ը 20-ի վրա, որ ես հավերժորեն քարշ էի  
տալիս «կրոնի դասի» դիմաց:

Կրոնի դասերից մեկի ժամանակ էլ տեղի ունեցավ մի-  
ջադեպը: Հարց տալու ցանկութեամբ վեր տնկված ցուցա-  
մատների անտառից արբան խուսր տվեց մի աշակերտի.

— Ասացեք, պարոն արբա, ինչո՞ւ Մալաքյանը չի ստու-  
նում իր առաջին հաղորդութունը:

Բոլոր գլուխները միանգամից, ասես մատուռի զանգակի  
կանչով, շուռ եկան իմ կողմը:

Դասարանի խորքի իմ նստարանին կծկված, ինչպես  
բարձր խոտերի մեջ թաքնված նապաստակ, տեսա, որ եռ-  
կինքը փուլ է գալիս գլխիս:



Ես մկրտվել էի հայկական առաքելական եկեղեցում, որի  
արմատները ձգվում էին մինչև առաքյալների շրջանը: Քրիս-  
տոնեական այդ գաղտնի կրոնը 301 թվականին դարձավ սե-  
տական, Հռոմից տասներեք տարի և Եվրոպայից հինգ դար  
առաջ: Հազարավոր մարտիրոսների նահատակութեան վայրե-  
րում, հեթանոսական տաճարների ավերակների վրա Գրիգոր  
լուսավորիչը կառուցեց աշխարհի առաջին քրիստոնեական

տաճարը, որի անունը հնչում է ալեկույայի նման՝ «էջմիածին», այսինքն՝ «իշավ աստժո որդին»:

Ահա այս եկեղեցում, 4-րդ դարի վերջին, Սահակ առաջին կաթողիկոսը և Մեսրոպ անունով մի վանական ստեղծեցին հայոց սքանչելի այբուբենը երեսունվեց գրերով, որոնք կարդացվում էին ձախից դեպի աջ, ինչպես արևմուտքում: Այսպես, հազարամյա այս լեզուն, որ ստիպված են եղել արտահայտել հունարեն, լատիներեն, ասորերեն տառերով, ձեռք բերեց սեփական հատուկ գրեր: Թարգմանվեց Հին կտակարանը, շարադրվեցին սուրբ ծեսերը, պատարագն ու սաղմոսները, և ահա դեպի իր ոսկեդարն ընթացավ հայկական հոյակապ մի գրականություն:

Այդ ժամանակից ի վեր ոչ մի բան չի կարողացել հային բաժանել իր եկեղեցուց, որն իրեն ի սպաս է դրել հավատին, արվեստներին ու մշակույթին:

Ահա այդպիսի մի եկեղեցում, համեստագույն եկեղեցում, քահանան, ինձ պահելով մկրտության ավազանի վրա, երեք անգամ տվել է ավանդական հարցը.

— Երեխան ի՞նչ է ուզում:

— Պատասխանել են.

— Հավատ, հույս, սեր և մկրտություն:

Այն ժամանակ քահանան երեխայի մարմինը երեք անգամ սուզել է մաքրագործող ջրի մեջ, ինչպես առաքյալների ժամանակներում, ապա մեռոնի մեջ թաթախված բթամատով խորհրդանշական խաչեր է դրել ճակատին, բերանին, աչքերին և ականջներին, այսպիսով օրհնելով միտքը, լեզուն, տեսողությունն ու լսողությունը: Եվ մինչ զանգերը կղողանջեին՝ ավետելու փոքրիկ քրիստոնյայի ծնունդը, նա արտասանել է հետևյալ վերջին խոսքը.

— Քեզ մկրտում եմ հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո:



Քրիստոնյայի այս ինքնության վկայականը, որ կնքված էր աստժո սուրբ երրորդության անունով, այդ օրը հնացած էր թվում արբա Ց-ին, կամ կային «բավական շատ կրոններ ատելություն համար և բավական քիչ՝ սիրելու համար»:

— Ասացեք, պարոն արբա, ինչո՞ւ Մալաքյանը չի ստանում իր առաջին հաղորդութիւնը:

Հարցը շուներ այն միամիտ հետաքրքրասիրութիւնը, որ մեղմում է անշնորհքութեան պատճառած ցավը: Իմ կողմը տնկված մեղադրական մատը ցույց էր տալիս «աստժո մերժյալին», ձայնի շեշտը հարձակողական էր և կրում էր «մատնութեան» տարրեր, իսկ դեմքը պատրաստ էր պահելու ապագա կեղծ բարեպաշտի բոլոր խոստումները:

Երեխայի հարցերը երբեք անմեղ չեն լինում: Այս մեկը, օրինակ, կրում էր ժառանգական անհանդուրժողութիւնն նրանց նկատմամբ, ովքեր իրենց ծննդյան աշխարհագրական պայմանների բերումով դեպի աստված տանող ճանապարհներից ընտրել էին փոքր-ինչ տարբեր երթուղի:

Հավատաքննչական փոքրիկ ատյանի և նրա՝ մոխրագույնից մանուշակագույնի փոխվող արբայի դեմ, ևս հայացքս հառել էի պատից կախված խաչելութեանը: Ճիշտ այդպիսի մի խաչելութիւն՝ ասես միևնույն վաճառականից գնված, ևս տեսել էի մեր փոքրիկ, կիրակնօրյա եկեղեցում: Այդ պահին հանկարծ աչքիս հայտնվեց մի այլ պատկեր. ամառային մի շոգ օր հայրս, ձեռքս բռնած, ինձ տանում էր այդ մատուռը:



Փոքրիկ եկեղեցու բակում քահանան սքեմը կախել էր միակ ծառից, որի տակ նստած էր: Կռացել էր եռոտանուն դրված պղնձե թասի վրա, որը լի էր շիկացած ածուխներով և նշխարանման հացեր էր թխում, որոնք պիտի առավոտյան բաժաներ հաղորդվողներին:

Մեզ տեսնելով՝ քահանան նետվեց սքեմի կողմը, որ հագնի, բայց հայրս խնդրեց շահանգստանալ:

Նստեցինք կրակարանի մոտ:

Երկար խոսեցինք:

Այրվող ածուխներն ու ամառային շոգը ծեր քահանայի դեմքին շարել էին քրտինքի խոշոր կաթիլներ, որոնք, հոսելով խոր կնճիռների միջով, կորչում էին երկար, սպիտակ մորուքի մեջ: Նրա ինքնաշեն նշխարը, որին մի կերպ կլորավուն ձև էր տվել, տեղ-տեղ խանձվել էր և ոչ մի նմանութիւն

չունենալ այն ճեփ-ճերմակ նշխարների հետ, որոնք պատրաստում էր անհոգի մեքենան, կտրելով անթերի կլորությունը և ծրարելով թխվածքի նման:

Բոլորի համար պատրաստվող այս միակ նշխարի անկատարությունից ավելի էր շեշտվում վաղ շրջանի եկեղեցու հմայքը և ձեռքի աշխատանքի ազնվությունը, ձեռք, որը պիտի օրհներ նշխարը և հաղորդություն տար:

Հաջորդ առավոտյան, կիրակի օրով, Մայրիկի, Աննա, Գայանե մորաքույրերի և հայրիկի հետ այդ մատուռում, առաջին անգամ նշխարից մաս ստացա... առանց ոսկեկող ժամագրքի, առանց արծաթյա վարդարանի և ոսկե ժամացույցի:



Այդ օրը, կաթոլիկ քրիստոնյայի իմ դատաստանագիրը պահանջող փոքրիկ հավատաքննիչի առջև, որքա՛ն ծանր եղավ մի քանի վայրկյանի ընթացքում կրել նախնիներիս հին եկեղեցու բեռը:

Կզակս հպած տետրերիս, որ ավելի փոքր երևայի, քան կայի, հանկարծ իմ լուծությունը անսովոր սրությունը ինձ թվաց ուրացում:

Այդ էր: Ես ուղղակի դավաճանում էի իմ առնական, հեղու հանդուրժող եկեղեցուն, որ ամեն բանից անկախ միշտ մնացել է ողջ, այդ ժպտուն եկեղեցուն, որտեղ ամեն անգամ այնքան ջերմություն եմ զգացել: Այդ իմ հավատավոր տարիքում որքա՛ն կուզեի մատուռից մատուռ մտնել, ինձ միշտ զգալով միևնույն տեղում, քանի որ մեկում հայերեն էր ասվում այն, ինչ մյուսում ասվում էր լատիներեն:

Եվ հաղորդության երկու սեղաններից էլ սիրով կընդունեի նշխարը, բայց արբա Ֆ-ի համար ես «խորհրդածելու դեպք էի» և, համենայն դեպս, այստեղ կարող էի ընդունվել միմիայն շեղյալ հայտարարելով առաջինի մկրտությունը, որպեսզի վերամկրտվեի հանուն կաթոլիկ «հոր և որդվո և հոգվուն սրբո»:

Ես վեր կացա տեղիցս:

Օհ, ոչ թե սուր պատասխան տալու, որ երկար պիտի հիշ-



վերս Ես ընդամենը տասը տարեկան էի, և ինձ համար դեռ շատ ջուտ էր, որ պատասխանս լիներ կարճ ու կտրուկ, կոպիտ ու վիրավորական:

Այդ «ինչու Մալաքյանը չի ստանում իր առաջին հաղորդույթյունը» հարցին պատասխանեցի.

— Առաջին հաղորդույթյունս արդեն ստացել եմ, բայց իմ եկեղեցում նշխարները չեն համարակալվում: Իսկ դու... դու, գիտե՞ս ով ես...

Ես բառ էի որոնում, հնարավորին չափ կոպիտ բառ, որ արտահայտեր իմ ընդվզումը, բայց ընտրության պահն ընդհատվեց արբայի ճղճղան ձայնով.

— Դուք, փոքրիկ հայ, դուք...

Նա նույնպես բառ էր որոնում և արդեն գտել էր այդ բառը, բայց որովհետև արբա էր, կուլ սվեց և խոսքը վերջացրեց այսպես.

— Դուք ձանձրացնում եք մեզ, լռեք, նստեք:

Ես լռեցի, բայց շնատեցի: Գնացի ուղիղ դեպի դուռը: Արբայի մոտից անցնելիս, թատերական շարժումով խոնարհեցի գլուխս, հետո դուրս գալուց առաջ բարձրացրի գլուխս և ասացի.

— Պարոն արբա, ես խոնարհվում եմ ձեր սքեմի առջև:

Անշուշտ, իմը չէր հարգանքի այդ նենգ տուրքը զգեստին, անտեսելով նրա մեջ սողոսկած մարդուն:

Այդ նախադասութիւնը լսել էի հորիցս, ընկերներին արած պատմութիւնների ժամանակ:

Ես արդեն չէի հիշում պատմութիւնը, ոչ էլ այն հանգամանքները, որոնց մեջ հնչել էր նախադասութիւնը, բայց ինձ շատ էր դուր եկել, և ես կրկնեցի, այնքան էլ չպատկերացնելով ասածիս ծանրութիւնը:

Արբան կասկարմիր կտրեց: Այդ ժամանակ, իր երկարաշունչ մենախոսութիւնն ավարտած դերասանի նման, որ հեռանում է բեմից, ես դուրս եկա դասադանից:

Գպրոցի ամայի միջանցքներում թափառելիս հանկարծ ուղեղս ծակեց իմ հանդգնութիւնը: Ես արդեն նախատեսում էի շուտափույթ վտարումս դպրոցից: Թե՛րևս նույնիսկ «ըմբոստի» պիտակը կսլշեր ինձ և արգելեր սովորելու ուրիշ դպրոցներում: Պատկերացնում էի մեր ընտանիքի շորս անդամների

վշտահար գեմքերը: Հարյուր անգամ մտքումս կրկնեցի իմ վերջին նախադասությունը, որ համոզվեմ, թե վիրավորական բան չկա այդտեղ: Համենայն դեպս պետք է ընդունեի, որ բարոյապես կարգազուրկ էի արել արբային, մերկացրել նրան, քանի որ խոնարհվում էի միայն նրա սքեմի առջև:

Ամբողջ օրը հայացքս հառված մնաց դասարանի դռանը, ամեն բոպե սպասում էի ճակատագրական՝ «Մալաքյան, անցեք պարոն Մելիզանի առանձնասենյակը» հրավերին:

Ոչինչ տեղի չունեցավ:

Ոչ այդ օրը, ոչ էլ հետագա օրերին:

Արդյո՞ք միջադեպի մասին զեկուցել էին ավելի բարձր տեղեր: Երբեք չիմացա: Մինչև մեծ արձակուրդը դեռ մի եռամսյակ ունեի և տասնյակ դասեր արբա Ֆ-ի մոտ՝ մեր հոգիները կատարելագործելու և հղկելու համար:

Ոչ ոք չնկատեց, որ պարբերաբար բացակայում էի այդ ժամերին, երբ մեզ ուսուցանում էին «սեր նմանների» և «հարգանք ոչ նմանների» նկատմամբ: Դպրոցի բոլոր lavabo<sup>1</sup>-ները (ինչպես Անգլիայում են ասում) կամ water-closets<sup>2</sup> (ինչպես Ֆրանսիայում են ասում), ինձ ապաստան էին տալիս, ազատելով միջանցքներում անձուկ թափառումներից:

Միշտ էլ մի տեղ լինում է փրկության խարիսխ: Այդպես էլ եղավ: Զևացնելով, թե «նման եմ» բոլորին, ովքեր յուրացնում են առաքինության ազնիվ դասերը, իմ գնահատականների թերթիկում մինչև վերջ կրոնի դասի դիմաց մնաց 8-ը 20-ի վրա անշնչելի դաշվածքը, նշելով աստժո հետ իմ միջակ հարաբերությունները:

Այնուհետև արբա Ֆ-ի պատկերը քիչ-քիչ ջնջվեց իմ հիշողությունից:

Հետագայում, Բերնսնոսի գրքում կարդացի. «Միջակ քահանան այլանդակությունն է»:

Անշուշտ կան նաև շատ լավերը:

Ես բախտ չեմ ունեցել հանդիպելու նրանց:

Ընդհատակ անցնելու ու վհատության այն ժամերին ինքս

<sup>1</sup> Lavabo (ֆր.) — զուգարան

<sup>2</sup> Water-closets (անգլ.) — զուգարան

ինձ խոստանում էի. «Մի օր, երբ մեծանամ», ինչպես սովորաբար ասում են փոքր ժամանակ, խելոք գրքերի մեջ պիտի որոնեմ «Աստծուն հավատում եմ»-ի բացատրությունը՝ բազմաթիվ մեկնաբանություններով:

19.

Մայրս ապրեց բոլորի համար միակ Հիսուս նազովրեցու կատարյալ հավատով, որին մեծարեց իր փոքրիկ, առաքելական եկեղեցում, որովհետև մարդիկ կորցրել էին բոլորի համար ընդհանուր մեծ եկեղեցին, և ամեն ոք համոզված էր իր եկեղեցու ընդհանրականությանը:

Դարերի ընթացքում մարել էր մեծ հույսը մտային բանավեճերի և դոգմաների անպտուղ սլայքարների մեջ, որոնք մասնատել, ապա բազմապատկել էին եկեղեցիները, բորբոքելով ազանդավորություններ, որոնք հավատացյալներին խմբում էին հակառակ կողմում:

Եվ ջարդերի հրաբորբ խարույկների մեջ վիճել են, որպեսզի որոշեն Քրիստոսի երկու բնությունը՝ մարդկային և աստվածային:

Արդյոք հարկավոր էր դրանք համարել երկու կատարյալ բնություն՞, որոնք երբեք չեն միախառնվում, պահպանելով հանդերձ ներդաշնակ միությունը:

Թե՞ այս երկու բնությունները, միացած լինելով հանդերձ, պահպանում են իրենց հատկանիշները:

Եվ «Ես հավատում եմ աստծուն...» խոսքերը, որոնք բառ առ բառ նույնական էին, բզկտվում էին կտրտվելու աստիճան, որովհետև մեկի մեջ սուրբ հոգին ծագում էր «Հորից և որդուց», մյուսում՝ «օրենքներից, մարգարեններից և ավետարանից»:

Քրիստոսի մահից 1854 տարի հետո դեռևս վեճեր կային կույս Մարիամի շուրջը, որը անարատ հղիություն էր ունեցել, առանց նախնական մեղքի, քանի որ պիտի հետագայում ծներ Աստծո որդուն: Եվ եկեղեցական ժողովից եկեղեցական ժողով (4-րդ դարից), որտեղ հաճախ հոգևոր նյութը պա-

տըրվակ էր դառնում սատարելու քաղաքական որևէ հեղինակության, պարտադրվեցին կամայական մեկնաբանություններ, որոնցում ամենևին բացառված չէին իշխելու տենչը և բխամիտ փառասիրությունը: Ո՞վ կարող է այսօր ժխտել, որ այդ մեծ պառակտման մեջ մեծ տեղ ունեցան անհատական պատվասիրությունը և առաջնության վիճարկումները, որպեսզի դոգմայի նյութի վրա հանգեն դատավորի գերազանցության՝ հանուն Քրիստոսի, որ այնքան քիչ դոգմատիկ էր:

Այսպիսով, աշխարհի մեծ հիմնադիրը մի նոր իմաստով բանավեց մետաֆիզիկական անպտուղ բանավեճերի մեջ, և հրաշալի նրբանկատությամբ քարոզված պարզ խոսքը կորցրեց իր բնական իմաստը, որովհետև հիսուսյան գիտությունների դոկտորները սկսեցին անհետացած աստծուն բացատրել, թե ինչ են ուզում ասել:

Մարդը, իր ծագման բերմամբ, պատկանում է այս կամ այն կրոնին, հարմար տեղավորվում մոտավոր համոզմունքների մեջ, նվազագույն երաշխիք ապահովելով դժոխքի վախի դեմ կամ դրախտի հույսով, որտեղից ոչ ոք չի վերադարձել:

Նորից աչքիս առջև Մայրիկիս հույսերից պայծառացած դեմքն է, երբ Պողոս 6-րդ պապը զրկաբաց ընդունեց Վազգեն Առաջին ամենայն հայոց կաթողիկոսին և հանձնեց հայկական եկեղեցու հիմնադիր Բարդուղիմեոս առաքյալի մասունքները, այսպիսով ողորմածաբար ընդունելով, որ հայոց եկեղեցին առաքելական է:

Սակայն հաշտության երկար ճանապարհը լի է աբբա Ֆ-ներով, որոնք կույր մոլուցքով բռնված գնում են... մինչև իսկ զոհաբերության... ուրիշների: Աստվածաբանական ոլսակալությամբ լցված բուժ ուղեղներով նրանք հսկում են իրենց փակ դռներով եկեղեցիները:

## 20.

1930... կամ 20-ական թվականների վերջը: Հետագայում իմացա, որ պատմությունը երեսունինը միլիոն ֆրանսիացիների կյանքի այս ժամանակաշրջանը անվանել է «խենթ տարիներ»:

Դա եղավ նաև հայերի գաղթի ժամանակաշրջանը:

Հաղթական մեծ տերություններն ընդունեցին թուրքական կոստորածներից փախածներին, որպեսզի լրացնեն առաջին համաշխարհային պատերազմից հետո առաջացած պրոլետարիատի բացը: Վերապրելու հնարավորություն ընծայելով երեկվա «այդ քաջ, փոքրիկ դաշնակցին», ինչպես ասել էր հանրապետության մի նախագահ, ողջ մնացած մարդկանց, միաժամանակ աշխատելով մոռացնել շհարգված խոստումները, ծաղրված դաշնագրերը, ուրացված պարտավորություններն ու փոքրագությունները՝ հանուն պետական շահերի:

Այս ամենը հայտնի էր բարձր շրջաններում:

Իսկ ցածր շրջաններում ժողովուրդը չգիտեր այլ տեղերից եկած մարդկանց պատմությունը:

Այս խենթ տարիներին դառն էր հայի հացը՝ զրկանքներով լի գոյության հուսահատական առօրյայի մեջ: Կահավորված կեղտոտ բնակարաններում և հին հյուրանոցների սենյակներում կուտակված, ամեն օրինադրությունից զրկված, իրեն ընդունած հասարակությունից դուրս, նրանք ապավինում էին հայրենակցական միություններին կամ իրենց փոքրիկ մատուռներին՝ շարունակելու պապենական մշակույթն ու հավատը:

Հրկիզել էին նրանց տաճարները:

Նրանք եկեղեցիներ կառուցեցին իրենց ապաստանած հողում:

Նրանց տեսնում էի հանգստյան օրերին (արձակուրդներ դեռ գոյություն չունեին), քարերի հետ կոխվ էին տալիս, եղունգները պոկված, շաղախն ու ծեփիչը ձեռքներին, գերմարդկային ճիգերով համեստ տնակներ էին կառուցում, անառողջ թաղամասերից հեռու:

Նրանք ոչ աստվածներ էին, ոչ սրբեր և պետք է իրենց ցեղի խորքից եկող բոլոր առաքինություններին ավելացնեին մարդկային կալվածքից ժառանգած թուլությունները: Սակայն գերագույն հանճարով կարողացան դրանք թաքցնել իրենց հյուրընկալած երկրից: Իրենց թերությունները, թուլությունները, պառակտումները, կովարարությունը պահում էին ներքին գործածության համար, «հայերի մեջ»: Եվ ավելի

քան կես դար այդ գաղթականներից ոչ մեկի անունը չի գրանցվել քրեական օրենսգրքում:

Ինչ վերաբերում է Ֆրանսիացիներին, իրենց հակապատկեր այդ հայելիների դեմ՝ արտառոց անուններով, սևահեր, արծվաքիթ, ընդգծված ունդերով, սպիտակ ցեղից, բայց արևակեզ մաշկով, ի վերջո, կամաց-կամաց վարժվեցին նրանց: Բացի այդ, տեղացիները հենց այդպիսի մաշկի գույն էին որոնում ծովափերին, յուղերի ու քսուքների օգնությամբ ձեռք բերելով արհեստական ու անցողիկ բրոնզագույն:

Այդ տարիներին ընդունված չէին հակացեղային ելույթներ: Նույն դարի երկրորդ եղևնի սարսափը միայն արթնացրեց անտարբերներին՝ պաշտպանելու տարբեր լինելու իրավունքը:

Բայց իմ այն հասակն էր, երբ կարդում էի լուկ մեծատառերով վերնագրերը, և թերևս այդ շրջանում աչքիցս վրիպել են փոքրատառով տպված համարձակ մտքեր:



Իմ տասնամյա հասակի Ֆրանսիայում լրագրերի առաջին էջերը հաղորդում էին մինիստրությունների անկումների մասին: Կառավարության ղեկավարը կանոնավորապես արձակում էր դրանք և անմիջապես վերակազմում: Պուանկարեի, Բրիանի, Հերիոյի անունները հաջորդում էին միմյանց, և պրեզիդենտ Գաստոն Դումերգը, որին «Գաստունե» էին անվանում, որովհետև հանրապետությունը մեծամիտ չէր և շքեղ ծաղկեփնջեր էր դնում հաղթանակի կամարի տակ դրված շիրմաքարին, որի տակ նոր էին ամփոփել անժանոթ զինվորի դագաղը:

Շատ էր խոսվում բնակարանային ճգնաժամի՝ ազգությունների այս խրոնիկական հիվանդության մասին: Այդ հիվանդության բուժողները փորձարկում էին երեք կետով իրարից անջատված մոզական դեղահաբեր I. L. M. (չափավոր վարձով բնակարաններ) կամ H. B. M. (էժան վարձով բնակարաններ), բայց քաղաքը մնում էր շենքի կարոտ: Վարձակալներին տրվող առավելությունները հուսահատացնում էին հանձնակատարներին, որոնք չէին կարողանում օգուտ ունե-

նալ քարի գնից: Եթե շինարարը գոհ էր, ապա բնակարանի վարձն այնքան ծանր էր լինում, որ ապագա բնակիչը գերագասում էր խուցր:

Լավ տներն արտաքուստ աչքի շէին ընկնում, բայց տեսնողներն ասում էին, թե գորշ ու սև ճակատների հետևում, շղարշե և կրկնակի վարագույրների հետևում կային շքեղ բնակարաններ, առանձին-առանձին ննջարաններով, մեծ հյուրասենյակով, ճաշասենյակով և մարմնի հիգիենային հատկացված սրահով, որի էմալե մեծ լողատաշտակն ես մտնում մորե մերկ, ցանկացած ջերմաստիճանի ջրի մեջ:

Ասում էին նույնիսկ, թե որոշ բնակարաններ ունեին հատուկ գործիք, որով հնարավոր էր երեք ժամվա ընթացքում կապվել Ֆրանսիայի որևէ այլ քաղաքի հետ:

Առատության, բարօրության, անհոգության Ֆրանսիան հազվադեպ էր ցուցադրվում փողոցում: Նա ուներ իր կենտրոնները, որոնք ես գիտեի անուններով կամ փոստային բացիկների միջոցով: Դրանք էին Շամոնին, Մժեվը, Վիլար-դը-Լանսը՝ լեռների համար, Դովիլը՝ պոմպեական բաղնիքների համար, Վիշին՝ ջրերի թագուհին, Բերկը իր մանկական լողափով և վերջապես Կանը՝ ծովեզրյա առողջարանը, որն ընդունում էր անգլիացիներին ու ամերիկացիներին՝ իրենց ճամպրուկ-խցիկներով: Ահա այս վայրերում, որոշ հասարակութուն, քաղաքային կյանքի առօրյայից հեռու, բաժանում էր իր կրքերը, խենթություններն ու սանձարձակությունները:

Երբեք չեմ տառապել անդորություն կոչվող հիվանդությամբ, այդ ծաղկախտով, որից շեշտվում է դեմքը, չեմ նախանձել ուրիշների հաջողությանը կամ բարեկեցությանը: Որևէ փողոցի անկյունադարձում ես հիացմունքով դիտում էի ասուպի պես փայլատակող բյուզաթին, բայց շուտով մոռանում էի դեկի մոտ մի պահ երևացող ուրվականին և վերադառնում էի սեփական երազանքներին:

Հորս հետ մեր շարաթօրյա զբոսանքի ժամանակ երբեմն կանգ էինք առնում լուսավառ ցուցանակներով որևէ շինքի առջև, որտեղ յուրաքանչյուր տառ, որ կազմված էր մանր լամպերից, ավետում էր նոր բառերի ծնունդը. «դանսինգ», «կոկտեյլ», «ջագ-բանդ»: Դույնզգույն կենդանիները իրենց

անունն էին տալիս «հաստատութիւններին», որոնք սկսել էին կոչվել սև կառու, սպիտակ փիղ, կարմիր վիշապ, վարդագույն ոճգեղջյուր... և Ս տառին նախորդող ապաթարցները բազմապատկվում էին, ստեղծելով ամերիկյան ճաշակ. ժիպսի՛ս, շե Ալֆրեդ՛ս, օ սիրո՛ս... Այս օտարոտի ցուցանակները մեկ-երկու այրված լամպերի կամ վատ միացման պատճառով ամեն անգամ փոխում էին անունները, դարձնում ավելի արտառոց:

Հաճույքի այդ տաճարների առջև պսպղուն համազգեստով ու տրեզներով զարդարված մարդիկ հարգալից տարածութեան վրա էին պահում բացրերաններին, մինչդեռ ամիլկարները, հիսպանո-սյուլիզանները, սալմսոնները, դելաժները կամ շենարներն ու ուալկերները, որոնք քշում էին շքազգեստով վարորդները, շարվում էին մուտքի առջև: Դոնապանները ստրկամտորեն վազում էին բացելու մեքենաների դոնակները: Սև հագուստներով, սնդուսե լամբակներով պարոններ էին իջնում և ձեռքերը թույլ-թույլ պարզում տիկնանց, որոնք հանգիստ դուրս էին գալիս մեքենաներից:

Սաղավարտանման գլխարկի տակ ամփոփած կարճ ու հարթ մազերով, լանջը քաց մարգարտազարդ զգեստով, փեշը ծնկի վրա կանգ առած, սրտաձև նկարված հանդուգն կարմիր շրթունքներով և շրթունքներին համապատասխան ներկված եղունգները սրածայր խարտված, պարանոցը, ակտնջները, դաստակներն ու մատները զարդարող թանկագին քարերից ճառագող բյուրավոր ցուլքերի միջով տիկինը մանրաքայլ, ծեփծեփուն, գոռոզ առաջանում էր, շնկատելու տալով իրեն դիտող բազմութեանը: Մուտքի դռան ամեն բացվելու հետ տանգոյի կամ շառլատոնի մի ծվեն հիշեցնում էր, որ ներսում պարում են:

Հայրս, ձեռքը դրած ուսիս, ինձ տանում էր դեպի սոսիներով ևրիզված Պրադոյի երկար պողոտան: Երկար քայլում էինք գիշերվա միջով... մինչև այնտեղ, ուր այլևս հնարավոր չէր շարունակել, մինչև ծով:

Այն խենթ տարիներին մյուզիկ հուլը, կինոն ու թատրոնը մասն էին մի աշխարհի, որն անմատչելի էր մեր ընտանեկան բյուջեին:



Այդ շրջանի աստղերին ես ճանաչում էի սոսկ դեմքի բնական մեծության ազդերից, որոնք փակցված էին լինում դահլիճների մուտքի մոտ: Մորիս Շվալիեն, ծղոտե գլխարկը թեք դրած, ներքևի շրթունքը սեղմած, ինձ էր ուղղում սառած ժպիտը, բայց ես գիտեի, որ այդ երեկո նա պիտի բեմից երգի «Պրոսպերը», «Իմ խնձորը», «Լուիզը» և «Վալանթինը»:

Տեղի պարծանքը՝ Ալիբերը, սպիտակ կոստյումով, կարծես ազդագրի բարձրերից ինձ էր մեկնում գլխարկը, երգելով իր հրաժեշտը պրովանսյան վենետիկին:

Շուտով հանրաճանաչ Դրանեմը՝ նեղ կոստյումով և շապլինյան փոքրիկ գլխարկով, քրքիջներ պիտի խլեր:

Այնուհետև գալիս էին Գրոկը՝ աշխարհի ամենահուշակավոր ծաղրածուն՝ իր նշանավոր «կատակը մի կողմով», Միլտոնը՝ իր «փքվող առնետով», և վերջապես նույն ինքը՝ Միսթենգեթը, որ մի երեկոյով գալիս էր Մարսել՝ երգելու «Այս է Փարիզը»:

Բոլոր այս երգերը ես լսում էի թափառական երգիչներից, որոնք հեշտ տեղափոխվող գործիքների նվազակցությամբ «փոքր շափսով» վաճառում էին օրվա հաջողված երաժրշտությունն ու խոսքը:

Երբեմն Փարիզից երկու-երեք ներկայացումով ժիմնադ թատրոն էին գալիս դերասաններ, թեև նրանց հիմնական նվաճումը մնում էր «Կորներվիլի զանգերը», «Ժպիտի երկիրը», «Հրացանակիրները վանքում կամ տիկին Անգոյի դուստրը»: Տոմսարկղի տակ նշված գները՝ սլարտեր՝ 28 ֆրանկ, երկրորդ բալկոն՝ 10 ֆրանկ, ինձ համար հավասարազոր էին մուտքն արգելելուն:

Գայթակղիչ ազդագրերը կանչում էին մութ դահլիճներում դիտելու երկու մեծ ֆիլմ և մի կրկեսային համար: «Թշվառները», «Ֆանտոմասը», «Երեք հրացանակիրները» և «Փարիզի գաղտնիքները» ներկայացվում էին իրենց առաջին մեկնաբանությամբ, բայց մենք ընտանյոք համաձայն էինք, որ կինոն այնքան էլ լուրջ բան չի մեծ հույսեր փայփայող տղայի համար:

Այդ տարի հունվար ամսին Մարտելում ձյուն էր գալիս: Սակայն բամբակի նման սպիտակ փաթիլները, ասես ներումն խնդրելով արգելված գոտի ներխուժելու համար, դեռ գետնին շհասած, հալչում էին: Հակառակ բնապատկերին, որ հրաժարվում էր ծածկվել դասական սպիտակ թիկնոցով, հարավային կլիման, վարժված իր միապաղաղ կապույտ երկրքին, բավականությամբ ազդարարում էր, թե ձմեռը լինելու է դաժան ու խիստ:

Այդ օրը պահապան հրեշտակս՝ Գայանե մորաքույրս էր եկել ինձ դպրոցից տանելու: Հետը բերել էր լրացուցիչ բըրդեղեն, որ ես հրաժարվում էի հագնել:

— Ազնիվ խոսք, շեմ մըսում:

— Մինչև զգաս, որ մըսում ես, ցուրտը կմտնի ոսկորներիդ մեջ, և արդեն շատ ուշ կլինի:

Քանի-քանի անգամ է կրկնվել այս երկխոսությունը երեք մայրերիս հետ օդի ջերմաստիճանի շնչին փոփոխության պատճառով: Ամենահեշտ համոզվողը միշտ եղել է Գայանեն, որի ամբողջ դիմադրությունը թուլացել է վայելուչ երևալու իմ աննշան քմահաճույքի դեմ:

Նրա համառությունն այս անգամ, ըստ երևույթին ավելի բարձր տեղից էր գալիս, քույր Աննան պիտի որ ասած լիներ. «Հատկապես դուրս գալիս լավ հագցրու»:

Ինչ է, այդ բուրդը պիտի հագնեի եղածի վրայի՞ց: Այս գլխավոր հարցն էինք ցածրաձայն քննարկում հայերեն, միջանցքի անկյունում կանգնած, երբ մի «շատ աչքի ընկնող տիկին», ինչպես հետո, երբ արդեն տանն էինք, նկարագրեց Գայանեն, մոտեցավ մեզ:

Ջանգանման լայնեղր գլխարկը ծածկում էր դեմքի կեսը: Գորշ-արծաթավուն հոյակապ մի աղվես, որին սպանել էին, որ գցեն իրենց ուսերին, անփութորեն զարդարում էր վերարկուն: Գազանի եռանկյուն գլուխը՝ ցից-ցից ականջներով, հասնում էր իմ բարձրությանը, և աչքերի փոխարեն շիկացած ածխի գույնի երկու փոքրիկ, ապակյա գնդիկները անբարյացակամ նայում էին ինձ:

— Ներեցեք, տիկին, դուք անշուշտ այս տղայի մա՞յրն եք: Նա բերանը սրտածև կլորացնում էր, որ թաքցնի հարավային շեշտադրությունը և ավելի փարիզյան դարձնի այն: Սա թերևս նրանցից էր, որոնց տեսել էի մարգարտազարդ զգեստով «Ջազ-բանդ» պարասրահը մտնելիս, և իհարկե ապրում էր շքեղ տներից մեկում, որոնց մասին այնքան պատշաճ մտած էին:

Վհատության շող անցավ մորաքրոջս դեմքով: Նա ֆրանսերեն չէր խոսում: Այլ կերպ լինել չէր կարող: Գիշեր ու զօր կարի մեքենային գամված, նա Ֆրանսիան տեսնում էր միայն ուրիշ հայերի մոտ հազվադեպ հյուր գնալու ճանապարհին:

Նրա փոխարեն բնազդաբար պատասխանեցի ես.

— Ոչ, տիկին, մայրս չի:

Բերանը միշտ հավի հետույքի նման փոքրացրած, տիկինը «օ՛հ» արեց և հեռացավ:

Իմ պատասխանին շավելացնելով, թե՛ «...մորաքույրս է, բայց նույնն է, ինչ մայրս», ես մեղանշել էի կյանքի երկուերեք բաների դեմ, որոնք չեն հանդուրժում ոչ որևէ թուլություն, ոչ էլ ամենաշնչին ստորություն, եթե մարդ ուզում է ուղիղ քայլել: Ես փրկել էի վիճակը, ենթադրել տալով, թե ինձ տանելու է եկել սպասուհին կամ խոհարարը, ինչպես հաճախ լինում է շատ ծառաներ ունեցող ընտանիքներում:

Ես մորաքրոջս քաշում էի դեպի ելքը:

Անտեղյակ իմ թույլ տված փոքրիկ, տգեղ արարքին, նա ժպտուն, իսկական սպասուհու նման, մի քանի քայլ հետ, հետևում էր ինձ: Առանց աշուձախ նայելու, գլուխս կախ, արագ-արագ հասա մինչև փողոցի անկյունադարձը:

Արծաթափայլ աղվեսի մորթով պարուրված տիկնոջ համար, վարորդներ ու լիմուզիններ ունեցող այդ երեխաներին կապկելու համար, հաջորդ օրվա սրախոսություններից ազատվելու համար, ես դավաճանել էի իմ խիզախ զինվորին՝ Գայանեիս, որ հրաժարվել էր կյանքի բոլոր հաճույքներից... անձնուրացության աստիճան:

Այժմ նա քայլում էր իմ կողքից, նեղ վերարկուով, որի օձիքին Աննա մորաքույրս արհեստական մորթի էր կպցրել։ Մազաղաթի գույնի դեմքին, ուր շպարի նշույլ անգամ չկար, որ գոնե ջնջեր գիշերային անքնությունը, շարունակ ծփում ծածանվում էր սիրո ժպիտը... եսասիրությունից զուրկ։

Ամբողջ ճանապարհին գողունի դիտում էի այդ հանգիստ, հավատավոր ժպիտը, որ հետզհետե փոխվում էր անտանելի ժպտի, ի վերջո վերածվելով ժպիտ-ապտակի, և ես սկսեցի արտասվել իմ ապերախտությունից։

Ձյան խոշոր փաթիլները, հալչելով դեմքիս, թաքցնում էին առաջին արցունքներս։

Հանկարծ կանգ առա՝ նրա հետ խոսելու անդիմադրելի ցանկություններ։ Պիտի ասեի, որ իրեն սիրում եմ, որ արածս թուլություն մի պահ էր, որ ես թուլամորթ չեմ, որ ես վիճել եմ արբա Ֆ-ի հետ, բայց չեմ ուրացել, որ ես հոգնել եմ այդ «մատնացույց անող» հայացքներից, որ այլևս երբեք...

Երբ մորաքույրս ինձ դարձրեց սիրով ու գորովանքով լի աչքերը, շարին շհավատացող աչքերը, բառերը խեղդվեցին կոկորդիս մեջ։ Ներումն խնդրելու համար նախ պիտի բացատրեի պատճառը։ Պիտի բացատրեի բոլոր ստերս, որ տարիներ շարունակ համբերությամբ հյուսել էի, որպեսզի կառուցեի իրենց երազներին հարմար մի փոքրիկ աշխարհ։

Մի վայրկյան նայեցի մորաքրոջս։

Սաղափե փոշու նման թափվող ձյունը սպիտակեցրել էր մազերը։ Թևին գցված էր իմ բրդյա հագուստը, որ հրաժարվել էի հագնել։ Այն ժամանակ ձեռքս պարզելով այդ ավելորդ, տաք հագուստին, տխմարի նման ասացի.

— Դու իրավացի էիր... մի քիչ մրսում եմ։

Տարիներ շարունակ ուղեղիցս դուրս չեկավ այդ գարշելի արարքի հիշողությունը։ Քայանե մորաքրոջս ամեն մի զոհողություն, ամենօրյա գաղտնի զրկանքների գնով ինձ փոքրիկ ուրախություններ պարգևելու յուրաքանչյուր արարքի դիմաց ամեն անգամ աչքերիս առջև անողոքաբար հառնում էր արծաթագույն աղվեսով տիկնոջ ուրվականը։



Հաջորդ օրը ինձ տանելու եկավ մայրս: Նկատեցի, որ նա հագել է կիրակնօրյա զգեստները: Գայանեն արծաթագույն աղվեսի միջադեպը ներկայացրել էր այսպես. «Հանդիպել ենք մի տիկնոջ, որն ուզում էր խոսել քեզ հետ»:

Մայրս անհանգիստ էր: Միզուցե վիրավորական բան եմ ասել որեէ ընկերոջ, և սա դիմել է մոր միջամտությանը:

— Աշխատիր հիշել: Համոզվա՞ծ ես, որ ոչինչ չես արել:

Այդ հարցում մայրս կարող էր լիովին հանգիստ լինել: Իմ միակ կատը այդ հիանալի ֆերովրենների հետ դասամիջոցն էր, որից ես կամովին հրաժարվել էի:

Մեր ընդհանուր ժամանակի մնացյալ մասը գրավում էին դասերը, որ պարտավոր էինք լսել, և մատուռը, որտեղ խոսելն արգելված էր:

— Երբվում եմ, Մայրիկ, ոչինչ չեմ արել, դու մի անհանգստանա:

Սա կատարյալ ճշմարտություն էր, մի բան, որին Մայրս չէր կասկածում:

Եվ արծաթագույն աղվեսով տիկինը եկավ:

Այս անգամ ծածկվել էր ուրիշ գազանի մորթիով: Նույնիսկ բազմաթիվ մորթիներ էին անհրաժեշտ եղել, լրիվ ծածկրվելու համար:

Անմիջապես Մայրիկիս իմաց արի՛ ա կանջին փսփսալով.

— Իսկույն շնայես նրա կողմը: Նա է, որ նոր եկավ:

Երկուսով կանգնել մնացել էինք շպատճառաբանված վախով, ոչ ոքի նեղություն չտալու «վախով», ոչ ոքի շխանգարելու «վախով», ոչ ոքի տհաճություն շպատճառելու կամ ծիծաղելի շղառնալու «վախով»... Մի խոսքով այն անձկությամբ, որ արագացնում է բազկերակիդ զարկերը և սառեցնում սիրտդ:

Իսկ տիկինը, օծանելիքի սուր բուրմունք տարածելով, մոտենում էր մեզ, պարուրված գազանիկի մորթիներով, որոնց մետաքսանման, շեկ մազերին դիպչելը պետք է որ շատ հաճելի լիներ: Վերջապես նրա կլորացրած շուրթերից ընկան մեզ անհանգստացնող առաջին բառերը.

— Տիկին Մալաքյա՞նն եք:

— ...Այո, տիկին:

Ինչո՞ւ էր մայրս խոնարհվել պատասխանելու համար: Մենք պարտք չէինք այդ տիկնոջը, նրա ծառան չէինք, իմ կարծիքով մայրս կարող էր պարզապես քաղաքավարությամբ բարևել նրան, առանց ակնածանքի ավելորդ ցուցադրության:

Գիտակցելով իր սոցիալական տարբերությունը, նա միշտ վախենում էր երկրորդ կարգի տոմսակով ընկնել առաջին կարգի տոմսակով ճամփորդողների մեջ:

— Ես փոքրիկ Ալեքսանդրի մայրն եմ: Այս հինգշաբթի, կեսօրից հետո, նախաճաշին հրավիրում եմ տղայիս մի քանի ընկերներին...

Նա ձեռքը դրեց ուսիս: Օժանելիքի բուրմունքը (հետագայում իմացա, որ կանայք դա քսում են ձեռքի հակառակ կողմը) քերծեց կոկորդս:

— ...Շատ ուրախ կլինեիք, եթե ձեր տղան էլ գար...

Այս վերջին բառերը մորս ականջին հնչեցին իբրև հաղթական հիմն. հասել էր նրա փառքի օրը, ես արդեն ընգունվում էի որպես Ֆրանսիայի հայրենիքի զավակ:

Կարճատև մի պահ աչքերը թարթեց, ասես շլացած լույսի հորդումից, ապա իր փափուկ ր-ով, ինչպես որ հնչում է «մայրիկ» բառի մեջ, երկար-բարակ հայտնեց իր երախտագիտությունը:

Տասը տարեկան հասակիս իմ խեղճ մայրը, որ կյանքն անց էր կացնում շնորհակալություն հայտնելով, շափազանցում էր իրեն մատուցած ամենաշնչին ծառայությունը, որպեսզի ավելի շատ պատճառ ունենար շնորհակալ լինելու:

— Ուրեմն ժամը տասնհինգին, Դրագոն փողոց...

Եվ նորին վսեմությունը հեռանալուց առաջ ավելացրեց տան համարը:

## 22.

Հրավերին նախորդող երկու օրերի ընթացքում ապարդյուն փորձում էի բացատրել այդ առեղծվածը:

Ճիշտ է, նա ասել էր «...հրավիրում եմ տղայիս մի քանի ընկերներին», բայց նրա Ալեքսանդր որդին իմ ընկերը չէր:

Մանավանդ հարցն ավելի պարզ էր. ես ոչ ոքի ընկերը չէի՝ Ուրեմն ի՞նչ էր նշանակում այս հանդիսավոր հրավերը իշխանական նախաճաշին: Ի՞նչ տեսանկյունից էլ նայում էի այս կատակին, ինձ թվում էր, թե անվնաս դուրս չեմ գա նման դիմակահանդեսից:

Քանի անգամ ցանկացա իմ մանկական խոսքերով ասել մորս.

— Չեմ ուզում գնալ այդ շարաքաստիկ նախաճաշին:

Այդ երկու օրվա ընթացքում Ալեքսանդրի կողմից ոչ մի ակնարկ չեղավ հինգշաբթի օրվա մասին, թեև հազար անգամ հանդիպել էինք իրար, առանց բառ փոխանակելու:

Գարոցից վերադառնալով, այդ շորեքշաբթի երեկոյան, նշանավոր օրվա նախօրյակին, որոշել էի կանգնել երեք մայրերիս դիմաց, դեռ պայուսակս մեջքիցս շիջեցրած, և հայտարարել.

«Ես չեմ գնա այդ նախաճաշին»:

Նայեցի նրանց. մտել էին իրենց իսպանական դղյակները՝ հազարավոր մղոններով հեռու ճշմարտությունից և խոնարհվել էին իրենց կարի վրա: Ես մնացի տեղումս գամված, մխրճված փայլուն ստերիս թանձրության մեջ, առանց փրկարար նախադասությունը արտասանելու:



Առաջին բանը, որ նկատեցի այդ նշանավոր օրվա առավոտյան արթնանալիս, դա թուջե հսկայական կաթսան էր, որի մեջ ջուր էինք հոացնում: Կիսաթեք դրված կափարիչի տակից դուրս էր գալիս գոլորշին: Մեր միակ սենյակի մեջտեղում դրված էր պղնձե կլայեկված մեծ տաշտը: Լոգանքի ձեռնոցի վրա դրված օճառի մեծ քառակուսին, թևերը քրշտած երեք մայրերս հիշեցնում էին շաբաթական լոգանքիս ծիսակատարությունը: Շաբաթվա սովորական օրերին ինձ լվանում էին հարկ առ հարկ. գլուխ, դեմք, վիզ, թևեր, ապա հատված առ հատված հասնում էին ոտքերիս: Ընդհանուր մաքրությունը և ամբողջ մարմնով լողանալը պահվում էր կիրակի առավոտվա համար: Բայց մեծ իրադարձությունը

ստիպում էր հիմնական մաքրությունս երկու օրով առաջ բերել:

Տաշտի մեջտեղում գրված փոքրիկ աթոռակին նստած, ես կուսցնում էի մեջքս, սեղմում ատամներս, պատրաստ դիմանալու շաբաթական այս շարշարանքներին, որի բոլոր նրբություններն ինձ հայտնի էին:

Աննա մորաքույրս, զույգ ձեռքերով բռնած մարսելյան օձառի սուր եզրերով քառակուսին, կոպտորեն օձառում էր ինձ: Մայրիկս մազմզոտ ձեռնոցով քերում էր մաշկս, իսկ Գայանեն անգթորեն գլխիս էր լցնում ըստ իս անտանելի եռման ջուրը: Իմ աղաղակները, անասնական թառանչները, ցավագին ղժղժոցները ոչ մի կերպ չէին հուսահատեցնում քրտինքի մեջ կորած իմ երեք աննկուն շարշարողներին: Այդ փորձությունից ես դուրս էի գալիս խեցգետնի պես կարմրած, բայց մաքրամաքուր. զգում էի օձառի ծաղկաբույրը, իսկ սպիտակեղենս արձակում էր նարդոսի բուրմունք, որ քաղել էինք Պրովանսի ճամփաներից, և Աննա մորաքույրս լցրել էր տոպրակի մեջ:

Մայրս հանեց հատուկ դեպքերի համար պահված կոստյումս՝ կարճ տաբատով:

Գայանեն մի թեթև արդուկեց մետաքսե գեղեցիկ վերնաշապիկս, որ հատուկ կարված էր այս իրադարձության առթիվ: 2,50 մետրանոց նուրբ մետաքսյա կտորը, որ անբավարար էր տղամարդու համար, գործատերը մեզ էր մատուցել իբրև նոր սուրվա նվեր:

— Վերնաշապիկ կկարեք ձեր տղայի համար:

Ավելացրել էր նաև մետաքսե սքանչելի մի փողկապ՝ «made in Italy»: Ամեն ինչ կար, որպեսզի ինձ վերածեր փոքրիկ պճնամուխ:

Իսկական «Կաստելմյուրո» (քաղաքի մեծ հրուշակարանը) դառած մեր խոհանոցի անկյունում Աննա մորաքույրս շեղակի կտրտում էր սառեցրած կաթնասերը, որ ծածկեր հատուկ այդ օրվա համար պատրաստված փախլավայի կտորները: Համեղ բուրում էին ընկույզը, դարչինը, կսկուժ թերթիկների միջով անցնող շաքարաջուրը:

Նա սկուտեղի վրայից ընտրում էր մեջտեղի կտորները, որոնք լավ էին ներծծել շաքարաջուրը և ավելի էին կարմրել



չեռոցի մեջ: Մի խոսքով, այն կտորները, որոնք հայկական սովորությամբ վերապահվում էին հյուրերին: Մեզ մնացին միայն եղբերի կիսաշեղանկյունիները: Մի մեծ «մուգ բիսկվիտի» թիթեղյա դատարկ տուփի մեջ տեղավորեց մեր ընտիր թխվածքը, որ պետք է նվիրեի տանտիրուհուն:

Եթե շնորհակալություն հայտներ, ես պիտի պարզապես ասեի.

— Օհ, շարժե, տիկին... մեր ազգային թխվածքից է:

Ինքնատիպ նախադասությունը պիտի ավարտվեր մի մաղթանքով, որոնցով բավական հարուստ են արևելյան լեզուները, բայց ֆրանսերեն թարգմանելիս իմ աչքին բավական ծանր թվացին, և ես որոշեցի հենց այդտեղից կրճատել, որ ավելի զուսպ հնչի:

Աննա մորաքույրը, կանգնած բերնեքերան լցված տուփի առջև, որտեղ փախլավայի շեղանկյունները աղյուսի նման շարված էին իրար վրա, հաշվում էր կտորները:

— Տասնյոթ կտորից ավել չի տեղավորվում... ինչ եք կարծում, բավակա՞ն է:

Այդ թիվը մոտավորապես համեմատելով հրավիրյալների թվի հետ, հանգստացավ:

Նա մեծ խնամքով պահում էր ամեն ինչ... կամ համարյա այն ամենը, «ինչ արժե պահել»՝ պատասխանում էր մեր հեզնական ակնարկներին: Եվ վրեժը լուծում էր, սպասելով հարմար առիթի, երբ կարիք ունեինք մի դատարկ տուփի, պարանի կտորի, փաթեթի մաքուր թղթի, մի սլտուտակի կամ մեխի: Այն ժամանակ անխոս, շափազանց «դանդաղեցրած» շարժումներով գնում բերում էր անհրաժեշտ առարկան, փրկելով դրությունը:

Ճիշտ այդպես գրքերիս թղթե փաթեթը դարձավ գեղեցիկ ծրար՝ նվերիս համար:



Արդեն երկու օր էր Մարսելում դադարել էր ձյունը:

Բայց ընդամենը երկու օր առաջ ձյուն էր գալիս:

Գուցե նորից ձյուն գար:

Մանավանդ, երբ եղանակը մեղմանում է, ձյան նշան է:

Ահա այդ օրը այս կարգի օգերևութաբանական գիտական լուրջ եզրահանգումներով դուրս հանվեց ծանր հրետանին՝ մարտնչելու ենթադրյալ ցրտի դեմ:

Երբ մայրս բարձրացավ աթոռին, որպեսզի ձեռքը հասցնի պահարանի վերջին հարկին, ես քար կտրեցի, արյունս ուղղակի սառեց երակներինս մեջ, առանց ձմեռային ջերմաստիճանի ազդեցության: Զարհուրած աչքերով հետևեցի «Լա Բել ժարդինիերի» թղթե տոպրակին, որ իջնում էր իր մոռացված բարձունքից: Ես գիտեի տոպրակի պարունակությունը. մի զույգ շագանակագույն բրդե գուլպա, որ գնել էինք «աղջիկների» բաժանմունքից:

Չյունը, լինի հավերժական, թե անցյալ տարվա, բանաստեղծին ներշնչում է քնարական գեղեցիկ թռիչքներ, ձյան սպիտակությունը երբեմն զուգորդվում է անմեղության հետ կամ դառնում է մաքրության խորհրդանիշ, հաճախ էլ հիշեցնում է ձմեռային սպորտի ժամանակը, իսկ ձյունափոշով ծածկված լանջերը ոգեկոչում են ծննդյան տոներն ու զարդարուն եղևնիները կամ մտածել են տալիս Մոնբլանի և Կիլիմանջարոյի լեռների վսեմության մասին:

Այդ օրը ձյուն բառով երեք մայրերիս հիշողության մեջ հառնեց մի զույգ շագանակագույն բրդե գուլպա, որ ծածկում էր սրունքներս, հասնելով կարճ տաբատիս և սև առաձգական ժապավենով սեղմվում ոտքերիս:

Փխրուն և ցրտի նկատմամբ շատ զգայուն մանկությունս (մի քանի անգամ հիվանդացել եմ անգինայով), իմ կարծիքով, նրանց չափազանցած զգուշության հետևանքն էր, և իմ ամբողջ դիմադրությունը այս կառնավալային հանդերձանքի դեմ ավելորդ թվաց ինձ: Ուրեմն, իմ կիսատղա-կիսաաղջիկ տեսքով, մայրս ինձ տարավ մինչև նշանավոր ժամադրավայրը: Մինչև ծնկներս իջնող վերարկուս թաքցնում էր իմ կերպարանքի տարօրինակությունը, սակայն որքա՞ն պիտի կարողանայի մնալ այդ հարմար «թաքստոցի» տակ:

Ճշտապահ լինելու համար երկու-երեք անգամ ետ ու առաջ արեցինք տների շուրջը: Ուղիղ ժամը տասնհինգին Մայրիկը ձեռքս տվեց թխվածքի տուփը և իր վերջին հանձնարարություններն արեց: Ժամը հինգին, այս նույն մայթի վրա, փողոցի անկյունում պիտի սպասեր ինձ:

Երևի շատ զգուշ էի հնչեցրել զանգը:

Բավական սպասեցի, որպեսզի երկրորդ զանգս շհամար՝  
վի անհամբերության նշան կամ նյարդային շարժում:

Հաշվեցի մինչև քսան...

Ապա ևս քսան...

Հարյուրի վրա բութ մատս խրվեց կոճակի մեջ. այս ան-  
գամ զանգը լսվեց տան ներսում:

Դուռը բացվեց: Մի մարդ՝ սպիտակ վերնաշապիկով ու  
բաճկոնով, սև փողկապով ու տարատով, ինձ մտցրեց երկար  
նախասենյակը, որի կաղնեփայտե փայլեցրած հատակին  
փոված էին մի քանի գորգեր այն երկրից, որտեղից ես էի  
եկել: Կահույքը շատ հին թվաց ինձ, հավանորեն, որովհետև  
անցյալ դարաշրջանի էր կամ անցյալի ոճով ընդօրինակված:  
Առաստաղից իջնում էր հոյակապ ջահը՝ հուրհրատող, տան-  
ձանման բյուրեղներով և մոմերի եռաշար լուսապսակով, որ-  
տեղ մոմերի փոխարեն բոց էին արձակում էլեկտրական ման-  
րիկ լամպերը: Մուգ կարմիր թավշե ծածկոցով կլոր սեղանը  
ծանրաբեռնված էր զանազան մանր-մունր առարկաներով.  
Ժայռի բեկորներ, որ ասես այստեղ էին ընկել երկրազնդի  
ինչ-որ աղետի հետևանքով, փոքրիկ տուփեր, որոնց կափա-  
րիչները զարդարված էին գույնզգույն քարերով, համայնի-  
ներ, առարկաների մնացորդներ, որոնցով անհնարին էր պատ-  
կերացնել նրանց սկզբնական տեսքը: Բոլոր այս զիզի-բիզի-  
ները ոչ մի ազատ տեղ չէին թողել նվերիս փաթեթը դնելու  
համար:

Օգնության հասավ սպիտակ բաճկոնով մարդը: Չեռփիցս  
վերցրեց փախլավայի տուփը և խնդրեց իրեն հանձնել վե-  
րաբկուս, որ հագիցս հանեցի հակառակ կամքիս: Ապա եր-  
կար միջանցքով հետևեցի սև-սպիտակ հագած ուղեկցորդիս:

Անծանոթ աշխարհ հետազոտողի նման, աչքերս ամենայն  
մանրամասնությամբ արձանագրում էին ամեն ինչ, նկատի  
ունենալով այն կոնֆերանսը, որ այդ երեկո պիտի վարեի  
Պարադի փողոցում, ուր հասարակությունը սպասում էր իր  
հատուկ թղթակցի վերադարձին: Իմ ելույթը պիտի սկսվեր  
ակներև փաստի ընդհանուր արձանագրությամբ. «Այսպես

ուրեմն, պատկերացրեք, որ բնակարանի նախասենյակը միայն մեր սենյակի շափ է, ներառյալ միջնորմի հետևի խոհանոցային անկյունը»:

Այնուհետև ելույթիս բովանդակությունը սխտի հարմարեցնեի ըստ հանգամանքների, որոնք անպայման կառաջանային:

Ջուլզ դռները բացվում էին շատ ընդարձակ մի սենյակի վրա, որը միանում էր մի ուրիշ ավելի փոքր սենյակի: Սրանք, միանգամայն տրամաբանորեն, անվանում էին մեծ և փոքր հյուրասենյակներ:

Փոթորիկը պայթելուց առաջ ես հագլիվ մի քանի վայրկյան ունեցա արձանագրելու ընդհանուր տեսարանը: Խառնիխուն, այսուայնտեղ դրված կաշվե բազկաթոռներ ու բաղամոցներ, մարմարե ցածրիկ սեղաններ, դաշնամուր, ծաղիկներով ծաղկամաններ, բրոնզե կիսանդրիներ, տաճարային ջահեր, ոսկեգօծ իրեր, կրկնակի վարագույրներ և սենյակի մեջտեղում իմ շատ սիրելի ընկերները՝ կուսցած հրաշալի մի մարդատար խաղալիք-գնացքի վրա: Դա խաղալիքների բաժնում հայտնված առաջին էլեկտրագնացքներից էր: Այս փոքրիկ հրաշալիքը ձեռք բերելու համար առնվազն հարկավոր էր լինել դրա իսկականի՝ Լ'օրիան-էքսպրեսի<sup>1</sup> կամ Լ'էթուալ դ'օրի<sup>2</sup> առաջին կարգի ուղևոր:

Ութ հոգի էին գորգի վրա, երկաթուղու երկարությունամբ փորին պառկած, հիպնոսվել էին քոնակների առջև, որոնք կարգավորում էին սլաքները, իսկ գնացքի արագությունը որոշելը կայարանապետի՝ Ալեքսանդրի մենաշնորհն էր: Նա իր հրամանները գոռում էր վերջին կայարանից, որ տեղավորված էր փոքրիկ հյուրասենյակի խորքում:

Արագ հաշվումներով եզրակացրի, որ տուփիս սլարունակությունից յուրաքանչյուրին հասնում է երկու փախլավա: Ես չէի ուտի այն պատճառաբանությունամբ, իբր արդեն կերել եմ և տանը շատ կա դրանից:

Իմ մուտքը բացարձակապես աննկատ մնաց, բայց դռան փակվելու ձայնը ստիպեց, որ գլուխները երկու անգամ դառ-

<sup>1</sup> Արևելյան ճեպընթաց (ժ. Թ.)

<sup>2</sup> Ոսկե աստղ (ժ. Թ.)

նան իմ կողմը. մեկ կատարյալ անտարբերությամբ, մեկ քրքր-  
քիչի պայթյունով: Իմ կիսաաղջկական-կիսատղայական հան-  
դերձավորումը թողել էր հարկավոր տպավորությունը:

Անհաղորդ իմ փոքրիկ վշտին, նրանք թողեցին զնացքը,  
որ շարունակում էր պատվել, ինձ դիմավորեցին «բարև,  
օրիորդ» ուրախ կանչերով, ապա դրան հետևող նուրբ խեղ-  
կատակություններով:

Նրանք ծունկը ծալելով խոնարհումներ էին անում և ձեռ-  
քը կրծքին դնելով կապկում էին տիկնանց տրվող ասպետա-  
կան ողջույնը և խոսքերը. «Յթե օրիորդը կրարեհաճի նեղու-  
թյուն կրել մտնելու»: Նրանց հրճվանքը հասավ գաղաթնա-  
կեաին, երբ Ալեքսանդրը հայտնաբերեց գուլպաներիս  
ռետինե երիզները: Հերթով քաշում էին գուլպայիցս, ապա  
հանկարծ բաց թողնում, որպեսզի լսեն սրունքիս խփվող  
երիզի շոր ձայնը: Խելահեղ պար էին բռնել շուրջս և հան-  
ուլատրաստից եղանակներ հորինելով երգում էին՝ շատագոր-  
ծելով մարքիզուհի, դքսուհի, դեռատի տիկին ու միլեդի բա-  
ռերը:

Հոգեկան խռովքի մեջ զգում էի, որ ուղեղումս ինչ-որ  
փոսիկ լցվում էր ատելություններ: Ես ընդհուպ Ալեքսանդրի  
դեմքին մոտեցրի դեմքս: Կան զայրույթով լի ձայներ, թեև  
հաղիվ լսելի, որոնք ավելի շատ ներքին կատաղություն են  
բացահայտում, քան աշխարհի բոլոր ռոնոցները միասին:  
Ե՛հա այդպիսի ձայնով, հանկարծակի հաստատված լուսթյան  
մեջ, ասացի.

— Լսիր, Ալեքսանդր, ես քեզնից ոչինչ չեմ խնդրել... Դու  
ես մորդ ուղարկել ինձ հրավիրելու քո սուն: Ես նույնիսկ  
դասամիջոցին չեմ իջնում բակ, որ հնարավորին շատ քիչ  
ու կանեմ երջանիկ ապուշներիդ Լրեսը, իսկ այժմ, լավ լսիր  
ինձ, որովհետև երկու տարի է ուզում եմ քեզ երեք-չորս  
խոսք ասել...

Ճիշտ այդ պահին Ալեքսանդրի գնացքը ենթարկվեց մե-  
ծագույն աղետի: Փոքրիկ գնացքը, որ ընթանում էր առավե-  
լ սգույն արագություններով, և ոչ ոք չէր թուլացնում նրա սլացքը,  
շրջադարձերի ժամանակ գծից դուրս ընկավ, վագոնները  
շուռ տալով բալաստի վրա: Էլեկտրաբարձը անջատվեց վա-  
գոնաշարից, գծից դուրս թռավ, իներցիայով առաջ գնաց,

Ծանրորեն բախվեց ցածր սեղանի մարմարե ոտքին։  
Համեստորեն պետք է խոստովանեմ, որ շմասնակցեցի  
ընդհանուր շփոթությանը։

Բոլորը նետվեցին աղետի վայրը։ Վագոնները նորից դրե-  
ցին գծերի վրա։ Ալեքսանդրն այնպես էր գրկել էլեկտրաքար-  
շը, ասես ձեռքերում սարսափելի վթարից փրկված երեխա էր։

Երբ վագոնաշարը վերականգնվեց, նա էլեկտրաքարշը  
տեղավորեց գլխամասում, միացրեց գնացքին և դողդոջ ձեռ-  
քով սեղմեց «Մեկնումի» կոճակը։ Լսվեց էլեկտրաքարշի խուլ  
դղզոցը, բայց գնացքը մեխված մնաց տեղում։ Նորից ու նո-  
րից նյարդային սեղմեց կոճակը, որ պիտի գնացքը շարժեր  
դեպի «մեծ-փոքր հյուրասենյակները», բայց ամեն անգամ  
էլեկտրաքարշի միջից լսվում էր միևնույն խուլ դղզոցը, իսկ  
վագոնաշարը մնում էր անշարժ՝ կանաչ ծառ ու ծաղկով, կո-  
վերով ու գառներով լի մանրակերտ բնանկարի մեջտեղում։

Ապշահար Ալեքսանդրը անընդհատ շուռումուռ էր տալիս  
վթարից խաթարված էլեկտրաքարշը, բայց ամուր պտուտակ-  
ված պաշտպանական վահանակները թաքցնում էին մեքե-  
նայի ուղեղը, խաղալիքի հոգին, մնացյալը թիթեղ էր և ներկ-  
Փոքրիկ ինժեներներից մեկի երկչոտ առաջարկը՝ «Գուցե  
պտուտակները քանդենք...», ընդհատվեց Ալեքսանդրի ոռնո-  
ցով։

— Ձայնդ կտրի՛...

Եվ ավելացրեց.

— Կե՛ղտ, կե՛ղտ, կե՛ղտ։

Արդեն գոեհկանում էր։

Ափսոսում էր իր էլեկտրաքարշը։

Մի պահ նրա ընկճված հայացքը հանդիպեց իմին։ Մե-  
րուկի նման օրորում էր գլուխը. կոտրվել էր խաղալիքը։ Ար-  
դեն մոռացել էր ամբարտավանությունը, դաժանությունը,  
ուզում էր վերագառնալ մանկությունը, որն այնքան կարիք  
ուեի ուրիշների։ Ոչինչ, այն երեք-չորս խոսքը, որ ուզում էի  
ասել նրան երկու տարի շարունակ, կարող էին էլի սպա-  
սել... ևս մի քանի տարի։ Բայց գուլպաներիս եզրերի ու-  
տինի հարվածներից առաջացած փոքրիկ այրոցքների ցավից  
ակամա շարությամբ ասացի լռության մեջ.

— Գնացքդ շատ լավն է, մանավանդ, երբ շարժվում է՝ Նկատելով, որ աչքերը լցվեցին արտասուքով, ես անմիջապես շոր-շոր ավելացրի։

— Գնացքիդ բան չի եղել։ Ըստ երևույթին ներսում մի փոքրիկ թել է կտրվել։

Այդ մխիթարական ենթագրությունը, որ աղետի աստիճանը իջեցնում էր նորոգման մակարդակի, նրա աչքերի մեջ արևներ վառեց և հետ բերեց կորցրած զվարթությունը։

Հանկարծ հյուրասենյակի ամբողջ պատը սկսեց անհետանալ։ Քողարկված դուռ էր, մյուս պատերի նման պաստառված և բաժանվում էր երկու մասի, սահելով անտեսանելի անվակների վրայով։ Հայտնվեց մի ուրիշ սենյակ, նոր, հուրհրատող ջահով և մի մեծ սեղանով՝ շուրջը աթոռներ։ «Ճաշասենյակն» էր։

Սպիտակ բաճկոնով մարդը հանդիսավոր ձայնով հայտարարեց, թե պարոն Ալեքսանդրի նախաճաշը պատրաստ է։

Սեղանի վրայի բաժակները լի էին մրգահյութով, շարված էին սպիտակ պանիրով կարագահացեր և մի քանի ափսեով կարկանդակներ։

Արտառոց էր ութ շարժվող ծնոտների աղմուկը. բոլորը միանգամից կծում էին, մանրում, ծամում, կուլ տալիս փրխրուն թխվածքները։ Ես չէի մասնակցում ընդհանուր խժոռմին, որովհետև, ըստ մեր երկրի սովորության, առանց տանտիրուհու չի կարելի սեղանից օգտվել։ Փոքրիկ ումպեքով խմում էի մրգահյութը, որի ջրի քանակը մոռացնել էր տալիս մրգի համը։ Ես գաղտնի ցնծությամբ սպասում էի իմ նշանավոր փախլավայի հաղթանակին։ Պատկերացնում էի, թե ինչպես էին այս անկուշտները ատամները խրելու փափուկ խմորեղենի մեջ, բզկտելով մանրած ընկույզի շերտերը, իսկ բուրումնավետ շաքարափոշին, խառնվելով սառեցրած կաթնասերին, պիտի բռներ նբանց քիմքը։

Եվ թագուհի մայրը ներս մտավ։

Ավելի ճիշտ ներս ընկավ կշկշտն աքարի սկես։ Նա քամու նման անցնում էր, նետելով՝ «Լա՛վ եք, երեխաներ», հայտարարելով, թե «հազար տեղ ունի գնալու»։

Արդեն դուրս գալու վրա էր, այս անգամ պարուրված երրորդ գազանի՝ ընձառյուծի մորթով, որ ես անմիջապես

ճանաչեցի, որովհետև բառարանիս գունավոր ներդիրների մեջ տեսել էի ընծառյուծ:

Քոլորի հետ խոսում էր դու-ով, բոլորին դիմում իրենց անուններով, և խնդրում մեկ-երկու խոսք հաղորդել նրանց ծնողներին: Նրանց համար կար պայմանական նշանների մի ամբողջ համակարգ, որ բոլորին համերաշխ ծիծաղեցնում էր: Անցնելով թիկունքիս կողմով, նա խոնարհվեց վրաս և կես-հանդիմանական, կես-կատակ ասաց.

— Ես պետք է ձեր ականջները քաշեի... Ի՞նչ կարիք կար:

Հասկացա, որ ականարկում է խմորեղենի տուփը, սակայն չկարողացա տալ անգիր արած պատասխանս, որովհետև նետվեց դռան կողմը, տեսնելով սպիտակ բաճկոնով մարդուն՝ էկլերներով լի արծաթյա մեծ սկուտեղը ձեռքին: Նա մի պահ հապաղեց, նյարդային նայեց ժամացույցին, խուլ շշնջաց. «Օհ, երբեք չեմ հասցնում», բայց ստիպված եղավ վերցնելու սկուտեղը, իրեն զոհաբերելով տանտիրուհու պարտականություններին:

Ախորժագրգիռ էկլերները հերթականությամբ շարված էին կողք կողքի, մեկը՝ շոկոլադով, մյուսը՝ սուրճով:

Ես անխռով նստած էի տեղումս, ըստ մեր սովորության, որ մայրս հիշեցրեց վերջին հանձնարարությունների հետ. առաջին անգամ քաղաքավարի մերժել, երկրորդ անգամ՝ նույնպես, տեղի տալ միայն երրորդ առաջարկի ժամանակ և թույլ տալ, որ տանտիրուհին հրամցնի իր ընտրած կտորը:

Երբ Ալեքսանդրի տիկին մայրը ինձ մոտեցրեց սկուտեղը, ես ժպտալով մրմնջացի առաջին մերժումը.

— Օհ, ոչ, շատ շնորհակալություն, տիկին:

էկլերները անցան հարևանիս, որ մի հատ քաշեց շարի միջից և ազահորեն կուլ տվեց:

Ինձ այլևս չառաջարկեցին ոչ երկրորդ, ոչ էլ երրորդ անգամ: Երևի կարծեցին, թե էկլեր չեմ սիրում: Ալեքսանդրը, որ արդեն վերգտել էր նախկին անմարդկային դաժանությունը, նկատելով իմ դուսպ մերժումը, անմիջապես դողաց, քն հավանորեն ես սիրում եմ միայն ոահատ-լոխում, կուս-կուս կամ ծիծեռնակի բույն: Արևելքը, Աֆրիկան ու Չինաստանը, խառնվելով իրար, միանգամից առաջացրին ծիծաղի նյւ պոռթկում: Սիրելի մայրը նույնպես ցանկություն ունեցաւ



հետևելու ընդհանուր շարժումին, բայց արագորեն զսպեց իրեն և մեզ հրաժեշտ տալուց առաջ, իբր մեկուսի, բայց ակնարկն ուղղելով ինձ, ասաց, թե իր «անպիտան որդին շատ կատակասեր է»:

Այդպես վերջացավ իշխանի նախաճաշը:

Իմ նշանավոր փախլավաներն այդպես էլ սեղան շեկան: Ճիշտ է, իմ նվերը անձամբ նրանց ձեռքը չէի տվել, բայց չէ՞ որ թագուհի մայրը յուրովի շնորհակալություն էր հայտնել... Ուրեմն նա տեղյակ էր դրա գոյություն մասին: Լավագույն դեպքում... գուցե դեռ փաթեթը չէին բացել: Այդ մեկնարանությունն ինձ չգոհացրեց: Կամ թերևս պահել էին ընթրիքին, ընտանյոք ճաշակելու:

Ալեքսանդրը, ավազակախումբը հետևը գցած, նորից անցավ հյուրասենյակ, ուրիշ խաղեր խաղալու: Դեռ մի քիչ ժամանակ կար, մինչև մայրիկիս հետ հանդիպելու ժամը, բայց ես այնպես էի մրսում այս լավ տաքացված տանը, որ ուզեցի գնալ:

Նյանք արդեն կռացել էին հսկայական մի մեքենայի տուֆի վրա, որի միջի մասերը հավաքելով կարելի էր զանազան մոդելներ կառուցել:

.. Ցտեսություն, Ալեքսանդր... շնորհակալություն նախաճաշի համար:

Գլխովին զբաղված իր պտուտակներով ու մանեկներով, անտարբեր ասաց.

— Արդեն գնո՞ւմ ես:

Երբ հյուրասենյակի դուռը բացեցի, ավելացրեց.

— Ցտեսություն... դիտես... ծիծաղելու համար էր:

Այդ բանը ես հաստատ գիտեի:

Միջանցքում մարդ չկար: Ուզում էի վերցնել վերարկուս, բայց բոլոր դռները փակ էին: Դռներից մեկի հետևում լսեցի խուլ ծիծաղ և մի ձայն, որ ինձ թվաց, թե սպիտակ բուձկոնով մարդու ձայնն էր: Կամացուկ ծեծեցի դուռը:

Իսկապես նա էր:

Բնազդաբար, ձեռքի արագ շարժումով սրբեց բերանը, բայց ես ժամանակ ունեցա նրա շրթունքների անկյուններում նկատելու փախլավայի մնացորդներ: Հեղուկ շաքարով կեղ-

տոտված կզակին կպել մնացել էին ընկույզի ու թխվածքի փշրանքներ:

— Ներեցեք, պարոն, ես վերարկուս եմ խնդրում, եթե կարելի է:

Երբ գնաց վերարկուս բերելու, նրա հետևից տեսա մեծ խոհանոցը և երկար սեղանի երկու կողմում սպիտակ, ժանյակազարդ գոգնոցներով երկու կին՝ նստած փախլավայի համարյա դատարկված տուփի դիմաց:

Երբ իջնում էի գորգապատ մեծ սանդուղքով, փախլավայիս պատմությունը յուրաքանչյուր աստիճանի վրա նոր մեկնաբանություն էր ստանում:

Չորրորդ հարկի աստիճանների վրա հայտնագործել էի, թե սպասավորները տիկնոջից գաղտնի շատակերությամբ են զբաղվել:

Երրորդ և երկրորդ հարկի միջև իմ մեկնաբանությունը անհեթեթ թվաց: Անհնարին էր թվում, որ ծառայապետը, խոհարարն ու սենեկապանը խժոեին հրուշակեղենի տուփի կեսից ավելին և տանտիրուհին շնկատեր այդ: Կամ այդ դեպքում...

Երբ վայրէջք էի կատարում առաջին հարկ, հանկարծ առեղծվածը պարզվեց:

Հետադարձ հայացքով ես վերականգնեցի տեսարանը:

— Տիկին, բրդյա գուլպաներով փոքրիկ պարոնը մի սուփ է բերել:

— Ի՞նչ տուփ է, ժողեֆ:

Ժողեֆը թուղթը պատռում է, բացում է տուփը, մոտեցնում քթին, հոտոտում խորհրդավոր պարունակությունը:

— Կարծես խմորեղենի տեսակ է, տիկին... եզրերը լրիվ սև են, թաթախված է շաքարաջրի մեջ և դարչինի հոտ է գալիս:

Տիկինը չի կարողանում իրեն զսպել և ասում է. «Աստված իմ, ինչ սոսկում», բայց անմիջապես ավելացնում է.

— Ի վերջո... ասում եմ սոսկում... բայց ի՞նչ գիտեմ: Եթե սիրտներդ տալիս է, այս ամենը բաժանեք Մարթայի և Լյուսիլի հետ:

Փողոցը լիքն է մանրէներով, աստված գիտի, թե հայերի տանից եկած այս բանը ինչպես է պատրաստված:

Այդ մարդիկ, որոնց իսկական անունները չգիտեի, երևի սկզբում կասկածով են մոտեցել: Ապա քաջն ժողեֆը շեղանկյունու սուր եզրից ատամով մի քիչ կտրում է, պատրաստ անմիջապես թրելու: Հասկանալով սակայն, որ իր նկարագրած սեր մանրած ընկույզ է, որ դարչինը լավ մերվում է մնացյալի հետ և բոլորը միասին քաղցր-մեղցր, շատ լավ համ ունի, կծում է ավելի մեծ պատառ: Պատառ-պատառ ամբողջ կտորը վերջացնում է, Մարթան ու Լյուսիլը հետևում են նրան, և Աննա մորաքրոջս տասնյոթ փախլավաները համարյա արդեն բաժանվում են երեքի մեջ:

Եթե իմ քաղցրավենին այդքան կարևորություն էր ձեռք բերում և այդքան ճնշում էր ուղեղս, պատճառը փախլավային նվիրված հրաշալի, արևոտ կիրակին էր՝ հույսերով ու հուսախաբություններով լի:

Սանդուղքի լույսը հանգել էր:

Մի պահ մնացի մթության մեջ, գլուխս հենած դարպասի փայլատ ապակիներին:

Սա եղավ իմ վերջին փորձը դեպի անկարելի ընկերություն և ես՝ բրդյա գուլպաներով ու մանկական վշտերով, նորից վերադարձա իմ մենության դեռևս տաք տեղը:

Փողոցի անկյունում Մայրիկը ժպտադեմ սսլասում էր ինձ: Բայց շիմացա, արդյո՞ք հեռացել էր այդտեղից, երբ ես եղել եմ Ալեքսանդրի տանը՝ իբրև խորհրդանշան բարձրագույն մակարդակի: Մայրիկս հավասարակշռությունը կորցրեց, երբ շինծու ուրախությամբ գիրկն ընկա և հայերեն ասացի.

— Կերան... մատներն էլ հետը կերան:

Սա ժողովրդական մեծ հաճոյախոսություն է, որ մեզ մոտ արվում է հատկապես կերակուրը գնահատելու դեպքում, իբր համով-հոտով ուտելիքի մեջ թաթախված մատները նույնպես անզգուշաբար կերել են:



Մանկական մեր նախաճաշից հետո ես երկար մտածեցի այդ տարօրինակ օրվա մասին:

Ինչո՞ւ էին հրավիրել ինձ:

Թերևս ինձ ընտրել էին իբրև նախատիպ, իբրև նմուշ, որի միջոցով պիտի շափեին իրենց երջանկությունը նվազ երջանիկ համարվող ուրիշի համեմատությամբ:

Գուցե պարզապես երես առած տղայի համար ես խաղալիք էի, որ Ալեքսանդրը միացրել էր իր էլեկտրաքարշին, որպեսզի ընկերներին մատուցեր իբրև լրացուցիչ զվարճություն: Կամ, թիրևս, երկուսն էլ որոշ շափով ճիշտ էին:

24.

Ես Ալեքսանդրին նորից տեսա:

Մեն մի անգամ:

Երեսուն տարի անց:

Երբ նրա այցեքարտը դրեցին գրասեղանիս, նրա անունը մոռացության վիճից հանեց դպրոցական կյանքիս հինգ տարիները և Դրագոն փողոցի նախաճաշը:

— Այս պարոնը շատ է համառում: Ասում է, որ ձեր մոտիկ ընկերն է:

Հաջորդ օրը պետք է մեկնեի մեծ ճամփորդության և հազար պատճառ ունեի ձեռքիս շարժումով հասկացնել քարտուղարուհուն, թե բացակա եմ:

— Թող ներս գա:

Եվ Ալեքսանդրը ներս մտավ, երեսուն տարով մեծացած, զվարթադեմ, թևերը առաջ պարզած, աչքերում մանկության ընկերոջ համերաշխություն:

Ըստ երևույթին շատ էր սպավորվել, նախասենյակում հանդիպելով երկու-երեք նշանավոր անձանց:

— Լսիր, դա այնինչն էր... (թվեց անունները):

— Այո:

Ես հատուկ կեցվածք չէի ընդունել, բայց մի բան պարզ էր, ես Պոլիդեկեսին դիմավորող Կաստորը չէի:

— Չճանաչեցի՞ր:

— Ճանաչեցի:

Դեռ աթոռ չէի առաջարկել նրան: Իսկ ոտքի վրա մնացած մարդը շատ անհարմար վիճակում է լինում և դժվարանում է բացատրել իր այցելության նպատակը:

Շփոթված շուրջն էր նայում:

— Ես գիտեմ, որ գործերդ լավ են... պատկերացրու, միշտ հետևել եմ քո...

— Այո, լավ եմ, շնորհակալություն, նստեք:

Շունը վերջապես տեղը եկավ, իրեն պեցեց մի բազկաթոռի վրա, բայց քրտինքի կաթիլները սկսեցին մարգարիտի նման շարվել ճակատին:

— Այսպես ուրեմն... չեմ ուզում խլել քո... ձեր ժամանակը:

Եվ սկսեց պատմել վերջին երեսուն տարիների կենսագրությունը: Ժառանգել էր հոր «գրասենյակը», գանգատվելու պատճառ շուներ, որովհետև գործերը... (բավական է արտասանվի «գործ» բառը, մարդիկ պարտք են համարում մեկ առ մեկ քանդել երեմեական ողբերի շղթան): Մայրը ողջ էր, բայց դժվար էր համակերպվում ծերությանը: Ինքն ամուսնացած էր, ուներ երկու երեխա. մի աղջիկ, մի տղա:

Տղան շատ խելոք է, բայց վերջին պահին տապալել է բակալավրի քննությունը...

Սկսած «վերջին պահին տապալել է բակալավրի քննությունը» նախադասությունից, ես գուշակեցի շարունակությունը: Այդ տղան, որ... այդ տղան, որը... հանկարծակի որոշակի հետաքրքրություն է ցուցաբերել իմ մասնագիտության նկատմամբ:

Սակայն սիրելի Ալեքսանդրը ճարպկորեն խորամանկում էր, նա խուսափում էր բուն նյութին անցնելուց, խոսքը նրբորեն շուռ տալով կարոտների կողմը: Հիշեց մեր մանկության Մարսելը, որը շատ էր փոխվել, մեր հին բարի դըպրոցը, հիշեց մեր ուսուցիչներին իրենց մականուններով, ծածաղեց, նորություններ հաղորդելով Պիեռի, Ժաքի ու Պոլի մասին, տխրեց՝ հաղորդելով Մարթենի կամ Գարսենի մահը: Նա բլբլում էր անցյալի մասին՝ ներկան արդարացնելու համար:

Մեկ դերասանի այս թատրոնում, մինչ կարտասաներ իր մենախոսությունը, ես, ինչպես ռենտգենի էկրանի առջև, ռսումնասիրում էի հայրական այդ ուղեղի գաղտնի ծալքերը, որտեղ որդու քմահաճույքը շփոթվում էր կոչումի, ձիրքի կամ տաղանդի հետ:

Ես պատկերացնում էի նրան, երբ «գործը ձեռքն առնելը»: Լավ էր ճանաչում «այնինչին», տվյալ դեպքում՝ ինձ:

Նույնիսկ կատարել էր այս ճամփորդությունը, հարցը հաջող դասավորելու համար:

Եվ մեր զրույցը կավարտվեր դասական ձևով.

— Եթե կարողանայիր օգնել նրան...

Իր որոշակի գաղտնիքն ունեցող այս մասնագիտության նկատմամբ որոշ ծնողների մտածելակերպն ուղղակի վարմանալի է: Առաջին միտքը լինում է ծանոթների մեջ գտնել այնպիսի մեկին, որ ծանոթ լինի այդ ասպարեզում հաջողության հասած մարդու, որպեսզի նրան խնդրի իր կախարդական փայտիկը շարժելու հօգուտ որդու: Եվ սկսում են հիշել հեռու-մոտիկ ազգականներին, հիշել միևնույն ժննդավայրից լինելու հանգամանքը, հիշել ինչ-որ ընթրիք, որտեղ հանգիպել են միմյանց, մի հոր, որին լավ ծանոթ են, մի մոր, որին հանդիպել են արձակուրդի ժամանակ:

Իսկ Ալեքսանդրն ուներ ես մի առավելություն, մանկության հիշատակները: Եվ ավելացրեց մի ստորություն, որ ես չէի նախատեսել: Նա սերտ կապերի մեջ էր քաղաքի դրամատիքական շրջանակների հետ: Եվ թվարկեց Մարսելի օճառի, շաքարի գործարանները, որոնք կարող էին իր հանձնարարությունը դրամագլուխ հատկացնել իմ ապագա ծրագրերն իրագործելու համար:

Մարսելի օճառի գործարանները հիշեցնում էին միայն մեղվի պատկերով օճառները, որոնք մաքրում էին մանկական կեղտերս, ինձ պարուրելով մաքրության բույրով: Իսկ շաքարի վաճառատները հիշեցնում էին հորս գողգոթան և նրա գիշերային աշխատանքը:

Եկել էին ինձ առաջարկելու արևելյան երկրների կաշառքը՝ բախշիշը: Այս բառը հավանորեն շատ դուր կգար փոքրիկ Ալեքսանդրին, որը երես առած տղայի իր դաժանությամբ ինձ անվանում էր Ալի-Բաբա, ռահատ-լոխում կամ կուս-կուս:

Ի՞նչ էր մնացել՝ այդ Ալեքսանդրից: Մարդուկ, որ խոսելիս թուք էր թռցնում, քրտնում, թևերը շարժելով պատմում տղայի մասին, որի փոխարեն եկել էր ինքը՝ հայրիկը: Եվ այդ հայրիկը անցավ մեծ շողոքորթության հաջորդ փուլին: Նա ինձ էր ընտրել, որովհետև որդին անվերապահորեն և իրավացի կերպով հիացած էր իմ ստեղծած ամենայն ինչով: Ես միակ, եզակի, ամենաշատ... ամենաքիչ... ապա հաջորդում էին ճոռոմ ածականները:

Անշուշտ, կեղծ համեստության մի շնչին բողոք, մի քանի ձայնարկություն, մի թափանցող հայացք ամբողջ այդ շողոքորթության դեմ՝ վերջ կդնեին նրա շաղակրատանքին: Բայց ես լուռ էի և անշարժ, մի հանգամանք, որ շփոթեցնում էր նրան: Նա աշխատում էր կապակցել, արագացնել խոսքը, ինչպես սկսնակ դերասան, որ շտապում է ավարտել երկար մենախոսությունը: Հուզիչ մի բան կար հայրական բնազդի վայրի անասնականության մեջ, որ ընթացքի մեջ էր դրել հրապուրելու ողջ կարողությունները, ընդհուպ մինչև կաշառատվություն:

Ահա, վերջապես ասելիքն ասաց:

Թաշկինակը հանեց, սրբեց քրտինքի մեջ կորած դեմքը և մրմնջաց.

— Այս ինչքան շոգ է քեզ մոտ:

Ճշմարիտ է, որ «մանկությունը իր հոտն ունի»:

Ալեքսանդրի այս այցելությունը արթնացրել էր կյանքիս դժվարին ժամանակները: Գրագոն փողոցի այն հինգշաբթին, փողոցի անկյունում սպասող մայրս, Աննա մորաքրոջս փախլավաները, Գայանեի կարած գեղեցիկ վերնաշապիկս...

— Ասեք, Ալեքսանդր, ինչո՞ւ էիք այն օրը ինձ հրավիրել մանկական նախաճաշի:

Ակներևաբար, նա սպասում էր այս հարցին: Եվ հարցս պոկվեց ակամա, շափից դուրս հասունացած մրգի նման:

Այդ էջի դիմաց, որ ես հանկարծ հետ էի շրջել, նա պտտեց խոշոր աչքերը, մուրրվեց հիշողությունների բավիղում, աշխատեց դուրս գալ հիմար վիճակից, ժամանակն օգտագործել հօգուտ իրեն:

Ի՞նչ նախաճաշ... ե՞րբ... ոչ... իսկապես ոչինչ չի հիշում, ինչո՞ւ... Ի՞նչ է տեղի ունեցել այդ օրը:

Այդ օրը երեսուն տարի առաջ էր, այն երեք-չորս խոսքը, որ ուզում էի ասել իրեն, և էլեկտրաքարշի աղետի պատճառով ընդհատվեց, այժմ, հնանալով, կորցրել էր ուժը:

Վաղեմության ժամկետը լրացել էր:

Հարկավոր էր վերադառնալ ներկային, այդ տղային, որից մի քիչ զգվում էի: Այդ տղան, ուրեմն, Մարսելում սպասում էր արական սեռի դիցանուշի գալուն, կախարդի հայտնվելուն, որ պիտի իրեն ազատեր ավարտական դասարանում մնալուց և երկրորդ անգամ բակալավրի քննությունը տալուց:

Անհրաժեշտ էր այդ «մեծագործ», ամեն ինչ «տալ-առնելուն» հանգեցնող Ալեքսանդրին բացատրել, որ այս գործը պատկանում է այլ աշխարհի: Այդ աշխարհը գտնվում է փշե ու տատասկե ցանկապատերի և բազմաթիվ կողպեքների հետևում:

Իմ դիմաց նստած էր անցյալին պատկանող մի մարդ, որ եկել էր իր տղայի համար գնելու աստիճան, պաշտոն, դիրք:

Ոչ մի ցանկություն չունեի հանձն առնելու նրան համոզելու ահռելի դժվարությունը: Ավելորդ բացատրություններից խուսափելով, բռնեցի փախուստի ճամփան, որ, իհարկե, նորից գործին էր վերաբերում:

— Իմ սիրելի Ալեքսանդր, հանուն մեր երջանիկ օրերի, իսկապես հաճույքով կօգնեի ձեր տղային, բայց ես վաղը մեկնում եմ Միացյալ Նահանգներ:

— Օհ, լավ... բայց... դու... ե՞րբ եք վերադառնալու:

— Հինգ տարուց:


Դա զուտ ճշմարտություն էր:

Ամերիկա մեկնելու պարտադիր պայմանը նրանից խլեց երկու-երեք «իհարկե»-ներ, որոնք արտասանվեցին տարբեր շեշտերով, և որոնք նշանակում էին. «Այդ էլ իմ բախտից»: Նրա դեմքը շփոթմունք էր արտահայտում, կարծես գնացքից ուշացած ուղևոր լիներ: Ես նորից նվաճում էի մանկությանս ավելորդ ընկերների ուշադրությունը:

Երբ ինձ մեկնեց փափուկ, խոնավ ձեռքը, քաղաքավարի խոսքեր մրմնջալով, նկատեցի, որ բերանը ծովել էր դժգոհությունից:

Նորից նմանվել էր կոտրված էլեկտրաքարշի առջև կանգնած այն տասը տարեկան տղային:





Այդ վերջին հանգիստումից անցել է քսան տարի:  
Եթե ճակատագրի խաղը կամ քմահաճույքը՝ այդ մեծագույն միջնորդը, այս տողերը դնի Ալեքսանդրի առջև, չի վրդովվի նրա ընտանեկան անդորրը, որովհետև Ալեքսանդրը... նրա անունը Ալեքսանդր չէր:

## 25.

Կար մի սքանչելի տիկին Մանյան, որը ժպտերես խըստութեամբ ղեկավարեց մեր ութերորդ դասարանը: Հաջորդ տարի նրան փոխարինեց անորոշ տարիքի խոժոռագեմ օրիորդ Լորը, որ մի ամբողջ տարի իր մտայնությունն ու մաղձը սրբուհի մեր յոթերորդ դասարանում:

Օրիորդ Լորի հոգին համապատասխան բնակավայր էր գտել նրա մարմնում: Պեպենոտ դեմք, աջ աչքը ձախից մի ամբողջ սանտիմետրով ցած, դնովի ատամնաշար, որը մըշտապես ընկնում էր բերանից՝ լատիներենի ուղղական և հայցական հոլովների արանքում, կաղուխուն, որ նրան տալիս էր ամանակացույցի տեսք, և ամբողջ այս կերպարանքն ավարտվում էր շեկ կեղծամով, որ ինքնին պատմում էր մի ամբողջ կենսագրություն: Սակայն ամենից ավելի նրա դեմքին աչքի էր զարկում այն ամենօրյա սրտաշարժ պայքարը, որ նա մղում էր քողարկելու ու ներկելու իր բոլոր թերությունները: Վառ կարմրի մեջ թաթախված վրձինով նկարում էր բերան՝ զոյություն շունեցող շրթունքների փոխարեն, սև մատիտով շրջանակում էր աչքերը, փոփոխելով ուրվագծերը՝ անհամաչափությունը ծածկելու համար, երկու վարդագույն բոլորակներ փորձում էին գույն տալ անգույն այտերին, իսկ բրնձի դիմափոշին պարբերաբար հրաժարվում էր հարթել նրա մաշկի գույնզգույն, անհարթ մակերեսը, ավելին, ի հայտ էր բերում նաև ուրիշ խարդախություններ ու կեղծիքներ: Դասամիջոցը միշտ ցանկալի էր նրան նախ դեմքը կարգի բերելու համար:

Ահա այսպիսին էր օրիորդ Լորը դիմացից:

Հետևից առանձնապես բան չկար նշելու, բացի ոսկրա-

յին համակարգի ձևախախտման հետևանքով մեջքի կորու-  
թյունից, որ թույլ էր տալիս օրիորդին պարզապես համարե-  
լու կուզիկ:

Այն հասակում, երբ շգրտեինք, թե բույսը ինչ ուզողու-  
թյամբ է աճելու, նրան տվեցինք Ֆրանսիա մականունը:

Աշակերտների շարությունը ուղղում էր մտքերը, նրան  
կայցնելով «միս Ֆրանս» պիտակը, որ բերնեբերան փոխանց-  
վում էր դասարանից դասարան: Չար լեզուներն ասում էին,  
թե նա մասնակցել է գեղեցկության մրցումներին, թեև միշտ  
ժյուրիի կազմում:

Օրիորդ Լորն ուներ մանկավարժական արտառոց մեթոդ:  
Իր ուսուցանած քերականական կանոնների հետ օգտագործում  
էր ավելի խիստ մի քանոն, որով զարմանալի դիպուկ ու շոր  
հարվածում էր մեր մատների ուղիղ ծայրերին: Երբեմն օրե-  
րով մատներս մնում էին կապտած՝ «ROSAEUM»-ի փոխարեն  
«rosae» գրելու համար: Եվ սեռական հոլովի այս շարաքաս-  
տիկ շփոթությունը չէր կրկնվում առնվազն այնքան ժամա-  
նակ, որքան տևում էր մարմնական ցավը: Այսպիսով նա քոհ  
էր մնում ուսուցանելու իր եղանակից:

Օրիորդ Լորը իրավունք ուներ ապավինելու մեր զաղտնա-  
պահությանը իր զարմանալի հեղինակության այս փոքրիկ  
չափազանցությունների կապակցությամբ: Այն ժամանակնե-  
րում ոչ ծնողական միավորումներ կային, ոչ էլ դասարանի  
ներկայացուցիչներ: Եթե ինքներս զեկուցեինք եղածի մա-  
սին, կնշանակեր խոստովանել, որ վատ ենք սովորում: Իսկ  
մեր տնօրեն պարոն Մելիզանը, որին «կատու» էինք անվա-  
նում իր սուսուփուս հայտնվելու պատճառով, — խոշոր կեր-  
պարանքով, ձեռքերը հետևը դրած, հանկարծ հայտնվում էր  
այնտեղ, որտեղ ամենից քիչ էինք սպասում, — միշտ բացա-  
կա էր լինում այդ պահերին:

Չգիտեմ այս մասին ի՞նչ էին մտածում մյուսները (մենք  
իրարից անտեղյակ էինք), բայց ես այդ հուլիսին օրիորդ  
Լորից և նրա առնական դաստիարակությունից հեռացա որո-  
շակիորեն թեթևացած սրտով: Այսուամենայնիվ, կարող եմ  
պատվովս երդվել, որ երբևէ նրան չեմ կոչել իր մականու-  
նով:

Ոչ թե ցանկություն չունեի այդ կովարար կնոջը երբեմն

ոխակալությամբ «միս Ֆրանս» անվանելու, որ ներքուստ կթեթևացնե՞ր ու կմխիթարե՞ր ինձ, այլ այդ անկաշկանդությունը ինձ թվում էր տեղացիներին վերապահված մենաշնորհ: Իրենց դպրոցն էր, իրենց ուսուցիչը, իրենց երկիրը, իսկ ես այստեղ էի ընդունվել սոսկ հատուկ բարյացակամությամբ: Հայրս ուներ ապաստանյալի սեփական կանոնները՝ երբեք չզբաղվել քաղաքականությամբ, դա բացառապես ֆրանսիացիների գործն է, չպահանջել որևէ իրավունք, որովհետև մենք ոչ մի հատ շունեինք:

«Օտարականի» այս կարգավիճակի մեջ, որ պարտադրել էր ինքն իրեն, չկար կույր հպատակության մազոխիստական ոչ մի հաճույք: Սա պարզապես մի պատճառ ուներ, խուսափել նյարդային վիճակներից ու սրտի ջղակծկումներից, որոնք առաջանում էին գերագույն փաստարկի ցնցումից. «Եթե գոհ չեք... վերադարձեք ձեր երկիրը»:

Այս ցավ պատճառող խոսքերը ես հազվադեպ եմ լսել, որովհետև սովորություն էի դարձրել ժամանակին կոանալ՝ հարվածից խույս տալու համար: Այս փախուստը թշնամական աշխարհից տեղիք էր տալիս որոշակի ալքիմիայի, հալեցնել հաստատուն վիճակդ, լուծվել՝ գոնե առերևույթ, պահպանելով բոլոր բաղադրիչ մասերդ, որպեսզի վերակազմվես հետագայում:

Այս անցումնային վիճակում, որոշ համակերպման ու մշտական ինքնազսպումի գնով, ի վերջո, սովորում ես ապրելու որոշակի ձև, ըստ որի նախընտրելի է երբեք չկանչել «կատո՛ւ», «կատո՛ւ», ոչ էլ օրիորդ կորին՝ իր մականունով:

Հիշում եմ այն տարիները, երբ հացի խանութների ցուցափեղկերը լեփ-լեցուն էին շեկ ու թուխ հացի կսկուժ ձողիկներով ու գյուղական բաղարջներով: Սակայն այդ հացը՝ մարդկային քրտինքի խորհրդանշանը, շատ արագ դառնում էր հյուրընկալած երկրին պատկանող առարկա:

— Եկել եք ֆրանսիացիների հա՞ցը ուտելու:

Օհ, անշուշտ սա Ֆրանսիան ստեղծողների լեզուն չէր:

Սակայն Ռոնսարը ներկա չէր, որ հիշեցնելու. «Դ՛շխանդ իմ, հարկավոր է վարվել Ողիսևսի նման. նա կարողանում էր ծանոթ ժողովուրդներին օգտագործել ի նպաստ իրեն»:

Վալերին, Մալրոն, էկզյուպերին՝ իր «Յտարական, քո տարբերությունը հարստացնում է ինձ» խոսքով, շէին լինում փողոցների այդ անկյուններում: Սարթրն ու ժիրոզուն մեր մտերիմները շէին: Մենք շէինք ճաշում Մատիսի կամ Պիկասոյի հետ, և էլլուարը, որ մեզ բավական սիրում էր, այդ բաներն ասում էր ոտանավորներով:

26.

Գալլոցիս այս յոթերորդ դասարանի ավարտը համապատասխանում էր Ֆրանսիա դալու յոթերորդ տարվան:

Այդ տարին մեր սովորական կյանքում եղավ մեծ ցընցումների տարի:

Նախ ունեցա իսկական, մեծ արձակուրդ: Արդեն պիտի լքեինք արդարադատության պալատի այդու մեր սովորական նստարանը և Աննա մորաքրոջս հետ պիտի գնայինք ամառանոց՝ քաղաքից դուրս: Տեղի ընտրությունը կատարվել էր հետաքրքիր ձևով:

Մենք ծանոթ էինք մի երիտասարդ հայ կնոջ: Սա մի անգամ ճանապարհ էր հարցրել ոստիկանից: Ոստիկանը նախ քաղաքավարի պատասխանել էր, ապա որոշ ժամանակ անց ամուսնացել էր նրա հետ: Ամուսինները բնակվում էին արվարձանային տնակում: Նրանց հետ էր նաև հայ զոքանչը, որ ապրում էր պարտեզի խորքում՝ մեկուկես սենյականոց շինվածքում:

Հայրս երկու ամսով վարձեց նրա կես սենյակը:

Այդ վայրը կոչվում էր Մոնթոլիվե:

Քաղաքի կենտրոնից քսան րոպեի հեռավորությամբ այդ արվարձանը յուրահատուկ դիրք ուներ: Այնտեղ տանող տրամվայը ամբողջ ճանապարհի ընթացքում շարունակ իջնում էր գառիվարով, իսկ տեղ հասնելիս հանդիպում էր բազմաթիվ կեռամանների, ապա անցնում էր ուղղաբերձ լանջով և վերջին կանգառում արդեն տպավորությունն այն էր, թե գտնվում ես քաղաքից վեր: Մոնթոլիվեն իր առաջին շորս տաւերով (լևո) ասես արդարացնում էր անունը:

Իմ մանկության այս առաջին Մժեի՝ նկատմամբ ապե-  
րախտ շլինելու համար համաձայնենք, որ մեր Պարադի փո-  
ղոցի համեմատությամբ, համենայն դեպս, սա մի հիսուն  
մետր ավելի բարձր էր:

Մեր տանտիրուհու խստադեմ ամուսինը ուժեղ տպավորու-  
թյուն էր թողնում ինձ վրա, երբ առավոտյան աշխատանքի  
էր գնում ոստիկանի համազգեստով, ատրճանակի պատյանը  
գոտուց կախ:

Նրան պատկերացնում էի վտանգավոր ոճրագործների  
ձերբակալելիս, լրտեսներ հայտնաբերելիս, քաղաքը գանգս-  
տերներից մաքրելիս, միմիայն նրան վերապահելով քաղաքի  
ապահովությունը:

Առավոտյան, երբ ոստիկանը տնից դուրս գալու փոխարեն  
մտնում էր տուն, նշանակում էր, ամբողջ գիշեր հերթապա-  
հել է, և, ուրեմն, պարտադիր է պահպանել բացարձակ լուռ-  
թյուն՝ Մոնթոլիվեի Զեյմս Բոնդի քունը շխանգարելու հա-  
մար: Այս անառարկելի կանոնը, որ մեր բնակության պայ-  
մաններից մեկն էր, ինձ ամենևին չէր անհանգստացնում:  
Ես խաղաղ երեխա էի:

Ժամերով նստում էի դռան մոտ, ծալովի աթոռակին, այդ  
պարտեզում, որի երկայնքն ու լայնքը ընդամենը տասը  
քայլ էր:

Ես արագորեն ազատվեցի տարվա անցած դասերիս կրկ-  
նությունից, սակայն յոթերորդ դասարանի մեր ծրագրի ամեն  
էջից հառնում էր օրիորդ Լորի ուրվականը: Փարիզի ավազա-  
նի և Իլ դը Ֆրանսի ջրերից իմ առջև տնկվում էր միս Ֆրանսի  
կուղը, լատիներեն Ուարդմանություններս ուղեկցվում էին Նրա  
դնովի ատամնաշարի շոր կափկափյունով, որը բերանից մեկ  
դուրս էր գալիս, մեկ հետ գնում, և ամեն անգամ, երբ որևէ  
ուղղազրական սխալ կամ թվարանական խնդիր էի ուղղում,  
մատնանքս ցավում էին:

Այնուհետև, հանկարծ այդ մի կտոր պարտեզն ու սահ-  
մանափակ տարածությունը չքանում էին, և ես պարոն ժյուլ  
Վեոնի ջնորհիվ օդապարիկով թռչում էի դեպի երևակայա-

<sup>1</sup> Մժե — չեռնային ամառանոց:

կան մի աշխարհ, դեպի արտասովոր ճամփերգություններ՝ դիմավորելու սառույցների սֆինքսին:

Կեօրին մեր ոստիկանը զգալիորեն կորցնում էր հեղինակութունը, երբ հին խալաթը հագին, քստիկները ոտքերին, դալիս էր ստուգելու իր քառանկյուն բանջարանոցը, որը կազմված էր խղճուկ պոմիդորի երկու թմբից, մի քանի պրասից, որոնք հրաժարվում էին աճելուց, ևրկար տերևներով ինչ-որ բույսի մի թմբից, որի տակ, թվում էր, բողկ է, իսկ վրան, այսինքն թփերը՝ սալաթ, թեև դժվար էր ճշտել տեսակը. լեթյո՞ւ, սկարոլ, թե շիկորե:

Չնայած խղճուկ բանջարանոցի շնչին բերքին, մեր համառ Շերլոկ Հոլմսը աշխատում էր օրինակելի եռանդով. հողը առատորեն սնում էր ամեն տեսակ խառնուրդներով, բուսահող ու պարարտանյութ էր տալիս և ամեն օր ջրում: Այդ օրը հանկարծ նա ցած դրեց ցնցուղը, կռացավ պոմիդորների վրա և սկսեց համրել:

Համրեց, նորից համրեց, էլի համրեց:

Երկտակ ծավված համրում էր, արյունը խուժում էր գլուխը: Շատ շուտով դեմքը ներկվեց այնպիսի գույնով, որ վաղուց անհրաժեշտ էին իր սիրելի պոմիդորներին:

Հետո մեջքը շտկեց, շուռ եկավ մեր կողմը. աչքերը քրննում էին մեզ, խուզարկում էին: Աննա մորաքույրս կարմիր ոսպով լի սինին ծնկներին դրած, մատների ծայրով հատիկները մի կողմ էր քաշում, հեռացնելով մանր քարերը: Մեր տանտիրուհու պառավ մայրը արևելյան ձևով նստած էր դռան շեմին, ծերունական հայացքը կորած ինչ-ինչ հիշատակների մեջ, շրթունքներին ժպիտ՝ ուղղված չգիտես ում:

Մեր տանտերը ինչ-որ նախադասություն սկսեց, բայց անմիջապես կուլ տվեց: Մորաքույրս ֆրանսերեն համարյա չէր հասկանում, նրա զոքանչը՝ բնավ չէր հասկանում, պարզ էր, որ խոսքը չէր ուղղելու ինձ նման փոքր տղային: Նա նետվեց տուն, և դուռը շրխկացնելու ձևից պարզ երևաց, որ, ինչպես հարավում են ասում, «կատաղել է»:

Կատաղությունը պայթեց կոկորդում, առաջացնելով ձայնալարերի տեական թրթռումներ: Բայց բառերը, անցնելով փակ պատուհաններից, կորցնում էին իրենց հստակությունը: Պարտեզի խորքից ինձ էր հասնում իմաստից զրկված միա-

լար ոռնոց: Ժամանակ առ ժամանակ հաշտեցնող մի ձայն (կնոջ ձայնը) ապարդյուն աշխատում էր մեղմել տղամարդու զայրույթը: Վերջին կրեշենդոն վերջ դրեց այդ զուգբերգին:

Դուռը բացվեց:

Բանագնացը գլուխը կախ գալիս էր մեր կողմը: Խոսքն սկսեց նախաբանով. խնդրում է ներողամիտ լինել ամուսնու նկատմամբ, նա մի քիչ «տաքարյուն է»... ճիշտ է, կոպիտ է թվում, բայց շար մարդ չի... ապացույց. ընդունել է իր խուլ, զառամյալ մորը, որի խելքը գլխին էլ չի:

Վերջապես անցավ բուն նյութին.

— Այ, եթե կարողանայիք նրա պոմիդորներին ձեռք շտալ, լավ կլիներ... այսինքն, ձեռք շտալ ասելով նկատի ունեմ... երբեմն մարդ սալաթ է պատրաստում, պոմիդոր չի ունենում... պարտեզում կա, գնում, մի քանի հատ պոկում է, դա բնական է:

Աննա մորաքույրը դադարեցրել էր ոսպ ընտրելը: Լուռ նայում էր այդ կնոջը, որ անհարմար էր զգում իրեն պարտադրված այդ տխմար միջնորդության համար: Մորաքույրս տեղից վեր կացավ, գնաց իջեցրեց դռան մոտ կախված զամբյուղը և դրեց տանտիրուհու ոտքերի մոտ: Զամբյուղը լիքն էր սքանչելի, կարմիր, առողջ, արևից հյութավորված պոմիդորներով, որոնք ցանկություն էին առաջացնում կիսել երկու մասի, վրան աղ ցանել և ուտել:

— Խնդրեմ, եթե պոմիդորի կարիք ունենաս, ևկ, վերցրու: Սրանք շատ ավելի լավն են, քան ձեր պարտեզինը: Զամբյուղը միշտ պատից կախված է:

Իսկապես, զամբյուղը միշտ լիքն էր լինում: Շաբաթը երկու անգամ հայրս, ծանրաբեռնված թարմ մրգով ու բանջարեղենով, գալիս, թարմացնում էր մեր պաշարները: Տեղում մենք միայն հաց ու միս էինք գնում:

Մեկ-երկու ժամ մնում էր մեզ մոտ: Ծպուռների ճոճոցը խառնվում էր հորս պատմած զավեշտական անեկդոտներին ու քաղաքի նորություններին: Հետո հայրս դանդաղ բռնում էր գիշերային հերթափոխի երկար ճամփան:

Պոմիդորներին զամբյուղի առջև, գողութեան մեղադրանքից գունատված, շվարած կանգնել մնացել էր իմ բարի Աննա մորաքույրը, որ նույնիսկ մի խոտ չէր պսկել ուրիշի պարտեզից:

Յեմենտե աստիճանին նստած տանտիրուհու զառամյալ մայրը՝ հավերժական ժպիտով, բանից անտեղյակ, խորասուզվել էր իր խլութեան մեջ:

Նրիտասարդ հայուհու դեմքին տարածվել էր ամոթի այնքան բնորոշ գույնը: Նա մրմնջաց.

— Ներեցեք, խնդրում եմ, օրիորդ Աննա...

Նա վազեց իր տան կողմը, նոր փաստարկներով զինված դիմադրավելու բորբոքված ամուսնու ցասումը:

Հենց որ մենակ մնացինք, ես թեքվեցի Աննա մորաքրոջս կողմը և, հայացքս դցելով ծեր մայրիկին, ասացի.

— Աննա մորաքույր, այս առավոտ տեսա... Նա պոկեց պոմիդորները... երեք հատ...

Աննա մորաքույրս, իմ մանկութեանը մասնակից, ճերմակող մաղերով Աննա մորաքույրս, խանդաղատանքով գրկեց ինձ:

— Ապրես, որ լոեցիր, որովհետև մենք... մենք կզնանք: Գուցե ավելի շուտ, քան որոշել ենք... բայց նա... մինչև վերջ մնալու է:

Ճիշտ այդ պահին պառավը կարծես դուրս եկավ իր կիսաթմբերից և խոպոտ հառաչ արձակեց, որ գալիս էր հոգու խորքից: Նա օրորում էր գլուխը, բայց ո՞ւմ հետ էր խոսում, մեզ չէր նայում:

— Ես գիտեմ, որ աղջիկս բախտավոր չի... շար մարդու ձեռք է բնկել... նրա կյանքում ուրիշ կին կա... քաղաքում... ես գիտեմ...

Աննա մորաքույրս՝ միշտ զգոն, երբ խոսքը շուտ էր գալիս բարձրի կողմը, շտապեց ինձ հեռացնել.

— Գնա մի քիչ զբոսնիր... բայց շատ չհեռանաս:

Իմ անհատական գրաքննչական հանձնաժողովի գնահատմամբ, դա նշանակում էր, որ մենք գտնվում ենք «տասներեք տարեկանից ցածր» արգելազոտում մեջ: Դեռ վերջերս, երբ



խոսք բացվեց ամուսնալուծվող մի գույզի մասին, ինձ արժանացրին նույն հեռացմանը:

Ամոթից շիկնող այդ դեմքը, սրտնհղությունը, երբ իմ ներկայությամբ սեռական բնույթի հարցեր էին շոշափում, դալիս էր հին ավանդույթներից: Աշխատում էին ինձ հեռու պահել սրտի պղտորումներից, որոնք, ըստ նրանց, տանում են դեպի անառակություն ու սանձարձակություն:

Հաճախ դռանն ուղղվող մորս սլարդ հայացքից անմիջապես հասկանում էի, որ պետք է դուրս գամ սենյակից:

Նրանց վախը, թե հանկարծ ժամանակից շուտ կընկնեմ սիրալին պատմությունների մեջ, ինձ մղում էր թափանցելու հասուն մարդկանց գաղտնիքների մեջ: Դռանը կպցրած ականջս շուտով ընկալում էր, որ նրանք դատապարտում են այն կնոջը կամ տղամարդուն, որը դրսում հաճույքներ է որոնում: Դռան հետևից լսած այս վերացական խոսքերն ավելի էին գրգռում իմ հետաքրքրությունը, քան թե իմ առջև սաված լինեին: Որովհետև մեծերի այդ խոսակցությունները, եթե զերծ լինեին ինձ ներշնչած խորհրդավորությունից, անշուշտ, իմ տարիքում ձանձրալի կթվային:

Այդ օրը, երբ Աննա մորաքույրս ինձ հեռացրեց ամոթը կորցրած ոստիկանի անառակության պատմությունը լսելուց, ես արդեն գիտեի իմ գնալիք տեղը: Գնացի դիտելու գնդախազը, որը տեղի էր ունենում մեր տան մոտ: Սա մանր տներից կազմված թաղամաս էր, որտեղ ապրում էին թոշակի սոնցած մարդիկ: Ժամը տասնվեցի մոտ, երբ արևը թեքվում էր, սկսվում էր անվերջանալի գնդախազը:

Մրցակից երկու խմբերը միշտ կազմվում էին միևնույն մարդկանցից: Վեց հոգի էին, գլխներին՝ կասկետ կամ ծղոտե ղլխարկ: Յուրաքանչյուրն ուներ տարրեր ձևերով ակոսված իր գնդերը: Նվ խաղն սկսվում էր, գունդը գլորվում, գնում կանգնում էր փոքրիկ գնդի մոտ, հետո մի ուրիշը դալիս բախվում էր նրան, տեղահան անում և գրալում նրա տեղը:

Քաղաքի ախտերից հեռու այս մարդանց համար աշխարհի ամենակարևոր խնդիրը սահմանափակվում էր այս մետաղի դնդի անցած ճանապարհով, որը պիտի մի կետ ալելացնեի իրենց հաշվի վրա:

Նարվածը տրվում էր երկու կողմերի հարգալից լռության մեջ, բայց հենց որ գունդը նետվում էր, սկսվում էր դատողությունների, մեկնաբանությունների, զավեշտական խոսքերի հեղեղը, որ ինձ ուրախություն էր պատճառում:

Հետագայում, երբ հիացմունքով լսում էի պարոն Պանյուլի զրույցները, ինձ թվում էր, թե պատմելու այս եղանակը արդեն մի տեղ լսել եմ:

Եվ իմ մանկության առաջին արձակուրդից հառնում էր Մոնթոլիվեն: Իմ գունդ խաղացողները կինոյի էկրանի վրա էին. դեմքերին քաշած Ռեմյուի, Ֆերնանդելի, Սարդուի և Ռելիսի դիմակները:

## 27.

Պոմիդորների միջադեպին հաջորդող կիրակի օրը, բոլոր կիրակիներին նման, տրամվայի վերջին կանգառում սպասում էինք Մայրիկին, Գայանեին ու հայրիկին: Աննա մորաքույրս նստում էր կանգառի նստարանին, ես վազում էի լանջն ի վար, դիրք գրավում վերջին շրջագարձի մոտ, որ տեսնեի դույզ վագոններով տրամվայի հայտնվելը: Ռելսերի վրայով թավալվող անիվների արձագանքն ավելի շուտ էր ազդարարում տրամվայի ժամանումը, քան ես կտեսնեի: Տրամվայն այնքան դանդաղ էր բարձրանում լանջով, որ ես կարող էի հասնել հետևից: Հայացքս խուզարկում էր վագոնների ներսը, որ նկատի երեքից գեթ մեկին, իբրև երաշխիք մյուս երկուսի ներկայություն:

Տրամվայը դեռ զառիվերի կեսին չհասած, ես արդեն գիտեի, որ նրանք մեջը չեն: Այն ժամանակ ձեռուտով հասկացնում էի Աննա մորաքրոջս, որ դեռ չկան: Եվ սպասում էինք հաջորդ տրամվային, ապա մյուսին:

Հանկարծ իմ հոգում հասունացող ուրախությունը, որ նախորդ տրամվայների ժամանման ընթացքում երկար զսպել էի, միանգամից պոռթկում էր. լուսամուտի հետևում տեսել էի Մայրիկիս զգեստի ծայրը, հայրիկիս կերպարանքը կամ Գայանե մորաքրոջս իոթրիկ ձեռքը:

Վերգտնումի այս տրամվայի հետևից գնում էի մինչև վերջ, բայց վագոնից դեպի մայթ արդեն ծայր էր առնում

մեր խոսակցութիւնը: Ստիպված էի ամբողջ ուժով գոռալ, որպէսզի անիվների կրճատոցի, սոնակների ճոճոցի և էլեկտրական շարժիչի հոնդիւնի միջով ձայնս տեղ հասնեի: Գոռում էի.

— Լա՞վ եք:

— Այո, շատ լավ: Դո՞ւք:

— Լավ ենք, շատ, շատ լավ ենք:

Մեր երկխոսութիւնը միշտ նույնն էր և զուրկ էր ինքնատիպութիւնից, բայց այս շնչին, սովորական բառերի մեջ ամփոփված էր մեր միասին լինելու ամբողջ երջանկութիւնը:

Այդ օրը Աննա մորաքույրս խոհանոցում զբաղված չէր լինում: Ամեն ինչ գալիս էր քաղաքից. թփով տուժա, պանրով կարկանդակ, ջեռոցում արևելյան ձևով եփված խոշոր խաչափառներ՝ խեցու մեջ բրինձ լցված, սամիթով համեմված կոլոլակ, որ խորովում էինք մարմանդ կրակի վրա, երկուերեք տեսակի խմորեղեն՝ ճաշից հետո բերաններս քաղցրացնելու համար:

Տանտիրուհու պառավ մայրը միշտ մեր հյուրն էր լինում:

Սեղան նստելու պահին, երբեք ոչ ավելի շուտ կամ ավելի ուշ, տանտիրուհին գալիս էր բարի գալուստ մաղթելու ծնողներին, և նրանք միշտ տանտիրուհուն առաջարկում էին ճաշել մեզ հետ:

Գնալիս նա բոլոր ուտելիքներից հետը մի քիչ տանում էր ամուսնուն, որը «հերթապահ էր, բայց շատ էր սիրում մեր խորտիկները»:

Այդ կիրակի նա շհամարձակվեց միանալ մեզ, թեև տանն էր: Մայրս զարմացած էր նրա բացակայութիւնից: Աննա մորաքույրս համառոտ պատմեց «միջադեպը»:

Թեև պոմիդորների պատմութիւնը ուներ շարունակութիւն, որ ինձ շատ էր ծիծաղեցրել, բայց ահա մորաքույրս այդ բանը լռութեան մատնեց:

\* \* \*

Ուրեմն հաջորդ օրը, կեսօրին մոտ, նկատեցի, որ պառավ մայրիկը մոտենում է պոմիդորի թփին: Հենց առաջին պոմիդորը պոկեց, ես նետվեցի Աննա մորաքրոջս մոտ.

— Պառավը նորից պոմիդոր է պոկում:

Մորաքույրս մի քիչ մտածեց.

— Աշխատիր իմանալ քանի հատ է պոկել:

Դժվար չէր մինչև երեքը հաշվել: Խեղճ, մթագնած ուղեղով պառավը, խակ պոմիդորները ձեռքին, փևսայի բարկությունից անտեղյակ, հանգիստ գնում էր իր սենյակը:

Մորաքույրս զամբյուղից արագ-արագ ընտրեց նույն շափսի երեք պոմիդոր, թաքուն դրեց պոկված պոմիդորների թիփի տակ:

Բանջարանոցի ստուգայցի ժամին, մեր լուսամուտի հետևում պալած, ես հետևում էի «իրադարձություններին»:

Իմ դիտակետից երևում էին միայն ոստիկանի քստիկները: Քստիկները սկսեցին տողանցել սալաթների, բողկերի, պրասսերի առջևից, որոնց հանդերձանքը ողորմելի վիճակում էր: Պոմիդորների քառանկյուն մարզի մոտով անցնելիս քստիկները հանկարծ կանգ առան: Աջ քստիկը կատաղի դոփեց գետինը՝ արտահայտելով տիրոջ զայրույթը: Սակայն երբ դեմքը դանդաղորեն իջնելով ընկավ իմ տեսադաշտը, արդեն ճանաչում էր ուրախությունից: Գետնին հայտնաբերել էր երեք հրաշալի, հասուն պոմիդոր: Այդ երեկո համտես կարվեր բանջարանոցի առաջին բերքը, որ, ինչպես հայտնի է, անուղապական համ է ունենում:



Երբ ավարտեցի այդ օպերա բուֆի վերջին գործողության պատումն ու մնջախաղը, հայրս խոժոռ հարցրեց.

— Հո շե՞ս տխրի, եթե արձակուրդը մի քիչ կրճատենք:

Արդեն մեկ ամսից ավելի այդտեղ էինք և մեր նախապես վճարած վարձով իրավունք ունեինք մնալու ևս երեք շաբաթ:

Առանց տատանվելու համաձայնեցի այդ հնարավորությանը:

— Իսկ դո՞ւ, Անիցա (սա Աննայի փաղաքշական ձևն էր):

— Օհ, դու լավ գիտես, որ ես այստեղ եմ փոքրիկի համար:

— Այդ դեպքում հավաքեք ձեր ունեցած-չունեցածը: Հենց պատրաստ լինեք, կգնանք:

Նորից Աննա մորաքրոջս պահած թղթերը, պարաննէրն ու թիւերը հրաշք գործեցին:

Փաթեթները, կապուցները, ձամպրուկները կողք կողքի շարվեցին դռան մոտ: Արդեն պատրաստ էինք տեղափոխվելու: Արդեն հրաժեշտ էինք տալիս ծեր կնոջը, երբ մեր տանտիրուհին խելահեզ նետվեց մեզ մոտ:

Ի՞նչ է կատարվում: Ի՞նչ են նշանակում այս փաթեթները: Այդպիսի հիմարություն չենք անի:

Հայրս մեղմորեն հասկացրեց, որ նրա ընտանիքի խաղաղության համար ավելի հարմար կլինի... պոմիդորի գոլեր չպահել:

Հորս տարիքը թույլ էր տալիս նրա հետ դուռով խոսել:

— Գիտե՞ս ինչ, այսօր բանջարեղենն է, վաղը ամուսինդ կկորցնի թեզանիքի կոճակները և կգա այստեղ հարցնելու, թե արդյոք պատահաբար չե՞նք գտել դրանք:

Որպեսզի մեզ համոզի մնալ, հայուհին առաջ քաշեց վերջին փաստարկը, որ ուղեղը ժամանակ չէր ունեցել քամելու.

— Ես իրեն լավ գիտեմ: Երբևէ չի վերադարձնի վարձի մնացորդը:

Խեղճ, փոքրիկ հայուհին տանջվում էր ամուսնու և մեզ պահելու ցանկության արանքում, և դա պարմանալի չէր, եթե նկատի ունենայինք մեր ուշադիր վերաբերմունքը նրա պառավ մոր նկատմամբ:

Հայրս ժպտում էր:

— Բայց ամուսինդ ինձ վերադարձնելու բան չունի: Ինքուհերս ենք ժամանակից շուտ գնում, բացի այդ, ինչ վճարված է, վճարված է:

Բոլորս լավ ծանրաբեռնված էինք, ամեն մեկիս ձեռքին երևք փաթեթ կար: Դեռ մնում էր պոմիդորով լի զամբյուղը: Աննա մորաքույրս զամբյուղը դրեց բանջարանոցի կենտրոնում, ապա մենք հեռացանք մեր կես սենյակից ու պատիկ բանջարանոցից և ամեն ծլարձակումի թշնամի նրա հողից:

Վերջին պատկերը, որ տպավորվեց հիշողությանս մեջ, ծեր կինն էր: Նա ցեմենտե աստիճանին նստած սպասում էր իր կյանքի վերջին, որը չէր վերջանում:

Մահը կրժոտում էր նրան մանր պատառներով:

Դրսում, արևախանձ, գաճաճ խոտերի վրա լսեցի «պտտանի» պայթյունի սքանչելի ձայնը: Սկսվել էր սուրբ Պետանքի տոներ:

28.

Վերադարձի ճանապարհին մենք շկարողացանք խոսել իրար հետ: Տրամվայը լեփ-լեցուն էր: Իսկական մարդկային ողկույզներ էին կպել տրամվայի ոտնատեղերին, վագոնների միջև եղած սունակալներին, նույնիսկ՝ տանիքին: Ժամանակ առ ժամանակ տոմսավաճառը սպառնում էր կանգնեցնել մեքենան, եթե անմիջապես շիջնեին, բայց ոչ ոք տեղից չէր շարժվում, և տրամվայը շարունակում էր ճամփան:

Այդ ժամանակաշրջանի Մարսելի հասարակական փոխադրականների այս ամենօրյա պատկերը ուներ առնվազն երկու առավելություն:

Նախ չէին մերժում ոչ մի ուղևորի, եթե իհարկե նա ուներ ուժեղ մկաններ որևէ տեղից կառչելու համար: Եվ ապա, տոմսավաճառը, հուևի հարթակի անկյունում կծկված, չէր էլ փորձում տոմսակ մեկնել այդ «անտոմսներին», որոնց ձեռքերը զբաղված էին և չէին կարողանում գրպանից փող հանել:

Քաղաքի վերջին կանգառում, երբ տրամվայը դատարկվեց մարդկային զանգվածից, հայրս մի քանի անգամ համրեց մեր ճամպրուկներն ու փաթեթները, բայց ճիշտ թիվը չէր ստացվում, մինչև որ իջեցրեց ուսի պայուսակը: Այդ ժամանակ շրջվեց Աննա մորաքրոջս ու իմ կողմը և հանդիսավոր կերպով հայտարարեց, թե տանը մեզ սպասում է երեք քառորդ անակնկալ: Անշուշտ, անակնկալի խոստումն արդեն շարժել էր իմ հետաքրքրությունը, բայց ավելի շատ գրգռում էր այդ երեք քառորդը, որ ամբողջ չէր դարձել: Ոտքով մինչև տուն ահագին ճամփա էր, և ես որոշեցի առիթն օգտագործել՝ գաղտնիքը բացելու համար:

Հարկավոր էր փորձել նրբամտությամբ:

Նախ սկսեցի քայլել հորս կողքով, հետո, օգտվելով փողոցն անցնելու միջոցից, մի պահ ընկա Մայրիկի և Աննա մորաքրոջս արանքը: Ապա, կարմիր ազդալույսի շնորհիվ, շատ

բնական ձևով վերջապես հասա իմ զոհին՝ Գայանե մորա-  
բուջա: Հեռզհեռի դանդաղող մեր քայլերը մեզ անջա-  
տեցին բոլորից: Այդ ժամանակ սկսեցի առաջին գրոհս, իրր  
խոսելով շատ անկարևոր բանի մասին, կատարյալ անտար-  
բերությամբ հարցրի:

— Ասա, Գայանե մորաքույր, այդ «երեք քառորդ անա-  
կընկալն» ի՞նչ է:

Նա արհեստական անտարբերությամբ հետ մղեց իմ հե-  
տաքրքրությունը, մատնացույց անելով առջևից քայլող հորս:

— Օ՛հ... հարցրու հորդ:

Բայց նա լավ գիտեի Գայանեին օգտագործելու ձևը: Նա  
մինչև վերջ չէր դիմադրի:

Անմիջապես անցա գործողությանս երկրորդ փուլին: Վի-  
րավորված մարդու կիսախոռով, կիսատխուր դիմակ... և լուռ-  
թյուն: Ես վստահ էի այդպիսի դիմակի զորությանը: Ես գի-  
տեի, որ Գայանեն երկար չէր դիմանա: Թաքուն դիտում էի  
նրան: Պահը նկատելի հասունանում էր: Ես ուժեղացրի ճրն-  
շումս՝ տխուր դեմքիս ավելացնելով կզակի թեթև ցնցում և  
դուլխս կախեցի: Երբ նա թեքվեց իմ կողմը, հասկացա, որ  
ինձ հաճույք պատճառելու անդիմադրելի ցանկությունից դա-  
դարեցրել է պայքարը: Անակնկալը՝ կես, երեք քառորդ, թե  
ամբողջական, արդեն հոսելու էր ականջիս խոռոչը:

— Խոստանո՞ւմ ես, որ մարդու չես ասի:

Ճիշտ այն պահին, երբ ուզում էի հավաստիացնել, հայրս  
որոտաց. «Գայանե՛», ասես կարգի էր հրավիրում:

— Արի մեր կողքով քայլիր, իմ փոքրիկ Գայանե, արի:

Հանցանքի մեջ բռնվածի նման, մորաքույրս «այո» թո-  
թովեց և շտապեց միանալու նրանց:

Ապշել էի: Ոչ մի վայրկյան աչքս չէի կտրել հորիցս, նա  
քայլում էր մեզնից մոտ քսան մետր առաջ, մի ձեռքով բռնած  
ուսի ծանր ճամպրուկը, մյուսով՝ երկու կապոց: Եվ դեռ ոչ մի  
անգամ հետ չէր նայել: Այս մարդը գլխի հետևում աչքե՛ր  
ունեի:

Աննա մորաքույրս այդ անակնկալի մասին ինձնից ավելի  
բան չգիտեր, իսկ մայրս գաղտնապահ էր: Ճար չկար, պիտի  
դիմանայի, մինչև հասնեինք տուն:

Լեւի-լեցուն տրամվայները շէին հարգում նուշնիսկ պարտադիր կանգառները, ստիպելով ընտրել երթևեկութեան ամենաբնական միջոցը, երկար ճամփան կտրել ոտքով՝ կապոցներով ծանրաբեռնված:

Սակայն հանուն մեզնից որևէ մեկի ժպիտի, իմ կատակասեր հայրը անվարան փոխվում էր գորշ մազերով երեխայի՝ իր շարաճճիություններով, կատակներով, սրախուսություններով, միայս թե մեզ աշխուժացներ այդ երկար ճանապարհի ընթացքում:

## 29.

Ողջամտորեն գիտակցում էի, որ արդեն անցել է այդ երկար ճանապարհի հոգնութեան թոթափման տրամաբանական ժամանակը: Հասել էր հայտարարված անակնկալի երկիմաստությունն ու առեղծվածը բացահայտելու պահը: Հայրս ուներ անմատչելի և խորհրդաւոր տեսք: Մեր անհողդողդ սֆինքսը պարտադրում էր սպասողական վիճակ, մեզ ստիպելով հետաքրքրութեանից պատեպատ խփվելու: Մայրիկը և Գայանեն, որոնք հետևում էին նրա ընթացքին, դավադիրների նման դասված ժպիտներ էին փոխանակում:

Ես թերվեցի Աննա մորաքրոջս կողմը և, ձեռքով բերանս ծածկելով, ականջին փսփսացի.

— Դու հարցրու:

Նա էլ փսփսաց իմ ականջին.

— Բնավ երբեք: Ուշքը գնում է ասելու ցանկութեանից: Հինգ բոպեից կայսթի:

Եվ պայթեց:

Երբ երկու-երեք անգամ կոկորդը մաքրեց՝ ձայնը բացելու համար, որի կարիքը բնավ չէր զգում, ես հասկացա, որ պահը մոտեցել է: Նրա զվարճալի կոտրատվելու տևողութունը ուղիղ համեմատական էր այն բանի կարևորութեան հետ, որ հայտնելու էր: Հավանորեն հարցն այս անգամ կարևոր էր:

— Ուրեմն այսպես...

Աննա մորաքույրը վրիժառու ձայնով շոր-շոր ընդհատեց նրան.



— Գիտես, Հակոբ (դա հորս անունն էր), իզուր ես քեզ տանջում: Մի ժամ սպասել ենք, էլի կսպասենք, թեկուզ մի օր, մի ամիս կամ մի տարի:

Եվ ավելացրեց հայկական մի հին առած, որտեղ ապագա արքայության խոստում կար բոլոր նրանց, ովքեր համբերել գիտեն: Բոլորիս ծիծաղը գալիս էր, սակայն այդ բանավեր վրիժառությունը մեզ հեռացնում էր բուն նյութից:

Ես փորձում էի վերադառնալ բուն նյութին, առանց շափաճանելու Աննա մորաքրոջս.

— Հայրիկ, եթե խոսակուց թեթևություն ես ղգում, խոսիր, կլսենք:

— Ուրեմն այսպես... Դուք այլևս չեք բնակվելու Պարադի փողոցի 109-ում:

Մեր կատակները մի վայրկյանում շքացան: Գլխու ձս փայլատակեցին տասը-քսան ենթադրություններ, որոնք վանում էի ինձնից: Ընտանիքը անտարակույս բաժանվելու էր երկու մասի: Ո՞վ պիտի գնար: Գուցե մեզ վտարել են: Թե տեղափոխվում էինք ուրիշ քաղաք կամ երկիր:

— Եկող ուրբաթ օրվանից մենք կբնակվենք Սեն-ժաք փողոցի 101 տանը:

Այդ էր որ կար, նոր տուն էինք ունենալու: Ինչո՞ւ էի վախենալի բաներ որոնում այնտեղ, որտեղ միմիայն բարի լուրեր էին պահված:

Այդ վախի արմատները գտնելու համար հարկավոր է մեկ անգամ ևս վերադառնալ այն ժամանակները, երբ տեղափոխություն բառը նշանակում էր փախուստ կոտորածներից: Երբ տեղափոխվում էինք տնից տուն, որոնք դառնում էին մեր ապաստարանները, ողբում էինք մեր կորուստները, նորից քայլում դեպի նորանոր երկրներ, դեպի անցյալ շունեցող, հոգի շունեցող սենյակներ, որ հետագայում ասենք. «Երբ ապրում էինք Պարադի փողոցում...»

Եվ հուշերիս մեջ այս շորս հարյուր տուն ունեցող փողոցից կմնա սոսկ մի անուն, փոխարինելու համար անցյալի սրբատաշ քարից կառուցված գեղեցիկ տունը, հսկայական կաղնու՝ կենաց ծառի ստվերում, որ կարծես ասում էր. «Այստեղ ծնվում եմ, այստեղ ապրում եմ, այնուհետև մեռնում եմ նույն տեղում»:



Ես լավ գիտեի Սեն-ժաք փողոցը՝ խաղաղ, մաքուր, բուր-  
ժուաների տներով երիզված, սալահատակված մայթերով ու  
թեք լանջերով, որ տանում էր դեպի Նոթր-դամ-դը-լա Գարդի  
տաճարը: Գարոցի ճամփին ամեն օր տեսնում էի այդ փո-  
ղոցը:

Ամեն ինչ կատարվել է շատ արագ, երբ մենք եղել ենք  
Մոնթոլիվեում: Այն ժամանակներում վերելակի բացակայու-  
թյունը իջեցնում էր վերին հարկերի վարձը: Մեր բնակարա-  
նը գտնվում էր հինգերորդ հարկում, նայում էր փողոցին և  
բաղկացած էր երեք սենյակից ու խոհանոցից:

Հայրս, Մայրիկը և Գայանեն ընկել էին մեր հարցերի  
տարափի տակ: Պատե՞րը... պաստառված են նոր, ծաղկավոր  
թղթերով, յուրաքանչյուր սենյակ տարբեր գույնի... Հատա՞-  
կը... ծածկված է շատ գեղեցիկ լինոլեումով... ինչպե՞ս,  
ուրեմն իսկական խոհանոց... Իհարկե, նախ ջրի ծորակ կա,  
ապա շորսաչքանի գործածված գազօջախ, որ գնել էին նախ-  
կին վարձակալներից: Սանդուղքը լայն է... սանդղամատերը  
ցածր, տան մուտքը ընդարձակ և այլն:

Երբ մեր հետաքրքրությունը ընդհանուր առմամբ բավա-  
րարվեց, և հարցերը սկսեցին մանրանալ, օրը մթնել էր ար-  
դեն: Նույնիսկ մոռացել էինք լույս վառել: Եվ ահա լույսի  
մեջ հանկարծ միտքս ընկավ «երեք քս ոորդի» վերջին քա-  
նորդը:

Հայրս խոհանոցի անկյունում (կիրակնօրյա մեր «խոհա-  
րարը» նա էր) արդեն հակվել էր գազօջախի վրա: Կարագի  
մեջ տապակվող պանրի ու պոմիդորի հաստ շերտի վրա մի  
տասնյակ ձու էր կտտրում, քիչ հետո կես կիտրոն կքամեր  
այդ ամենի վրա, առատ սղպեղ կցաներ, և կլիներ այն արագ  
ու համեղ ճաշերից մեկը, որ ես շատ էի սիրում:

Մայրիկը լուսարանեց այդ խորհրդավոր, պակասող քա-  
նորդի պատմությունը:

Այն երեք շաբաթը, որ մնում էր մեզ Մոնթոլիվեում, լիու-  
լի բավական էր նոր բնակարան փոխադրվելու ու տեղավոր-  
վելու համար: Մեր վերադարձը պետք է կատարվեր ըստ  
խնամքով պատրաստված ծրագրի: Պարադի փողոցի 109-ի

մոտով անցնել առանց կանգառի, առանց ընդհանուր զարմանքին ուշք դարձնելու, բարձրանալ Բրեթոյ փողոցն ի վեր, առանց որևէ բացատրության, ձախ անկյունով թեքվել Սեն-Փաք փողոցը: Բնականաբար մեր Գայանեն, որ շատ թույլ էր նման դադանիքներ պահելու մեջ, պետք է ամբողջ ճանապարհին գտնվեր Մայրիկի և հորս հսկողության տակ: Այնուհետև, 101 համարի առջև, հայրս պիտի հաներ բանալիների խուրձը և հինգերորդ հարկում հրելով դուռը, պիտի հայտարարեր, թե գտնվում ենք մեր նոր տանը:

Մեր անասլասիկի վերադարձը փոխել էր անակնկալի առաջին վարկածը և մի քառորդով կրճատել հեղինակի նախնական մտահղացումը:

Սեղանը հավաքելուց հետո հայրս անփութորեն Աննա մորաքրոջս ծնկներին դրեց մի վերնաշապիկ, խնդրելով, որ ստուգի թևերի կարը:

Սա «ձեռնակարի» ամենանուրբ տեղերից մեկն է: Այն կատարյալ մաքրությունը, որ այսօր վերացել է նույնիսկ մեծ շապկագործների մոտ, կայանում էր թևը շապիկին կանոնավոր ու աննշմար մանրակարով միացնելու մեջ: Երբ թևը ստանում էր իր ձևը, միացման բոլոր հետքերը այնպես էին շքանում, ասես ձեռք չէր կպել:

Աննա մորաքույրը կարիք չզգաց ստուգելու թևի ամբողջ կարը և վճիռ արձակեց.

— Սա մեր ձեռքի գործը չի: Այսինքն՝ սա առհասարակ բանի նման չի:

Հայրս բարկացավ.

— Ինչո՞վ է վատ այս կտուր:

— Սա ոչ թե կար է, այլ շուլալ: Եթե մեկը սեղմի շապիկն հագնող խեղճի ձեռքը, շապիկի թևը կպոկվի:

Ստուգման արդյունքը կտրականապես բացասական էր, բայց չէի հասկանում, թե դա ի՞նչ կապ ուներ հորս հետ, որ այդ գիշեր անկողին մտավ մի քիչ տրտմած:

Իմ միջնորմի հետևում լսեցի երկու մորաքույրերիս փրսփրսոցը: Աննա մորաքրոջս արհամարհանքին արժանացած կարը հորս ձեռքի աշխատանքն էր:

Երբ մենք Մոնթուլիվում ենք հղել, հայրս ամբողջ ազատ

ժամանակը հատկացրել է թեկարի նուրբ աշխատանքը սովորելուն: Գոնե ինքն այդպես էր կարծում, մանավանդ, Մայրիկն ու Գայանեն գովեստներ են շռայլել նրա հասցեին: Սակայն հենց հայրիկը գնացել է գործարան, անմիջապես քանդել, ուղղել են նրա անվարժ ու անճոռնի կարը:

Ես չէի տեսնում Աննա մորաքրոջս դեմքը, բայց պատկերացնում էի, թե որքան է տխրել հորս ցավ պատճառելու համար:

Նու՛մ քմնջաց.

— Դու պիտի նշանացի հասկացնեիր ինձ...

— Հասկացնում էի, բայց քիթդ խրել էիր կարի մեջ, բան չէիր տեսնում:

Ես այնքան հաճախ էի ականատես եղել, որ արդեն անգիր գիտեի աչքուհոնքով, հայացքով ու դիմախաղով թաքուն գլխի գցելու նրանց բոլոր շարժումները: Հավանաբար քիչ առաջ, քրոջը բան հասկացնելու համար, Գայանեի դեմքը լրիվ ջղաձգվել է, բայց Աննա մորաքույրը չի նկատել լուսազդանշանի փոխված նրա հուսահատ թարթումները:

Հուշերիս մեջ հառնող «աննշան իրադարձությունների» այս շղթան, հույսերի այս տրամվայը, որովհետև վերգտնում եմ մերոնց, փտած բանջարանոցի մի անկյուն, որ եղեմ է թվում, տխրության պահին արտասանված որևէ ծիծաղաշարժ բառ, ցավն ամոքող մի շարժում, քնքշությամբ պարուրված այս երիցս շնչին բաները կազմում էին մեր «երջանիկ առօրյան»:

Եվ մանկությունը, որի մասին հետագայում ասում են՝ «Եթե հնար լիներ նորից սկսել», ահա այդ մանկությունը... սիրով կսկսեի նորից:

### 30.

Այժմ արդեն ունեինք երեք իսկական սենյակ, բայց մըշտապես միասին լինելու սովորությամբ փաստորեն ապրում էինք այդ սենյակներից մեկում՝ ամենամեծում, որն ուներ փողոցին նայող զույգ լուսամուտներ և պատերին կարմիր ու կանաչ խոշոր ծաղիկներ:

Ահա այդ հիմնական սենյակում նստած էին լինում Գա-

յանեն՝ կարի մեքենայի առջև, Աննան՝ անբաժան ասեղը ձեռքին, և Մայրիկը՝ ձևարարի սեղանի մոտ: Բոլոր կեսօրներից հետո հայրս անկոտրում համառությամբ նորից ու նորից փորձում էր թևերի կարը: Նրա կերպարանքը գծագրվում էր պատուհանից եկող լույսի մեջ: Տենդագին համառությամբ նա ուզում էր ժխտել անժխտելին, կարի գործում շնորհքի կատարյալ բացակայությունը: Աննա մորաքրոջ ակամա խիստ քննադատությունից հետո, երբ հորս գործարան գնալու ժամը մոտենում էր, դուրս գալուց առաջ նա քանդում էր կարածը և թևերից անջատում շապիկը: Այդ սենյակում ևս ամենից շատ սիրում էի Մայրիկի սեղանի ազատ անկյունը: Այնտեղ էի դնում տետրակներս, որ իվարանորեն հաշվեմ, թե տարբեր ուղղություններով ընթացող գնացքները ժամը քանիսին պիտի հանդիպեն իրար: Երբեմն դեմ էի առնում քմահաճ ծորակների, որոնք տարբեր քանակությամբ ջուր էին լցնում Ա և Բ տարբեր տարողությամբ ավազանները: Այդ դեպքում սպասում էի, որ մորս մեծ մկրատը գործն ավարտեր, և ես նրա համար հայերեն թարգմանեի «տրված լինելով...» և «ասացեք, որքա՞ն ժամանակում Ա և Բ ավազանները...»

Մայրս թողնում էր ձևելու գործը: Նա երբեք իմ փոխարեն չէր լուծում խնդիրներս: Համբերությամբ, լրացուցիչ հարցերով, որոնց պատասխանում էի հեշտությամբ, հետզհետե ինձ դնում էր ճիշտ ուղղության վրա: Ես գոչում էի.

— Հասկացա, Մայրիկ, այլևս բան չասես... սպասիր:

Մինչ կկատարեի գործողությունները, Մայրիկը իր հերթին մի քանի թիվ էր խզմզում պատվերի փոքրիկ թղթին, որի վրա նշված էին ոմն պարոն Գաստոն Դյուլպոնի վզի, կրծքի, ուսերի, կոնքի չափերը: Հետո առանց տեղից շարժվելու տետրակիս հակառակ կողմից հետևում էր իմ հաշվումների ընթացքին: Մայրիկի ժպիտը, որ ես նկատում էի աչքի պոչով, փոխարինում էր իմ Զ-ը թվանշանով փորձերին: Հոնքերի թեթևակի խոժոռումը ինձ հուշում էր բազմապատկման մեջ թույլ տված սխալի մասին, որ պետք է ուղղեի: Վերջին անգամ կես առ կես ստուգում էի ամեն ինչ և վերջապես սրաի տրոփյունով հայտարարում լուծումի պատասխանը: Կատարելապես իրար համապատասխանող թվերն ու տասներ-

դականները ինձնից խլում էին հաղթական ճիշտ Գայանեի կարի մեքենան կանգ էր առնում, Աննա մորաքրոջս ասեղը դադարում էր կարելուց: Թիկունքումս զգում էի նրանց հիացմունքի հեքը մաթեմատիկոս քրոջորդու նկատմամբ: Մայրիկս ուստի ծայրով ջնջում էր պարոն Գաստոն Դյուպոնի անհատական պիտակի վրա արված թվաբանական հաշիվների հետքերը:

Ինձ մնում էր միայն բնագրի լեզվով թարգմանել հայացված ծորակների տվյալներն ու պատասխանները:

Ահա սեղանի այդ նույն անկյունում էր, որ մի օր հանրահաշիվական իմ հավասարումների  $x^2$ -ները հասան բարձրագույն աստիճանի: Այս անձանոթ խորանարդի դեմ մայրս տխուր նայեց ինձ:

Նրա մաթեմատիկական գիտելիքները ընդհատվել էին 1915 թվականի ապրիլի 24-ին, մեր հրկիզված դպրոցների մոխիրների մեջ:

— Տեսնում ես, մանչս, ես գիտեի, որ կգա մի օր, երբ այլևս չեմ կարողանա օգնել քեզ:

Այդ օրից ի վեր հաշվումները, թեորեմները, հավասարումները, X-երը և Y-ները, որոնք Մայրիկի օգնությամբ որոշուրախություն էին պատճառել ինձ, հեռզհեռի թաղվեցին դանադան պայմանական նշանների սառնության մեջ և, անկախ իմ բարի կամքից, սկսեցին դիմադրություն ցույց տալ:

### 31.

Օրիորդ Վիանը հավանաբար շատ գեղեցիկ է եղել: Այն ժամանակ դեռևս պահպանվում էին դրա անվիճելի ապացույցները. բարակիրան, շատ գեղեցիկ ձեռքեր, կանոնավոր գծերով նուրբ դեմք, հին ոճով հետ սանրված մազեր: Այս ամենը առանձին վայելչություն էին տալիս նրա անձին: Միբալիր ժպիտ ուներ, բայց չէր շոայլում, անշուշտ, որպեսզի պահպանի իր լիարժեք հեղինակությունը մեր վեցերորդ դասարանի վրա: Դպրոցականի մեր հիշողության մեջ օրիորդ Վիանը հրքեք ծաղրանուն չունեցավ: Նրան անվանում էինք «օրիորդ»: Ասենք վերջապես, քանի որ այս արտահայտու-

թյունը կարող է դպրոցական տղային որոշ ներելի շփոթու-  
թյան մեջ գցել, օրիորդ Վիանը քառասուն տարեկան էր:

Առաջին անգամ նրան մոտիկից տեսա ֆրանսերենի դա-  
սին: Անցնում էինք մադամ դը Սեվինյե: Օրիորդ Վիանը շա-  
փադանց բարեհնչուն ձայնով կարդաց սքանչելի մի նամակ  
այդ նշանավոր նամակագրից, որը հայտնի է գեղեցիկ ու ան-  
միջական գրելաձևով:

Եվ հանկարծ գլուխս մտավ, ներխուժեց մի հարց: Աշ-  
խարհի ամենամեծ հեթեթ, ամենամատերի, ամենախենթ, ամե-  
նատարօրինակ, ամենամանուկապաշտի, ամենազարմանալի, ամե-  
նատաշիկնող, ամենաարտասուց հարցը և վերջապես, աշա-  
կերտի կողմից ուսուցչին տրված ամենախելագար, ամենա-  
անսովոր, ամենաայլանդակ հարցը. «Ինչո՞ւ օրիորդ Վիանը  
երբեք չի ամուսնացել»:

Այս հարցը, որից անընդհատ խուսափում էի, և որը զո-  
ռով մտնում էր գլուխս, իհարկե, երբեք չէր ծագի մեր կիսա-  
թենարդիե, կիսաքվազիմուդո օրիորդ կորի իշխանության  
օրոք:

Օրիորդ Վիանը, այդ վաղեմի գեղեցկության կրողը, չէր  
կարող երկրպագուներ շունենալ: Սակայն, շգիտես ինչու, եր-  
բեք չէր ամուսնացել, այլապես, եթե գոնե մեկ անգամ ամուս-  
նանար, մեկընդմիշտ կարժանանար «տիկին» տիտղոսին:

Ի՞նչ էր ուրեմն անցել դարձել: Արդյո՞ք իրեն զոհաբերել  
էր մորը, քրոջը, զարմիկին: Ոչ, նման բաները հատուկ են  
միայն Աննա մորաքրոջս: Այդ դեպքում թերևս բազմաթիվ  
տղամարդիկ... ես հեռանում էի մեծ մարքիզուհուց և սկը-  
սում որոնել ուրվականներ, որոնցով լի էր օրիորդի անցյալը:

Եթե այդ ժամանակաշրջանում տարածված լինեին «հոգի»  
բառով սկսվող մասնագիտությունները, ես կդասվեի շթույլա-  
տրված ընկերությունների զոհերի թվին, ուր կենսաբանական  
առաջին մղումները բախման մեջ են մտնում բարոյականու-  
թյան դատապարտման և խիստ դաստիարակության ճնշման  
դեմ: Շատ կզարմանայի, եթե հասկանայի, որ իմ բնադդա-  
կան պահանջներով ես հանցավոր երեխա էի, որ հետ կի  
մղում իմ բնական ցանկությունները և զրահավորվում արա-  
տավոր, վնասակար, խաթարված հետաքրքրասիրությամբ:  
Մինչդեռ այդ ուղղությամբ անելիք չունեի: Տասներեք տա-

րեկան էի, և իմ կարծիքով ուղեղս կատարյալ վիճակում էր: Եվ եթե օրիորդ Վիանին բանտել էի իմ երևակայության փակ շրջանակում, ապա մի շարք շեղյալ իրադարձությունների բերումով նրա համար հորինել էի մի մեծ, գեղեցիկ ու արտասովոր սիրո պատմություն:

Մաթեմատիկայի դասի ընթացքում օրիորդ Վիանն արդեն խոչնդ էր կապերը երեք երկրպագուների հետ:

Արդեն շորրորդ հանդիպումն էի նախապատրաստում նրա համար, երբ նկատեցի, որ շնայած երկրպագուների հերթական խզումների ժամանակ ես նրան վերապահում էի դրական դեր, այսուամենայնիվ այդ տանում էր դեպի բարձրի, անկում:

Հուսախար անող դժբախտ սերերից և դառն վշտերից հեռու, անմեղ օրիորդը՝ մենակ շորս տղամարդու հետ, պարզապես բռնում էր այլասերության ճանապարհը: Իմ ամենօրյա կեսժամանոց մենավոր դասամիջոցի ընթացքում ամեն ինչ ջնջում էի: Ես տարվել էի պատմություններ հորինողի կարողությամբ, որ իր ձեռքում է պահում մարդկային ճակատագրի սանձերը, կամովին ղեկավարում նրանց արարքները, նրանց պարտադրում բնավորություններ, յուրովի տնօրինում անսպասելի շրջադարձեր, որոշում պատահականություններ և մնում հանդիպումների տերը:

Ահա, օգտվելով այդ կարողությունից, ես ընտրեցի մի երկրորդ վարկած, ըստ որի՝ օրիորդ Վիանը հանդիպում է միմիայն մի տղամարդու:

Օրիորդ Վիանը խելակորույս սիրում է նրան, և հանկարծ այն օրը, երբ լատիներեն մի քանի խոսքով պիտի նրանց միությունը կնքվեր ամուսնական սրբազան կապերով, փեսացուն սուսուփուս անհետանում է: Եվ օրիորդը, հավատարիմ մնալով նրա հիշատակին, մեկընդմիջտ զոհում է իր «տիկին» տիտղոսը:

Շատ շուտով այդ մարդը, որին պիտի անհետացնեի, սկրսեց ինձ ավելի խանգարել, քան եթե մնար Վերջապես ինձ թվում է, օրիորդի հմայքը շխաթարելու վախից, ես նրան ըցել էի հոգու հավերժական անարատության դիրկը:

Գրատախտակի վրա դեռևս մնում էին նրա ձեռքով գրված X-երը, Y-ները և Z-երը՝ քառակուսի կամ խորանարդ աստի-



ճաններով: Իրական այս նշանները հիշեցնում էին, որ իմ կողմից նրան վերագրված վերացական ու կամայական անարատություն ու անմեղություն մեջ նա աստիճանաբար կորցնում էր մարդկային կերպարանքը:

Մեր վերջին դասին,— բոլոր առարկաների համար ունե-  
ինք մի դասատու,— օրիորդ Վիանը պատմում էր ժաննա  
դ'Արկի մասին, որը ոչ մի ձևով ինձ որևէ օգնություն ցույց  
տալ չէր կարող: Սակայն, երբ Դոմրեմիի փոքրիկ գեղջկու-  
հին լսում էր գերբնական ձայներ, որոնք նրան հրամայում  
էին փրկել Ֆրանսիան, «Օրիորդը» հանդիպում էր այն մար-  
դուն, որին պիտի ամբողջ կյանքում ինքնամոռաց սիրեր:  
Երբ ժաննան ազատագրում էր Օուլանը, օրիորդ Վիանը իմա-  
նում էր, որ իր սիրած տղամարդը ամուսնացած է: Օսերի,  
Թրուալի և Շարթրի ազատագրման ժամանակ օրիորդ Վիանը  
իմանում էր, որ նա զոհ էր բուրժուական բարքերի, ուր  
ամուսնալուծում գոյություն չունի: Ռենսում տեղի էր ունե-  
նում Կառլոս 7-րդի թագադրման արարողությունը, երբ օրիորդ  
Վիանը որոշում էր կապերը խզել սիրած տղամարդու հետ,  
բայց սա, ձերբակալվելով բուրգունդացիների կողմից և վա-  
ճառվելով անգլիացիներին, երգվում է, թե իր ու կնոջ միջև  
այլևս ոչինչ չկա, թե հարկավոր է մի քիչ համբերել...

Ռուանում օրիորդ Վիանին հերետիկոս են համարում, երբ  
ցանկանում է վերջին, ամենավերջին անգամ տեսնել նրան:  
Բովեում մեղադրվելով կախարդության մեջ, արդեն տասը,  
քսան անգամ տեսել էր նրան: Երբ վերջապես ժաննային այ-  
րեցին խարույկի վրա, օրիորդ Վիանը ի վերջո համաձայնեց  
սիրած տղամարդու երկդիմի կյանքին: Վերականգնման դա-  
տին ներկայացավ գորշավուն մազերով մի կին, որը պահ-  
պանել էր երիտասարդ տարիների գեղեցկությունը և դեռևս  
կարող էր «տիկին» դառնալ: Իր համեստ բնակարանում ուղ-  
ղելով աշակերտների տետրերը, նա սպասում էր այն տղա-  
մարդու հազվագեպ այցելություններին, որի համար մնացել  
էր «օրիորդ»:

Իմ այս պատմությունը վերջնականապես վավերացվեց,  
երբ դպրոցից դուրս գալիս միջանցքի խորքում տեսա նրան  
փոքրիկ հայելու վրա թեքված, շրթներկը ձեռքին: Եզրակաց-  
րի, թե, անտարակույս, այս երեկո հանդիպում ունի:

Այս «օրիորդ Վիանի մտերիմ կյանքը» ես երևակայել էի այն տարիքում, երբ մարդու թվում է, թե իրենից առաջ եղած ամենայն ինչ ստեղծվել է իր մասնակցությամբ: Օրիորդ Վիանը կարող էր վստահել իմ գաղտնապահությանը, այսինքն՝ նա ապացուցեց, որ կատարելապես վստահում է ինձ, վեցերորդ դասարանի ամբողջ ընթացքում ղեհատեց ինձ, իհարկե, երբեմն ամենայն խստապահանջությամբ, բնավ չվախենալով իր գաղտնի սերերի բացառիկ պահապանի ճնշումներից:

32.

Վաղուց ի վեր արդեն լքել էի մանկությունս, երբ հանդիպեցի այս տողերին.

Մի օր Արիստոտելի աղջկան, որի անունը Պիթիաս էր, հարցնում են, թե որն է նրա սիրած գույնը: Նա պատասխանում է. այն, որ պարզ ու անշար մարդկանց դեմքին ամոթխածություն է սփռում:

Այդ գույնը ես պահել էի իմ հիշողության մեջ, որովհետև շատ էի տեսել Գայանե մորաքրոջս դեմքին: Նրա զգայական կյանքի ամենաաննշան հույզն անգամ այտերին սփռում էր այդ աննման երանգը, որը կոչվում էր «կարմրել»:

Իսկական երանգը նվազ հասարակ է, նվազ մնայուն, նվազ ճշան և ավելի նուրբ: Ահա թե ինչու օրիորդ Պիթիասը գերադասում է այդ անվանել ամոթխածության գույն:

Այդ օրը, երբ դպրոցից վերադարձա, ահա այդ երանգով էր գունավորվել Գայանեի դեմքը: Չնայած սովորականից ավելի էր զլուխը խոնարհել մեքենայի վրա, բայց շփոթմունքը աչքիցս չվրիպեց: Մեզ հյուր էր եկել ոմն տիկին Թագուհի, որն, ըմբռնված արևելյան սուրճը, միաժամանակ երաշխավորում էր ինչ-որ տղամարդու ազնվությունն ու մի քանի այլ բարեմասնություններ... Մայրիկիս և Աննա մորաքրոջս հոնքերը վեր էին բարձրացել, բայց խոսակցությունը մեկեն ընդհատվեց իմ ներս մտնելով. ևս մի անգամ իմ դրաքննչական հանձնաժողովը արձանագրեց. «Փոքրիկներին չի թույլատրվում»:

Չայնեերը, ինչպես միշտ, խոսքի կեսից այնպես կտրեցին, որ, ընդհակառակը, հաստատվեց, որ այստեղ գաղտնիք կա:

Աննա մորաքույրս սուրճի երեք գավաթը դրեց տիկին Թագուհու տնօրինութեանը. նա կարող էր սուրճի մրուրով ապագա գուշակել:


Արևելյան սուրճը՝ լինի հայկական, հունական, մավրիտանական թե լիբանանյան, մի անգամ բովելուց և շատ բարակ փոշու պես աղալուց հետո այլևս զտման կարիք չի զգում: Ուղղակի շաքարի հետ լցնում են ջրի մեջ և հասցնում եռման աստիճանի: Գավաթները լցնելուց հետո սուրճի փոշին բարակ շերտով նստում է գավաթի հասակին, որը կոչվում է սուրճի մրուր:

Հաճախ սուրճը խմելուց հետո, վաղեմի սովորությամբ, եթե մասնազետ կա, գավաթը շուռ են տալիս ափսիսի մեջ և թողնում են մի քիչ հանգստանալ: Մրուրը, հոսելով հախճապակե գավաթի ներսի պատերից, ստեղծում է քմահաճ պատկերներ: Ահա լրջորեն ուսումնասիրելով այդ ոլորագծերը, գուշակը պետք է կանխատեսի սպասվող գալիքը:

Տիկին Թագուհին խոսեց արտասահմանից եկող մի նամակի մասին, որ պիտի ուրախ լուր բերեր մեզ, հետո զգուշացրեց ինչ-որ բարձրահասակ մարդուց, որին չէր կարելի վստահել, նախատեսեց թեթև հիվանդություն՝ առանց հետևանքների և դորժի հաջողություն:

Բացելով Գայանեի գավաթը, նրան գուշակեց բախտավորություն՝ շատ մոտ ապագայում և աչքով արեց մորաքրոջս: Բայց Գայանեն ինչքան ուժ ուներ արագացրեց կարի մեքենայի ընթացքը, առանց հայացք անգամ գցելու մարգարեի կողմը: Նրա դեմքին մնացել էր ամոթխածության գույնը:

Երբ շատախոս ապագա հետազոտողը դնում էր, մայրս նրան ճամփու դնելիս ցածրաձայն խոստացավ, թե մոտ օրերս նրանց պատասխան կտան:



Բոլորովին շտրեցի այդ տիկին Թագուհուն, որը, ճշգրտան ձայնը գլուխը դցած, աշխատում էր հնարավորին չափ շատ բոտ տեղավորել ամենակարճ ժամանակի մեջ: Զգիտեմ ինչու,

բայց նախազգացումս հուշում էր, թե այդ շատախոսությունս ներք գաղտնի կերպով վերաբերում էին մեր Գայանեին:

Այժմ երեք քույրերը աշխատում էին անսովոր լուծյամբ: Հասկացա, որ իմ ներկայությամբ այլևս ձայն չեն հանի: Չնայած դասերս դեռ լրիվ չէի պատրաստել, բայց ձևացրի, թե ամեն ինչ վերջացրել եմ: Գրքերս ու տետրակներս փակեցի, տեղավորեցի պայուսակիս մեջ, որպեսզի հասկացնեմ, թե երկար եմ բացակայելու և պարապ մարդու տեսքով դուրս եկա սենյակից, դուռը բաց թողնելով: Միջանցքում, մեջքս պատին հպած, ականջներս սրած, շունչս պահած սպասում էի գաղտնիքը բացող փսփսոցին, որի մեջ ուզում էի թափանցել:

Հակառակ սպասումներիս, խոսքին նախորդեց շարժումը, Աննա մորաքույրս հրեց դուռը, սակայն չհետևեց, որ լրիվ փակվի: Այսպիսով սենյակի տեսադաշտը փոքրանում էր և իմ ականջադրման դիրքից պակասում էր լսելու հնարավորությունը: Անմիջապես ձեռքս դեմ տալով, դանդաղեցրի դռան ընթացքը, ստեղծելով բնական կանգառի տպավորություն: Ի վերջո մնաց նեղլիկ բացվածք, որի արանքից երևում էր մեքենային հակված Գայանեի փխրուն ուրվագիծը: Սակայն բավական էր մի փոքրիկ շարժում, և նա դուրս կընկներ իմ տեսադաշտից:

Այսինքն՝ Գայանեն այնպես էր պարփակվել իր մեջ, որ ես հույս էլ չունեի նրանց միջոցով փարատելու տիկին Թագուհու այցելությամբ ստեղծված անհանգստությունս: Թույլ լսում էի Մայրիկի և Աննա մորաքրոջս ձայները, որոնք հաճախ խլանում էին մեքենայի աղմուկից: Շարժիչի կարճատև գաղարների ընթացքում ականջներս որսում էին խոսքի որոշ պատառներ կամ ընդհանուր խոսքից պատահամբ անջատված հատ ու կենտ բառեր:

Երբ կարողացա այդ քաոսից փրկված տարրերով վերակառուցել գլուխկոտրուկը, ես շշմել էի և վրդովվել: Խնդրում էին Գայանե մորաքրոջս ձեռքը:

Այն մարդու անունը, որն ուզում էր իմ մայրերի երրորդությունից անջատել մի երրորդը, Վարդան էր: Նա փականագործ-մեքենագետ էր և լավ աշխատավարձ էր ստանում, գործարանատերը նրան բարձր էր գնահատում և ուղարկել էր

Վալանսի բաժանմունքը իբրև վարպետ... վերջապես ուներ ապագա լավ ամուսնու բոլոր հատկանիշները, ազնիվ, աշխատասեր, լուրջ և այլն:

Այս ընթացքում նկատեցի, որ շատախոս միջնորդի նկատմամբ կ'որ ընդհանուր հակակրանք, բայց «մենք հո տվին Քաղուհու հետ շենք ամուսնանալու»:

Այդ հոգնակի Մեմբ-ը, շնայած խոսքը վերաբերում էր մեր մտերիմին, մեր նախնիների սովորույթյամբ մասնակից էր դարձնում ամբողջ ընտանիքին. ամուսնանալով կնոջ հետ, աղամարդը կարծես որոշ չափով ամուսնանում էր նաև նրա ընտանիքի հետ: Այդպես, Աննա մորաքույրը և Գույանեն մեր բոլոր լավ ու վատ օրերին, տարագրության սև տարիներին հետևել էին մեզ:

Մայրիկի ասածներից չկարողացա լսել մի մեծ հատված, նա խոսում էր շատ կամաց, և դուան հետևից շէր լսվում: Կարի մեքենան հանկարծ կանգ առավ, և հստակ լավեց Գայանեի ձայնը.

— Ամուսնության խնդիրը հորինել եք, որովհետև շեք համարձակվում ասել, թե ես ավելորդ եմ այս տան մեջ... լավ... ես կթողնեմ կզնամ:

Եթե իմ ունոցը խեղդվեց կոկորդիս մեջ, եթե ոտքս, որ պիտի կատաղի հարվածով բացեր դուռը, մնաց օդի մեջ, եթե շգոռացի «ես էլ կզամ քեզ հետ», պատճառը մորս ախուր ձայնն էր, որ ընդհատեց նրան.

— Լավ լսիր, Գայանե: Եթե մի օր հեռանաս այս տնից, մենք պիտի գանենք երեք բանվորուհի, որ փոխարինեն քեզ, բայց հնարավորություն չունենք վճարելու նույնիսկ մի հոգու: Օրական 15—18 ժամ կարի մեքենային կպած՝ անբուն, անդադար աշխատում ես, այդ անվճար աշխատանքդ, որ անվանում ենք «ընդհանուր դանձանակ», մեզմ ասած, ձրի աշխատանք է, և դրա շնորհիվ հազիվ ծայրը ծայրին ենք հասցնում: Տեսնո՞ւմ ես, իմ խեղճ Գայանե, որ դու ավելորդ շես այս տանը, այլ մենք ենք ծանր բեռ քեզ համար: Նայիր Աննային, լավ նայիր նրա ճերմակող մազերին և զոհողություններին: «Երջանիկ զոհին», որ շի ամուսնացել, որովհետև մոր պերեզմանին երդում է տվել մեծացնել իր քույրիկներին: Դու ոչ մեկին պարտք չես, բայց քիչ է մնում դու էլ բռնես Ան-

նայի ճամփան: Մենք կկործանենք քո կնոջական կյանքը, և որքան էլ զղջաս, ուշ կլինի: Ես նորից եմ կրկնում, ծանոթացիր այդ տղայի հետ, եթե հավանես, անպայման ամուսնացիր, սիրելի Գայանե, ամուսնացիր, քանի ժամանակդ է... Որքան էլ այս տնից տանես սրտի մի մեծ հատոր:

Ինչպես բոլոր ամոթխած մարդիկ, որոնք երկար լուռ են մնում, բայց երբ իրենցից պահանջվում է որևէ հարցի դժվարին պատասխանը, հանկարծ սրտապնդվելու համար սկսում են դռուլ, մեր սուսիկ-փուսիկ Գայանեն նույնպես հեկեկալով գոռաց, որ ինքն այսպես շատ երջանիկ է, ոչ մի բանից դժգոհ չէ, և կարիք չկա դժբախտությունն ուրոնել այնտեղ, որ տեղ նման բան չկա:

Հետո ավելացրեց.

— Տեսեք, եթե օրերից մի օր հրավիրեք այդ մարդուն, զգուշացնում եմ, չփորձեք ինձ վարդարել, շպարել կամ նոր զգեստ հագցնել, ինչպես ցուցադրելիք ապրանք: Ես ծախու չեմ:

Եվ կարի մեքենան նորից դործի դրեց:

Ես պատկերացնում էի երեք քույրերի արցունքով ողողված դեմքերը: Նորից լուռություն էր հաստատվել: Ընդհատընդհատ հեկեկոցները կարող էին մատնել իմ ներկայությունը դռան տակ: Այդ պատճառով էլ պառկեցի անկողնուս վրա:



Արարողության շարունակությունը լավ դիտեի: Հայրս թաքուն կհետաքրքրվեր փեսացուի վարքուբարքով ու ընտանիքով: Եթե հարցուփորձի արդյունքը դրական լիներ, իմաց կարվեր միջնորդին, թե տղան կարող է սովորական այցելությունամբ դնել իր թեկնածությունը: Հանդիպումը տեղի կունենար ընտանիքում, ավանդական սուրճի և քաղցրավենիների սեղանի շուրջ, կխոսվեր ամեն ինչից ու ոչնչից, բացի, իհարկե, հավաքույթի բուն պատճառից: Անշուշտ, այդ նուրբ դեպքի առթիվ ավելորդ կլիներ հույս դնել, թե Գայանեն գոնե մի քիչ կոկետություն կանի, նա պարզապես կդառնա եղյամով պատված սառն քաղաքավարությամբ պաղպաղակ վաճառող: Այդ տղան պիտի կոտրեր սառույցը, որ նրա հետևում գտներ

ամենատարուկ կնոջը: Սակայն կգնա՞ր արգյոք մինչև բևե-  
ռային սառույցների նվաճումը: Շարունակությունը դասական  
էր. ամուսնության պաշտոնական առաջարկ, նշանդրեք: Նշան-  
ված կմնային մի տարի, եթե շցանկանային ձգձգել, երկու  
տարի, եթե ընտրեին սովորական ընթացք: Նախամուսնական  
շրջանում տղան քիչ-քիչ կգառնար ընտանիքի անդամ, միա-  
սին կգնայինք հայրենակցական միությունների բազմազան  
տոնակատարություններին: Եվ վերջապես կմոտենար նշանա-  
վոր օրը՝ հարսանիքը, որի արարողությունը շուքով ու հան-  
դիսավորությամբ կկատարվեր Արևելքի առաքելական եկեղե-  
ցում, ապա ամեն ինչ կավարտվեր կապույտ, սպիտակ, վար-  
դագույն շաքարած նուշի բաժանումով:

Հենց մտածում էի այդ շաքարած նուշի մասին, ամուսնու-  
թյան դադափարը մտքիս մեջ կտրվում էր իրականությունից  
ու հստակությունից, դառնում լրիվ վերացական: Ես աշխա-  
տում էի հասկանալ հայկական մաղթանքը, որ նման առիթ-  
ներով հաճախ էի լսել.

«Մի բարձի ծերանաք»:

Բայց դրա խորհուրդը չէի ըմբռնում և հանգեցնում էի  
տհաճ իմաստների. միևնույն անկողինը բաժանելու ստիպո-  
ղականության մեջ քրտինքի փոխանակում և բավական տար-  
օրինակ ժլատություն «լվացքի» ասպարեզում:

33.

Այս խորհրդավոր միության կապակցությամբ ինքս ինձ  
ուղղած բազմաթիվ «ինչուններին» պատասխանելու շփոթու-  
թյունից, այդ անհատնում խոռվքից ակամա ժպտացի:

Այդ նույն օրը, Մադամ դը Սեվինյեից մինչև ժաննա  
Դ'Արկ, ես լկտի հմտությամբ խեղճ վիանին արդեն առնվազն  
հինգ անգամ ամուսնացրել էի, առանց նրա կարծիքը հարց-  
նելու և առանց երկար-բարակ մտածելու: Բոլոր հերոսներին  
ընտրել էի ընթերցածս գրքերից: Բայց հենց «ամուսնու-  
թյուն» բառը սկսեց պատվել մեր տան մեջ և ուղղակի իմաս-  
տով դեմս դուրս եկավ, ես հանկարծ հայտնաբերեցի նրա մի  
ուրիշ, թաքնված կողմը:

Սովորաբար նման դեպքերում ես դիմում էի ուղղակի պա-

րոն կարուսին<sup>1</sup>, որ այնքան հաճախ էր փարատում անգիտությունս: Նա սովորեցրեց, թե ամուսնությունը տղամարդու և կնոջ օրինական միությունն է, թե ամուսինը նա է, որ ամուսնական կապով միացած է մի կնոջ հետ: Ամուսնական կապ ասելով պետք է հասկանալ տղամարդու և կնոջ օրինական միությունը, և կինը այս դեպքում տղամարդու օրինական ուղեկիցն է:

Միությունների այս խառնաշփոթը մշուշել էր ուղեղս: Մի պահ նույնիսկ թվաց, թե «օրինական» բառից են ծնվում երեխաները, բայց դրա բնորոշումը արագորեն հուսախաբ արեց ինձ. օրինական նշանակում է օրենքով: Տղամարդու և կնոջ բազմացման էությունն ու բնույթը մեր բարի դպրոցի ծրագրի մեջ չէր մտնում:

Միգուցե այս թեման կարողանայինք զարգացնել, երբ անցնեինք տասը պատվիրանները, երբ աստված Սինա լեռան վրա հանձնարարել էր Մովսեսին: Սակայն, երբ անցնում էինք իններորդ պատվիրանը, որն ասում է, թե «մարմինը պիտի տենչա միայն ամուսնացած պարագայում», աբբա Ֆ-ն հանկարծ այնպես խուլ ու ջղաձիգ հազաց, որ «բանն» անցավ ընդհանուր անտարբերությունամբ:

Այսինքն՝ այնպես, ինչպես սուրբ դրքի մյուս պատվիրանները:

Անշուշտ, տանը չէի կարող լրացնել սեռային դաստիարակությանս բացը, քանի որ, երբ այդ նուրբ հարցի մասին խոսք էր բացվում, դռները փակվում էին, ձայները իջեցվում, խոսակցությունը կտրվում էր: Իսկ պատերին ու դռներին կպած ականջներս հազիվ մի քանի փշրանք էին որսում և ի վիճակի չէին հագուրդ տալու մեծ հետաքրքրություններիս:

Դպրոցից և տանից դուրս մնում էր միայն դրանք իրար միացնող ճանապարհը: Բայց ճանապարհին նույնպես ինձ հետ էին պահապան հրեշտակներս՝ մայրս կամ մորաքույրերս: Սակայն մի անգամ, երբ մի պահ կանգնեցինք զրախանութի ցուցափեղկի առջև, որտեղ ցուցադրված էր Ալեքսանդր Դյումայի ամբողջական գործերի շքեղ, կաշեկազմ հրատարա-

---

<sup>1</sup> Նկատի ունի ֆրանսերեն «կարուս» բացատրական բառարանը:



կուլթյունը, հանկարծ աչքովս ընկավ մի մերկ կնոջ իրան, որ գրավում էր գրքի ամբողջ շապիկը: Դա Վիկտոր Մարգարիտի «Արու աղջիկն» էր: Հայացքս «Երեք հրացանակիրների» վրայով սահել էր մերկ կնոջ փարթամ ստինքների վրա:

Երբևք ճնշման սովեր կամ պատժի սպառնալիք չի եղել այս արգելված ասպարեզը թափանցելու համար: Պիթիասի նախընտրած գույնը լուռ համաձայնությունը բավարարում էր մեզ, որպեսզի երբեք չխոսենք «այդ բաներից»: Ծնողներս չէին կարողացել ոչ «ուղեցույցներ», ոչ էլ՝ «Ինչպես մեծացնել հրեխային՝ սաղմից մինչև շափահասություն», բայց մեծ սիրով և որոշ ամոթխածությունք, յուրովի օգնում էին ինձ անցնելու արբունքի փխրուն տարիների ողջ անձկությունը:

Իմ տասներեք տարեկանի տզիտությունները, որ այսօր այդ տարիքում լիուլի բավարարված է, անտարակույս, աշխարհ են բերել շատ ավելի առողջ, ավելի խելացի, ավելի փայլուն, ցնցումներից, հանցագործություններից ու արհեստական դրախտից զերծ սերունդներ:

Այս ամենը դատապարտել են ուրիշ աշխարհի, ուրիշ ժամանակների գիտնականները: Թերևս նրանք իրավացի՞ են:

Եվ իմ վկայությունը շատ աննշան կլինի, եթե ակնածանքով հայտարարեմ նրանց, թե ես շատ լավ եմ և շնորհակալ:

### 34.

Աննա մորաքույրս ձեռքը ճակատիս դնելով, սովորականի նման կանխեց ջերմաչափը, որ հաստատեց նրա ասածը՝ 39°: Բարձր ջերմությանս ուղեկցում էին դողը, առատ քրտինքը, կոշերի ցավը: Այս հանգամանքը խորհրդակցության հրավիրից երկու քույրերին, որոնք որոշեցին, ձմեռային սաստիկ ցրտերը հավանաբար թուլացրել են մարմնի դիմադրողականությունը և նպաստել որոշ մանրէների զարգացմանը: Ես սպառնալիքներով էի մանր միջատների մի խումբ, որ հավաքվել էին կրծքիս մեջ, մի կետում, և հենց այդ կետն էլ ամեն շնչելիս ցավ էր պատճառում:

Այդ երեկոյան ես ենթարկվեցի դոկտոր Աննայի բուժական բոլոր միջոցներին. սննդակարգ, բանկաներ, հաբեր, ողողումներ, եռացրած բուսաջուր՝ մեղրով, բրդյա վզնոց, կրկնակի բրդեղեն մարմնի վրա, երկու հաստ վերմակ՝ քրտնեցնելու համար: Գիշերվա ընթացքում իմ հիվանդապահները բազմաթիվ անգամ փոխեցին քրտնաթաթախ սպիտակեղենս, ինձ հավաստիացնելով, թե այդպիսով կուրծքս ցավեցնող բոլոր թուլյները դուրս են գալիս:

Հաջորդ առավոտյան ջերմաչափը համառորեն պահպանում էր  $39^{\circ}$ -ը, սպառնալով մինչև երեկո հասնել  $40^{\circ}$ -ի:

Հայրս, որ նոր էր վերադարձել գիշերային հերթափոխից, անմիջապես գնաց բժիշկ բերելու: Վերադարձավ ճերմակ մազերով, տարեց մի մարդու հետ, որ խոսում էր աշխարհի ամենատրամաբանական հայերենով, որովհետև հայ էր: Արժանապատվությամբ կրում էր բժշկի կոչումը... բժշկական ինստիտուտից, առանց ճշտելու, թե ո՞ր ֆակուլտետից և ավարտել է արդյոք, թե ոչ Նրա քաղցր-մեղցր, հոետորական նախազգուշությունները, վախը, թե արդյո՞ք ուրիշ բժիշկ չի եկել, մատնում էին, թե իր արհեստը օգտագործում է կիսագաղտնի: Երկար լսեց թոքերս: Երբ վերջացրեց քննությունը, իմ շափ քրտնել էր: Նա ասաց, որ տատանվում է ուժեղ գրիպի և թոքաբորբի միջև: Աննա մորաքույրս, որ բռնել էր այրվող ձեռքս, ասաց, միթե  $42^{\circ}$ -ի դեպքում անգամ շենք կարող հուսալ ավելի ճշգրիտ ախտորոշում: Ապա մյուս ձեռքով ջերմաչափը թափ տալով՝ ավելացրեց.

— Որովհետև, ինչպես տեսնում եք, բժիշկ, ջերմաստիճանը  $42^{\circ}$ -ն է ցույց տալիս, և ամեն բանից առաջ... լավ կլինեք հասկանալիք ինչ է կատարվում:

Մայրս վճարեց բժշկին: Փողը գրպանը դնելուց առաջ մարդը կարեկցանքով զեղչ առաջարկեց:

— Եթե կարծում եք, որ սա շատ է, տվեք որքան կարող եք...

Հայրս կտրուկ շարժումով մերժեց: Դուան շեմին հետ շրջվեց, խորհուրդ տվեց կանչել ֆրանսիացի բժշկի, առանց իր այցի մասին նրան տեղյակ պահելու: Եվ կասկածելի ու մոտավոր ախտորոշումով բժիշկը անհետացավ:

Այդ շրջանում, ընդհանրապես, արևելքցիները, հատկա-

պես հայերը հիացած էին վերամբարձ տիտղոսներով և մեծահոգաբար շոալում էին դրանք: Օրինակ, բժշկական առաջին կուրսում սովորող տղային արդեն տրվում էր «բժշկի» կոչում: Իսկ եթե ավարտում էր ուսումը, նրան շնորհում էին «պրոֆեսորի» տիտղոս, ապա, շատ արագ, նա դառնում էր «քաղաքի լավագույն պրոֆեսորը»:

Մեծարանքի որակումների այս փոքրիկ, ապօրինի վերադրումները աղաջանում էին հասարակական դիրքի բարձրացման արդար հպարտութունից, որն անհրաժեշտության դեպքում մի քիչ չափազանցում էին:

35.

Մնդիկի բարակ սյունը բարձրացել էր մինչև 40° և նույնիսկ մեկ-երկու գիծ վեր: Այդ պահից առարկաները կորցրել էին իրենց ուրվագծերը: Թանձր մշուշի պղտորության միջև գուշակում ևս դեմքերը, ձեռքի ամենաքնքուշ հպումն անգամ ճակատիդ՝ դառնում է անտանելի, թրջված սրբիչը տոչորված շրթունքների վրա թողնում է թթու համ, մոթմոթում ես անիմաստ կիսատ խոսքեր, շնչառությանդ արագացումը բնդհատումներ է առաջացնում սուր ցավերի միջև, որոնք կուրծք են ծակում և սրտի ու մարմնի այս պայքարում կորցնում ես կշիռդ, լողում, այլևս ուրիշ տեղ ես, ուրիշ մոլորակի վրա:

Ահա այդ թմբիրի վիճակում, ծանրացած կոպերիս արանքից նշմարեցի ինձ վրա կուսած մեկի մշուշված պատկերը: Միտաղահնչուն մի ձայն, որն ասես աղավաղ՝ ւմ էր բարձրախոսը, բզզալով զնգում էր ականջներիս մեջ.

— Խորը շնչեք... մի շնչեք... հագացեք... ասեք 33... ասեք 33... ասեք 33...

Թեև չգիտեմ, կատարո՞ւմ էի արդյոք նրա կարգադրությունները:

Երբ վերադարձա մեր երկիր մոլորակը, ցերեկ էր, բայց ի՞նչ օր էր, չգիտեի:

Մերոնք խմբվել էին անկողնուս շուրջը, հայրս կուշ էր եկել աթոռին, Գայանեն այրող ինչ-որ թրջոց էր կպցնում կրծքիս, Աննա մորաքույրս ժպտում էր ինձ, մայրս ջերմա-

չափի վրա կուսցած ջերմությունս էր ստուգում: ՅՑ աստի-  
ճան էր: Ի՞նչ էր անցել-դարձել:

— Ի՞նչ է եղել, Մայրիկ:

Ձայնս լսելով, հայրս վեր թռավ տեղից, եկավ նստեց  
անկողնուս հզրին:

— Ոչինչ, մանչս, ամեն ինչ լավ կլինի:

Հիշողությանս պահպանած վերջին պատկերը «համարյա  
բժշկի» հեռանալն էր, մնացյալը սուզվում էր անորոշու-  
թյան մեջ:

Մնացյալը եղել է երեկ: Մայրս վազել էր վերնաշապիկ-  
ների գործատիրոջ մոտ, որի կինը հրավիրել էր Մարսելի  
ամենանշանավոր մանկաբույժին: Սա համաձայնել էր աշխա-  
տանքից հետո գալ քննել ինձ:

Նրա անունը դոկտոր Ֆիլիպ էր, և նրա մեծ հոշակը տա-  
րածված էր ոչ միայն մեր հայրենակիցների մեջ: Ես հիշում  
էի միայն նրա սովերը, որ ինձ կարգադրում էր սուել 33:

Այնպես լավ գիտեի մերոնց պայծառացող դեմքերը, երբ  
մեզնից որևէ մեկը հիվանդությունից հետո ոտքի էր կանգ-  
նում: Թվում էր, բոլորը ապաքինվում էին միանգամից: Առա-  
վոտյան, երբ դեռ չէին նկատում, որ լրտեսում եմ իրենց, բո-  
լորի դեմքը խոժոռ էր լինում, բայց հենց աչքերս բռնում էին  
նրանց մտահոգ հայացքը, անմիջապես շուրթերի վրա վա-  
ռում էին փութկոտ, վստահ ժպիտ, հետո տեսնում էի, որ  
գլուխները շուռ են տալիս, որ շմատնեն հոգու տազնապր: Իմ  
երեք մայրերը, բառիս բուն իմաստով, պաշարել էին անկո-  
ղինս: Ավելի ճշգրիտ, պաշարել էին այն հսկայական զարթու-  
ցիչը, որը ուժգին թկթկում էր գլխիս մեջ, և որը կանոնավոր  
ընդհատումներով զողանջում էր: Գիշեր ու զօր, ժամը մեկ,  
հարկավոր էր հնարավորին շափ այրող թրջոց դնել կրծքա-  
վանդակիս ձախ կողմում: Մինչև հիմա աչքիս առաջ է Աննա  
մորաբույրս իր կաթսաների դիմաց, ամեն բոպե հուման ջուր  
հայթայթելիս: Մայրիկը մանանեխի փոշին այնքան էր խառ-  
նում, մինչև ստացվում էր էռացող խյուս: Աննա մորաբույրը  
վերցնում էր այդ խառնուրդը, տարածում մի մեծ, քառակու-  
սի մաուլյայի վրա, ծալում էր, հզրերը ներս տալիս:

Կրակե այդ խյուսը կրծքիս դնելու պարտականությունը դրված էր Գայանեի վրա: Նա էլ, որպեսզի ինձ համոզեր, թե այդ տաքությունը տանելի է, այրող թրջոցը նախ դնում էր իր այտին: Առաջին ուժեղ այրուցքը նրա աչքերից քամում էր արցունքի խոշոր կաթիլներ, որոնք սրբում էր ձեռքի հակառակ երեսով, իբր քրտինք է:

— Տեսնո՞ւմ ես, դժվար չի: Ուղղակի մի քիչ քրտնեցնում է: Հերթը քոնն է:

Ես ստիպված սեղմում էի ատամներս, փակում աչքերս: Եթե Գայանեի այտը դիմանում էր, ինձ համար ամոթ կլիներ հրաժարվել մաշկի ոչ այնքան զգայուն մասի վրա կրել թրջոցը:

Մնարիս փոքրիկ սեղանին սպասում էր մի ուրիշ շարշարանք, դեղորայքի մի ամբողջ զինանոց՝ յուզոտ ու թանձր հեղուկներով լի սրվակներ:

Այսօրվա մանր դեղահաբերը, որոնց հիմնական նյութը քողարկում են և վերացնում տհաճ հոտն ու համը, գոյություն չունեին: Այն ժամանակներն էին, երբ հիվանդը ուղղակի բախվում էր դեղի հոտ ու համին, երբ քիչ ջրի մեջ կաթեցնում էին դեղը, թեյի կամ ճաշի գդալով խմեցնում և վերջում միշտ տալիս էին մի կտոր շաքար կամ շոկոլադ՝ որելու սրտխառնուք պատճառող համը:

Գոկտոր Ֆիլիպը պիտի երեկոյան նորից գար: Հայրս մինչև գործարան գնալու վերջին րոպեն սպասեց նրան: Բժիշկը եկավ ու իր երեկոյան: Նրան տեսա առաջին անգամ. բարձրահասակ էր, կապույտ աչքերով, մորուքի բարակ օղակով: Զերմ, ինքնավստահ մարդ էր, այն բժիշկներից, որոնց ներկայությունից արդեն լավ ես զգում:

— Հապա, երիտասարդ, որքա՞ն է մեր տաքությունը այս երեկո:

Վոկալ տրիոն պատասխանեց.

— 39, դոկտոր:

Աննա մորաքույրս սկուտեղով նրան պարզեց մի նուրբ, ձլունասպիտակ անձեռոցիկ: Այն ժամանակներում քննությունը կատարվում էր առանց լսափողակի: Անձեռոցիկը փռում

էին հիվանդի կրծքին կամ մեջքին, բժիշկը ականջը հպում էր դրան և լսում քննութեան ենթակա օրգանիզմի աղմուկները:

Աննա մորաքույրն ու Գայանեն, բժշկի ախտորոշմամբ տարված, մոռացել էին, որ քննվողը իրենք չէին, և դոկտոր Ֆիլիպի հրահանգներով ինձ հետ հազում էին, խոր շնչում կամ շունչը պահում: Երբ «ասեք ՅՅ»-ի պատասխանը միանգամից պոռթկաց մեր երեքի կրծքից, մանկաբույժը ականջը հեռացրեց իմ կրծքավանդակից, որպեսզի հասկացնի, թե իմ սուր պատասխանները ավելի կօգնեին իր քննութեանը: Աննան ու Գայանեն ամոթահար, հանցանքի մեջ բռնված փոքրիկ աղջիկներէ նման, արդեն ձեռքով փակել էին բերանները:

Կրծքի ու մեջքի մանրակրկիտ հետազոտութեանից հետո դոկտոր Ֆիլիպը արտաքուստ հանգստութեան ներշնչող շարժումով թփթփացրեց այտս, ապա մորս տարավ միջանցք: Երկար խորհրդակցեցին, բայց ես ցանկութեան անգամ չունեի ինձ հասնող խառնաշփոթ ըզըցի մեջ ջոկել որևէ բան: Զարթուցիչը ղողանջեց. թրջոցի ժամանակն էր:

— Ասա, Գայանե, ի՞նչ հիվանդութեան ունեմ:

— Ուժեղ ցրտառութեան... սարուփելի մրսել ես:

Բայց Գայանեն ստել չգիտեր:

Եթե իսկապես ամեն ինչ սկսվել էր ցրտառութեանից, ապա ձախ թոքաթաղանթը, այն շապիկը, որի մեջ զետեղված է թոքը, սուր բորբոքվել է:

Ձեռք էի բերել ամենավատ տեսակի պլերիտ: Այդ բորբոքման հետեանքով արտադրվում էր մի հեղուկ, որը շատանալով ճնշում էր ձախ թոքս: Բուժումս կախված էր արտադրվող հեղուկի, որը կարող էր հասնել մինչև շորս լիտրի և բորբոքումը ցրող այրող խյուսի կենսամրցումի արագութեանից:

Այս ամենը, անշուշտ, ես իմացա հետագայում:

Այդ նույն տարին հակաբիոտիկների հայրերը, մանրադիտակների վրա խոնարհված, քիմիական միջոցով համարյա արդեն անշատում էին պենիցիլինը, մինչդեռ իմ Գայանեն ինձ հետ բաժանում էր մեր տատիկների մանանեխի փոշու այրող խյուսերը:

Տասը օրից ավելի էր Մայրիկը, Աննան և Գայանեն անկողին չէին մտել: Հիվանդապահ քույրերը քայլելիս գայթում էին, ննջում աթոռներին, մինչև իրենց կարգի հրավիրող զարթուցիչի հաջորդ ղողանջը: Խյուսի դժոխային ընթացքը՝ քսանչորս անքուն ժամերի ընթացքում յասն անգամ, միանգամից ծերացրել էր նրանց: Գայանեի դեմքի վրա թրջոցի փորձերը ոչ մի տեղ չէին թողել և կրակից կարմրած մաշկի վրա երևում էին առաջին բշտիկները: Գիշերային իմ երեք ստվերները առավոտ վաղ վերգտած էին լինում իրենց խրախուսական ժպիտները, մանավանդ երբ նրանց էի նայում դիմացից:

Ամեն բացվող առավոտ սկսվում էր սովորական բուժական առօրյայով. սպասում էի իմ ցավի երեք կարևոր պահերին. առավոտյան ջերմությունս իր համառող 38°-ով, կեսօրից հետո, որ ութ օր շարունակ անփոփոխ կերպով մնում էր 39°, և վերջապես երեկոյան դոկտոր Ֆիլիպի ամենօրյա այցելությունը:

Իր բուժքննության ընթացքում, ականջը հպած կրծքիս կամ մեջքիս փոված անձեռոցիկին, նա միակ մարդն էր, որ լսում էր հիվանդ թոքերիս ընդհատ խզզոցները: Անհամբեր սպասում էի մատնահարվածներով քննությանը: Ձախ ձեռքի ափը պնում էր հետազոտվող մասի վրա, ապա աջ ձեռքի միջնամատով թխկթխկացնում էր թմբուկի վերածված ձախ ձեռքի հակառակ երեսին: Այդ մատնահարվածները իմ կրծքավանդակում առաջացնում էր հնչողություն. հստակ, խզվող, խուլ կամ խոռոչային, նայած որ մասն էր քննում. առողջ թե վնասված:

Հնչյունների այս աններդաշնակությունը այնքան սովորական էր լսելիքիս համար, որ հիվանդ թոքիս խուլ թրթռումներից կանխատեսում էի տխուր ախտորոշում, և իսկապես րիչ անց դոկտոր Ֆիլիպը դուրս էր գալիս միջանցք:

Ջարգացող հիվանդությանս տասնյոթերորդ օրը մեր մանկարույժը ինձ նախապատրաստեց հաջորդ օրվա միջամտություն համար:

— Լսիր, սիրելի երիտասարդ, վաղը ինձ հետ գալու է մի

ուրիշ բժիշկի: Նա պիտի մի փոքրիկ սրսկում անի քո թիկունքից: Շատ բարի մարդ է: Դու ոչինչ չես զգա:

Անշուշտ, ինձ ավելորդ շահաբեկելու համար, նա մեղմացնում էր սպասելիքը: Իրականում դա «պունկցիա» էր: Ասեղը պիտի խրվեր թոքի թաղանթի մեջ և դուրս քաշեր հետըզհետև ավելացող հեղուկը:



Երբ երկրորդ բժիշկը բացեց մետաղյա խոշոր քրոմապատ տոսիր, ինձ քիչ էր հետաքրքրում նրա «բարի» լինելը: Ես քարացել էի ներարկիչի շափից, որ բժիշկը մաս առ մաս հավաքում էր. փողը, մխոցը, ծայրապանակը, ասեղը: Այս ամենի ամբողջությունը տասն անգամ ավելի մեծ էր, քան սովորական ներարկիչը: Չպահված խոստումների համար հանդիմանությամբ լի աչքերս ապարդյուն որոնում էին դոկտոր Ֆիլիպի խուսափող հայացքը: Նա սկսեց իր սովորական քննությունը: Բայց այդ օրը նա ականջը չհեռացրեց իմ կրծքից ու թիկունքից: Աներնդհատ շուռումուռ էր տալիս ինձ: Աներնդհատ հրահանգներ էր տալիս՝ խոր շնչիր, ավելի խոր, ավելի երկար: Թվում էր՝ վերջ չկար այդ շնչառական քննությունը:

Երբ վերջապես գլուխը բարձրացրեց, հանկարծ նկատեցի, որ դոկտոր Ֆիլիպը ժպտալ գիտի: Դեմքի մկանները ուղղվել էին, ճակատի և հոնքամիջի խոր ծալքերը չբացել էին, երկու մանկական փոսիկ ակոսում էին հասուն մարդու այտերը, և առաջին անգամ նրա կապույտ աչքերի շարաճճի փայլը ասես սևեռվել էր հեռվից եկող ճամփորդի վրա: Երկար ասեղը, որ պիտի ծակեր ինձ, նորից մտավ պատյանի մեջ: Ապշեցուցիչ անբարեխղճությամբ, որին սիրով համաձայն էի, հիշեցրեց իր խոստումը՝ «կտեսնես, ոչինչ չես զգա»:

Անկողնուս մոտ կանգնած Մայրիկի, Աննայի և Գայանեի հոգնաբեկ, անքնությունից թմրած կերպարանքները կարծես իրականությունից կտրված լինեին: Նրանք բոլոր հայացքով ինձ էին նայում իրենց հատնումի մշուշի միջից, առանց ըմբռնելու, որ հիվանդագին խզզոցներս վերացել էին, որ



սլունկցիան շեղյալ էր համարվում, և որ վերջապես սկսվում էր ապաքինումս:

Գոկտոր Ֆիլիպը այլևս չէր փսփսում, խյուսի թրջոցների շարշարանքս սահմանափակեց օրեկան երեք անգամով, կըրճատեց որոշ դեղեր: Իր գորովթյունը գտած ձայնը սկսեց ցրել երեք մայրերիս թմբիրը, նրանք դանդաղորեն դուրս էին գալիս իրենց համր անձկությունից:

Այդքան սպասված պահը նրանք ապրում էին դանդաղորեն, շփոթված: Ժամանակ էր պետք, որպեսզի վախենալի ախտորոշումներից ահարեկված նրանց նայվածքը դառնար սովորական, ժամանակ, որպեսզի հանդարտվեր նրանց ձեռքերի դուղսղոցը, ժամանակ, որպեսզի նորից շողային նրանց մարած բիրերը:

Գայանեն այրված, վառված, մոխրացած դեմքով, վերքերի հետքերով, բշտիկներով ու ծվատված մաշկով, թեքվեց քրոջ կողմը և հայերեն հարցրեց.

— Ի՞նչ ասաց:

Աննա մորաքույրս մոտեցրեց գլուխը, որ տասնյոթ օր սանր չէր տեսել:

Մայրիկի ցամաքած շրթունքները շարժվեցին:

Այդ ժամանակ միայն նրանց կարմրած աչքերից վերվերին առաջին արցունքները, շնայած փորձում էին իրենց խըղճալի դիմակների վրա ժպիտներ տեղադրել, որոնք, ավաղ, նրանց ջղաձիգ հեծկտոցների պատճառով, փոխվում էին կրնճիոնների:

Հիշողությանս մեջ դրոշմված տառապանքի այդ պատկերը բավական ժամանակ անց նորից հառնում է աչքերիս առջև: Արվեստագետի հանճարը բացարձակի և գեղեցիկի իր որոնումներում մի կտոր մարմարի մեջ քանդակել էր մոր վիշտը:

Դա Հոոմի սուրբ Պետրոսի տաճարում էր:

Իմ մանկության անկողինը շրջապատող հուզիչ դեմքերին այդ Պիետայից ինչ-որ բան կար:

37.

Զկան յուրը դարձավ վերջին դեղատոմսը, որ նշանավորեց իմ հիվանդության վերջը, բայց առողջության վերջնա-

կան հաստատումը պահանջում էր երկար ժամանակ: Թողք ծանր հիվանդության հետևանքներից պաշտպանելու համար անհրաժեշտ էր արև և մաքուր օդ՝ հեռու քաղաքի ապակա- նությունից: Այդ մաքուր, թարմ, կազդուրիչ օդը, որի քառա- կուսի մետրը այնքան թանկ էր վաճառվում, գտնվում էր որոշակի նախընտրելի վայրերում, որոնք կոչվում էին Ալ- վար, Լա Բուրբուլ, Լը Մոն-Դոր կամ Կոթերի: Այս շորաստ- ղանի առողջարանները մեր օրեօր բյուջեից լույսի արագու- թյամբ հազարավոր տարիներով հեռու էին: Իմ հիվանդու- թյան պատճառով մեր փոքրիկ արհեստանոցի դադարը ըն- տանեկան եկամուտի սյունակը հասցրել էր զրոյի, մինչդեռ ծախսերի սյունակը ուռճանում էր դեղորայքի և առաջնա- կարգ մանկաբույժի այցելության վճարներով, առանց սոցիա- լական ապահովագրության հատուցման:

Ի վերջո ընտրեցինք Գրենոբլը, իհարկե, նախընտրությունը տալով մերձակայքին: Այդ միտքը տվել էր Աննա մորա- քույրս. այնտեղ ունեի մի հեռավոր ազգական, որը կարող էր մեզ համար վարձու սենյակ ճարել մասնավոր տան մեջ:

Դոկտոր Ֆիլիպը գերագույն նրբությամբ, մեր արժանա- պատվությունը չվիրավորելու համար, հրքեմն գաղտնի մաս- նակցում էր մեր նյութական խնդիրներին:

Մայրս ամեն օր ծրարով նրան էր հանձնում իր այցեգրի- նը: Դա համեստ եկամուտով ապրող մարդկանց վաղեմի սո- վորությունն է, վճարել օրը օրին և ժամը ժամին, որպեսզի փարատեն պարտատիրոջ վախը և ապահովեն իրենց բարի համբավը: Հարուստը ազատ է նման մտահոգությունից, հա- ճախ կարող է վճարել ուշացումով, և պարտքը ժամանակին շտալը կդիտվի իբրև մոռացկոտություն կամ պարզապես ան- փութություն:

Շատ անգամ դոկտոր Ֆիլիպը հետ էր մղել իրեն երկար- ված ծրարը, պատճառաբանելով, թե շտապում է:

— Վաղը, վաղը կվճարեք, տիկին:

Հաջորդ օրը, երբ ստանում էր երկու օրվա այցեգրինը, զար- մանքի տեսարան էր խաղում, վերադարձնում էր գումարի կեսը, չնայած Մայրիկիս առարկությանը, թե նախորդ օրը չի վճարել: Բայց նա արդեն աստիճանների վրա էր լինում:

Ապաքինումիս հաջորդող շաբաթվա ընթացքում մայրս

գնեց շատ գեղեցիկ, զուտ մետաքսյա կտոր, որից ձեռքով կարվեցին վեց հրաշալի վերնաշապիկներ, որոնք ավելին էին արտահայտում, քան ձեռքի ճարտարութունը: Հայրս վերնաշապիկները տարավ իմ բժշկի տուն՝ մի փոքրիկ բացիկով, որը լցրել էի մի քանի պարզունակ խոսքերով. «Սիրելի դուկտոր Ֆիլիպ, ուրախությամբ հագեք այս շապիկները, քանի որ դուք մեզ եք վերադարձրել մեր ուրախությունը»:

Գրենոբլցի ազգականից ստացվել էր պատասխան:

Քաղաքի մերձակայքում, Սասենաժի ջրվեժի ստորոտին գտնվող մի ագարակում նա գտել էր համեստ վարձով մի սենյակ: Որոշեցինք մեկնել ամսվա վերջին: Աննա մորաքույրը սկսեց հավաքել իր կաթսաներն ու նավթավառը մեր «Ձմեռային Մոնթոլիվեի» համար:

38.

Հիվանդության պատճառով Գայանեի «ապագա ամուսին» թեկնածուի այց-հանդիպումը հետաձգվել էր:

Տիկին Թագուհին իմ առողջության մասին տեղեկություն ստանալու պատրվակով այցելեց մեզ: Երբ իմացավ, որ լավացել եմ, ուրախության ճիչեր արձակեց, թևերը երկինք պարզեց, երկու հնչուն համբույր դրոշմեց այտերիս, ձեռքերս առավ իր ձեռքերի մեջ, հետո մոտեցրեց կրծքին, որ ես զգամ սրտի արագ տրոփյունը: Սակայն նրա փարթամ կրծքի վիթխարի, փափուկ զանգվածը պատվարի պես արգելում էր սրտի զարկերի ճանապարհը: Հույզերի այս ցուցադրումից հետո, որի պատճառը իմ ասլափինումն էր, նա ձայնն իջեցրեց, հիշեցնելով Վալանսի իր հովանավորյալի գոյությունը, որ պատասխանի է սպասում: Սենյակի խորքում Գայանեն, կարի մեքենայի առջև երկտակված, թաքցնում էր դեմքը, որի այրվածքները նույնպես լավանալու վրա էին: Մաշկի այրված մասերը դուրս էին գալիս, պլոկվում: Մաշկի լրիվ փոխվելուն դեռ խանգարում էին որոշ վերքեր: Սպիտակած վերքերը տեղափոխվեցին հետքեր էին թողել, կարծես բծավոր տիֆից նոր էր վերկացել: Դոկտոր Ֆիլիպը ինչ-որ քսուք էր գրել, բայց դեռևս մի ամիս կտևեր, մինչև որ անհետանային դեմքի արտաքին փնտրվածքները, և վերականգնվեր մաքուր, սաղափե մաշկը:

Այս պահին նա կարծես քող, էկզեմա կամ մի այլ վարակիչ հիվանդութիւն ունենար:

Մայրիկը մոտեցավ քրոջը, նստեց կողքին և ականջին բան միս իսաց: Հանկարծ Գայանեն, խոսքն ուղղելով տիկին Թագուհուն, բարձրաձայն ասաց.

— Որքան շուտ, այնքան լավ... կիրակի, եթե հարմար է: Կիրակիին մնում էր երկու օր:

\* \* \*

Մեր Գայանեն շատ գեղեցիկ էր:

Բայց ինքը չէր գիտակցում:

Միշտ սովորում մնալու, իր անձը մոռանալու սովորութիւնը, շահազանց ամաշկոտութիւնը, բնական համեստութիւնը նրան զրկել էին սեփական արժանիքները գնահատելու կարողութիւնից: Նա կանգ էր առել գեղեցկության շեմին:

Ինքն իրեն արժեքավորելու սեթեթեմանքի կատարյալ բացակայութիւնը նրան հեռու էր պահել տղամարդկանց սիրահետումներից:

Ինչ-որ մեկն ասել է. «Որոշ կանայք հագնւելու արվեստն օգտագործում են իրենց թերութիւնները կոծկելու համար: Ոմանք էլ այդ արվեստն օգտագործում են այնպես, որ հնարավոր լինի գուշակել իրենց բարեմասնութիւնները»:

Գայանեն հագնւում էր առանց հաշվենկատության:

Ոչ ոքի համար:

Որքան է Մայրիկը շաբաթական գնումներից հետո տուն վերադարձել Գայանեի համար բերելով վառվռուն գուլներով, փոքր-ինչ տարբեր ձևերով զգեստ, քան սովորաբար հագնում էր:

Նրան չըմբոստացնելու համար Մայրիկը հորինում էր, իբր պատահաբար ցուցափեղկի մոտով անցնելիս հանկարծ աչքովն է ընկել զգեստը և հիացրել է իրեն: Նույնքան պատահաբար նկատել է, որ զգեստը ճիշտ քրոջ վրայով է... Մտածել է... Մա պիտի որ վայելի Գայանեին...

Երեսայի նման, որին երես են տալիս, գեղեցիկ մի ժպիտ լուսավորում էր նրա դեմքը: Աննա մորաքույրը ստիպում էր, որ ոտքի կանգնի և զգեստը պահի վրան: Մենք խնդրում էինք,

որ հագնի: Երբ հագնում, գալիս էր, անմիջապես աչքի էր ընկնում նրա համաշափ, բարեձև կազմվածքը, սակայն դեմքին տարածվող ամոթխածության գույնը արդեն ասում էր, թե մեկ-երկու անգամից ավելի չի հագնելու: Այն էլ հաճույք պատճառելու համար: Հետո զգեստը կախված կմնար պահարանի խորքում: Այդպիսին էր մեր Գայանեն, նա պարզապես սխալ դարում էր ծնվել:

Այդպես, նշանավոր ժամադրության օրը Գայանեն մոտեցրեց իր վերքոտ դեմքով և այնպիսի զգեստով, որ թաքցնում էր նրա մարմնի բոլոր շնորհները:

Իրին տեսնելու եկած մարդու միայն ձայնը լսեցի դուան շեմին և մեր ընտանիքի բարիգալուստի խոսքերը: Անկողնում պառկած էի: Կողքի սենյակի խոսակցությունն ինձ չէր հետաքրքրում: Բացարձակ անբարյացակամությամբ մտածում էի, թե համենայն դեպս նա արժանի չի Գայանեին:

Այցելությունը տեղեց մոտավորապես մեկ ժամ, մի բան, որ մեր սովորությամբ նշանակում է, թե հանդիպումը բացասական տպավորություն է թողել արական կողմի վրա:

Երեք անգամ ես միջանցքում լսեցի տղամարդու ձայնը: Իր շտապ մեկնումը արդարացնում էր Վալանս մեկնող գնացքի շվացուցակի ժամով:

Երբ դուռը ծածկվեց, տեսա, որ մորաքույրս բնավ չի ազդվել իրադարձության այդպիսի ընթացքից: Նրա ժպիտի մեջ չարաճճի կայծեր կային:

Միշտ այնպիսի զգացողություն եմ ունեցել, թե նա արագացրել էր այս լուծումը, որպեսզի ամեն ինչ շուտ տար ցանկացած ուղղությամբ: Նա պարզապես ասաց.

— Հույս ունեմ, որ այլևս ինձ չեն անհանգստացնի նման բաներով:— Եվ Գայանեն մնաց օրիորդ:

Տարիների ընթացքում նրա մազերը քիչ-քիչ ճերմակեցին, անցնող ժամանակի գեղեցիկ ճերմակով:

Գայանեն ապրեց իմ տանը մինչև այն օրը, երբ ձեռքերը իմ ձեռքերի մեջ սեղմած, կանգնեցի նրա սնարի մոտ, նրա իվանդության նշանավոր մասնագետների հետ: Նա ինձ էր հառել հավատով լի աչքերը, որովհետև նրան ոչինչ չէր լինի, բանի դեռ ես կողքին էի:

Ճիշտ էր: Նրան ոչինչ չէր լինի... ոչինչ, բացի սոսկալի գունատությունից, որ փոխարինում էր անզգայացած դեմքի գույնին:

Հանգավ մեղմորեն, վսեմաշուք օրիորդս, ինչպես ապրել էր, ամոթխածությամբ, ինձ թողնելով հիշատակներ, որոնք շեն ներում, որ ավելին չեմ արել իր կենդանության օրոք:

39

Մարսելի Սեն-Շառլ կայարանի կառամատույցի ապակեպատ մեծ դռան տակ խոստացա ամեն օր նամակ գրել: Գրենորբի կառամատույցում Աննա մորաքույրը գտավ ծեր ազգականին, նա նույնպես փրկվել էր ահեղ կոտորածից: Այնուհետև հասանք ջրվեժի ստորոտին ծվարած մենավոր ագարակին, որ ասես բարձունքի վրա լիներ: Վերջապես այդտեղից սկսվեց իմ բոլոր «սիրելի Մայրիկ և Գայանե, սիրելի հայրիկ: Կավ ենք զգում այստեղ, ուտում եմ մեծ ախորժակով»-ները: Մանավանդ այս վերջինը անհրաժեշտ էր ասել նրանց հանգստացնելու համար: Դոկտոր Ֆիլիպը հանձնարարել էր «սննդարար ուտելիք», իսկ ես զզվում էի ուտելուց: Աննա մորաքույրս ամենօրյա հնարանքներով հաղթահարեց իմ զզվանքը:

Զարմանալի բան է հիշողությունը. տարիներ շարունակ գործում է ուղեղի խորքում և պահպանում է այն, ինչ հաճելի է իրեն, և հանկարծ ահա դուրս է բերում սննդին վերաբերող հասարակ հուշեր:

Խորամանկության այդ տուփից հին մեղեդու նման առանձնանում են պարզունակ հարցեր, որոնք այն ժամանակ շեն ծագել:

Օրինակ, ինչպես էր Իզերի այս մոռացված, աշխարհից կտրված անկյունում Աննա մորաքույրս մի լեզվակով նավթավառի վրա ընդամենը մի կաթսայով և երեք փոքրիկ կերակրամաններով ամեն օր այնքան բարդ ու համեղ ճաշեր պատրաստում ինձ համար, որոնք ի վերջո բացեցին ախորժակս:

Կային հորս ծանրոցները, որ ամեն շաբաթ ստանում էինք:

Կային գրենոբլցի ազգականի կիրականօրյա այցելությունները: Նա բերում էր նախորդ կիրակիի պատվերները:

Եվ հետո, կային մանավանդ ձեռքեր, մատներ, սիրտ, Աննա մորաքույրս ամբողջությամբ՝ իր «մուսակաների», սամիթով կարկանդակների, գառան մսի խորովածի ու անմոռանալի խմորեղենների մեջ:



Երկու ամիս մնացինք այնտեղ:

Ես բավական գիրացել էի:

Աննա մորաքույրս նիհարել էր:

Վերադարձի ճանապարհին մեր գնացքը ամեն կայարանում երկար կանգ էր առնում, և ես մեր երրորդ կարգի վագոնում նստած՝ երկաթուղային քարտեզի վրա խնամքով ընդգծում էի բոլոր կայարանների անունները: Մի տեղ ավելի երկար կանգնեցինք՝ էլեկտրաքարշը փոխելու համար: Տեսադաշտիս մեջ հայտնվեց դասական ցուցանակը, որին լույս էր անում կարապի վզի նման լամպը: Լուռ կարդացի սպիտակ ֆոնի վրա գրված կարմիր տառերը: Մենք գտնվում էինք «OMMES»-ում: Աչքերս ետ ու առաջ տանելով՝ քարտեզիս վրա որոնում էի այդ քաղաքը, բայց ոչ մի «OMMES» չէի գտնում:

Գնացրին կցված նոր մեքենայի ցնցումից մեր վագոնը մի քանի մետր փոխեց տեղը: Մի ուրիշ ցուցանակ, նախորդին նման, հանկարծ փոխեց քաղաքի անունը. «DAMES»: Սակայն այդ երկու ցուցանակների միջև կար երկու տառից կազմաված ինչ-որ անցում, «W.—C.», որը բացահայտեց գաղտնիքը. բացակայում էր H տառը, որ ջնջվել էր ժամանակի լիթացքում:

Երբ գնացքը ճամփա ընկավ, հայտնվեց քաղաքի իսկական անունը: Դա Վալանսն էր:

Մութն ընկել էր, և քաղաքը վերածվել էր միմյանց հաջորդող լուսավոր կետերի: Այդ լույսերից մեկի հետևում անկուսկած ապրում էր այն մարդը, որը եկել էր տեսնելու Գալունին, բայց ընտրել էր ուրիշի:

Մեր վագոնասրահում մի մարդ վեր կացավ, հեղինակավորությամբ, որը ոչ ոք չէր տվել նրան, Ֆրանսիայի քարտեզս ընկղմեց խավարի մեջ: Մնաց միայն կապույտ գիշերալամպի աղոտ լույսը: Ծանր շնչառության, երշիկի, կարմիր գինու, ծխուկի գարշահոտերի մեջ մի քանի ուղևոր, որոնք սպասող շունեին կառամատույցում, խումփալով քուն մտան:

Վերադառնալու ուրախությունից իմ քունը չէր տանում: Կայարաններն իրենց ներկայությունը սահմանափակում էին մեր ժամանում-մեկնումով, որ ամեն անգամ ես հանում էի քարտեզից: Չորս... երեք... երկու... մեկ...

Հանկարծ մի հնչեղ, որոտընդոստ ձայն բարձրախոսի արձագանքից ավելի ուժեղացավ, պատռեց մեր վագոնախցի խավարը:

«Մարսել, կայարան է մտնում Շամբերիից, Գրենոբլից, Վալանսից, Ավինյոնից, Միրամասից ժամանող գնացքը: Խնդրում ենք հետ քաշվել»:

Նորից լսեցի ծանոթ շեշտադրությունը, որ համառորեն երկարաձգում է բառերը, ազատորեն իր վրա է առնում վանկը, ընդգծում այն, ուժեղացնում, հնտակացնում, թույլ շտալով, որ խույս տա իրենից:

Ամբողջ ուժով քաշեցի այն ժամանակվա իջեցնովի լուսամուտի բռնակը: Շրջանակը սահեց գույգ ակոսների միջով, երևան հանելով մարդկանցով լի կառամատույցը: Ուրիշ գծի վրա Փարիզից ժամանող գնացքը դատարկվում էր ուղևորներից:

Մարդկային այդ ծովի մեջ նախ տեսա հորս գլուխը: Հայրս բարձրացել էր սայլակի վրա և հերթով ստուգում էր բոլոր լուսամուտները: Հետո տեսա Գայանեի դեմքը: Այդ պահին նա կարծես իկարոսը լիներ, ոտքերի թաթերին բարձրացել, նետվել էր օդի մեջ, ձգտելով անջատվել ամբոխից, սակայն գետինը անմիջապես հիշեցրել էր նրա ամենօրյա հասակը: Այնուհետև վերջապես, ամենախորքում, կառամատույցի ծայրին, գծագրվում էր մորս կերպարանքը՝ աշալրջության եռյակի վերջապահը:



— Գայանե, շմոռանաս երկու վերնաշապիկները, որ այսօր հանձնելու ենք: Միայն թևերն են մնում:

Այս «հանձնել» բայի մեջ, որ խոնարհվում էր մեկ ներկա, մեկ ապառնի ժամանակով, կար մի տեսակ ազատագրում տրված և օրը օրին կատարված խոսքից:

Այդ օրվա «հանձնումը» պետք է հիմնովին փոխեր Սեն-ժաք փողոցի մեր ապրելակերպն ու առօրյան:

Գայանեն, շրթունքների արանքում թրջելով թելը, որ զարմանալի հմտությամբ անց էր կացնում ասեղի ծակից, անմիջապես շապիկը ձեռքն առավ, որ թևերը կպցնի... սակայն թևերը արդեն կպած էին շապիկին անթերի նրբությամբ: Մնում էր միայն արդուկը: Սակայն ոչ Մայրիկը, ոչ էլ Գայանեն այդ աշխատանքից տեղյակ չէին: Կանչեցին Աննա մորաքրոջը, որ շապիկներին նույնիսկ ձեռք չէր դիպցրել: Երեք քույրերը անընդհատ շուռումուռ էին տալիս շապիկները, որոնց թևերի անտեսանելի կարերը արված էին զարմանալի մաքրությամբ:

Այլևս կասկած չէր մնում, դերձակի աշակերտ հայրս, որ ամիսներ շարունակ համառ համբերությամբ կարում էր, քանդում, նորից ու նորից կարում, ի վերջո հասել էր կատարելության: Եվ այլևս առանց ձայն հանելու, լուսամուտի առջև դրված մենավոր աթոռի վրա, ուր անց էր կացնում իր բոլոր ցերեկային ժամերը, տվել էր շապկագործության դպրոցի ընդունելության գրավոր քննությունը:

Հինգերորդ հարկի մեր լուսամուտներից մեկից Սեն-ժաք փողոցը ուղիղ գծով երևում էր մինչև վերջ: Ամեն առավոտ հայրս հայտնվում էր նույն ժամին, միևնույն կողմից, փոքրիկ շարժուն կետի նման, որ հետզհետե մեծանում էր, վերածվում ծանրաքայլ առաջացող մարդկային կերպարանքի: Նրա ճանապարհն ընդմիջվում էր երկու պարտադիր կանգտանդով. նախ պարոն Պեյրոնի նպարեղենի, ապա «փայտու ածուխի» խանութներում և վերջապես մի ոչ պարտադիր կանգառ էլ ուներ մեր տան մոտ, այն օրերին, երբ ոտքերը նրան զգացնել էին տալիս, թե դեռևս հինգ հարկ կա բարձրու նայու:

Այդ վերջին կանգառի ժամանակ առավոտյան թարուն դուրս սողոսկեցի բնակարանից և սանդուղքից ներքև սահելով հայտնվեցի հորս դիմաց.

— Լսիր, հայրիկ, արդեն իմացել են, որ դու ես կարել... Գիտես ի՞նչ կարելի է անել...

Եվ գիշերային աշխատանքից հոգնաբեկ այս մարդու քնատ աչքերը լուսավորվեցին, որպեսզի մասնակցեն իմ կատակներին: Ինձ մի քիչ ծիծաղեցնելու համար հանկարծ հոգնությունից փոս ընկած դեմքը փոխվում էր աուելկինի դիմակի՝ մուտք գործելու համար իմ մանկական դավերի աշխարհը: Իմ փոքրիկ, շարաճճի դավերի շարժիչ ուժը միշտ հայրս էր, և այս դեպքում նույնպես ընտրել էի նրան:

Աստիճաններով բարձրանալիս, ես հանպատրաստից ստեղծում էի այն պիեսի հենքը, որ նա պիտի պատիվ ունենար առաջին անգամ այդ առավոտ խաղալու մեզ համար, իբրև «պրեմիերա»:

— Նախ ներս կմտնես այսպիսի տեսքով... ոչ, ոչ մի տեսք էլ պետք չի... կմտնես քո սովորական տեսքով... Հետո առաջ կքայլես, կսուլես... հենց որ խոսք գցեն քո կարի մասին, զարմանքից կշվարես... ի՞նչ կար... ի՞նչ եք խոսում... երբ դեմդ փռեն շապիկները՝ անժխտելի ապացույցները, դու կկռանաս, կնայես, կճանաչես կարդ՝ առանց որևէ նշանակութուն տալու, հետո գլուխդ կբարձրացնես, կնայես Աննա մորաքրոջը և կասես. «Ահ, խոսքն այս շուլալի մասին է»:

Անհրաժեշտ էր ընտրել այս շուլալ բառը, որ Աննա մորաքույրը քամահրանքով օգտագործել էր նրա առաջին փորձերի ժամանակ: Ես անընդհատ թմբկահարում էի նրա տանելիք հաղթանակը, բայց արդեն հասել էինք շեմին: Հայրս սովորականի նման երեք անգամ խփեց դռանը, որ իմաց անի իր գալը, և բացվեց իմ կոմեդիա Դելլարտեի վարագույրը...

...Որր երբեք չխաղարկվեց, որովհետև ոչ մի բան իմ նախատեսածի նման չեղավ:

Նախ Մայրիկի, Աննայի և Գայանեի դեմքերը շատ խոժրո էին, անթափանց և կատակի տրամադրություն չէին ներշնչում:

Հայրս աչքի սյուշով նայեց ինձ և սկսեց փոքր ումպերով խմել սուրճը, շափազանցված ֆոռոց հանելով, մի կողմից էլ փչելով, իբր ուզում է սուրճը հովացնել: Մայրիկիս կողմից սյու անգամ ոչ մի հանդիմանական հայացք չեղավ:

Հայրս բնական զարմանքը թաքցնելով էլի սուլեց, անցավ սենյակից սենյակ և ի վերջո, վերին աստիճանի անմեղ տեսքով հարցրեց.

— Նորություն չկա՞:

Իրենց աշխատանքի վրա կուսցած երեք աղավնյակները կարծես պասյանձվել էին: Չորս գործող անձից կաղմված այս լուռ մնջախաղի մեջ, որտեղ պարում էր միայն մեկը, իսկ մյուսները մեղրամոմի նման արձանացել էին, հայրս մի անգամ ևս հայացքը գցեց իմ կողմը, իբր՝ «ինչ կարող էի, արեցի», ապա դանդաղ գնաց, հոգնած-ջարդված ընկավ մահճակալին: Մարմնի ծանրությունից մահճակալի մետաղյա զսպանակները ճոնչացին: Այդ ծանոթ ձայնից և այդ պահից երեք քույրերը կարծես նոր հասկացան, որ հայրիկը վերադարձել է: Եվ ահա մայրս, իբրև մեր ընտանեկան կապալ: պատգամավոր, խզեց լուրթյունը և ներկայացրեց մի խենթ միտք, որ մինչ այդ առավոտ կարող էր թվալ աներևակայելի, անհավատալի:

— Սպասիր, Հակոբ, հետո կքնես: Այսպես... ուրեմն, մենք պատվեր շատ ունենք, բայց կատարել չենք կարողանում: Ամեն օր գործ ենք մերժում, որովհետև աշխատող շունենք: Այ, եթե դուրս գաս գործարանից, մնաս մեզ հետ, ևս կզբաղվեմ միայն ձևելով, դու թևերը կկարես, կարդուկես, Գայանեն թեզանիքները կկարի, Աննան՝ օղակները: Այդպիսով կկրկնապատկենք մեր արտադրանքը...

Նա շավելացրեց. «...և վերջապես կապրենք նույն ժամերին»: Չխոսեց նաև ձմռան ցրտին առավոտ վաղ, շրթունքները ճաքած, ճակատը կնճիռներով ծածկված, ձեռքերը ցրտից բռած տունդարձերի մասին, ոչ էլ ամառվա շոգից աչքերի տակ գոյացող տոպրակների և հյուծված դեմքի մասին: Բուրբ արտաքին հյուծումները, որոնք իսկական վնասվածք են առաջացնում մարմնի ներսում, հայրս անվանում էր «նրվնրվոց»: Արդեն շատ անգամ էր հետ մղել գործարանից դուրս

գալու գաղափարը, որ իր կարծիքով նեղ օրվա պատվար էր, շնորհիվ կայուն աշխատավարձի:

Իմ հիվանդության ծանր օրերից դեռ շատ ժամանակ չէր անցել, և դեռ չէինք մոռացել, թե որքան թույլ էինք շնախատեսված դեպքերի դեմ:

Քայց այդ առավոտվա հորս հաջողության փաստը, որ ես ուզում էի նշել իմ փոքրիկ կատակերգությամբ, մայրս ավելի հմտորեն օգտագործեց, մեկ անգամ ևս փորձելով նրան պոկել գործարանից:

Ընտանեկան միջոցների վրա հիմնված աշխատանքի կազմակերպումը, որ նա ուզում էր անել արտադրանքի արդյունավետությունն ապահովելու համար, ընտանեկան մանրաշղթայի մեջ հայրիկին տալիս էր այնպիսի գլխավոր դեր, առանց որի ամեն ինչ դառնում էր անհնարին:

Քացի այդ, անուղղակի կերպով, ծածուկ, մեծ պատիվ էր ընծայվում նրա փոքրիկ գլուխգործոցին:

Այս անգամ հայրս ընկավ հրաշալի որոգայթի մեջ, որ նրա դեմ լարել էին քնքուշ մտահոգությամբ:

Հաջորդ շաբաթների ընթացքում երկար-բարակ հաշվումներ արեցին: Գումարումներն ու հանումները հաստատում էին, ուղղում, կրճատում, ճշտում նոր բյուջեն, առանց գործարանի աշխատավարձի:

Մի երեկո, այն ժամին, երբ հայրս սովորաբար հին աշխատանքային հազուստով, կորաքամակ դուրս էր գալիս տնից, մի նոր գիշեր ևս ճակատ տալու, անշարժ մնաց աթոռին նստած:

Այդ պահից հասկացա, որ այս բոլոր տարիների ընթացքում ոչ մի օր չի բացակայել, առաջին անգամ դեղին քարտը չի ներկայացնելու գործարանի սրածայր, ժամստուգիչ գործիքին:

Աննա մորաքույրս սեղանին դրեց հինգ սպասք, և խոհանոցից եկող ախորժալի բույրերը ազդարարեցին հատուկ դեպքի առթիվ կազմակերպված ընթրիքի մասին:

Այդ գիշեր, տան բոլոր լույսերը հանգցնելուց հետո, հայրս դեռ երկար թափառեց սենյակից սենյակ, հին օրերի սովորությամբ քունը չէր տանում, մինչև լույսը չբացվեր:

Այն օրից, ինչ հայրս թողել էր գիշերային աշխատանքի աշխարհը, որ նրան սահմանազատում էր արևի հետ արթնացող աշխարհից, մեր տան մթնոլորտը փոխվել էր բառիս բուն իմաստով:

Աշխատանքային քաղցրությանը նա ավելացրել էր մըշտական ուրախություն: Գլուխները խոնարհված էին գործի վրա, բայց ասեղները շարժվում էին քրքիջների միջով: Հիշողության միջից նա դուրս էր քաշում կարոտի երգեր կամ ժողովրդական որոշ երգերի հանգերգեր, ընդմիջելով զվարճալի պատմություններով, որոնք կիսատ էր թողնում՝ «շարունակությունը հաջորդ համարում» պատմելու համար: Դա ավելի էր սրում մեր հետաքրքրությունը:

Երբ սուրճ եփելու համար բացակայում էր սենյակից, մենք սուզվում էինք անբնակ տների լուծյան մեջ, այն ժամանակ նրա ձայնը հնչում էր խոհանոցից, մեզ դուրս բերելով թմբիրից. «Ո՞վ կա այդտեղ»:

Եվ սինին ձեռքին հայտնվում էր մեր ոգևորիչը՝ կասակներ սփռելով շուրջը և վանելով ամեն մոայլություն:

Շատ շուտով, այն օրից, ինչ հայրս սկսել էր ապրել բուլորի նման, մեր աքսորի փոքրիկ հանրապետության ընկերային կյանքը գրավել էր Սեն-Ժաք փողոցով անցնող բոլոր ճամփաները: Մշակութային միություններ, որբախնամ, կարմիր կամ կապույտ խաչի կոմիտեներ, մեր մանրաշխարհի դժբախտությունների բոլոր այս նեցուկները հերթով հայտնվում էին մեր տան մեջ, որն այլևս չէր դատարկվում:

Աննա մորաքույրը անդադար բարի գալուստի սուրճ էր մատուցում, մատնոցները հրում էին ասեղներին, մինչ կկազմըվեին ցածր աշխատավարձ ստացողներին դրամական օգնություն ցույց տալու ծրագրեր:



Մշտապես ամեն ինչ սկսվում էր մի փոքրիկ ազդագրով, մի երեսը ֆրանսերեն, մյուսը՝ հայերեն: Վերևում փոքրատառերով տպագրված էր լինում երեկոն կազմակերպող միու-

թյան անունը՝ էջի կեսը զբաղեցնում էր հսկա «ՏԱՐԵԿԱՆ ՄԵՍ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ»: Մնացյալը վերապահված էր երեկոն որակելու համար՝ «Բացառիկ», գեղարվեստական մասը՝ «Բարձրորակ» և բուֆետը՝ «Ճոխ»:

Այսպես մտածում էին պարով հրապուրելու երիտասարդությանը: Ելույթները, արտասանություններն ու երգերը պետք է նոր կյանք տային նախնիների մշակույթին, իսկ բուֆետը ապահովելու էր հայկական ընթրիքը:

Հաշվեկշռի ժամանակ, երբ դահլիճը դատարկվում էր, կազմակերպիչները խնջույքի մնացորդներից մաքրված սեղանի մի անկյունում կուսցած հաշվում ու վերահաշվում էին եկամուտը: Ինչ-որ թվեր էին շնջում, հանում էին դահլիճի վարձը, նվազախմբի գինը, հարկերը: Եվ դեմքերը գունաւում էին ի տես մնացած ողորմելի օգուտին, մինչդեռ գետնին թափված նոր ազդագրերը ծանուցում էին հաջորդ շաբաթ օրվա մի այլ միություն «ՏԱՐԵԿԱՆ ՄԵՍ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻ» մասին:

Որպես լրացում բոլոր այդ երեկույթների հաշվեկշռի, անհրաժեշտ է նշել, որ ճառերը շատ էին, երկար, կրկնվող և ձանձրալի: Սիրողական մեկնաբանությունները հաճախ աղավաղում էին ժողովրդական հրաշալի մեղեդիները, իսկ ասմունքի ճոռոմ պաթոսը և վերամբարձ ոճը ամենանուրբ բանաստեղծությունները վերափոխում էին շեքսպիրյան ողբերգությունների: Ձայները որոտում էին, խզվում, պատկերելու համար մի հողմածաղիկ կամ կակաչ, որոնք փայլում էին միամիտ գեղեցկությամբ: Ապրիլյան մանուշակի հոգեպարար բույրը, բողբոջներն ու նոնաժաղիկները շունչ էին առնում Ռասինից, Ֆեդրան կոկորդով մեկ բղավում էր. Հոգիիս վրա լուսինը կձյունե, և օթելոյական շեշտերով արտասանվում էր.

Զարբ ցայտֆեն ծաղիկ ծաղիկ կկաթե,  
Վհիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,  
Նվազն անոտ կը հեծեծն հեշտական:

Միայն բանաստեղծներն էին պարտված դուրս գալիս բնագրի և ասմունքողի պաթետիկ պայքարից, որ մղվում էր մոտ երեք հարյուր կտցահարող պատառաբաղների զնգզընգուն ֆոնի վրա:

Այդ բանաստեղծները մահացել էին:

Սպանվել, մնացել էին ճանապարհների վրա:

Այդ ողորմելի պարահանդեսների ֆոնին ակամա այս դերասանների սիրտը փոխարինում էր տաղանդին, որպեսզի՝ օգնեին արմատախիլ եղած մի ժողովրդի՝ վերապրելու և վերհիշելու:

Սև նախագուշակները արդեն հայտարարում էին, թե սփյուռքի երկրորդ սերնդից հետո ամեն ինչ կթաղվի մոռացումից: Այստեղ այդպես էին փսփսում անկյուններում, այնտեղ հրձվում էին դահիճները:

Բայց տեղի ունեցավ հակառակը:

Եվ այս անգամ՝ առանց պարահանդեսի և ճոխ բուֆետի խոստման:



«Տնային աշխատողների» մեր տունը երբեք չիմացավ այն, ինչ այսօր անվանում են 39-ժամյա շաբաթ:

Դժվար էր «փոխօգնություն» կամ «բարեգործություն» արդարացնել օրական աշխատանքի հապաղումները կամ դադարները: Երկոյան մարդիկ անակնկալ ընտանյոք հյուր էին գալիս մեզ:

Զիլ զանգը հնչում էր մեր հինգերորդ հարկում: Սանդղակարթակում ձգում էինք հսկայական բռնակից, որ բաց էր անում մուտքի դուռը: Բազրիքից կախված ուշադիր նայում էի սանդղավանդակին, որ գուշակեմ, թե այցելուներն ովքեր են: Նախ նրանք անցնում էին թույլ լուսավորված մասով, մինչև առաջին հարկը: Այդ պահից կերպարանքները հստակվում էին: Աստիճանների վրա նրանց հաճախակի դադարներից կամ շորս-շորս վեր մագլցելուց, որոշում էի նրանց տարիքը և ընտանիքը: Սովորության ուժով ենթադրություններս նազհետե ավելի և ավելի արագ էին ճշգրտվում: Մինասյուններն էին իրենց երկու երեխաներով, կամ Մելքոնյան քույրերը իրենց մոր հետ, կամ տեր և տիկին Ավագյանները, որովհետև բարձրանում, բարձրանում էին ու տեղ չէին հասնում:

Հենց երևում էին վերջին աստիճանավանդակում, սկսվում էր երկխոսությունը, մեր «բարով եք եկել» մաղթանքով և միմյանց հանդիպելու ուրախությամբ, նրանք բարձրանում էին վերջին աստիճաններով:

Աշխատանքը ընդհատվում էր կամ շարունակվում, նա-  
յած այցելուների հետ ունեցած մեր մտերմությանը: Խոսում էին մի քիչ Ֆրանսիայի, ավելի շատ Հայաստանի մասին: Ծիծաղում էին ապրողների հետ, որպեսզի չողբան մեռյալ-  
ներին:

Նշանավոր քանավիճող և «Հառաջ» օրաթերթի հիմնադրի  
անվան սկզբնատառով Շ. ստորագրված առաջնորդողը եր-  
կար մեկնաբանվում էր ըստ այն կազմակերպության շահե-  
րի, որին պատկանում էին իրենք և դեռ երկար զրուցում էին,  
որ մոռանան, թե վաղը շուկայական վաճառորդների համար  
շուկայի օր է, կամ որ կաշին, կտորը, մետաղը սպասում  
էին այս կոշկակարներին, դերձակներին, տնայնագործներին,  
ոսկերիչներին:

Հանկարծ հյուրերից մեկը նախազգուշական գոչում էր.

— Օհ, երեխեք, գիտե՞ք ժամը քանիսն է:

Այժմ արդեն հերթը մերն էր առաջիկայում այցելելու  
նրանց:

Հյուրերի գնալուց հետո Սեն-ժաք փողոցի մեր 101-ում  
լույսը դեռ երկար վառ էր մնում՝ նայած թե որքան ժամա-  
նակ էր կորել շապիկները ժամանակին ավարտելու և հանձ-  
նելու համար:

Հետագայում հեռախոսը փոխարինեց անակնկալին, որով-  
հետև արդեն ընդհանուր համաձայնությամբ որոշվում էր այ-  
ցելության օրն ու ժամը:

Շատ հետո իմացա նաև այցեքարտերի (կիսատպագիր,  
կիսաձեռագիր) գոյության մասին, որով տեր և տիկին այս-  
ինչները հայտնում էին, թե ուրախ կլինեին այսինչ օրը այս-  
ինչ ժամին ընդունելու ինձ, բայց ես երբեք չմոռացա այն  
երեկոների ջերմությունը, երբ սենյակի անկյունում կծկվում  
էի, որ աննկատ մնամ և խուսափեմ ժամի հիշեցումից, որով  
երեխաներին ստիպում են անկողին մտնել:



Այդ առավոտ, երբ արթնացա, թվաց, թե տան միջով անցել է Նագասակիի միջուկային մրրիկը: Ընտանիքից մնացել էին չորս շնչավոր և դալկահար դեմքեր՝ խմբված մի ծրարի շուրջը, որ չէին համարձակվում բացել: Ծրարի ձախ կողմի վերևում գրված էր առաքողի հասցեն. «Ֆրանսիական կառավարութեան ֆինանսների մինիստրութիւն, հարկերի գլխավոր տնօրինութիւն»: Կլոր կնիքը ցույց էր տալիս, թե նամակը եկել է «Սիլվարել» գեղեցիկ անունով փողոցից:

Հասցեատիրոջ անունը երևում էր ծրարի վրա հատուկ կտրված բացվածքից: Հապճեպ գրված ձեռագրի մանրագնին քննութիւնը շքավարարեց որոշելու տպագիր «M» գլխատառին հաջորդող ձեռագիր մասը: Տատանվում էի վատ գրված «r»-ի և թերի «m»-ի միջև, մի բան, որ բացահայտորեն հայրիկին փոխում էր մայրիկի և ընդհակառակն: Բայց գրված էր ընտանիքի ազգանունը, և ես եզրակացրի. «Հենց մեզ է հասցեագրված նամակը»: Մեկը ուժ ունեցավ թոթովելու «բ'ց», և ես բացեցի ֆրանսիական կառավարութեան պարոն մինիստրի նամակը: Չգիտեի, որ այս առաջին շփումը պետք է ամենից ավելի տևականը լիներ և ինձ հավաստեր մշտական, անխախտ հավատարմութիւն:

Իողողուն ձեռքով բացեցի ծրարը: Նամակը հայտնվեց տարօրինակ ձևով. ամբողջովին տպագիր էր, որոշ մասեր գրիչով ջնջված էին, որոշ տողեր փոքրիկ խաշանիշեր ունեին: Մի ամբողջ պարբերութիւն ջնջված էր, ապա՝ զղջացել էին և վերականգնել՝ շեղ գծի վրա անընդհատ զիգզագներ գծելով: Իմ առաջին վերաբերմունքը զուտ գեղագիտական բնույթի էր: «Սա Ձեզ համար է», և «Սա վերաբերում է ուրիշին» ամբողջութիւնը ինձ թվաց անփույթ կատարված աշխատանք: Ես երբևիցե չէի համարձակվի իմ ուսուցիչներին ներկայացնել այդպիսի գրավոր: Իսկ այժմ ստիպված էի այդ ջնջումների ու վերականգնումների միջից դուրս բերել իմաստը, որին անհամբեր էպասում էին մերոնք:

Երկու լեզվով ապրելու սովորութիւնս թույլ էր տալիս դրևթե միաժամանակ կատարելու թարգմանութիւնը: Այդպես եղավ առաջին երկու տողերի ժամանակ. «X կենտրոնի հաղ-

կերի անմիջական վերահսկիչը խնդրում է պարոն... ամենակարճ ժամկետում ներկայացնելու...»

Այդ պահից սկսած, ես կարծես նետվել էի Չինական մեծ պարիսպի մյուս կողմը. ես գտնվում էի մի նոր լեզվի դիմաց, ուր խոսք էր գնում «նյութական միջոցներն հաստատող... մասնագիտական ծախսերի... զեղչերի... հարկային պահումների... ընդհանուր եկամուտի... ընտանեկան ծախսերի քանորդի (սյունակ 491, ա, բ, գ) մասին:

Հաջորդ էջերում կար հետևյալ բնույթի բացատրություն. «Հարկի ենթակա եկամուտը «ե» բաժանել (սյունակ 36) ըստ մասերի թվի «թ» (սյունակ 35), որպեսզի ստացվի ընտանեկան քանորդը «ը. ք.»:

Ֆրանսիական գործերի գծով մերոնք ինձ համարում էին իրենց «ներկայացուցիչը», և ահա նրանց տագնապած աչքերի առջև ես ուղղակի անվոր էի տալու նույնիսկ ամենաչնչին բացատրություն:

Ինքս ինձ մեղադրում էի դասերիս ընթացքում թույլ տված որոշ անուշադրության կամ անփութության մեջ, հետո անմիջապես արդարանում էի, հիշելով հիվանդության երեսից ունեցած երկար բացակայությունը: Առեղծվածային ռեբուսի նման այս թվանշաններն ու տառերը պիտի որ լուսաբանված լինեին իմ բացակայության ընթացքում:

Դեռ չդիտեի, որ հարկերի այս բարդ լեզվի ընկալման անհնարինությունը տեղում է մի ամբողջ կյանք:

Տպագիր նամակի առաջին երեք էջի ընթերցումից կարակացնում էի, որ ուղարկողը, որի ստորագրությունը կարելի էր որակել «անընթեռնելի», ընդունում էր շաբաթը երկու անգամ՝ երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ժամը 9-ից 12-ը և խնդրում էր ընդունել իր հարգանաց հավաստիքը:

Այս վերջին տողերը ես կարդացի հատուկ նշանակություն տալով, և դա փոքր-ինչ մեղմացրեց ընդհանուր անհանգստությունը: Մենք ընտրեցինք հինգշաբթին, որովհետև այդ օրը ես կարող էի ուղեկցել Մայրիկին:

Մինչ բոլորը կգրավեին աշխատանքային տեղերը, ես շարունակեցի կարդալ. վերջին էջի տառերն այնքան մանր էին, որ ստիպված քիթս կպցրել էի նամակին: Մի պարբերություն

ուղղակի քարացրեց ինձ. «Այն անձը, որը կտա սխալ կամ թերի տեղեկություններ, կպատժվի 1—3 տարի բանտարկությունամբ և կտուգանվի...» Օրենքի համարը և տարեթիվը, որոնք վավերացնում էին արդարագատություն այս պատիժը, ես չթարգմանեցի:



Այն մի քանի օրերը, որոնք ըստ նամակի «ժամկետի» մեզ բաժանում էին նշանավոր հինգշաբթիից, բազմաթիվ հարցուփորձերից հետո բերեցին մեզ համար միանգամայն նոր «եկամտահարկի» մտքին:

Մինչ այդ, մենք ամեն ինչ վճարում էինք ձեռքի աշխատանքից ստացված դրամից: Մեր տնտեսական պարզագույն համակարգը հիմնված էր դրամի ելումուտի անհաստատ հավասարակշռության վրա, դրամ, որ ավելի շատ դուրս էր գալիս, քան ներս մտնում: Եվ ահա, այդ խախտա կայունության պայմաններում, պետությունը պահանջում էր իր բաժինը, որը, ինչպես նշված էր նամակում, պիտի հաշվվեր ըստ «Եկամուտի»: Ահա մեզ պարտադրված այդ անկոչ հյուրի տխորժակից էր կախված լինելու հորս հնարավոր վերագարձը նախկին գիշերային աշխատանքին:

Հինգշաբթիին նախորդող երեկոն լուռ էր ու տխուր, շնայած մեր սովորական ոգևորողի շինծու ուրախության փորձերին:

Այդ շրջանում դպրոցում ուսուցանվող նյութերի մեծ մասը հիմնված էր «անգիր» անելու վրա: Լավագույն թվանշանը տեսնում էր նա, ով առանց որևէ նախդիր ու մակբայ բաց լինելու պատմում էր «Լյուդովիկոս 14-րդի թագավորությունը»: Այդ երեկո իմ մտապատկերում հայտնվեց մի ամբողջ պատի հին վարչակարգից և հանկարծ ձեռք բերեց նոր իմաստ: Ես շատ գոհ էի, որ կարող եմ անցյալի միջոցով բացատրել ներկյան և անսպառ պատկերացում ունենալ վաղնջական ժամանակների հարկային համակարգի մասին:

Ես աշխատում էի մերոնց զվարճացնել դռների ու պատուհանների հարկերով, որոնք գանձվում էին օդի ու ցերեկվա լույսի համար, «աղի հարկով», աղը պետության մենաշնորհն

էր և թույլատրվում էր սպառել միայն սահմանված քանակութեամբ, այլապես կարելի էր մեղադրվել խարդախութեան մեջ: Կար եկեղեցուն հասանելիք «տասնորդ», ճորտերի «գլխահարկ», տերերին տրվող «պարենհարկ»... վերջապես բոլոր այն հարկերը, որոնք վերացրեց հեղափոխութիւնը, և որոնք վաղն առավոտյան պիտի նորից հառնեին «եկամտահարկ» անունով:

### 43.

Միլիաբեր փողոցում, ուղղակի հարկերի գրասենյակի մուտքի մոտ, պատին գրոտած էր երկու մակագրութիւն: Առաջինը առհասարակ շափազանց տհաճ էր նման հաստատութեան համար, որն անվանվում էր «սոգոմականացված», երկրորդը ավելի սպառնալի էր և անհատական բնույթի. «Կաշիդ կքերթենք», ճշտում էր մակագրութիւնը, սլաքն ուղղելով դեպի պարոն վերահսկիչի ընդունելութեան օրերն ու ժամերը նշող ցուցանակը:

Ըստ երևույթին շատ էին փորձում ջնջել այդ մակագրութիւնները, բայց դրանք նորից հայտնվում էին՝ սպիտակ կավիճով, ապա կարմիր ներկով, այդպիսով ավելի ցայտուն դարձնելով և երիցս բազմապատկելով մակագրութիւնները:

Ներսում, թվում էր, ժամանակը մաշել էր ամեն ինչ: Կորել էր պատերի նախնական գույնը: Շնչելու օդը իր մեջ պահում էր գաղջութեան և բորբոսի հոտ: Փայտե հին սեղանի վրա բարձրացող մետաղյա ժանգոտ ցանցը ընդարձակ սրահը բաժանում էր երկու մասի: Սրահի մեծ մասը հատկացված էր գրութիւնների վրա խոնարհված ծառայողներին: Այցելուների համար թողնված էր մի նեղ միջանցք: Նրանք կարող էին մոտենալ ցանցի մեջ բացված փոքրիկ պատուհաններին, այնտեղից ներս սահեցնել թղթերը, որոնք անտարբերութեամբ ընդունում էին աշխատակիցները: Պատուհանների վերևում կախված «Բողոքներ» ցուցանակը ծնում էր խաբվող հույսեր: Վճարման ժամկետները բավական խիստ էին և պահանջվող գումարների մեջ սխալ չէր լինում:

Պատուհաններից մեկի առջև, սպասողների խմբի մեջ կանգնել էինք: Երբ հերթը մեզ հասավ, ես քաղաքավարի

բացատրեցի, թե եկել ենք պարոն վերահսկիչի մոտ: Հսկայական ցուցամատը դուրս եկավ մետաղյա ցանցից և ուղղվեց մի դռան, որի վրա փակցված քառակուսի թղթի վրա բոլորագրերով գրված էր «վերահսկիչ»: Հավանորեն ժամանակին այստեղ ցուցանակ է եղել: Հիմա մնացել էին միայն չորս պտուտակների հետքերը և ավելի պակաս գունաթափված մի ուղղանկյուն: Դռան մոտ գրված նստարանին արդեն մի քանի հոգի էին սպասում: Նույն ցավն ունեցող մարդկանց համերաշխությամբ նրանք մի քիչ սեղմվեցին, Մայրիկին տեղ տվեցին:

Ցանցի հետևում, գրություններին հատկացված սենյակի երեք պատերը ծածկված էին դարակներով, որոնց վրա կողք կողքի շարված էին հսկա, հաստափոր, սև կողերով մատյաններ: Մի դարակաշարից մյուսն էին պտտեցնում բարձր շարժական սանդուղքը, որպեսզի վերցնեին հարկավոր մատյանը, թերթեին ու անմիջապես տեղը դնեին: Կարմիր տառերով սպիտակ պիտակները ցույց էին տալիս, որ մաքրյալները դասավորված են այբբենական կարգով: Կամաց-կամաց աչքերս հայտնաբերեցին «Մ»-երի շարքը, թեև տարածությունը թույլ չէր տալիս կարդալու հաջորդ մանր առոները, որպեսզի անջատեի այն սև, 'եզակի մատյանը, որը մադիլների մեջ պահում էր «Մալաբյան» աղգանունը: Գիտեի, որ այնտեղ, այդ շարքի վրա էր գտնվում միաշքանի հրեշը, ալ կարմիր ծիածանաթաղանթով կիկլոպը, որը դաժանորեն հետևել էր մեզ, հետապնդել, շուրջկալել և բռնել:

Նստարանի վրա մնացել էին միայն Մայրիկը և մի ուրիշ մարդ: Այսօրվա նման հիշում եմ: Մեր երկար, երկուձամյա սպասման ընթացքում աչք չէինք կարում այդ մարդուց, որովհետև նրանից հետո մենք էինք մտնելու առյուծ-վերահսկիչի վանդակը:

Այդ մարդը այն տարիքի զինվորականներից էր, որոնք արդեն պաշտոնաթող են լինում, համազգեստը փոխելով քաղաքացիական հագուստով, որից միշտ զորանոցի հոտ է գալիս, իսկ զայրացկոտ ու խիստ հայացքները դեռ սպասում են զինվորական բարևով կրունկներն իրար խփելուն, որն այլևս չէր լինելու Հագի կոսսոյումը մի կերպ պահպանում էր տեսլի՝ շնորհիվ ամենօրյա խնամքի: Հագուստը հայելին էր աղ-

քատիկ եկամուտների. շատ տրորվելուց ու արդուկվելուց փայլ ստացած արմունկներն ու ծնկները արտացոլում էին նրա ունեցվածքի արտաքին նշանները:

Ուղիղ մեջքը, չգիտես սովորության ուժով, թե արհեստական արժանապատվությամբ դուրս գցված կուրծքը, հին մետաքսի նման գունաթափ դեմքը կարծես ասում էին, թե «ինքը հեշտ համոզվողներից չի և դեռ ցույց կտա, թե ինչն ինչոց է»: Եվ շարունակ շրթունքները շարժվում էին, մտքում կրկնում էր այն, ինչ պիտի բարձրաձայն ասեր վերահսկիչի գրասենյակում:

Տեսակցությունը կարճ եղավ:

Գուան շեմին, դուռը շրխկացնելուց առաջ գոռաց. «Ես բանն այդպես չեմ թւոնի»: Բայց բոլոր նախադրյալները կային, որ բանն «այդպես» էլ կմնար և այլ կերպ չէր լինի:

Այժմ հերթը մերն էր: Մենք պիտի դիմագրավեինք վատ տրամադրության հետևանքները, որ, անշուշտ, առաջացրել էր նախորդ այցելուն:

#### 44.

Գրասենյակը նման էր խանութի հետնամասի, մոայլ էր և նույնքան խարխուլ, Թղթապանակների ազդեցիկ դեպերի հետևում երևաց սպիտակ, կարճ կտրված մազերով, պայծառ կապույտ աչքերով մի մարդ, որը կորսիկացու ուժեղ շեշտագրությամբ Մայրիկին հրավիրեց նստել:

Իր նամակի ոչ ջնջված մասերն արագ աչքի անցկացնելուց հետո վեր կացավ, բերեց մի թղթապանակ, որի շապիկին հրաշալի բոլորագրերով մեր ազգանունն էր գրված, և սկսեց հարցաքննությունը:

Երբ էինք եկել Ֆրանսիա, հորս մասնագիտությունն ու աշխատավարձը, խնամքի տակ գտնվող երեխաների թիվը, իմ դպրոցների անունները, մեր նախկին հասցեները, մորս արհեստը...

Յուրաքանչյուր պատասխան այնքան հստակ էր, որ ես անորոշ նախազգացում ունեցա, թե մենք հետզհետե խրվում ենք այն մանրատառ պարբերության մեջ, որ մերոնց շվա-

խեցնելու համար չէի թարգմանել, բայց որը մեզ սպառնում էր բանտարկություն ու մեծ տուգանք:

Ի հաստատումն իր ասածների, մայրս պայուսակից հանեց մի մեծ թուղթ, բաց արեց դրեց վերահսկիչի սեղանին: Թղթի խաշաձև մաշվածքը վկայում էր նրա հաճախակի գործածությունը: Երկու էջ ծայրեծայր ծածկված էին մանր թվանշաններով, որոնք շարված էին հայերեն գրված վերնագրերի տակ. «մարգարտաթեյ», «սոսնձալար», «եռապատիկ», «հայրիկի աշխատավարձ», «վերնաշապիկների եկամուտ», «նպարեղեն», «տղայի հիվանդություն» և այլն:

Հաճախ թվերը դուրս էին գալիս իրենց սահմաններից, տարածվում ամեն կողմ, այդ դեպքում դրանք շրջանակվում էին գրիչով, մի տեսակ անջատվում խառնված գնդակների նման, որոնց անհրաժեշտ էր միացնել իրենց խմբին:

Վերահսկիչի խոշոր, կապույտ աչքերը սևեովել էին Մայրիկի հմուտ հաշվապահական գլուխգործոցի վրա: Ունելիի նման, բթամատի ու ցուցամատի ծայրերով բռնեց թղթի մի անկյունից, օդի մեջ ճոճեց, ասես ընդգծելով այդ փաստաթղթի ծիծաղելի լինելը, ապա հարցրեց.

— Ենթադրում եմ, տիկին, որ ձեր հաշվապահությունն է... սա:

Հարցի հեզնական երանգը չէր վրիպել մորս ուշադրությունից, բայց նա քաղաքավարի բացատրեց, որ դա ընդամենը հուշաթերթիկ է, որպեսզի կարողանա ճշգրիտ պատասխանել բոլոր հարցերին:

Ինձ թվաց, թե մարդը հիմա կայայթի:

Բայց ոչ մի պայթյուն չեղավ:

Դեմքին մոտեցրած դույզ ձեռքերով շփում էր աչքերը, տրորում այտերը... մի խոսքով շարժումներ, որոնք կարծես ասում են «համբերություն»: Հանկարծ բացեց դեմքը և ուժեղ ձայնով ասաց «լավ», որ իհարկե չէր նշանակում, թե ամեն ինչ լավ է: Կան «լավ»-եր, որոնցով հաճախ խոսքն սկսում են՝ ասելու, թե վատ են գործերը:

Այս միտքն արտահայտելուց առաջ նա թաղվեց բազկաթոռի մեջ, ձեռքերը խաչեց կրծքին և հայացքը հառեց Մայրիկի դեմքին: Մի քանի վայրկյան լուռ մնաց, որպեսզի լա-

վագույնս նշի դրության լրջությունը, ապա սկսեց հատ-հատ արտասանել.

— Գիտե՞ք, տիկին, ահա արդեն տասը տարի է, դուք խախտում եք հարկերի ընդհանուր օրինագիծը:

Մայրիկս զգուշորեն հարցրեց, թե ինչ է նշանակում «ընդհանուր օրինագծի խախտում»:

— Այս երկրի օրենքների խախտում, տիկին: Ապ-օ-րի-նի կերպով: Օրենքին հակառակ, եթե կուզեք... Եվ մի ուրիշ օրենքի պայման, ըստ որի «ոչ ոք չի կարող արդարանալ օրենքները շիմանալով»:

Մի պահ լռեց, ապա արտասանեց այս կարճ նախադասությունը:

— Գիտե՞ք, թե ինչ է սպասում ձեզ:

Մայրիկի դեմքի ճերմակությունը, ասես երակներում ոչընչացել էր արյան ամեն հետք, տարօրինակ կերպով հակադրվում էր հայացքի հանդարտությունը: Նա արդեն անցել էր վախի շեմից:

Մայրիկը դարձել էր անմատչելի:

Մինչ այս, նա պատասխանում էր լիովին ընդունելի ֆրանսերեն լեզվով, շահաված երբեմն արական ու իգական դերանունների և բայերի խոնարհումների որոշ շփոթությունները:

«Գիտե՞ք, թե ինչ է սպասում ձեզ»:

«Տիկին» բառը անհետացել էր, նշանակում է, վտանգը տարածվում էր ամբողջ ընտանիքի վրա:

Մայրս թեքվեց իմ կողմը: Շրթունքները թեթևակի դողում էին: Այս անգամ, որպեսզի խուսափի սխալից, որ միշտ սողոսկում է, երբ մտածում ես մի լեզվով, բայց խոսում այլ լեզվով, մայրս խնդրեց թարգմանել իր պատասխանը:

— Մենք պատահամաբ էնք ողջ մնացել, պարոն, և արդեն տեսել ենք մահը: Դրանից հետո այլևս ոչինչ մեզ չի կարող վախեցնել:

Ես նույնությամբ մորս խոսքերը կրկնում էի ֆրանսերեն թարգմանությամբ, չնայած նախադասության կեսին ձայնս կերկերաց: Համենայն դեպս ամբողջ ուժով պայքարում էի այն ընդհատ-ընդհատ կծկումների դեմ, որ հուզմունքի ազդեցությամբ բարձրանում էր դեպի կոկորդս: Զգում էի, որ անզսպելի ջղակծկման այս նախանշանները պիտի ավարտ-



վեին հեկեկանքներով, և այլևս ինքնատիրապետման հնարա-  
վորութիւն չէի ունենա: Արտասովելուս կարճ նոպան աշխա-  
տեցի քողարկել անակնկալ հազով և թարգմանութիւնս վեր-  
ջացավ այլափոխված, աղավաղված ձայնով:

Մարդը լսում էր հարկահավաքի անզգա դիմակով: Դիմակ,  
որ տարիների ընթացքում ձևավորվել է օրենսգրքի պատվի-  
րաններով, վերահսկողութեամբ, նախազգուշացումներով, հե-  
տապնդումներով, բռնագրավումներով և օրենքի անողոք պա-  
հանջներով:

Երկար լռութիւն տիրեց:

Ղետո կամաց-կամաց հավերժորեն մարդկային զորութիւ-  
նը սկսեց շաղափել սարսափազդու և անթափանց դիմակը:  
Տաք Կորսիկայի մի փոքրիկ մասնիկ, որ գաղտնի ապրում  
էր նրա մեջ, սկսեց մեղմացնել պատվիրված շրջաբերական-  
ներին ու կատարողական թերթիկներին պատկանող այդ մար-  
դու դիմագծերը:

Նորից «լավ» ասաց, բայց այս «լավը» նախկինի համե-  
մատութեամբ ինձ թվաց շատ ավելի համակրական:

Վերջին հարցը տվեց իմ դպրոցի՝ Մելիզան հաստատու-  
թյան մասին, որտեղ հաճախելը կարծես հարստութեան  
նշան էր:

— Գիտե՞ք, պարոն, — պատասխանեց մայրս, — եթե պա-  
տահմամբ ուշ գիշերով կամ առավոտ շատ վաղ անցնեք  
Սեն-ժաք փողոցով, ձեր հայացքը բարձրացրեք հինգերորդ  
հարկ: Կտեսնեք, որ լուսամուտներից մեկի հետևում դեռ լույս  
է վառվում, կամ արդեն վառվում է: Այդ լույսն է վճարում  
տղայիս ուսումը:

Պարոն Ամբրոզիանին, ինչպես հետո իմացա նրա անունը,  
հանեց մի հաստ հարցաթերթիկ և սկսեց գրել. մեր փոխա-  
րեն ինքն էր լրացնում մեր հարկի հայտարարութիւնը:

Մեր պարագան հատկապես բարդ էր, որովհետև օրենքի  
կողմից չէր նախատեսված:

Հարկատու ընտանիքը սահմանափակվում էր հայր, մայր  
ու անչափահաս երեխաներ կետով և «բազմանդամ» էր որակ-  
վում միայն ծննդաբերութիւնների քանակով: Քանի որ երբ  
ժառանգները» հեռանում էին հայրական օջախից, ընտանի-

քից մնում էին միայն ամուսինն ու կինը, իբրև միակ մնացուն տարրեր:

Ուրեմն ի՞նչ գործ ունեին այստեղ օրինագծված կարգը խախտող երկու մորաքույրերս, այդ երկու օրինազանցները, հնավանդ ժամանակների այդ Աննան ու Գայանեն, որոնք հարկայինի լեզվով կոչվում էին «կողմնակի ճյուղեր»:

Մեր ընտանեկան կազմը թերևս կարելի էր զետեղել մեծ ընտանիք, ցեղ, խմբակցություն կամ սպառողական անորոշ կոոպերատիվ բաժնում, որ օրենսդիրների կողմից չէր նախատեսված:

Հարկի հայտարարությունը, որ սովորաբար վերաբերում է նախորդ տարվան, հորս աշխատավարձը ոչ մի խնդրո առարկա չէր դարձել: Երբ մայրս վերահսկիչին հայտարարեց երեք քույրերի աշխատանքի ընդհանուր գումարը, մարդը ընդհատեց գրելը: Աչքերը փակեց, որ կարողանա մի պահ կենտրոնանալ, ամբողջ իր բարյացակամությամբ աշխատում էր պատկերացնել վեց ձեռքերով և երեսուն մատներով այդ միակ մարմինը:

— Ուրեմն, տիկին, եթե ամփոփենք այս ամենը, դուք աշխատում եք երեքով, բայց ոչ ոքի անհատական աշխատավարձը չի առանձնացված:

— Այո, պարոն:

— Իսկ ո՞վ է ստանում ընդհանուր գումարը:

— Մեր երեքից մեկնումեկը, ով շաբաթվա վերջին հանձնում է գործը:



Ստվարաթղթի դեղին տուփը միշտ դրված էր նույն տեղում՝ պահարանի դարակին: Կափարիչի վրայի D. M. C. տառերը հիշեցնում էին, որ նախկինում եղել է կոճի թելի տուփ:

Մայրս այնտեղ էր դատարկում շապկագործից ստացած ծրարը, հայրս, երբ դեռևս գործարանում էր աշխատում, այնտեղ էր սահեցնում իր շաբաթական աշխատավարձը: Այդ տուփից էինք հանում շաբաթվա ծախսերը:

Տուփը պատկանում էր բոլորիս:

Եվ Լթե մեր համեստ եկամուտների այդ փխրուն զան-  
ձապահարանը ճշգրտությամբ հառնում է հիշողությանս մեջ,  
պատճառը այն պարզ խոսքերն են, որ Լրկար ուղեկցել են  
ինձ.

«Վերցրու, որքան պետք է ֆեզ»:

Այդպես էր մայրս պատասխանում, երբ դրամ էի խընդ-  
րում դպրոցական պիտույքներ գնելու կամ ցանկություն էի  
հայտնում ունենալու Բենյուլ ու Ֆարժոն գոլնսփոր մատիտ-  
ների նոր տուփ:

«Վերցրու, որքան պետք է ֆեզ»:

Գլխի թեթևակի շարժումով ցույց էր տալիս դարակը, ապա  
գերագույն նրբանկատությամբ, իբր պատահաբար, բացակա-  
յում էր սենյակից ճիշտ այն պահին, երբ վերցնում էի ինձ  
անհրաժեշտ գումարը:

«Վերցրու, որքան պետք է ֆեզ»:

Երբևք շմոռացա մորս այս խոսքերը, ևյս խոսքերը, որոնք  
թույլ չեն տվել, որ գլխիդ մեջ ծագի կասկածատություն,  
փոքրոգություն, հաշվենկատություն: Սրանք սրտից սիրտ գը-  
նացող խոսքեր են:



Մեր վերահսկիչը վերջապես մեր երրորդության խնդիրը  
լուծեց իբրև մեկ աշխատավարձ, սրտերի մեր ընտանիքը վե-  
րափոխելով հարկատու ընտանիքի: Մենք բաժան-բաժան  
էինք արվել, ապա վերակազմվել արդար օրինականությամբ:  
Միակ հայտարարությամբ հայրս ու մայրս միանում էին:  
Առանց որևէ կապ ունենալու քրոջ հետ, Աննա մորաքույրը  
դառնում էր Մայրիկի բանվորուհին, իսկ Գայանեն իջնում էր  
շապկագործի աշակերտի աստիճանի:

Այսպիսով երեք քույրերի (որոնք այլևս քույրեր չէին)  
ընդհանուր գումարը բաժանելով տարբեր աստիճանների,  
ումեն անգամ հանգում էր ոչ «հարկադիր» կետի: Եվ, ան-  
շուշտ, գուտ պատահաբար էին բոլորը ապրում մի հարկի  
տակ:

Ընտանիքը որոշ շափով իրար էր անցել, որ հաստ հար-  
յաթերթիկի վրա բոլորի անունից ստորագրում էր միայն

Մայրս, բայց ինչպիսի փորձանքից էինք ազատվել... շնորհիվ այդ մարդու, որն իջեցրել էր մեզազրոզի դիմակը ի հիշատակ, ինչպես խոստովանեց հետո, իր գյուղի մի քանի հին կորսիկացի ընտանիքների, որոնք համարյա մեզ նման էին ապրում:

Մայրս, իր սովորության համաձայն, նրան նվիրեց մի քանի գեղեցիկ վերնաշապիկ: Նա ընդդիմացել էր՝ բարձրաձայն ծիծաղելով և իր կորսիկական շեշտով ասել էր.

— Տիկին, դուք կաշառում եք պետական պաշտոնյային:

— Օհ, ոչ,— պատասխանել էր մայրս:— Մենք այնքան հարուստ չենք ձեզ գնելու համար:

Տարիներ շարունակ նա դարձավ մեր լավագույն խորհրդատուն հարկային հարցերում, մինչև այն օրը, երբ կենսաթոշակի անցնելով՝ քաշվեց իր կղզին:

Պարոն Ամբրոզիանին ապացուցեց, որ միայն կամակատար հեղինակի ստիպողական հնարանքով չի, որ ամեն ինչ լավ է վերջանում:

#### 45.

Ես հաճելիորեն զարմացել էի, որ փոխադրվելով հինգերորդ դասարան, այնքան էլ չէի դժվարանում ուսման մեջ, շնայած հիվանդության պատճառով բացակայել էի երրորդ քառորդից: Ամառանոցից վերադառնալուն պես, հայրս իմ ծրագիրը ծանրաբեռնել էր հայերենի ուսուցիչ վարձելով, որն ինձ մայրենի լեզվով գրել կարողալ էր սովորեցնում:

Իմ նոր գիտելիքների մեջ միաձուլվում էին Ֆրանսիացի և հայ հերոսները, շնայած նրանց բաժանող դարերին: Տիգրան Առաջինը պարթևների օգնությամբ վերականգնում էր գահը: Վարդան Մամիկոնյանը իր հետևազորով, անմահների գնդով, ռազմի փղերով և զրահակիր զինվորներով արցունքներ էր քամում աչքիցս, զոհվելով Ավարայրի ճակատամարտում: Բայց հանկարծ ասպետ Բայարն էր հայտնվում Մարինյանի ճակատամարտում, Ֆրանսուա Առաջինի կողքին:

Վաղնջական ժամանակների այս պատմության մեջ, երբ բարին ու չարը կոչվում էին իրենց անուններով, սիրտս ուժեղ տրոփում էր հրամանատար Դյուգեսկլենի համար. նա հաղթել

էր Կառլոս «չարին», անցել մի ուրիշ Կառլոս «իմաստունի» կողմը և Կաստիլիայում մարտնչել Պիեռ «դաժանի» հետ:

Սակայն իմ նախասիրութիւնը մնում էր իշխանաց իշխանը: Բագրատունիների թագավորութիւնն Աշոտ Բագրատունին, որ, շնայած երկդիմի դերին, ինձ պատիվ էր արել, կրելով միևնույն անունը, ինչ ես:



Առավոտյան դասամիջոցի ժամն էր:

Վերադարձող մենութիւնն և երազանքների ժամը, որը մոռացնում էր սովորական հնազանդութիւնը:

Իմ իսպանական դոյակների խորքից տարտամորեն ականջիս էր հասնում գնդակին տրվող հատու հարվածների ձայնը, ապա ընդհանուր ոռնոցը, որոնք մի տեղ, ուրիշ մի աշխարհում գոլ էին նշանավորում:

Սակայն այդ պահին էլզորագոյի դռներն էին բացվում մի երիտասարդի առջև, որը զարմանալիորեն նման էր ինձ: Պատիվներից լիացած, հաջողութիւնների ու հաղթանակների հասած, անունս բազմութիւն շուրթերին, ես անվրդով ու անտարբեր երես էի դարձնում ինձնով հիացող աղջիկների պարսերից:

Ցերեկային այս արթմնի երազների կառուցվածքը այնքան արտառոց չէր, որքան տարիների ընթացքում փոփոխվող գիշերային երազներինը: Իմ հասունացման հետ կանայք դադարում էին բնութիւն փեշավոր ու ձեռագործ անող արարածները լինելուց: Ես գուշակում էի նրանց բարեմասնութիւնները և դրանից անորոշ սարսուռներ էի զգում:

Ինչպե՞ս անմեղ համարես պարզամիտ երազանքներդ, երևակայական խաղերիդ ծանրութիւնն դիմաց: Ավելին, թերևս կարելի էր ապավինել որոշ մեղմացուցիչ հանգամանքների, որովհետև ամեն անգամ անիրական աշխարհն ստեղծում էի, որ զարմացնեմ իմ շատ սիրելիներին: Այդ քաղցր տեսիլների մեջ Մայրիկը, Աննա մորաքույրը և նույնիսկ Գայանեն, որին ի վերջո պարտադրել էի լանջաբաց, կարմիր պզեմտ, կրում էին միայն նորածն, թանկանոց հագուստներ: Հայրս և ես սմոկինգ էինք հագնում, լամբակին՝ կար-

միր մեխակ: Նշանավոր ռեստորանները, որոնց մասին գիտեի միայն լուսաշող ցուցանակներից, մեր առջև փռում էին իրենց ընտիր խորտիկները:

Մի խոսքով, ես մերոնց մատուցում էի այն շքեղությունը, որ նրանք տեսել էին միայն ցուցափեղկերում:

Դասամիջոցի վերջում դափնեպսակով զարդարված իմ հերոսը լքում էր փառքը, գնում վերգտնելու անիրական աշխարհը, մի աշխարհ, ուր կիսաստվածները պետք է նեղություն կրեին ծնվելու՝ ավետյաց երկիր հասնելու համար: Բայց ես, որ ապրում էի հարազատներիս նեղ շրջապատում, շատ լավ գիտեի, որ անհրաժեշտ էր այդ ուրվականը դնել առօրյա կյանքի իրականության մեջ: Անհրաժեշտ էր նրա համար ստեղծել ավելի մարդկային պայմաններ, նրան կատարելագործել, օժտել ավելի ազնիվ մասնագիտությամբ:

Ես գիտեի նրա ֆիզիկական երևույթը, այն արդեն ձևավորվել էր: Չէի կասկածում նրա փայլուն ապագայի մասին: Ինձ մնում էր միայն նրա համար գտնել մի մասնագիտություն, որպեսզի լրացնեի այդ ապրող նմուշը և ընդօրինակելով նրան՝ մի օր իրականացնեի հույսերս:



Այդ պահին հանկարծ բացվեց դասարանի դուռը և ինձ խլեց իմ ցնորքներից: Դա մեր ուսուցիչ սյարոն Սիմեոնն էր: Նրան կոչում էին «Սյուսյու» մականունով: Ես չէի հասկացել այդ երկու անվանումների կապը: Տարիները ջնջել էին բուն պատճառը, բայց մականունը հավերժում էր դասարանից դասարան, ասես պահպանելու անբացատրելի ավանդությունը:

Նա բնականից սիրալիր էր, մի բան, որ Լրբեմն աշխատում էր թաքցնել ձայնը բարձրացնելով և սաստելով դասը խանգարողներին, բայց նրա շինծու բարկությունից ոչ ոք չէր խաբվում:

Իմ ներկայությունը նստարանի հետևում պարոն Սիմեոնը չէր նկատել: Կանգնել էր իր անհատական պահարանի առջև, որ բանալիով կողպված էր լինում: Այստեղ էր դնում ուղղելիք տետրակները, կավիճները, մի տուփ բիսկվիտ՝ թե:

Թե քաղցը մեղմելու համար, մի քանի սրվակ դեղորայք՝ մարսողության համար, կոստյումը պահպանող վերնագգեստը, երկնքի ջրերից պաշտպանվելու անձրևանոցը, մի խոսքով, օրվա անկշռելիությանը դիմագրավելու մի ամբողջ զինանոց:

Մեջքը ինձ էր դարձրել, բայց ուսերի շարժումները, փականի մեջ աչ ու ձախ դարձող բանալու զնգրտոցը, ծնկի հարվածները, որ հասցնում էր պահարանի դռանը, ցույց էին տալիս, որ փականը տեղի չի տալիս:

Առանց մեծ մեքենագետ լինելու, դժվար չէր եզրակացնել, որ նման դեպքերում նյարդայնությունը հակադարձ համեմատական է բանալիի հնազանդությանը: Սթե շես կարողանում հանդարտվել, ավելի լավ կլինի նման հանգամանքներում գործը հանձնարարել ուրիշի:

Հենց այդ էլ առաջարկեցի նրան:

— Ես կարող եմ օգնել ձեզ, պարոն:

Հանկարծ շուռ եկավ:

— Մենակ ի՞նչ եք անում այստեղ:

— Հարբուխ ունեմ, պարոն: Գերադասեցի մնալ դասարանում:

Բանալին մեկնեց ինձ, առանց մեծ հույսի, որովհետև իրեն թվում էր, թե ներսում ամեն ինչ խափանվել էր, և միայն փականագործը կարող է գլուխ հանել:

Աշխատեցի բանալին մինչև փականի խորքը չհասցնել: Մանրիկ շարժումներով աչից ձախ էի դարձնում բանալին, մինչև իսկական անցքը գտնեի: Շատ արագ լեզվակը սահեց փականի բնի մեջ, և դուռը բացվեց:

Արժանացա նրա հիացական հաճոյախոսություններին:

— Բայց դուք իսկական կախարդ եք, բարեկամս:

— Օհ, ոչ, պարոն, ես պարզապես ավելի պակաս նյարդային էի, քան դուք:

Վերցրեց տետրակները, դռան շեմին, դուրս գալու պահին, հանկարծ ետ եկավ, նստեց իմ դիմաց, մի քանի նստարան այն կողմ:

— Կյանքը այնքան էլ հեշտ չի... այնպես չի՞, Մալաքյան: Ի՞նչ էր ակնարկում, դասերը, իմ ծագումը, թե կյանքն ընդհանրապես: Տարակուսելով, խոհեմաբար ասացի.

— Իհարկե, պարոն... բայց վերջը լավ կլինի:

— Գիտե՞ք, — ճշտե՞ց, — երես առած երեխաներ են, ծնունդով բախտավոր, բայց իհարկե ավելի շուտ շարաճճի են, քան շար:

Ես չպատասխանեցի: Ցանկություն շունի երաշխավորել մեղմացնող հանգամանքները:

Նա կարեկից ժպտաց, երբ խոսեց իմ հարբուխի և խրոնիկական անգինայի մասին, որոնք ինձ թույլ չէին տալիս դասամիջոցներին դուրս գալ:

Ես պատասխանեցի.

— Գիտե՞ք, պարոն, դա ոչ ոքի չի խանգարում:

Դեռ երկար խոսեցինք մեր ընտանիքի և մեր գաղթի մասին, որի պատմությանը որոշ չափով ծանոթ էր: Հիշեցինք լուսնային ամոթալի դավադրության մասին, որ պահպանում էին դպրոցական դասագրքերը, և որոնք, ի հարգանս մարդասպանների, ձևացնում էին, թե տեղյակ չեն, որ բնաջնջվել է մի ժողովուրդ:

Չորս տարվա ընթացքում երբեք չէի լսել որևէ ուսուցչի ձայնը. ուսուցանողի ձայն, երբ չի ուսուցանում: Առաջին անգամ գիտելիքների քննիչ ոտքտը, դասը անգիր անողների վերահսկիչը մարդկային վերաբերմունք ցույց տվեց:

Նրա վերջին հարցը սոսկալի հուզմունք պատճառեց ինձ և գամեց տեղումս: Ասես թափանցեց իմ փոքրիկ երազանքների գաղտնի աշխարհը, երազանքներ, որոնց մասին դեռ ոչ ոքի չէի խոստովանել, երբ հարցրեց, թե ինչ եմ մտածում ապագայիս մասին, ի՞նչ մասնագիտություն եմ ուզում ձեռք բերել հետագայում և վստահություն ներշնչելու համար մտերմաբար ասաց, թե՛ «Սա կմնա մեր մեջ»:

Պատասխանեցի, թե այդ խնդրի մասին հաճախ եմ մտածել, բայց դեռ ոչինչ չեմ որոշել: Դա զուտ ճշմարտություն էր, խենթություններից մաքրված ճշմարտություն, որ ես սպասում էի հոգուս խորքում:

Նա խորհուրդ տվեց ուշադիր կարդալ նոր լույս տեսած մի գիրք, որի հեղինակը համալսարանի տիտղոսավոր պրոֆեսոր է, և որի վերնագիրն է «Ինչպես ընտրել մասնագիտություն»:

— Եթե որևէ հարց ունենաք, անպայման դիմեք ինձ:



«Ինչպես ընտրել մասնագիտություն». մանկավարժական բարձրագույն դպրոցի պրոֆեսոր Ժան-Պիեռ Բարբարուի այս գրքից չկար գրախանութներում: Անհրաժեշտ եղավ գտնել հրատարակչատան անունը, պատվիրել գիրքը և կանխավճար մուծել:

Գրքին սպասելու ամեն մի օրը ինձ քսանչորս ժամից շատ ավելի երկար էր թվում:

Վերջապես ստացանք մի հսկայական հատոր՝ հեռախոսագրքի հաստություն:

Հիանալի ապագա խոստացող գիտելիքների այդ աստվածաշունչը դասավորված էր այբբենական կարգով և արժեր իր ծանրության գնին: Խնամքով թաքցրել էի մերոնցից այդ գնումի վերջնական նպատակը: Մայրիկը սովորության համաձայն ինձ էր պարզել արկղիկը և նրբանկատորեն դուրս գալով սենյակից՝ ասել էր. «Վերցրու, որքան պետք է»:

Բոլոր մասնագիտությունները՝ երկրագործությունից մինչև կենդանական աշխարհագրություն, մինչև քսիլոգրաֆիա՝ փայտի փորագրություն, մանրամասն նկարագրված էին այնտեղ: Տրված էր նաև այն նախապատրաստական դպրոցների ցուցակը, որոնք ուսանողներին պատրաստում էին ընդունելության քննությունների համար: Նույնիսկ նախատեսված էր ապագա գործունեության ասպարեզը, որ ընձեռում էր տվյալ մասնագիտությունը:

Մասնագիտությունների այս վեց հարյուր էջերի առջև, որոնք գրկաբաց դիմավորում էին ինձ, ես որոշել էի գործել մի մեթոդով, որ հիմնված էր միայն իմ անտեղյակության վրա:

Ես մի կողմ էի թողնում «երկրագործությունը», որովհետև հիշեցնում էր հին վարչակարգի գյուղացիների թշվառ կյանքը: Հետ էի մղում «իրավաբանի» մասնագիտությունը, որ գործ ուներ հայրասպանների ու մայրասպանների հետ: Արագորեն բաց էի թողնում կինոյին նվիրված էջերը, որովհետև մի օր տանն ասել էին, թե դա լուրջ բան չի: Անողորհող «վիրաբուժության» նկատմամբ, որ ինձ կդատապարտեր թաթախվելու փորոտիքի և արյան մեջ՝ աղիքից կամ ստա-

Մոքսից մի կտոր հատելու համար Երբ հասա «կենդանաբանությանը», իմ ուշադրությունը գրավեցին բնաշնչումից փրկված տասներկու մասնագիտություններ:

Դրանցից մեկն ինձ այնքան ուժեղ էր հրապուրել, որ ուսումնասիրելով մյուսները, նորից ու նորից վերադառնում էի, կարդում դրան վերաբերող երկար պարբերությունը: Գիրքը այդ էջի վրա հաճախակի բացուխուփ արվելուց տեղի էր տվել և նույնիսկ, երբ ուղղահայաց դիրքով էի դնում, ինքնաբերաբար, հիպնոսվածի նման բացվում էր այդ նույն էջի վրա:

Բոլոր ցնորքներս ի մի հավաքող հրաշալի մասնագիտությունը խոշոր տառերով փոված էր իմ առջև. «ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ԻՆժԵՆԵՐ ՄԵՔԵՆԱԳԵՏ»:

Համոզվելով, որ ոչ ոք չի լսում ինձ. Ռասինի բանաստեղծության նման արտասանում էի այդ փայլուն տիտղոսը, որ այնքան ներդաշնակորեն ղողանջում ու թրթռում էր ականջներիս մեջ:

«Ինժեները» արտահայտում էր մասնագիտության ազնրվությունը, «մեքենագետը» ապահովում էր հաջողակ ապագա, իսկ «ռազմածովայինը» խոստանում էր շքեղ համագագեստ՝ տրեզներով, ոսկե կոճակներով, որոնց վրա դրոշմված է խարիսխ՝ ծովի խորհրդանշանը:

Իմ տեղեկագիրքը երկար նկարագրում էր այն ուղին, որն ինձ առաջնորդելու էր դեպի այդ գագաթը: Ամեն ինչ սկսվում էր «Արվեստների և արհեստների ինժեներական ազգային դպրոցի» ընդունելության քննությունների շորսամյա նախապատրաստական շրջանով: Մրցակցության հաջողությունը (հարյուրավոր թեկնածուներից վաթսուն ընտրյալ) բաց էր անում այդ դպրոցի դռները, որը երեք տարվա ուսումից հետո տալիս էր «Արվեստի և արհեստի ինժեների» տիտղոս: Երկու տարի ևս ծովագնացության դպրոցում ուսանելուց հետո, վերջապես, լրանում են այդ ուսման տեխնիկական և տեսական գիտելիքները:

Այդ ինը տարիների ընթացքում մեր ընտանիքը լիովի ժամանակ կունենար «շապկավորելու» Ֆրանսիայի մեծ մասին, որպեսզի օգներ նվաճելու ինձ շլացնող լեոնագագաթը: Մերոնց հայտնելուց առաջ, թե պատրաստ եմ դիմագրավելու

այդ բարձրակետը, ինքս ինձ ժամանակ տվեցի խորհրդածե-  
լու, որի ընթացքում պարոն Բարբարուի գիրքը մշտապես բաց  
մնաց «ի» տառի վրա:

Պարոն Սիմեոնը միակն էր, որին բացեցի գաղտնիքս: Իմ  
ընտրությունն ընդունեց ոգևորությամբ, ոչ մի կասկած չու-  
նեք մեքենագիտության ձիրքերիս մասին: Չէ՞ որ բանալիի  
մի շարժումով բացել էի նրա պահարանի համառ դուռը:  
Առաջարկեց գրել ծովային մինիստրություն, որպեսզի պաշ-  
տոնապես հաստատեն իմ ձգտումի ուղին: Նա շարադրեց նա-  
մակը, ես արտագրեցի և ստորագրեցի:

Ես մերոնց շէի նախազգուշացրել, թե մոտ օրերս անպայ-  
ման Փարիզից նամակ պետք է ստանամ:

Նորից շփոթմունք, գունատ դեմքեր ի տես ծրարի, որ այս  
անգամ կրում էր «Ֆրանսիական հանրապետություն, ծովա-  
յին մինիստրություն» կնիքը:

Դպրոցից վերադառնալով՝ բոլորին հանգստացրի և նրանց  
շվարած դեմքերին նայելով՝ ամենայն պարզությամբ ասացի.

— Սա ծովային պարոն մինիստրի պատասխանն է իմ  
նամակին, որ ուղարկել եմ անձամբ իրեն:

Մինիստրի փոխարեն, որ այդպես էլ շիմացավ իմ ընդու-  
նած կարևոր որոշումը, նրա վարչությունների բաժիններից  
մեկի քառասունհրեքերորդ քարտուղարը, դարձյալ «անըն-  
թեռնելի» ստորագրությամբ, կետ առ կետ հաստատում էր,  
ինչ որ «ի» տառի տակ պարոն Բարբարուն արդեն սովորեց-  
րել էր: Սակայն ինձ թվում էր, թե ծովային ուժերի գերագույն  
պետը, մեծ ծովակալը, սիրով այստ էր կամթել:

Ուրեմն որոշված էր. կիրակի օրը, եկեղեցուց հետո, կհա-  
ղորդեի մեծ նորությունը:

## 47.

«Ծովափնյա սրճարանը», ինչպես անունն էր ցույց տա-  
լիս, հաստատություն էր, որտեղ խմիչք էին մատուցում:

Այն ժամանակներն էին, երբ ծովը երիզող մեծ պողոտան՝  
«Զբոսանք» հրապուրիչ անվանումով, դեռ չէր ծածկվել բե-  
տոնով, մի մենավոր, փայտյա միահարկ տնակ էր կանգնած

հենց ջրի ափին: Քամիներից ու մշուշներից հոգնած տնակի ճակատին ուշադիր նայողը կարող էր կռահել, որ ժամանակին ներկված է եղել կանաչ:

Կիրակի օրերը, ճաշից հետո, մենք հաճախ էինք գնում այնտեղ: Դուան վրա փակցված ձեռագիր մակագրությունը՝ «Թ՛ո՛ւյլատրվում է ներս մտնել ուտելիքով», մեզ իրավունք էր տալիս բերելու մեր ընթրիքը պարունակող մի զամբյուղ:

Այդ կիրակի մենակ էինք առաջին հարկի սրահում, մեր մշտական սեղանի մոտ, մեծ ապակեպատ լուսամուտի տակ, որ շրջանակում էր երկնքի կապույտը ծովին միացնող հորիզոնագծի վրա: Երբ մատուցողը, առանց արհամարհելու մեր համեստ պատվերը, սեղանին դրեց երկու մեծ շիշ սառը լիմոնադ, ես սկսեցի ամենայն մանրամասնությամբ պատմել այն վիթխարի ծրագիրը, ըստ որի պիտի դառնայի... այդ անունը հնչեց շեփորի կանչի նման, ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ԻՆժԵՆԵՐ ՄԵՔԵՆԱԳԵՏ:

Իմ քնարական գեղումներին հաջորդող լուսնային լուսակն բացահայտում էր ընդհանուր կենտրոնացում ի հարգանս հանդիսավոր գործողությունների: Իմ ընտանեկան լսարանի ուղեղները կարծես կաշկանդվել, անդամալուծվել էին այն կախարհանքից, որ պատճառում էին ծովային «վորանները»<sup>1</sup>: Կսվում էր միայն ավազոտ ափին մեռնող ալիքների ծույլ ծփանքը:

Հայրս խոսեց, երեք-չորս անգամ կրկնել տալով այն հեղինակավոր տիտղոսը և լսեց աչքերը կիսափակ, ինչպես Լիստի նախերգանքներից մեկը:

Մայրիկի ոգևորությունը թախիծի երանգ ուներ, երբ խոսք բացեց ընտանիքից հեռու երկար բացակայությունների մասին:

— Անընդհատ դրսում պիտի լինես, — ասաց:

Աննա մորաքույրս սնափսուության կամ գոռոզության նշույլ անգամ չունեցավ: Նրա համար բառերից թափվող երածրշտությունը վերածվում էր նավի, որ լողում էր աղի ջրերի

---

1 Վորան Սերաստիան — ֆրանսիացի նշանավոր ռազմական ինժեներ և մարշալ, աղքատ ընտանիքից, հասել է բարձր կոչումների աշխատասիրության, ճկուն մտքի շնորհիվ (1633—1707)

անծայրածիր աշխարհում, անհատակ խորություններում, որոնք հաճախ այլափոխվում էին փրփրուն, մարդակույ վրհուկների: Նա մտահոգ մրմնջաց.

— Բայց... դու լողալ չգիտես:

Նրան հանգստացրի, ասելով, թե ջուրը նետվելու ու պարանով նավեր քաշելու ոչ մի անհրաժեշտություն չկա, թե նավերն ունեն շարժման սեփական միջոցներ, և ես պիտի զբաղվեմ հենց այդ մեքենաներով:

Ինչ վերաբերում է Գայսնեին, նա արդեն լքել էր ցամաքը: Պատուհանի մոտի իր զբաղեցրած տեղում գետինն անհետացել էր: Նա գտնվում էր երկնքի ու ծովի միջև, մինչդեռ ափսեները, բաժակներն ու շշերը ցնցվում էին ողնուցային և կողային փոխնիփոխ ճոճումներից:

Չնայած ամբողջ այս ներքին խռովքին, շուրջս կային միայն հպարտությունից շողշողացող աչքեր և երջանկությունից վարդագունած այսեր:

Այդ կիրակի, երբ դուրս եկանք «Մովափնյա սրճարանից», արեգակի սկավառակը վաղուց արդեն սուղվել էր ծովի մեջ:

## 48.

Երբ կայծակը շատ մոտիկից է խփում, զարմանում ես, որ ողջ ես մնացել: Ամեն ինչ այդպես եղավ, երբ ստացա ընդունելության քննությունների կանոնները: Պահանջվող առաջին պայմանը ձևակերպված էր կարճ ու կարուկ. «ԼԻՆՆԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ»<sup>1</sup>: Իսկ ես կրում էի այն կնիքը, որ մի օր իջել էր մեր անձնագրի վրա, իբրև հիշեցում, թե մենք «ԱՆՀԱՅՐՆՆԻՔ, ՊԱՏԱՀՄԱՄԲ ՈՂՁ» մնացածներ ենք:

Գուքս Ֆրանսուա դը Լա Ռոշֆուկո-Լիանկուրը 1770-ական թվականներին հիմնել էր «Հայրենիքի զավակների դպրոցը», որը պետք է դառնար «Արվեստների և արհեստների ինժեներական ազգային դպրոց»:

Այդպիսով, դեռևս Լյուդովիկոս 16-րդի ժամանակներից, այդ նշանավոր հաստատության մեջ մնացել էր հայրենիքի ժառանգության իրավունքը, որ հարյուր վաթսուն տարի հետո իր զավակներից պահանջում էր ֆրանսահպատակություն:

'Հպատակութեան դիմում ես կարող էի ներկայացնել միայն զինվորագրութեան տարիքիս, այսինքն՝ քսանմեկ տարեկանում: Իսկ ընդունելութեան քննություններին կարելի էր մասնակցել մինչև քսան տարեկանը:

Թույլատրող, արգելող, պարտադրող կամ դատապարտող օրենքների մեջ կան այնպիսիները, որոնք անհեթեթ են դառնում վաղեմիութեան պատճառով: Օրենսդիրը դրանք վերացնում կամ վերափոխում է իշխանությունների թելադրանքով, նրանց մեծամասնութեան կամքով կամ գոռգոռացող և պաստառներ թափահարող ամբոխի ճնշմամբ, որի թիվը կարող է փոփոխվել սովորականից մինչև կրկնապատիկի, ըստ ցուցարարների կամ ոստիկանութեան հաշվումների:

Իմ պարագայում, բողոքի այդպիսի ցույցը կարող էր սահմանափակվել մի հոգով, տվյալ դեպքում ինձնով և, անշուշտ, հասարակական կարծիքին կներկայանար երկուսի բաժանված. «Տասնհինգամյա մի կիսաերիտասարդ երեկ ցույց է արել Կանեբիերում, տանելով կես պաստառ»:

Այդ օրենքի խստութիւնը մեղմացնող մի փոքրիկ ուղղումն ինձ հանեց սարդոստայնն ընկած ճանճի վիճակից. արտոնականը, վերաբնակեցվածը, ապաստանյալը կամ գաղթականը կարող է հավակնել գիտութեան այդ վկայականին, պայմանով, որ ինձեաների կոչումը ուղեկցվեր «Օտարի տիտղոս» պիտակով: Նույնիսկ գիտություններն էին միավորվում՝ թեկնածուին հիշեցնելու, թե նա ծնվել է ուրիշ տեղ:

Ես որոշ տխրութեամբ էի մտնում այդ սողանցքից, ասպագայում այդ ամբողջի մեջ ներգրավվելու հույսով, ամբողջ, որ բարձրացված էր ազգային արժանապատվութեան և պետութեան շահերի հիման վրա, իսկ պետութիւնը շտապելու ոչ մի պատճառ չուներ հավասարեցման համար. հայ ապաստանյալը ենթակա էր զինվորական նույն պարտականութիւններին, ինչ ֆրանսիացին, առանց հաշվի առնելու արյան շնորհած որոշ իրավունքներ:

Ինքնութեան որոնումները երկար տևեցին: Եթե օրենքը թույլ էր տալիս հպատակութիւն ստանալու հույս, այն ժամանակվա իշխանութիւնները ընդդիմանում էին, պահանջելով երկար հարցաթերթիկներ, որոնք հետո թղթապանակների մեջ թաղված, մնում էին բյուրոկրատական գրասենյակ-

ների փոշոտ դարակների խորքերում, և «Ձեր դիմումին դրական պատասխան չկարողացանք տալ» ափսոսանքը երեք տարով հետաձգում էր ամեն նոր թեկնածուից։

Ես ֆրանսիական հպատակություն ստացա 1949 թվականի նոյեմբերի 4-ին, այսինքն՝ Մարսել գալուց քսանհինգ տարի հետո։

\* \* \*

Շրջանում կար «Արվեստների և արհեստների» նախապատրաստական երկու դպրոց միայն, մեկը Մարսելում, որի ընդունելության ցուցակն արդեն լրացել էր, մյուսը՝ Էքս-ան-Պրովանսում, որտեղ դեռևս մի քանի տեղ կար։ Ես անմիջապես ցուցակագրվեցի այնտեղ։

Ինձ տնից բաժանող երեսուն կիլոմետրը ստիպում էր ապրել գիշերօթիկում, խոստանալով նոր կյանք, նաև հնարավորություն տալով մոտիկ գտնվելու ուսումս պսակող նշանավոր հաստատությունը։

Հոկտեմբեր ամսվա մեր բաժանմանը նախապատրաստվելու համար հաճախ կիրակի օրերին ընտանիքով զբոսանքի էինք գնում Էքսի դաշտերը։ Գնալ-գալու ճանապարհին կանգ էինք առնում այն շենքի մոտ, որը պիտի առաջիկա շորս տարիների ընթացքում ապաստաններ ինձ։ Դա հին վանք էր կամ մենաստան։ Մի աչքս հպելով ցանկապատի ճեղքին, հետագոտում էի կամարակապ, սյունազարդ սրահները, որոնք շրջանակում էին քառակուսի, ընդարձակ բակը։

Իսկ մի քանի փողոց այն կողմ գտնվում էին շենքերը, որտեղ պիտի վերջավորվեին իմ մեծ ձգտումները։

Մի անգամ նույնիսկ կարողացանք մտնել կենտրոնական բակը։ Դասարանների լուսամուտների առջև կանգնած՝ մեր գլուխները հպել էինք ապակիներին, ձեռքներս հովանի արած դիտում էինք ընդարձակ ամֆիթատրոնները, որոնք հատկացված էին տեսական ուսմանը։ Գործնական պարապմունքների համար, գործարանային մի բարձր ծխնելույզի շուրջը տեղադրված էին դարբնոցը, ձուլարանը, ատաղձագործության,

մեքենագործության, էլեկտրագործության հսկայական արհեստանոցները և դասասենյակները:

Շլացած ինձ սպասվող մեծ իրադարձությամբ, վերադառնում էինք Միրաբոյի զբոսայգին, այնտեղից նստում տրամվայ, որ հուսահատեցնող դանդաղկոտությամբ, հազիվ երկու ժ Իում մեզ բերում էր Մարսել:



Աննա մորաքրոջս ասել էի. «Մեկ ճամպրուկից ոչ ավելի»: Ամեն օր ավելացող հագուստեղենի դեզից հուսահատվելով, նույնիսկ սպառնացել էի.

— Տեսեք, հա, եթե երկու ճամպրուկ լինի, կվերցնեմ դրանցից միայն մեկը, որը պատահի, և կգնամ:

Նա գլուխը խոնարհել էր ի նշան հպատակության ապագա գիտնականի հեղինակությանը, բայց հայացքով շափում էր իր կարծիքով ինձ անհրաժեշտ իրերի դեզը և մեր ունեցած ամենամեծ, արհեստական կաշվից ճամպրուկի տարողությունը: Պարզ երևում էր, որ այդքան բեռը ոչ մի կերպ չէր տեղավորվի ճամպրուկում:

Իրենց գաղտնի խորհրդակցությունների ժամանակ նա այնքան սադրանքներ էր հորինել, որ ի վերջո գնել էին կտավե փքվւղ ճամպրուկ: Այդ ճամպրուկը կարող էր կրկնապատկել իր ծավալը:

Ճամպրուկը ես հայտնաբերեցի ճիշտ մեկնելուս սւահին, դրված էր դուռն շեմին, լեփ-լեցուն, հաստափոր, և երբ ուզեցի վերցնել, ինձ թվաց՝ մեխված է գետնին: Երբ երկրորդ անգամ փորձեցի կտրել գետնից, կարերը ճթթացին:

Աննա մորաքույրս բարի և խուսափողական հայացքով «ամեն ինչ լավագույնս և իմ օգտին» արտահայտությամբ սպասում էր իմ գայրույթի պոռթկումին: Հայրս կանխեց անարդարությունը, որ կարող էի թույլ տալ:

— Իսկասիես մի քիչ ծանր է: Բայց դա նշանակություն չունի, որովհետև ես հետո գալիս եմ:

— Դա պատճառաբանություն չի: Եթե ծանր է, ուրեմն ծանր է բոլորի համար... Բացի այդ, ով կթողնի, որ իմ ճամպրուկը դու բռնես:



— Ճամարուկդ տրամվայը պիտի տանի:

— Լավ, իսկ դրանից առաջ և հետո՞:

— Ոչինչ, կտանենք երկուսով: Հերթով:

Ինչո՞ւ էի գոռգոռում մեր բաժանման պահին, երբ սիրտս տագնապալից տրոփում էր:

Հավանորեն ուզում էի գսպել ինժեների իմ արցունքները, ինժեները չպիտի լա, մտածում էի ես: Եվ որպեսզի թաքցնեմ աչքերիս մեջ լճացող արցունքներս, նետվեցի մորս գիրկը, գլուխս դնելով նրա ուսին:

Սիրով ու գուրգուրանքով հորդուն այդ տան մեջ մենք համբուրվում էինք միայն նշանակալից դեպքերի առթիվ. մեկնում, վերադարձ երկար բացակայությունից, իմ ծննդյան տարեդարձի կամ նոր տարվա օրը:

Մենք դեռ չէինք որդեգրել կրկնակի համբույրների արևմրտյան սովորությունը, երբ ամբողջ օրը համբույրներ էին բաշխում իրար հպվող այտերով, մինչդեռ շրթունքները օդի մեջ շոր ձայն էին արձակում:

Կյանքի կարևոր պահերին վերապահված հազվադեպ այս արարողությունը համբույրը վերափոխում էր իսկական գրկախառնության, և ամեն մեկը ըմբռնվում էր մյուսի փաղաքշանքը:

Ահա, մեծ սիրո այդ ըմբռնանող համբույրներով հեռացա իմ մայրերի եռյակից... և անհոգ մանկությունից, դասերի բացթողումներից... փափկասուն կյանքից:

Այդ օրը, ծածկելով տան դուռը, ես թիկունք էի դարձնում անմեղ տարիներիս և ոտք էի դնում կարոտների ափը:

Դեռ աչքիս առջև են լուսամուտներից երևացող նրանց կերպարանքները: Նրանց շարժվող ձեռքերը, հարազատներից բաժանող այդ միամիտ, սրտաճմլիկ հրաժեշտները կառամատույցում, որ ինձ հետապնդեցին մինչև Բրեթոյ փողոցի անկյունը:

50.

Ամբողջ ճանապարհի ընթացքում, գիտակցելով մեր վերջին բաժանման անխուսափելիությունը, հայրս և ես լռել էինք:

Տրամվայը ծուլորեն ընթանում էր պրովանսյան դաշտավայրի միջով, հակառակի նման ծածկվում էր կապարե ամպերով:

Մայրահեղ հուզմունքից խուսափելու համար, ես աշխատում էի հիմիկվանից մտածել Մենդյան արձակուրդիս մասին: Պատկերացնում էի իմ երկար պատմությունները՝ զվարճալի մեկնաբանություններով և վերգտնված հարազատներիս լարված ու հետաքրքրասեր դեմքերը:

Մենդյան տոները հեռու չէին. մնում էր երեք ամիս, այդքան էլ չկար... ուղիղ երկու ամիս տասնութ օր:

Շաբաթը երեք անգամ պիտի նամակ գրեի մերոնց, թեև որոշել էի ամեն ինչ շգրել, մի քիչ պահել բանավոր պատմելու համար:

էքս-ան-Պրովանսում անձրև էր գալիս, երբ տրամվայն անցավ Ռենե թագավորի շատրվանը և կանգ առավ Ինը թընդանոթների շատրվանի մոտ: Դա վերջին կանգառն էր:

Կան պահեր, երբ մարդ անեծքով է հիշում նրանց, ովքեր այնքան գեղեցիկ խոսքեր են գտել գովերգելու անձրևը, որ շափշափում է դեմքիդ, հոսում վզովդ, թրջում հագուստներդ, ստիպում, որ չմփալով քայլես ջրափոսերի միջով, ցնցուղի նման թափվում է վրադ, հասնում ոսկորներիդ, ի վերջո ուսերիդ նետում սառույցե վերարկու:

Այդ օրը ես սիրով կանցնեի նրանց կողմը, ովքեր գովերգում են պարզ անձրևանոցը կամ անջրանցիկ թիկնոցը՝ երկրների արցունքներից մեզ պաշտպանողներին:

Մածկավոր դարպասից մտանք ներս, հասանք դպրոցին: Հայրս թրջված ճամպրուկը դրեց հինավուրց մենաստանի կամարների տակ և ասաց.

— Դեհ, արագ փոխվիր... լավ շորացրու քեզ:

Անձրևով ողողված այտը հպեց այտիս, ևս մի անգամ հոտոտեց ինձ, ապա ծանր քայլերով դուրս եկավ բարապանի դռնից: Սլաքածև կամարի բացվածքի միջով նայում էի նրա հետևից: Քայլում էր փողոցի մեջտեղով, քամուց մտրակված, անզգա՝ կատաղի տեղատարափի հազարավոր ծակոցներին: Առանց հետ նայելու, անկասկած գուշակում էր, որ նայում եմ իրեն, թեև բարձրացրեց, ձեռքով փոքրիկ նշան արեց ինձ,

ապա անհետացավ անձրևի թանձր վարագույրի հետևում:  
Ահա, այդ պահից հասկացա, որ այլևս ոչ մի բան չի կարող լինել առաջվա նման:

Նոր միայն դիտեցի շուրջս. աշակերտները տեղատարափից հեղեղված քառակուսի բակից փախել, վխտում էին կամարակապ սրահներում:

Ես հեշտությամբ նրանց մեջ ջոկում էի հներին, որոնք այստեղին ծանոթ լինելով, առանց դժվարության գտնում էին ցանկացած դուռն ու սանդուղքը: Երբեմն կանգ էին առնում, մի քանի կատակ փոխանակում անցյալ տարիների իրենց գործակիցների հետ: Նորերը կարծես միևնույն կաղապարից էին դուրս եկել, երկշոտ ու վարանոտ թափառում էին այս նոր աշխարհի միջանցքներով:

Ընդհանուր վերակացուի գրասենյակում, երբ անունս տվի, մի մարդ, որի աջ ձեռքը դրված էր սև ձեռնոցով պրոթեզի մեջ, հաշաց. «ննջարան 3, 153»:

Անցնելով երեք ննջարանների միջով, որոնցից յուրաքանչյուրում ութսուն մահճակալ կար, վերջապես գտա ինձ հատկացված համարը: Երկաթե անվավոր մահճակալ էր: Երբ ծանր ճամպրուկս դրեցի վրան, զսպանակները ճռճոացին:

Երկար մնացի այնտեղ, ոտքի վրա անշարժ, ընկճված իմ մենակությունից: Նախորդ տարիներին մեկուսի դասամիջոցները սրա համեմատությամբ ծիծաղելի էին, քանի որ այն ժամանակ նորից գտնում էի տունս և ավելին: Այս երեկո զրկված եմ լինելու իմ հարազատներից:

Ես երազել էի նոր կյանք, ուրեմն պետք է դիմանայի բաժանմանը:

Մերենայորեն սեղմեցի ճամպրուկիս փականը, կսփարիչը թափով հետ գնաց, ասես ինչ-որ ուժեղ զսպանակի ազդեցությամբ, միաժամանակ դուրս նետելով ամբողջ պարունակությունը, որի ծավալը հանկարծ կրկնապատկեց:

Մուրաբայի շորս խոշոր բանկաներ, որոնց պիտակները ցույց էին տալիս ծիրան, վարդի թերթիկներ, կեռաս և նարնջի մարմելադ, խրված էին անկյուններում: Հագուստեղենի բազմազանությունը հաշվի էր առնված ըստ եղանակի բմայքների. ցուրտ, շոգ, տաք, ամեն ինչ նախատեսված էր: Բրդյա գործվածքների շարքի վրա գնդասեղով ամրացված

Թղթի մակագրությունը հուշում էր «Անպայման հագնել, հենց որ մի քիչ ցրտի»: Պուլովերների միջից դուրս եկան թեյի գդալներ: Վերնաշապիկների կողմից մի ուրիշ թերթիկ հիշեցնում էր, թե անհրաժեշտ է ամեն օր փոխել սպիտակեղևներ և թե շաբաթվա վերջում հայրիկը կգա կտանի «կեղտոտը»: Ամենաչնչին ճեղքում իսկ խցկված էր կարևոր ու անկարևոր ամենայն ինչ, նախատեսված ու չնախատեսված բոլոր սարգանների համար: Ճամպրուկի խորքում աչքիս հայտնվեց Աննա մորաքրոջս դեմքը՝ ժպտուն, մտահոգ, զգոն, համառ՝ ընդդեմ ճամպրուկիս փոքրության:

— Քո ազգանունը Մալաքյա՞ն է: ˘

Գլուխս ընդոստ բարձրացրի: Մահճակալիս մոտ մի տղա ժպտում էր ինձ:

— Այո:

— Իմը վարդանյան է:

Այդ անունն ընդունեցի իբրև նախախնամության պարգև: Վերջին, այնքան հարազատ վանկը հստակ ցույց էր տալիս, որ կրում է իմ ցեղի դրոշմը: Մենք ունեինք նույն ժագումը:

Մենք՝ միևնույն երազանքների ընկերներս, կողք կողքի նստեցինք անկողնու եզրին, և նա պատմեց մեր դպրոցի, աշակերտների ուղու մասին: Նա արդեն երկրորդ դասարանում էր և իր փորձով ինձ զգուշացնում էր փոքրիկ ծուղակներից և անխուսափելի սխալ քայլերից:

Խորհուրդ չէր տալիս աչքերը երկար սևեռել ընդհանուր վերակացուի արհեստական թևին: Մաթեմատիկայի ուսուցիչը պատմության ուսուցչուհու ամուսինն էր, բայց լավ չէին իրար հետ և բաժանվելու վրա էին: Մեր ծրագրում ընդգրկված էր Մոլիերը, բայց Ֆրանսերենի մեր դասատուի բերանում Հարպագոնը դառնում էր «ՀՀՀԱՐՐՐՊԱԳՈՆ»: Նա ավելացնում էր երկու լրացուցիչ հնչուն «Հ» և երկու թավալուն «ր», ավելի ուժեղ ընդգծելու կերպարի ժլատությունն ու ազահությունը: «Ազնիվ» մարդ էր արդյունաբերական գծադրության դասատուն և «սրիկա» էին ֆիզիկայի ու քիմիայի դասատուները: Հնչեց ընթրիքի զանգակը:

Ճաշարանում սեղանակից չի կարելի ընտրել: Բաժանվելուց առաջ տվեց վերջին հանձնարարությունը: Ճաշը դրվում է հինգ հոգու համար, բայց անհրաժեշտ է պահանջել, որ ուտե-

լիքը հավասար բաժանվի, որպեսզի տեղիք չտրվի հնարավոր անարդար սովորույթների:

Այդ երեկո ես շօգտվեցի զգուշացումից:

Տաք, ջրահամ ապուրը, որի վրա ինչ-որ կանաչիներ էին լողում, ինձ անհուսալիորեն անհամ թվաց: Կարտոֆիլով ձվածեղը առաջին իսկ պատառից մնաց կոկորդումս, պանիրը չոր էր, իսկ աղանդերը հաճույք պատճառեց մի ուրիշի: Աննա մորաքրոջս համեղ ճաշերի հիշողութիւնը փակել էր ախորժակս:

Միանման ճաշացուցակները հաջորդում էին իր սր: Եվ հետո, հանկարծ ամեն ինչ ինձ թվաց ախորժակի և ընտիր: Սննդառութիւնս բնազդական պահանջը հաղթանակ էր տարել համի հաճույքների վրա, և ախորժակս բացվել էր...

Այստեղ գալու հաջորդ իսկ օրից հասկացա, որ բոք եմ դրել դպրոցական նոր աշխարհ: Օտար անուն ազգանունս ոչ մի հեզնանքի տեղիք չէին տալիս և միևնույն անտարբերութիւնով էին ընդունվում Դյուպոնը, Դյուրանը, Բերտրանն ու Մալարյանը:

Ամեն ինչ ճշտվեց առաջին հինգշաբթի օրը: Հետճաշյա ժամերը նվիրված էին ժամանցներին, մեղ առաջարկվում էր զբոսանք կամ կինոնկարի դիտում՝ օրվա հերթապահի ուղեկցութիւնով: Յուցակները կազմելու համար դասասենյակում հարցնում էին.

— Ո՞վ է ուզում կինո գնալ:


Ես անմիջապես ցուցամատս բարձրացնում էի, բայց բարձրանում էր միայն մի ձեռք՝ իմը, որ շուտով իջեցնում էի: Պարզ էր, որ տղաները գերադասում էին մի լավ կրկնել դասը, քան թե դիտել Ռոբին Հուդի արկածները, որ շկար մեր ծրագրի մեջ: Պայքարը պիտի համառու դժվար լիներ, սկսվում էր լուրջ բաների շրջանը:

Եվ այդ «լուրջ բաները» սկսեցին որոշակիորեն նահանջել ինձնից: Մինչ այդ, որպես կույրերի աշխարհում միաշքանի, հատուկ տեղ էի դրավում: Լեռաջին եռամսյակի վերջում «գերազանց» գնահատականից հետ էի մղվել «բավարարի», մի կերպ ապահովելով միջին տեղ:

Մուլիերը փայլուն թվանշաններ էր նվիրել ինձ, բայց հավասարումներ կազմելը, ինտեգրալային և դիֆերենցիալ հա-

շիւները՝ իրենց կայուն գործակիցներով, բացահայտ թշնամություն էին ցույց տալիս:

Անհրաժեշտ էր լինում պարապել օրեկան տասնհինգ ժամ, այդ ասպարեզում ավելի ընդունակ դասընկերներիցս զգալիորեն ավելի շատ, որպեսզի կարողանայի փոխադրվել երկրորդ դասարան: Բայց արձակուրդը, մեծ, իսկական արձակուրդը, այն, որ շի հաշվվում հակառակ կարգով, արդեն շատ մոտիկ էր:



Ամբողջ տարին և բոլոր եղանակներին հայրս երբեք բաց չի թողել իր շաբաթական այցելությունը: Ինձ երկար սպասում էր ընդունարանում կամ ցանկապատի մոտ, որպեսզի մի երկու խոսք փոխանակի հետս, հանձնի նոր արդուկված մաքուր սպիտակեղենս և մեր խմորեղեններով լցված տուփը: Եվ գոհ հեռանում էր, երբ ասում էի. «Ամեն ինչ շատ լավ է, հայրիկ»: Մայրս կանոնավորապես գրում էր ինձ, Աննան ու Գայանեն նույնպես մի քանի տող իրենց կողմից էին ավելացնում: Թվում էր, ամբողջ ընտանիքը մի քիչ այցելում էր ինձ:

Արձակուրդին նախորդող նախավերջին շաբաթ օրը ես զարմացա մեր սովորական ժամին հորս փոխարեն տեսնելով ատաղձագործ Վազգենին: Նրան շատ լավ էի ճանաչում: Նիհար, ձողի նման ձիգ մարդ էր, միշտ զվարթ ու սիրալիր:

Ինձ միշտ արտասովելու աստիճան ծիծաղ էր պատճառում նրա սուր սուպրանոն: Տղամարդու կրծքից դուրս եկող կանացի ձայնին միանում էին բուն մարսելյան շեշտերը:

— Այս կողմերում պիտի ապրանք հանձնեի, մտածեցի, թող մեկ էլ հայրդ չգա:

Վազգենը որոշել էր, որ իր տղան, այն ժամանակ հազիվ հինգ-վեց տարեկան կլիներ, անպայման պիտի բժիշկ դառնա:

— Բայց ոչ սովորական բժիշկ: Ոչ գրիպի հետևանքով հազ ունեցող հիվանդներ բուժող, կամ շնչին փորացավի համար կանչվող բժիշկ:

Որդու նվաճելիք բարձունքները ավելի հստակ նկարագրելու համար նա ավելացնում էր.

— Նա կդառնա այնպիսի բժիշկ, որ հիվանդ է ընդունում հերթագրութեամբ:

Հիշում եմ, որ սա բավական ծաղրանքի տեղիք տվեց նույնիսկ նրան շատ սիրող բարեկամների կողմից: Այլևս նրա ընտանիքի որպիսութունը չէին հարցնում, միայն հեզնանքով հետաքրքրվում էին «բժիշկ որդու» առողջութեամբ:

Եվ իսկապես, մի օր որդին, դուրս գալով հոր ցնորքներից, ուղղակի դարձավ բժիշկ: Այսօր իր մասնագիտութեան ասպարեզում համաշխարհային համբավի հասած պրոֆեսոր է: Արդյո՞ք հիշում է այժմ բակի խորքում տեղավորված այն խավար արհեստանոցը, որ հաճախ շփտեր ինչ է կիրակին: Հիշո՞ւմ է արդյոք դազգահին կոացած այն մարդուն, որ ոանդայի մի շարժումով այնքան տաշեղ էր դիզում, այն հորը, որի մազերին նստած էր լինում սղոցված տախտակների թեփր, և որը մշտապես հետը ման էր ածում փայտի դուրեկան հոտը: Վերջապես հիշո՞ւմ է արդյոք այն սևեռուն միտքը. «Մի օր որդիս կդառնա բժիշկ՝ ընդունարանով»:

Որդին հրավիրված էր Նյու-Յորք թե Բոմբեյ, երբ հիվանդանոցային մահճակալի վրա, Օթել-Դիյոյի մեծ, ընդհանուր հիվանդասենյակում հոգին ավանդեց ատաղձագործ Վազգենը, և պրակտիկանտ բժիշկը փակեց նրա աչքերը:

Ուսումնական տարվա վերջին կապոցը նորից Վազգենն էր բերել:

— Ինձ թվում է, — ասացի, — հիմա շատ հաճախ եք ապրանք հանձնում այս կողմերում: Շուտով անհնարին կլինի էքս-ան-Պրովանսը պատկերացնել առանց ձեզ... Թե՞ հայրս մոռացել է ինձ:

Նա բաղաձայն ծիծաղեց.

— Օհ, խեղճ տղա: Ընդամենը երկու անգամ չի եկել հայրըդ: Նախ եթե անգամ ուզեր մոռանալ քեզ, չէր կարողանա շատ պարզ, մեծ և անառարկելի պատճառով:

Ընդհանրապես, երբ Վազգենն օգտագործում էր բառեր, որոնց իմաստը չէր հասկանում, նշանակում է, պիտի շուտով գաղտնիք բացեր: Հայացքը գցում էր շուրջը, համոզվում, թե իրեն ուրիշ մարդ չի լսում, պինդ բռնում էր թևդ, քեզ քաշում

իր կողմը, գլուխը մոտ բերում և «Թա-քուն» ականջիդ խո-  
նոչի մեջ դնում գաղտնիքը:

— Հիշո՞ւմ ես ձեր երկու լուսամուտների արանքում կախ-  
ված պատի օրացույցը: Այն հաստափոր օրացույցը, որից  
օրական մի թերթիկ են պոկում՝ ամսաթիվը փոխելու համար:

— Այո, հիշում եմ... Ի՞նչ է եղել օրացույցին:

— Ուրեմն, այն օրը, երբ դու հեռացել ես տնից ուսումդ  
շարունակելու, հայրդ օրացույցի մեջտեղը մեխ է խփել, որ  
ժամանակը կանգնեցնի քո գնացած օրվա վրա: Եվ քանի  
որ ժամանակը սեպտեմբերի 30-ից այն կողմ չէր շարունակ-  
վել, ես հորդ ասացի. «Այս ի՞նչ է, պարոն Մալաքյան, ձեր  
օրացույցը տեղից չի՞ շարժվում»: Նա զարմացավ, անփույթ  
ձևացավ, իբր չի նկատել, բայց թույլ շտվեց օրացույցին  
ձեռք տալ: Հետո, մի օր, երբ հայրդ տանը չէր, մայրդ ու  
մորաքույրերդ ամեն ինչ բացատրեցին:

Դուան շեմից վազգենը հետ շրջվեց, մի անգամ ևս պատ-  
վիրեց.

— Հանկարծ հորդ չպատմես ասածներս... սա սիրո  
գաղտնիք է և ոչ մեկի գործը չի:

Քննությունների լարումից ազատվելուց հետո ծանր ճամպ-  
բուկա փետուրի նման թեթև էր թվում ինձ, երբ թե առած  
թուշում էի դեպի ուրախ հանդիպումներ և ազատագրելու դեռևս  
սեպտեմբերի 30-ից բանտված, մեխված օրացույցը:

Մտածում էի, որ, առանց վազգենին դավաճանելու, առի-  
թը բաց չէի թողնի ձեռ առնելու քմահաճ օրացույցի ծուլու-  
թյունը:

## 51.

Պատի օրացույցը տեղում էր՝ ժամանակը կասեցնող մեծ  
մեխով: Պոկովի հաստափոր զանգվածի վերևում մի աղջնակ,  
ցորենագույն, ոսկեփայլ մազերով, սպիտակ-կարմիր վան-  
դակավոր զգեստով, կրծքին էր սեղմել դաշտային ծաղիկների  
երփներանգ փունջը: Աղջնակը կապույտ աչքերը սևեռել էր  
ինձ մի տեսակ շաբլոն ժպիտով, որ անշուշտ ձեռք էր բերվել  
քաղցրավենիի կամ լուսանկարչական գործիքի օբյեկտիվից  
դուրս թռչող ծիտիկի խոստումով:



«ՄԱՆՈՒՇԱԿԻ ԿԱԹՈՎ» կրեմը համեստորեն հիշեցնում էր, թե իր շնորհիվ կարելի էր ձեռք բերել մանկական մաշկի թարմություն:

Իմ վերադարձը ես պատկերացրել էի ավելի հաղթական և ավելի ուրախ, բայց ընթանում էր տարօրինակ կերպով դանդաղեցված ձևով: Անշուշտ, եղան ջերմ գրկախառնություններ, բայց նույնիսկ այդտեղ ինձ թվաց, թե այտերիս հըպովոդ նրանց այտերը սովորականից ավելի երկար էին մնում, թվում էր, խուսափում էին աչքերիս նայել: Այս ողջագուրանքների ընթացքում, երբ ամեն մեկից իր հոտն էր գալիս, ես չէի զգացել Աննա մորաքրոջս հոտը: Ըստ երևույթին իր կաթսաներով զբաղված՝ չէր իմացել գալս:

Վազեցի խոհանոց: Տապակի մեջ, ախորժալի բույր արձակելով, եփվում էր Պրովանսի կանաչիներով համեմված դառան միսը: Մարմանդ կրակի վրա տապակվում էին սունկը, սոխը, պոմիդորն ու կարտոֆիլը, բայց ոչ ոք չէր հսկում դրանց եփվելուն: Աննա մորաքույրս այնտեղ չէր:

— Աննա մորաքույրս տանը չի՞, — գոռացի խոհանոցից:

Եվ հարցս անհեթեթ թվաց ինձ: Աննա մորաքույրը առհասարակ դուրս չէր գալիս: Առավել ևս իմ գալու օրը չէր կարող տեղ գնալ:

Ոչ ոք չպատասխանեց:

Երբ ետ դարձա արհեստանոց-սենյակը, մերոնք կռացել էին կարի վրա, բայց նրանց ձեռքերն անշարժ էին:

— Ո՞ւր է Աննա մորաքույրը:

Այդ պահին միայն նկատեցի Մայրիկի և Գայանեի այտերից գլորվող արցունքները: Հայրս փշրված ձայնով ասաց.

— Մեզ դժբախտություն է պատահել, մանչս... Մեր Աննան հեռացել է մեզնից:

— Հեռացե՞լ է... ինչի՞ համար... ո՞ւր է գնացել.

Այս երկրորդ հիմար հարցը, — Աննա մորաքույրը երբեք չէր կարող մեզ թողնել ուրիշ տեղ գնալ, — իմ կողմից թերևս ժամանակ շահելու համար էր, որպեսզի կարողանայի հաշտվել անուղղելի հետ: Իմ այս առաջին, իսկական տառապանքի մեջ աշխատեցի հետ մղել կրքոծքս ծակող երկար, սուր ասեղի սուր, սոսկալի, անտանելի ցավը:

Ես, որ հայտնի լացկան էի և արցունք էի թափում որևէ

չնչին, տխուր պատմութիւն համար, կարկամել մնացել էի արտասուքիս գեղձերի մեջ սառած արցունքներով, գլխիս մեջ արձագանքվող հարվածներով, տակնուվրա սրտով, որ փըս-խելու ցանկութիւնն էր առաջացնում:

Այս ընկճված վիճակում ամբողջ հոգով ցանկանում էի, որ ոչ ոք չմոտենա ինձ, չգրկի, չփորձի համբուրե՞լ, մանա-վանդ շաշխատի ամոքել հոգուս մորմոքն ու ցավը:

Արդյոք գուշակե՞լ էին իմ թաքուն դիմադրութիւնը: Ոչ ոք չմոտեցավ, չփորձեց այդ անօգուտ շարժումը, որ իբր սփո-վում է մեծ վշտի պահին:

Այս էր ուրեմն մահը: Մինչև այդ առավոտ մահը իմ աչ-քին պարզ մի պատահար էր, որ վերջ էր դնում առողջ մարդ-կանց կյանքին: Հիվանդութիւնն էր, որ պատահում էր միայն հարևաններին կամ մարդկանց, որոնց հազվադեպ էի տես-նում և այլևս չէի տեսնելու: Եվ ամեն ինչ վերջանում էր սև պատաններով պատված և ծաղիկներով ծածկված գեղեցիկ կառքով, որ քաշում էին զույգ ձիերը, և որին հետևում էին շատ մարդիկ: Առաջին շարքերում սևազգեստ և տխուր, ապա, ըստ իս, թափորի վերջում՝ ավելի և ավելի պակաս տխուր:

Այդ առավոտ ինձ շանթահարած ցավի մեջ, կառքերի, ծա-ղիկների, մեղրամոմերի և խունկի արարողութիւնն վերջում, ես հայտնագործեցի «վերջնական» հասկացութիւնը:

Մարած ձայնով հարցրի.

— Ինչպե՞ս պատահեց:

Հայրս սկսեց պատմել, բայց հեկեկանքը խեղզում էր նրան, և շարունակեց մայրս, հետո Գայանեն խեղճ-խեղճ վերջացրեց պատմութիւնը:

Կյանքի և մահվան արանքում երկար հիվանդութիւնն չէր եղել: Մի երեկո, սրանից երեք շաբաթ առաջ, ասել էր. «Այն-քան էլ լավ չեմ զգում: Ավելի լավ է գնամ պառկեմ»: Եվ բո-լորից ուշ պառկելու իր սովորութիւնն համաձայն, սկսել էր սենյակից սենյակ անցնել: Որոշել էին լույսը բացվելուն պես բժիշկ կանչել:

Բայց գիշերը, այն սենյակում, ուր առաջ քնում էինք եր-կուսով, նա թաքուն հրածեշտ էր տվել կյանքին, մեն-մենակ, լուռ ու զուսպ, առանց որևէ մեկին արթնացնելու:

Մահացել էր, ինչպես վայել էր Աննա մորաքրոջը:

Վաթսուներկու տարեկան էր:

Նոր հասկացա, թե ինչու էր վերջին երկու շաբաթվա ընթացքում ատաղձագործ Վազգենը, ինչպես ինքն էր ասում, փոքրիկ բեռնատարի մի շնչով, բերում իմ սպիտակեղենը հորս փոխարեն, որը չէր կարողանա վիշտը թաքցնել:

Բայց ինչո՞ւ ինձ ոչինչ չէին ասել:

— Ինչո՞ւ ինձ չէիք հայտնում:

— Մանչս, — պատասխանեց հայրս, — ի՞նչ իմաստ ուներ քեզ կտրել քննություններից և ենթարկել նույն դասարանում մնալու վտանգին: Դու գիտես, այդ բանը նրան դուր չէր գա: Եթե ուզում ես մի լավ բան անել, երբեք մի մոռացիր նրան: Եվ պասկերացրու, դա ավելի կարևոր է, քան հուղարկավորությանը ներկա լինելը:

Անկասկած, նա նույնպես ունեցել է անթառամներով ծածկրված դիակառք, հրաժեշտի աղոթք, գունատ մոմերի տարտամ լույսի մեջ մահերգ երգող խոժոռադեմ մարդիկ:

Հանկարծ ուժեղ ծարավ զգացի, ուզեցի մի մեծ բաժակ սառը ջրով մաքրել կոկորդս այրող կրակը:

Մուտքի դռան մոտով անցնելիս, շեմին հառնեց նրա փոքրիկ, վախվորած կերպարանքը՝ իմ հսկայական ծանր ճամպորուկի առջև, որ մեկնումիս օրը զայրացրել էր ինձ:

Տնից հեռանալիս, ինձ թվում է, նրան ավելի երկար պահեցի գրկիս մեջ, որ ների ինձ: Թեև... լավ չեմ հիշում, դա այդ անգամ էր, թե ուրիշ օր:

Խիղճս սկսեց տանջել, որ չեմ իմացել, թե մայրիկներս բավական թույլ են, և մի առավոտ հանկարծ կարող եմ արթնանալ առանց նրանց և ուշացած անօգուտ տրտնջալ. «Եթե իմանայի»:

Խոհանոցում, որ փայլում էր անբիծ մաքրությամբ, ինձ թվաց, թե լսում եմ նրա ձայնը.

— Շատ սառը մի խմիր:

Աչքերս կանգ առան թարեքին դրված տասներկու նուրբ հախճապակյա սուրճի գավաթների վրա, որոնք պահվում էին հյուրերի համար:

Մի օր, պիտի որ այն ժամանակ տասը տարեկան լիւնեի, Աննա մորաքրոջս հազվադեպ բացակայության ժամա-

նակ, երբ Մայրիկը նրան տարել էր ակնաբույժի մոտ, մեր տուն մի բարեկամ էր եկել: Հայրս նրան հրամայել էր բարի գալուստի ավանդական սուրճը: Հյուրի գնալուց հետո հայրս սուրճի գավաթն ու ափսեն լվանալիս ինձ խոհանոց կանչեց, որ միասին խաղ խաղանք Աննա մորաքրոջս գլխին:

— Երբ մորաքույրը վերադառնա,— ասաց նա,— ըստ իր սովորության պիտի ման գա իր տերության սահմաններում՝ ստուգելու, թե արդյոք իր բացակայության ընթացքում որևէ բան չի փոխվել:

Հայրս խոստովանեց, թե երբեմն դիտավորյալ կերպով փոխում է սրուշ առարկաների տեղերը, որ լսի. «Սպասիր, սրա տեղը փոխել են», կամ՝ «Այսինչ բանը չեմ գտնում»: Բայց հորս ամենից շատ զարմացնում էր Աննայի գուշակելու խորհրդավոր ձիրքը. ներս մտնելուն պես, շշմեցուցիչ արագությամբ, ուրախ հայտարարում էր.

— Ահ... այսօր մարդ է եկել տուն:

Եվ ամեն անգամ, հայտնի չէ ինչպես, ճիշտ էր դուրս գալիս:

Հայրս խոսելու հետ խնամքով սրբեց գավաթը, դրեց նախկին տեղը, ափսեն նույնպես, և մի կաթսայի կոթը, որ ձեռքի ակամա շարժումով տեղը փոխել էր, միլիմետրի ճշգրտությամբ գրավեց առաջվա տեղը:

Այդ երեկո սեղան նստելիս ես պիտի Աննա մորաքրոջը հարցնեի, թե արդյոք գոհ է ակնաբույժից: Հենց որ հաստատական պատասխան տար, հայրս պիտի մտներ խաղի մեջ. «Լավ է, սիրելի Աննա, շատ ուրախ ենք քեզ համար, թե չէ տեսողությունդ բավական թուլացել է»: Եվ դրանից հետո պիտի հայտնեինք, թե կեսօրից հետո հյուր ենք ունեցել, բայց այս անգամ ինքը չի գուշակել:

Հայրիկի հետ մեր փոխանակած արմունկի հարվածները նշանակում էին, թե քույրերը եկան: Իհարկե մենք Գայանեին չէինք ներգրավել խաղի մեջ, որովհետև «գաղտնիք» պահելու կողմից թույլ էր:

Նոր էլնք անմեղ հրեշտակի տեսք առել, երբ դուռը բացվեց և ժպիտը դեմքին հայտնվեց Աննա մորաքույրը.

— Ո՞վ է եկել:

Երբ հարցը շփոթեցնում է, միշտ հարկավոր է պատաս-

խանը սկսել հարցը կրկնելով, որ ժամանակ ունենաս շարունակութիւնը գտնելու: Հայրս այդպես էլ արեց:

— Ո՞վ է եկել... ո՞վ պիտի գա, սիրելի Աննա, ոչ ոք:

Աննա մորաքույրը հաստատեց իր առաջին տպավորութիւնը. նա հրաշալի գիտեր, որ մարդ է եկել մեր տուն:

— Սիրելի Հակոբ,— ասաց նա,— երևի այս տան մեջ կան բաներ, որ ուզում եք ինձնից թաքուն պահել, բայց ցավալի է, երբ ուզում եք ինձ ստիպել կուլ տալու սուտ ու սխալ բաներ: Ավելի ցանկալի կլինեն, եթե անկեղծորեն ասեիր. «Այո, մարդ է եկել, բայց դա քեզ չի վերաբերում»:

Եվ վիրավորված արժանապատվութեամբ ուզում էր դուրս գալ սենյակից:

— Բայց, վերջապես, ինչպե՞ս ես իմանում այդ բոլորը, Աննա: Ի՞նչ է, ոգիներ ես կանչում, համայիլներդ ես հանում, «արբակադարաներով» կախարդական նշաններ ես բանեցնում, մոզական գավազանդ ես շարժում, թե կռանում ես ապակյա գնդի վրա և գալիս մեզ ասում ես. «Ահա, այսօր մարդ է եկել»:

Եվ հանկարծ շրջվելով իմ կողմը, հայրս ասաց.

— Մորաքրոջդ ասա, որ այսօր ոչ ոք չի եկել:

Աննա մորաքրոջ աչքերը ճշմարտութիւնն էին պահանջում, իսկ հայրիկինը՝ հարգանք գաղտնիքի հանդեպ:

Ինձնից պահանջվող այդ հակասական առաքինութիւնների, այդ երկու ծայրահեղութիւնների արանքում, ես ընտրեցի միջին ճանապարհ և մեջ դրեցի իմ զիջումը.

— Կարծեմ մարդ չեմ տեսել: Այսինքն՝ ես ներթափում էի, այնտեղից համարյա բան չի լսվում:

— Իհարկե,— ասաց Աննա մորաքույրը:— Բնակարանի ներսը, մուտքի դռնից երկու և կես մետր է և դժվար է լսել թմբկաթաղանթ պատուող մեր զանգի ձայնը:

Հետո հայացքը սևեռեց հորս.

— Յավալին այն է, որ դու այս երեխային էլ ես սասնակից դարձնում քո ստին:

Բավական ժամանակ էր Գայանեն կարի մեքենայի առաջ նստած ծիծաղից խեղդվում էր, մինչև որ հարցաքննութեան հերթը հասավ նրան.

— Իսկ դո՞ւ, Գայանե, երևի դու էլ ոչինչ չես լսել, և ուրվականը տուն է մտել պատի միջով, սուրճ է խմել, մի քիչ նստել, գնացել է:

Այ, այ, այ: Նա արդեն սկսել էր հարձակվել մեր պաշտպանական ամրոցի ամենաթույլ կետի վրա: Հայրս փորձեց առաջն առնել.

— Գայանեն բան չի լսել, որովհետև լսելու բան չի եղել:

— Թույլ տուր ինքը խոսի: Տեսնենք մինչև ուր եք հասցնելու ձեր ծածկամտությունը:

Բայց հակառակ մեր վախին, Գայանեն սքանչելի դիրք գրավեց, նրա վկայությունը ոչ մեկի համար էլ նպաստավոր չէր.

— Ես ժամանակ չունեմ խառնվելու ձեր կռիվներին:

Այդ լեզվակովի մեջ «հյուրը» Աննա մորաքրոջ աչքին հսկայական շափեր էր ձեռք բերել: Մինչդեռ մեզ հետաքրքրողը մի բան էր. պարզել նրա գուշակությունների մեխանիզմը: Ինչպե՞ս էր կարողացել այդքան վստահորեն հայտնաբերել անծանոթին, երբ մենք ոչնչացրել էինք բոլոր հետքերը:

Ահա, այդ հույսով հայրս փորձեց մի գրոհ ևս.

— Ինձ լավ լսիր, Աննա: Դա քո ենթադրությունն է, թե մարդ է եկել, թեկուզ չի եկել, բայց ենթադրել միշտ կարելի է: Քո ենթադրությունը, թե մարդ է եկել...

Նա զգաց ծուղակը և կտրեց հայրիկի խոսքը.

— Ես ենթադրելու կարիք չունեմ, քանի որ մարդ չի եկել:

Նա արդեն դիմադրում էր վհուկի կերպարին, որ հայրս ստեղծել էր, որպեսզի նրան խոստովանեցնեն, թե որտեղից է ամեն ինչ իմանում:

Այս անգամ Աննա մորաքույրը դուրս եկավ սենյակից:

Երեկոյան ընթրիքի ժամին, իհարկե, խոսք չեղավ ոչ ակնաբույժի, ոչ էլ ակնոցի մասին, բայց ամանեղենը լվալու ժամին մտա խոհանոց, Աննա մորաքրոջ մոտ:

— Աննա մորաքույր, դիտե՞ս, քիչ առաջ սուտ ասեցինք, որ մի քիչ ծիծաղենք: Բայց ինձ, միայն ինձ, եթե խոստանամ պահել քո գաղտնիքը, կասե՞ս, թե ինչից գուշակեցիր, թե մարդ է եկել:

Մորաքույր Աննան ժպտաց, ապա ցուցամատը ուղղեց թարեքին, որի վրա շարված էին մեր սուրճի տասներկու գա-

վաթիսերը: Բոլոր բաճակները դարձված էին նույն կողմը՝ ձախից աջ... բացի մեկից... հայրիկի լվացած գավաթից: Նրա բռնակը դարձված էր աջից ձախ:



Ամենուրեք իմ շուրջը ցրված էր Աննա մորաքույրս:

Նրա գուրգուրանքի փշրանքները հավաքող իմ հայացքը թափառում էր առարկայից առարկա, որոնք հիշեցնում էին նրան: Որևէ անզգա ամանի խորքից հառնում էր արձակուրդի հիշողությունը, խոշոր կաթսայի մեջ դեռ բեկորներ կային նրա անձնվիրությունը պարուրված մանկությանս տարիներից, իսկ թարեքներից ժայթքում էին հազարավոր երջանիկ դեպքեր մեր միատեղ կյանքից:

Ես հրեցի մեր երկու մահճակալանոց ննջարանի դուռը:

Ահա այստեղ էր, որ մի առավոտ, չգիտեմ ինչ առիթով, կատակով ասել էի.

— Օհ, ի վերջո, ես ընդամենը քո քրոջորդին եմ:

Նա գունատվեց սիրո այդ աստիճանակարգում իրեն հատկացված հեռավորության համար: Նրա շրթունքները դողդողում էին, երբ պատասխանեց.

— Բայց... բայց դու մեր որդին ես...

Այն ժամանակ բարձր քրքջալով կամթեցի նրա այտերը՝ հրճվալի գոռալով, թե նա «հումորի զգացողություն» չունի: Ես նոր էի սովորել այդ արտահայտությունը, որ շատ հաճախ փրկում է միջակ կատակները:

Այտերի վերադարձող գույնի հետ ասաց.

— Չեմ հասկանում այդ բառը, բայց եթե դու ունես քո ասած «բանի» զգացողությունը, ապա դրանով ինձ չես զարմացնի:

Քանի-քանի ամառային տոթակեզ գիշերներ ենք անցկացրել մեր այս սենյակ-հնոցում: Աշխատելով քնել, ես շուտ ու մուռ էի գալիս անկողնուս մեջ խոր հառաչելով և իսկույն լսում էի Աննա մորաքրոջս ձայնը.

— Քնած չե՞ս:

— Ոչ:

- Կուզե՞ս ջուր բերեմ:
- Ոչ: Մարավ չեմ:
- Կուզե՞ս մի քիչ խոսենք:

Այո... Այդ մեկը ուզում էի: Եվ սկսում էինք երկար-բարակ շաղակրատել, մինչև վերջին հարցը մնար անպատասխան, որովհետև արդեն քնած էի լինում:

Նրա անկողնու առջև, այսուհետև դատարկ անկողնու առջև, սկսեցի երեխայի նման խոշոր արցունքներ թափել:

Առաջին անգամ մահը և արմատահան բառերը նույնանում էին. արմատահան էր արվել իմ Աննա ծառը, ամեն տեղ տարածված իր ճյուղ թևերով, հոգատարությունից մաշված սրտով:

Աննա մորաբույս անհասնելից և մթերքից ազատագրված ճամպրուկս հետագա տարիներին արդեն թեթև էր էքսի և Մարսելի ճանապարհներին:

Ես իմ քաղաքը, իմ տունն էի վերադառնում Զատիկի ու Մենդյան տոներին և մեծ արձակուրդին:

Ամեն վերադարձիս իմ քնքուշ Աննա մորաքույրը գաղտնի դուրս էր գալիս իր գիշերից, գալիս կանգնում իմ դիմաց՝ հազարավոր հիշողութայիններով ծանրաբեռ: Բացակայությունը երբեք մոռացման պատճառ չդարձավ:

Այսօր էլ, երբ մի քիչ հոգնել եմ կյանքից, գնում նստում եմ նրա մոտ, և մենք արտասովելու աստիճան ծիծաղում ենք, որ խարել ենք գերեզմանափոր մահին, քանի որ...

Նա հարյուր քսանութ տարեկան է... Եվ լավ է զգում:

52.

Ամեն կողմում հինգ շենքից ավելի շկար, բայց շքեղորեն անվանվում էր բուլվար, ի պատիվ ումն Թեոֆոր Թյուրնեի, որի դործունեության մասին երբեք ոչինչ չեմ իմացել:

Թեք լանջով և սոսիներով երիզված այդ փողոցի № 3 տան վրա կանգ առավ բնակարանը փոխելու մեր ընտրությունը:

Պարոն Թյուրնեի նման, որ ընդամենը մի տասնյակ տներով ուներ իր «բուլվարը», մենք նույնպես այժմ ունեինք մեր «խանութը», «Շապկի անհատական պատվեր» ցուցանակով:



Խանութի խաբուսիկ ճակատի հետևում հազիվ մի քիչ տեղ էր մնում կարի երկու մեքենաների և ձևելու սեղանի համար: Այդ աշխատատեղը միջնորմով բաժանել էինք, որ հետևում մի քիչ տարածություն խնայենք «ննջասենյակի» համար:

Այնտեղ, բազմոց-բազկաթոռի վրա քնում էր հայրս: Դա շենքի հիմնասյատն էր և խանգարում էր ավելի առաջ գնալ: Թեև բաց էին սրել մի ճեղք և ավելացրել ապակեպատ «խոհանոցիկը», որ շենքից դուրս էր գալիս դեպի նեղ բակը:

Հանկարծ ամեն ինչ կերպարանափոխվում էր, այսպես կոչված «կրկնասանդուղքով», մի փոքրիկ պտուտաձև սանդուղք, որով շտապելու դեպքում կարելի էր բարձրանալ միայն կողքանց: Այն ժամանակ մեր առջև բացվում էին երկու խցեր, ուր գտնվում էին մեր անկողինները: Այստեղ, զլուխներս առաստաղին շխփելու համար, ներս մտնելիս պիտի անպայման կռանայինք:

Չնայած խանութի մետաղյա վարագույր-փակն առատորեն յուղում ու ձեթում էինք, միևնույն է, սա ոլորվում ու բացվում էր այնպիսի դժոխային ճռինչով, որ ամբողջ թաղն իմանում էր, թե երբ ենք քնում կամ արթնանում: Քանի որ աշխատում էինք մինչև ուշ գիշեր և շատ վաղ էինք արթնանում, տարածամ այդ դղիրդը միշտ էլ թաղի լուսթյունը խախտում էր անհարմար ժամերի:

Հիմա Աննա մորաքրոջ փոխարեն հայրիկն էր կանգնում ջեռոցի առջև և այնպիսի խոհարարական հրաշքներ էր գործում, որ միշտ սեղանը լի էր լինում առանցյակ ճաշատեսակներով: Այդ պահին նրա երջանկությունը սեղանակիցների դեմքին հաճույքի արտահայտություն տեսնելն էր: Միայն այդ ժամանակ էր նստում և, կերակուրների պատրաստման ընթացքում ախորժակը կորցրած, պատառաքաղի ծայրով համտես էր անում, որ մտածի, թե մյուս անգամ ինչ բարեփոխություն կարելի է մտցնել:

«Քաղաքի կենտրոնում» բնակվելը նպաստում էր մեր այցելուների շարքերի խտացմանը, մանավանդ, երբ կազմվեց «Արմենիա» կոչվող քսանչորս հոգիանոց երգչախումբը: Երգչախմբի ղեկավարը հանձարեղ Կոմիտասի վերջին սանն էր, որ հատուկ ժամանել էր Բրյուսելից՝ պատրաստելու «Տարեկան մեծ համերգը»: Այդ «մեծ» որակումը, որ միշտ ուղեկ-

ցում էր հայկական բոլոր երեկույթներին՝ դրանք լինեին «պարային» թե «մշակութային», սկսել էր արդարացնել իրեն կիսամասնագիտականությամբ, որ կամաց-կամաց փոխարինում էր նախկին սիրողականությանը:

Հանդիսությունը տեղի էր ունենում Մարսելի «Պլեյելի» «Մասսիլիա սրահներում»:

Այդ առիթով մեր խանութը վերածվում էր տոմսերի նախնական վաճառքի գրասենյակի: Տոմսերի դարսերը սահում էին վերնաշապիկների ու պիժամաների տակ, իսկ խանութի հետնամասը դառնում էր կազմակերպության կենտրոն:

Եվ Ֆրանսիային տեղյակ պահելու հույսը, թե իր հյուրերն-կալած ժողովուրդն ունի հազարամյա մշակույթ, բավարարություն էր գտնում համերգին՝ քաղաքապետի պարոն օգնակա-նի ներկայությամբ: Եվ շնորհիվ «Լը պլատի մարսելյե» («Փոքրիկ մարսելցի») թերթի հատուկ թղթակցի, որ գալիս նախօրոք վերցնում էր համերգացանկն ու անհետանում, երբեմն, ընդամենը տասը տող նվիրելով «այդ գեղեցիկ, բարձրարվեստ» համերգի նկարագրությանը:

Բացի այս եռանդուն գործունեությունից, հայրս մշտապես առանձին ուշադրություն է նվիրել եկեղեցուն:

Հավատա՞լ, թե շահավատալ: Դա շեքսպիրյան հարց չէր, որ հայը ուղղում էր իր խղճին:

Ոչ հավատացյալը գալիս էր եկեղեցում որոնելու իր ինքնությունը, ավանդույթները, ակունքների ջերմությունը: Հավատացյալը այդ ամենի հետ ակնկալում էր հանդիպում աստծո հետ: Եվ երկուսն էլ լսում էին վսեմաշուք պստարագը, որ արցունքներ էր քամում աղոթքի խստության միջից, դառնում քնարական, վերափոխվում տոնախմբության, քանի որ օրհնաբանում էր տիրոջ փառքը:

Երկար ժամանակ, վերևի խցիկում, որպես պարապմունքներիս երաժշտական ֆոն, ներքևից լսվում էին հորս երգած թախծալի «Տեր ողորմյաները» կամ ուրախ «Օվսաննաները»:

Հանկարծ արտասանողուղքի գլխից Մայրիկը հարցնում էր.

— Մանչս, քեզ խանգարո՞ւմ ենք:

— Ոչ, Մայրիկ, ես բան չեմ լսում:

Մայրս եզրակացնում էր, եթե ես գուշակում եմ հավանա-

կան խանգարման լսողական բնույթը, նշանակում է լսում եմ:  
Այն ժամանակ հորս ձայնը կտրվում էր, ինձ թողնելով քի-  
միական տարրերի սառնության մեջ:

53.

Պրովանսի Մենդյան մսուրները զարդարող արձանիկների  
նման, Թյուրեն բուլվարի մեր փոքրիկ աշխարհում կար մի  
անձնավորություն, որի նմաններին գյուղերում «ծուռ» են  
անվանում, իսկ հարավի լեզվով՝ «պակաս»: Նրա իսկական  
անունը Նազարեթ էր:

Մեր խենթը բավական սնափառ երևակայություն ուներ:  
Նա մի օր ֆրանսիական հանրապետության նախագահն էր՝  
գլխին ցիլինդր, մի ուրիշ օր Մարսելի գլխավոր արքեպիսկո-  
պոսն էր՝ սև, լայն սքեմով պարուրված, վզին՝ խաչ, և օդի  
մեջ մեծ խաչեր գծելով օրհնում էր ընտանիքը:

Տարիների ընթացքում նրան տեսել էի մեկ որպես պատե-  
րազմներ վարող գեներալի, մեկ որպես դեսպանի՝ կուրծքը  
շքանշաններով զարդարուն, մեկ՝ Հայաստանի Միացյալ Նա-  
հանգների ներկայացուցչի կամ փաստաբանի, որ անմեղներ  
է փրկում կառափնարանից:

Խանութի մեջտեղում կանգնած երկարաշունչ ճառեր էր  
արտասանում, որտեղ յուրաքանչյուր բառ ուներ որոշակի  
իմաստ, բայց հենց այդ բառերը շարունակվում էին, ամեն  
ինչ դառնում էր անկապ, անիմաստ:

Եթե Նազարեթը կերպարանափոխված չէր լինում, ապա  
միշտ հազին լինում էր ընտիր կոստյում, որը երեք շափ մեծ  
էր վրան կամ երկու շափ՝ փոքր, նայած համայնքում ով էր  
մեռնում: Ժամանակ առ ժամանակ նրան էին նվիրում մահա-  
ցած մարդկանց հագուստները: Այս դեպքում, «քաղաքացու»  
իր դերի մեջ մտած, վարում էր տիեզերքի կարևոր հարցերին  
նվիրված փիլիսոփայական դրույթներ: Եվ հայրս, այնքան գի-  
տակից այդ մարդը, ամենայն լրջությամբ ու զսպվածությամբ  
հետևում էր նրա բոլոր ցնդաբանություններին:

Մի օր, երբ Նազարեթն ազատել էր աշխարհի բոլոր բան-  
տարկյալներին և նրանց փոխարեն ձերբակալել բազմաթիվ

ուրիշ մարդկանց, և բանտերում տեղ ու դադար չկար, ես մեր սիրելի խենթի գնալուց հետո հորս հարցրի.

— Համենայն դեպս, ինչպե՞ս ես կարողանում առանց ծիծաղելու լսել այդ խանգարված ուղեղի շաղակրատանքները:

— Գիտես ինչ, իմ կարծիքով Նազարեթի վրա ծիծաղողները ուզում են համոզվել, թե իրենք նման չեն նրան: Կարծես այդպիսով ստանում են «Նազարեթից նվազ ցնդած» լինելու մկայական: Միայն այդ շափանիշով... անշուշտ, կստանան: Եվ մինչ նրանք Փարանդուլ են պարում, կատակով երգելով «Սքանչելի մսուրը», Նազարեթը աստղեր է շարում թևերի վրա, երազելով սքանչելի բախտ... Զի՞ պատահում, որ դու երազես գիշերը:

Այդ հարցին անկեղծ պատասխանելու համար պետք է խոստովանելի, որ երազում եմ նույնիսկ ցերեկը, երբեմն ինքնամոռաց կերպով: Բայց ես պիտի իմ տարօրինակությունները սահմանափակելի գիշերային ակվարիումի մեջ քնած մարդու տարօրինակություններով, քանի որ հարցն այդպես էր տրված:

— Այո, պատահում է: Բայց դրանք անհեթեթ երազներ են, լրիվ անիմաստ... հիմարություններ:

— Տեսնո՞ւմ ես, ուրեմն մենք գիշերային «Նազարեթներ» ենք... սակայն երազում ենք թաքուն, այնպիսի ժամերի, որ ոչ ոքի չխանգարենք: Առավոտյան արթնանալիս, քանի որ նորմալ մարդիկ ենք, ծիծաղելով ասում ենք. «Պատկերացնո՞ւմ ես, երազիս մեջ Զինաստանի կայսրն էի»: Հետո անմիջապես դառնում ենք շապկագործ, որ հանկարծ չխախտենք իրերի կարգը: Նազարեթը, որի գլուխը լի է խենթության սերմերով, բայց որոնք ոչ ոքի չեն խանգարում, երազում է ցերեկային անհեթեթություններ, որոնք ավելի հիմար չեն, քան մեր գիշերային զառանցանքները:

Հետո հայրս ուզեց ինձ հավաստացնել, թե այնքան էլ գոհ չի իր մեկնաբանության պարզունակությամբ, և աչքը թարթելով ասաց.

— Իհարկե, ՚ա թերևս այնքան էլ գիտական քաջատրություն չէ:

Նրա դեմքը զգալի խստացել էր, երբ քիչ անց ասաց.

— Նազարեթին փոքրուց ճանաչողներն ասում են, թե նա այդպիսին չի եղել:

Եվ հայրս խոսեց այն զարհուրելի օրվա մասին, որ պատմում էին Երզնկայից փախածները, եթե իհարկե կարողանում էին զսպել հեկեկանքները:

Հրացանաձգությունը սկսվել էր առավոտից:

Թուրք ոստիկաններն ու զինվորները թալանում ու հրկիզում էին քրիստոնեական թաղամասերի տները: Վիրավորներին վերջացնում էին կացնի հարվածներով, երիտասարդ կանանց մտղերից քաշելով մի կողմ էին տանում՝ հագեցնելու արյան ծարավը:

Ահա այս սողոմ-գրմորի մեջ էին տեսել Նազարեթին Լրեխա ժամանակ: Ամբողջովին թաթախված մոր արյան մեջ, դուրս է եկել նրա խոշտանգված մարմնի տակից, սող է տվել եղբայրների դիակների վրայով և փախել բոցերի միջով: Շարունակությունը արձանագրված է Կարմիր խաչի զեկուցագրերում: Քուրդ գյուղացիների մի ընտանիք ուշաթափված երեխային գտել է սարում: Ամիսներ շարունակ խնամել են գլխի խոր վերքը: Երբ վերքն սպիացել է, նրան քրդի շորեր են հագցրել և սայլով, խոտի մեջ թաքցրած, անց են կացրել գյուղերի միջով: Այդպես հասցրել են մինչև պարսկական սահմանը, որտեղ պատերազմ չկար: Այնտեղ երեխային հանձնել են Կարմիր խաչի կենտրոններից մեկը և պատմել նրա գլխովն անցածը:

Վզից կախված բժշկական թղթի մեջ գրված էր մի անուն. Նազարեթ, և նշված էր ճակատից մինչև ծոծրակը հասնող շատ խոր սպիի մասին: «Հատուկ նշանների» դիմաց գրված էր. «Թերի զարգացած դատողություն»:

Այս քայլող, իոսող, ծիծաղող, բայց դատողությունը կորցրած մարմնի զննության համառոտ տեղեկագրում մոռացել էին նշել հավանական կապ տղայի մտավոր կարողության և կացնի սուր շեղումը բացված ափսի միջև:

Նազարեթը մեծացել էր թշվառ որբանոցներում, որոնք արագորեն հիմնվել էին հայրենակցական միությունների մեծահոգությամբ, ապաստան տալու մի ժողովրդի ցեղասպանությունից մազապուրծ եղած այդ երեխաներին:

Ինչպե՞ս էր հասել Մարսել:

Իբրև գերագույն զորահրամանատար՝ իր հաղթական գնդերի գլուխն անցած:

Իբրև Հոռմի պապի նվիրա՞կ՝ Ֆրանսիական կառավարության առջև:

Իբրև ականավոր փաստաբա՞ն, որ հանձն էր առել պաշտպանելու հայ դատը համաշխարհային խղճի առջև:

Նազարեթի խանգարված ուղեղի ծալքերում կային բազում ու բազմազան տարբերակներ: Հստակ էր լոկ մի բան. Նազարեթը ոչ մի հիշողութուն չէր պահել Երզնկայի այդ սև օրից:

Մարսելում ապրում էր հայրենակիցների ողորմածությամբ: Բայց դեռ հարկավոր էր այդ ողորմութիւնը քողարկել՝ նրա նրբագագացութիւնը չվիրավորելու համար: Մերժում էր դրամական որևէ օգնութիւն, եթե դա չէր համապատասխանում իր կատարած աշխատանքին: Բայց ոչ մի բան ձեռքից չէր գալիս և բավական դժվար էր նրան որևէ պատասխանատու բան վստահել: Ահա, նրա պարագայում, այդքան ճնշող պարկեշտութիւնը շրջանցելու համար, հորինվեց ճարպիկ մի սուտ:

— Սիրելի Նազարեթ,— ասել էին,— սփյուռքի հայերը քեզ միաձայն ընտրել են «Մամուկի կապերի գրասենյակի նախագահ»:

Եվ վաճառքի համար նրան էին հանձնել հայերեն օրաթերթերի, շաբաթաթերթերի, ամսագրերի մի ամբողջ շտեմարան: Եվ քանի որ յուրաքանչյուր աշխատանք արժանի է վարձատրության, նա ստացած գումարը պահում էր իրեն՝ ներկայացուցչական ծախսերի համար:

Այդպես էր, որ Նազարեթը իր նախագահական տիտղոսից ոգևորված, ձեռնարկեց հայկականութիւն մատակարարողի երկար խաչակրութիւնը: Մինչև նրա պաշարների սպառվելը, այդ օրաթերթերը հաճախ կրում էին մի քանի ամսվա հնության ամսաթիվ, սակայն ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում դրան: Հայրս, խուսափելով խղճի խայթից, որ կարող էր վճռանգել այդ ողորմության վայելչութիւնը, ասում էր.

— Մարդիկ թերթի «ամսաթիվը» չեն գնում: Թերթն ընտրում են նրա անվան, ոգու և բովանդակության համար:

Իր տրամաբանող խենթութիւնն մեջ Նազարեթը մտքում

պահել էր այս բանաձևը, որ նրան անսահման դուր էր եկել: Եվ ամեն տեղ կրկնում էր, շմոռանալով հիշատակել հեղինակին:

Նրան ճաշի պահելու համար հարկավոր էր երկար-բարակ համոզել: Հանկարծ նա ոտքի էր կանգնում և ուրախ հայտարարում.

— Լավ, մնում եմ: Զեր տունը նման է աստժո սեղանին: Հրավիրողն այլևս հայրս չէր, այլ աստված, որի սեղանին ճաշելը հազվադեպ կարող էր մերժվել:

Քիչ էր ուտում, շատ խոսում: Աչքերը փայլում էին արժանապատվությունը գտած մարդու երջանկությամբ:

Այդպես էր ապրում մեր պարզամիտ Նազարեթը, ինչպես տան ոգի, աշխույժ ու թեթև թռչելով դեպի Կանդիդի երևակայական պալատները:



Սեն-Պիեռ-դը-Մարսելի գերեզմանոցը՝ նոճիների ծառուղիներով, ոսկետառ շիրմաքարերով և դեպի երկինք միտող դամբարաններով, նման էր մեծ քաղաքի գերեզմանոցներին: Բայց քամիների ժամանակ պշրագեղ Պրովանսը իր դաշտերից բերում էր խունկ ու ծոթրինի բարկ բուրմունք և սոճուտի ավիշի խեթահոտ: Եվ ճպուռները, գիտակցելով կյանքի կարճատևությունը, անդադար ճոճում էին, ասես անհետանալուց առաջ աշխատում էին հնարավորին շափ ավելի շատ տարածել իրենց ճոճոցը:

Հավիտենական խաղաղության այս վայրում, մի օր, վերջին անգամ տեսա Նազարեթին: Ծերացել էր: Կանգնել էր բազմությունից հեռու, ձեռքին աշնանային ոսկեծաղիկների մի հախճապակյա թաղար: Քահանան աստժուն էր հանձնում մի մարդու հոգին, որ միշտ այնքան ուշադրությամբ կարողացել է լսել Նազարեթին:

Ես ողբում էի հորս մահը:

54.

Այն քիչ տեղում, որ գրավում էինք այդ նշանավոր պարոն Թյուրնեի փողոցի № 3 տանը, աշխարհի լուրերն ստանում

էինք կարմրափայտի գույնով ներկված մի արկղից՝ ոադիո-  
ընդունիչից: Հաղորդավարները անանուն և սեթևեթ ձայնով  
կարդում էին գլխավոր հրամանատարի շտաբի պաշտոնական  
հաղորդագրութունները, որոնք կանոնավորապես զեկուցում  
էին, թե ամբողջ ճակատում ոչ մի էական փոփոխություն տե-  
ղի չի ունենում: Պատերազմը, ըստ իր սահմանման, լինելով  
մարդկային կյանքի հետևողական բնաշնչում, զինված տա-  
րածայնություն, որտեղ համարյա մարդ չէր սպանվել, դառ-  
նում էր արտառոց: Եվ առանց նկատելի զոհերի այդ կամա-  
վոր սպանությունը, որն այլևս հնարավոր չէր որակել դաժան,  
բիրտ, համբնդհանուր, արյունահեղ կամ մահացու, ի վերջո  
ստացավ «տարօրինակ պատերազմ» անվանումը:

Օրական երկու անգամ շշակները ունում էին խուլից մին-  
չև սուր ձայներով, ասես նախազգուշացնելով, թե անհրաժեշ-  
տության դեպքում կարող են վերսկսվել:

«Պասիվ պաշտպանություն» կոչվող մի ծառայություն, որ  
կազմված էր թաղի կամավորներից, ստիպում էր կապույտով  
ծածկել տան էլեկտրական լամպերը, մեղմացնելու համար  
պայծառ կետերը, որոնք կարող էին քաղաքը մատնել հնա-  
րավոր ուժբակոծության: Լուսամուտների ապակիները պետք  
է պաշտպանված լինեին խաչաձև սոսնձող ժապավեններով,  
որոնք ուժբակոծության դեպքում թույլ չէին տա կոտրվեն:

Սուլիչի զիլ ձայնը՝ տուգանքի իրավունքով, պարտադրում  
էր մարել ամեն սիգարետ, որի այրվող ծայրը կարող էր կոր-  
ծանման վտանգի ենթարկել Մարսելը:

Բոլոր այս ծիծաղելի նախազգուշությունները ցույց տվե-  
ցին, թեև դրա անհրաժեշտությունը չկար, որ մենք, առնը-  
վազն, մի պատերազմով հետ էինք մնում:

Երբ վերջապես հինգ տարի հետո եկավ օրը, ուժբակոծիչ-  
ների նեաած լուսավորող հրթիռները լուսավորեցին քաղաքը,  
մարսելյան գիշերը վերափոխելով օգոստոսյան արևոտ հետ-  
միջօրեի:

\* \* \*

Հեռուստացույցի բացակայության պատճառով տեսողա-  
կան վկայությունները մեզ էին հասնում այսպես կոչված «նո-  
րոններում», երկու լիամետրած ժապավենների արանքում:



Հանդիսատեսը ծափահարում էր, ոգևորվում կամ հայհոյում  
րությունների» միջոցով, որոնք ցուցադրվում էին կինոթատ-  
ու սուլում պատկերներին, որոնք բնավ միտք չունեին պա-  
տասխանելու:

Այսօր նույնպես այդ միևնույն պատկերներն արտացոլում  
են աշխարհի բոլոր տարածայնությունները:

Հեռահար թնդանոթի երկնքին ուղղված փողը անդադար  
կրակահերթեր է արձակում, շնորհիվ կինեմատոգրաֆիական  
սեղմ մոնտաժի, որ բաց է թողնում լիցրավորման վրա ծախս-  
վող ժամանակը: Հանդիսատեսի երևակայությանն է թողնու-  
վում հետևելու արկերի հետագծին, մինչև նրանց անկման կե-  
տը, երբ որևէ համարձակ մեկնարանությամբ վստահեցվում  
է, թե ոազմական բոլոր որոշյալ նշանակետերն էլ հաջողու-  
թյամբ հարված են ստացել:

Մի կին, երեխան գրկին, վազելով անցնում է փողոցը:

Ջինվորական մեքենաների մի շարասյուն է շարժվում  
ճամփի վրա:

Մի քանի տանկեր են առաջանում դաշտով:

Մի գինվոր գնդացրի պարունակությունը դատարկում է  
դեպի անորոշ հորիզոնը:

Ինչ-որ տեղ ումբ է պայթում:

Ինչ-որ շենք է փլվում շգիտես կռվողների ո՞ր կողմում:

Եվ ժամանակից դուրս այս տեսարանները, որ հաճախ  
նկարահանվում են սեփական թղթակցի կյանքի գնով, թվում  
է, գալիս են կիրառական էպինալ կոչվող թատրոնից և կարող  
են սպասարկել նաև հակառակորդ կողմին, եթե միայն փոխ-  
վեն խոսքերը:

\*\*\*


Պատերազմական այդ օրերից միշտ հնարավոր է գտնել  
դանդաղեցված գործողությամբ հոգեվիճակներ, անկումներ,  
հուսահատություններ և ընդվզումներ, որոնք իրենց գոյության  
համար պարտական են վերանայված և ուղղված մեկնաբա-  
նության, քանի որ չկան վկայություններ, թե իրականում ինչ  
էր անցնում մեր գլխով:

Այդ իրադարձություններին հաջորդող ավելի քան քառասուն տարիների ընթացքում իմ կարդացածից ու սովորածից ձերբազատված հիշողությանս մեջ մնում է լուկ քսանամյա մի տղա, ձեռքին՝ գինվորական գրքույկ, որտեղ նշված է. «Ենթական շունի ֆրանսիական հպատակություն»: Ես պետք է իմ գործասին միանայի 1940 թվականի հոկտեմբերի 1-ին:

Անօրյա կյանքից հիշում եմ ամեն տեսակի կտրոններ. հացի, մսի, կարագի, սուրճի, ձեթի, ոտնամանի, հագուստեղենի... համար և զուգահեռաբար ազատ շուկա, որտեղ, ինչպես պատերազմից առաջ, կարելի էր գտնել ամեն ինչ, բազմապատկված գներով, ըստ առաջարկի ու պահանջարկի օրենքների փոփոխական գործոնի: Հաճախ գյուղական անդորր ու համեստ ագարակների մոտ կանգ էին առնում գեղեցիկ ավտոմեքենաներ, որոնք բենզինը փոխարինել էին գազոգեներով:

Օպերան, օպերետը, մյուզիկ-հոլերն ու կինոթատրոնները հայտարարում էին՝ «Տեղերն սպառված են», և Մորիս Շվալին մեր փոքրիկ դժբախտություններն ամոքելու համար երգում էր.

կյանքը չառժե բարդացնել,  
ես կյանքը չեմ բարդացնում:



Մեր ընտանիքում կյանքը շատ էինք «բարդացնում» այդ 1940-ի սկզբին:

Ծնողներիս գլխից դուրս չէր գալիս այն միտքը, թե իրենց որդին պատերազմ է գնալու:

Հանկարծ առաջին ինն ամիսների հակիրճ հաղորդագրությունները վերածվեցին նահանջների հաջորդականության: Հիտլերի զորամասերն արշավում էին Եվրոպայի վրա, և նրա մայրաքաղաքներում ծածանվում էր կեռիսաչը:

Հազիվ էր հարևան Բելգիան վար դրել զենքերը, երբ գերմանական զորքերն արդեն տողանցում էին Ելիսեյան դաշտերում:

1940 թվականի հունիսի 17-ին մի ծեր մարշալ գինադար առաջարկեց:

Այդ օրը շատ արտասովեցին Թյուրնե բուլվարի № 3 տա-

նը, և հայտնի չէ՝ արցունքները պարտության ամոթի՞ց էին, թե ուրախությունից, որ իրենց որդին պատերազմ չի գնա:

Հաջորդ օրը, հունիսի 18-ին, մի երիտասարդ գեներալ կոնդոնից կոչ արեց շարունակելու պայքարը:

Մենք չէինք լսում զավթիչների կողմից խանգարվող ուղիորդներին իրենց կարճ ալիքը, որը, երեք բառից մեկը կուլ տալով, Ֆրանսիային հայտնում էր, թե կայծակնային այս պատերազմում իրենք տանուլ են տվել ընդամենը մի ճակատամարտ:

Իրադարձությունների այս իրարամերժ, հակասական թուհուրոհում ես երեբում էի այն երիտասարդի առջև, որը պիտի լինեի, կարող էի լինել և չեղա: Իմ գլխավոր զորակոչը Արվեստների և արհեստների ազգային դպրոցի ընդունելութային քննություններն էին, որոնց պատրաստվում էի շատ երկար:

Եվ այդ 1940 թվականի հուլիսին սրտատրոփ գնում էի հանձնելու գրավոր ու բանավոր քննություններս:

55.

Ընդունվածների ցուցակը պիտի հայտարարվեր էքսում, դպրոցի առջև, ժամը 16.30-ի և 17-ի արանքում:

Մայրիկն իր ժամացույցն ուղղեց իմով: Հենց արդյունքները իմանայի, պիտի անմիջապես զանգահարեի պարոն Անգանիին, որն իր խանութից մինչև մեր բուլվարը որոտաձայն կբղավեր.

— Պարոն Մալաքյա՛ն... հեռախո՛ս...

Թերևս հարկ չէր լինի կանչելու: Համոզված էի, հայրս վաղուց արդեն խանութի տակառներից մեկի վրա նստած անհամբեր հեռախոսազանգի էր սպասում: Վերադարձս պիտի հարմարեցնեի տրամվայի շվացուցակին, ամեն ժամի մեկնում կար:

Պիտի վերադառնայի ժամը 18-ի տրամվայով:

Մարտի 15 կհասնեի ժամը 20-ին, և ամենաուշը ժամը 20 անց 15 րոպեին կլինեի տանը:



Դպրոցի առջև երեք-չորս հարյուր հեզով սպասում էինք այն վաթսուն անունների հայտարարմանը, որոնք պիտի լինեին 1940 թվականի ընտրյալները:

Գերի դարձած այն ցուցակին, որ պիտի շուտով հայտնեցվեր, մենք՝ նայած նախապատրաստական դպրոցում ով ում հետ էր սովորել, ով որտեղից էր եկել կամ ուսման ընթացքում ով ում հետ էր մտերմացել, փոքրիկ խմբեր կազմած կանգնել էինք մայթի երկարությամբ: Մեր անհանգիստ դեմքերին տվել էինք անտարբեր արտահայտություն, որպեսզի թաքցնեինք հոգեկան խռովքը: Չնայած մեր երևութական անհոգությանը, իրար մեջ փոխանակվող սրախուսություններին ու կատակներին, մեր հայացքը՝ «կենաց ու մահու» սպասումով, անվերջ հետևում էր այն դռանը, որը պիտի բացվեր, մատնելով մեր նյարդային վիճակը անորոշ ապագայի նկատմամբ:

Վաղեմի սովորությամբ, որոշել էի իմ անձկությունն ու տվայտանքները ապրել մեկուսի:

Վճռականությամբ մեջք էի դարձնում դռան մոտալուստ բացվելուն, գաղտնի համոզմամբ, թե դռան ամենաշնչին ճշուտոցն անգամ այնպիսի իրարանցում կստեղծեր, որ անմիջապես կլմացվեր շարաշուք բանքերի հայտնությունը:

Ինձ մնում էր աչքերիս փոխարեն սրել ականջներս՝ երեսխայամտորեն փոխելով լարված սպասման ուղղությունը:

Հանկարծ, ասես ինչ-որ զսպանակի ազդեցությամբ, միանգամից ընկան շինծու անտարբերության դիմակները: Խրմբակները կազմալուծվեցին: Բոլորը վերգտել էին «ամեն մարդ իր համար» սկզբունքը:

Ապագա մուրացողների մեր հորդան ընդհանուր հրմշտոցով վազեց դեպի ցուցատախտակը:

Անմիջապես վաթսուն անուն կրող սպիտակ քառակուսու առջև գոյացավ հարյուրավոր գլուխներից կազմված միաձույլ զանգված:

Դիմացի մայթից դանդաղ կտրեցի փողոցը: Ես մյուսներից ավելի հանգիստ ու անխռով չէի: Դանդաղեցված շարժումներս, պարզապես, արհեստական կերպով հետաձգում էին այն

վճռական պահը, որից այն կոչմ ալլևս տնելիք շէր մնում։  
Ես երկարաձգում էի խղճուկ վայրկյանները, որոնք ինձ  
բաժանում էին պարոն Անգանիի լուռ հեռախոսից։ Պատկե-  
րացնում էի այդ զանգին սպասուղ հորս, մորս, որ մեր խա-  
նութի ցուցափեղկից լրտեսում էին դիմացի դեղանյութերի  
խանութը, Գայանեին, որ կարի մեքենայի մոտից հետևում էր  
քրոջը, և տազնապների այդ շղթայի վերջում՝ հուլյսի տասնվեց  
երկար տարիները։

Անձկությունից կոկորդս թե սիրտս սեղմված, մեքենայա-  
բար միացա աշակերտների հոծ բազմությանը։ Հետևում  
կանգնածները հրում էին առաջիններին, և նույն շարժումը  
կրկնվում էր հակառակ ուղղությամբ։ Այդ զանգվածի մեջ  
խեղդվելով, մերթ մղվում էի ցուցատախտակին շատ մոտիկ,  
մերթ հորձանքն ինձ հեռացնում էր, հետը բերելով ձախտողու-  
թյան սպիներով պատված կամ հաջողությունից ճառագայ-  
թող դեմքեր։ Վերջին քայլերը, որ ինձ ապահովելու էին ըն-  
թերցման համար անհրաժեշտ տարածություն, ամենադժվարն  
էին։ Ազահ աչքերս միանգամից կլանեցին վաթսուն անուն-  
ները։ Երկրորդ ընթերցման ժամանակ միայն երկար սարսուռ  
զգացի, մի կարճ վայրկյան աչքովս ընկավ անունս։ Արմունկ-  
ներով ու ուսերով ճանապարհ բացելով դուրս եկա բազմու-  
թյան միջից և վազելով անցա էքսի հնամենի նրբանցքներով,  
որպեսզի փարատեմ ինձ սպասողների անհանգստությունը։

Արդեն բավական ճամփա էի կտրել, երբ մի հիմար միտք  
կանգնեցրեց ինձ։

Արդյո՞ք լավ էի կարդացել անունս։

Թե գուցե ցուցակում լինելու ուժեղ ցանկությունից պա-  
թոլոգիական հոգեվիճակ էր ստեղծվել, և ես սխալ էի տեսել։

Եթե տեսողական պատրանքի, ինչ-որ տեսիլքի կամ աչքի  
խարկանքի զոհ չէի, հապա ինչո՞ւ էի վրիպել առաջին ընթերց-  
ման ժամանակ։

Վերսկսվեց վազքս, այս անգամ հակառակ ուղղությամբ,  
դեպի կախարդական ցուցակը, որի երկու ընթերցումից միայն  
մի անգամ էր անունս աչքովս ընկել։

«ՄԱԼԱՔՅԱՆ ԱՇՈՏՆ» իսկապես այնտեղ էր։ Այս անգամ  
ինձ նույնիսկ թվաց, թե մեջտեղում տնկված իր «Ք» տառով,  
միայն ինքն էր աչքի ընկնում։

Այս անգամ թո՛ւ դեպի Միրաբոյի զբոսայգին, դեպի նրա շատրվաններից ժայթքող կենարար ջրերը, սրճարան-գարն-ջրատները... Նրանց հեռախոսները:



— Խնդրում եմ, հեռախոսի մի ժետոն և մի գավաթ գարեջուր:

Գարեջրատան վաճառասեղանին դրված ժամացույցը ցույց էր տալիս, որ ժամը 18-ի տրամվայի մեկնումից առաջ լիուլի ժամանակ ունեի զանգահարելու և խմելու իմ առաջին «Գաձարի» գարեջուրը: Սրճարանի ապակիների միջով տեսնում էի կապույտ վագոնները, որոնք խոստացված ժամը 20-ին ինձ կհասցնեին Մարսել:

Երբ հեռախոսախցիկն ազատվեց զբաղեցնողից, ես դեմ առ դեմ հանդիպեցի մի «մեծարգո արխիի»: Այդպես էինք անվանում երրորդ տարվա աշակերտներին, և այդ տիտղոսը, ըստ սահմանումի, ինքնին նշանակում էր «նորակոչիկի» կատարյալ հպատակություն «հնի» հեղինակությանը:

Ես լավ էի ճանաչում այդ «արխիին», վերջին երկու տարիների ընթացքում բազմիցս դիմել էի նրա օգնությանը: Ընդունելության քննություններս հաջող հանձնելու դեպքում նա խոստացել էր լինել իմ կնքահայրը: Դպրոցի ավանդույթների համաձայն պիտի կատարվեր մկրտության փառահեղ արարողություն շքեղ հագնված «Գորգյուկի» կողմից: Մեռոնին փոխարինում էր մեքենայի թանձր յուղին խառնված երկաթի փոշին, որ մկրտողն առատորեն օգտագործում էր: Թեև այս արարողությանը տենչում էինք ամբողջ հոգով, որովհետև դա նշանավորում էր մեր ընդունելությունը, սակայն նաև վախենում էինք կպչուն հետքերից, որոնք երկար մնում էին մեր մազարմատների մեջ, և նույնիսկ լավագույն շամպունները չէին մաքրում...

Ահա այս դուրեկան ապագա կնքահորս հանդիպեցի հեռախոսախցիկի առջև և մոտից անցնելիս հայտնեցի, որ «ընդունվել եմ»:

Մի անցողիկ պահ նրա դեմքին ծաղկեց լայն ժպիտ, ապա արագորեն դեմքի արտահայտությունը խստացավ, հոնքերը

կիտվեցին, և նա «արխիի» ձայնով, կատալոնյան ծագումը մատնող ուժեղ շեշտադրությամբ ինձ կանգնեցրեց հեռախոսախցիկի մոտ:

— Ներկայացիր, նորակոչիկ:

Ես անզիր գիտեի հների հետ նորակոչիկների հարաբերությունների քաղաքավարական կանոնները: Զգաստ կանգնած անշարժանում ես, հայացքդ հառում երևակայական հորիզոնին:

— Իմ մեծարգո Արխի, ներկայանում եմ.

Աղբ Մալաքյան

Մ—անսահման փոքրիկ...

Ա—անսահման, անսահման փոքրիկ...

Լ—անսահման, անսահման, անսահման փոքրիկ...

Հարկավոր էր հեգել սեփական ազգանունը, յուրաքանչյուր տառից հետո ավելացնելով «անսահման փոքրիկ», որ մեզ փոքրացնում էր, փոքրացնում, ի վերջո վերածում աննշմար հյուլերի՝ երկրի կեղևի վրա:

Անշուշտ միշտ եղել են ճնշումներ նորակոչիկների կամ նորեկների նկատմամբ, բայց դրանք, ընդհանուր առմամբ, տեղի են ունեցել ֆոլկլորային հանդարտ և բարեհոգի մթնոլորտում:

Գաձարի գարեջրատանը ճնշումների այդ փորձերը սկիզբ էին առնում ավելի քան մեկ և կես դար արմատացած սովորույթից: Ավանդույթներն ունեն իրենց կրոնը, հատուկ բարբառը, առասպելները, տոներն ու ծեսերը, հակառակ դպրոցի պաշտոնական կանոնադրության:

Սակայն «նորակոչիկը» առաջին իսկ տարուց քաջ գիտեր, որ ավանդույթների այդ խիստ ու դաժան պատի հետևում կար անսահման համերաշխություն, և որ ինքը միշտ կարող էր վստահել իր «հնին»: Ահա այս տարօրինակ, համարյա խորհրդավոր մթնոլորտում նորերը համաձայնում են սկզբնական այդ փորձերին, եթե անգամ դրանք վերածվեին շարժարանքի:

Իմն սկսվել էր գարեջրատան հեռախոսախցիկի առջև, ձեռքիս ափում՝ ժետոն:

«Հինը» թևիցս բռնած ինձ քարշ էր տալիս դեպի սրճարանի ներսի սրահը, նշելու իմ հաջողությունը: Զգուշությամբ

հարցրի, թե կարող եմ արդյոք զանգահարել՝ հետո, բայց նրա հայացքը շանթահարեց ինձ:

— Նորակոչիկ, կզանգահարես ծխահարվելուց հետո:

Աղետը բացահայտ դարձավ դուստն բացվելու հետ, երբ երևաց ծխի մեջ կորած մի փոքրիկ սրահ, որտեղ սեղանի շուրջը նստած էին մոտ քսան «արխիներ»:

Ինձ ընդունեցին ջերմորեն, եղբայրաբար խմիչք առաջարկեցին իմ ընտրությամբ, սակայն դուրս շփալով «հների» իրենց դերից: Նրանցից մեկը հարց տվեց հագուստ-կապուստիս մասին:

— Կսիր, նորակոչիկ... հանդերձանքիդ մեջ քեզ ոչ մի բան չի՞ խանգարում: Անթերի նորակոչիկի իմ վարքականոնը հիշեցրեց երեք տարրական կանոն, որ մենք պիտի սլահայանենք. արգելված է կապել փողկապ, գոտի (կարելի էր միայն գոտու փոխարեն թոկ կապել) և կրել աչքի ընկնող որևէ փայլուն առարկա: Այս պարտադիր և անտանելի հարկադրանքը, ասես նոր կրոն էինք ընդունում, առաջին հայացքից անհեթեթ ու ծիծաղելի էր թվում: Այնուհանդերձ բոլոր այդ ավանդույթները սկիզբ էին առնում խոր մի ցանկությունից. ապագա ինժեներին դարձնել «երկրի մարդ», խորտակել տեխնոկրատի դասական պատկերը՝ լավ կարված կոստյումով, համապատասխան փողկապով ու գրպանի թաշկինակով և դաստակին փայլող ճաշակավոր շղթայով:

Այդ երիտասարդին, որ հարմարավետ կերպով տեղավորված է բրդյա հաստ գորգով պատված գրասենյակներում և շատ բան գիտի, բայց իմացածը կենսագործելու համար ոչինչ չգիտի, այդ «սալոնային» երիտասարդին, որ ճաշում է մինիստրների տներում, նուրբ ճենապակյա ամանեղենից, ուզում էին հակադրել բանիմաց շինարարին, որ կանգնած է շինհրապարակում կամ արհեստանոցում: Վերջապես ուզում էին այդ ճնշումներով ու նվաստացումներով մեր դեմքից պոկել մեծամտության դիմակը, որ հաճախ գոյանում է համբավված դպրոցում ուսանելիս:

Կա Ռուսյալ գարեջրատան ներսի ծխապատ սրահում այդ օրը, զգոն և անողոք «հների» առջև, շքացան սնափառության բոլոր նշանները: Փողկապս, գոտիս ու պողպատյա ժամացույցս մտան գրպաններիս մեջ, ձախ ձեռքով համեստորեն



բունել էի տաբատս, որ հանկարծ վայր չընկնի, ամեն գոռոգություն ու պարծենկոտություն մոռացած, կազմ-պատրաստ սպասում էի դիմագրավելու փորձությանը...

Նախ տեղի ունեցավ ութտառանի ազգանվանս դասական ներկայացումը, ապա դրան ուղեկցող երեսունվեց «անսահման փոքրիկի» կրկնությունը: Հանկարծ մի ձայն հրամայեց ներկայանալ յավաներեն: Ինդոնեզացի դառնալու համար բավական էր Ֆրանսերեն բառի յուրաքանչյուր ձայնավորից առաջ ավելացնել երկու տառ՝ «Ավ»: Այսպես ազգանունը դառնում էր «ավազգավանավուն», իմ Մալաքյան ավազգավանավունը փոխվում էր «Մավալալաքավյավանի» և այդպիսով պահանջվում էր յոթանասուներկու «անսահման փոքրիկի» մի ամբողջ շղթա, որ դառնում էր անվերջանալի, որովհետև ամենաչնչին սխալի դեպքում, ստիպում էին ամեն ինչ սկսել նորից:

Դեռ պետք եղավ երգել Գաձարյան երգացանկի եղանակներից՝ սեղանին թառած, հավասարակշռությունս պահպանելով մի ոտքի վրա, մյուս ոտքս պահած հորիզոնական դիրքով, 90° անկյան տակ: Ես «հոլի» նման պտտվում էի, ուսական ոճով «կանիբս պարում», ավանդական բարբառով սահմանումներ արտասանում... շարունակ ափիս մեջ սեղմելով հեռախոսի ժետոնը, իբրև հիշեցում ինձ սպասողների անհանգստության: Ամբողջ այդ ընթացքում, հոդերը խախտված մարիոնետի նման, որի թելերը քաշում էին «հները», ես խաղում էի գինյուլ ու պոլիշինել, ընդ որում ներկայացումը շարունակվում էր «երեք փոքրիկ գործողությամբ, ապա ավարտվում էր»:

Այն ժամանակ, ամբողջ համարձակությունս հավաքելով, հարգալից հայտարարեցի, թե ժամանակն է հրաժեշտ տալու այս հարգարժան ժողովին, եթե շեմ ուզում ուշանալ ժամը 18-ի տրամվայից:

Որոշյալ ժամի մեկնելու ստիպողականությունը ենթադրել տվեց ինչ-որ ժամադրության մասին, մի բան, որ տեղիք տվեց հարցերի նոր տարափի՝ միակ գլխավոր նյութի... ինձ սպասող աղջկա մասին:

Իրականությունից կտրված իմ պատասխաններից, որոնք սահմանափակվում էին «այո» և «ոչ»-ով, կամաց-կամաց

ծնվեց երևակայական մի կերպար. նրա անունը էլեն էր, տասնութ տարեկան էր, կապույտ աչքերով, բարեկազմ, քնքուշ ու խելացի և սրտի թրթիռով սպասում էր մեր հանդիպմանը:

Այդ մեղադրական վկայի հայտնվելուց հետո իմ երեք մեծարգո հավատաքննիչների ատյանը՝ իրենցից հեռանալու իմ դիտավորությունը համարեց անթույլատրելի միջամտություն բացառապես իրեն վերապահված ազատության շնորհման լիազորությունների մեջ: Ավելին, վկայի իմ ցուցմունքների մեջ նրանք վեր հանեցին որոշակի կեղծիք, այնինչ իրականում իրենց դեմ կանգնած էր պնդաճակատի մեկը, որի սանձերը հարկավոր էր անհապաղ քաշել:

Նկատի առնելով, որ իմ մտահոգությունների միակ առարկան տրամվայն է, ես դատապարտվեցի նրա ռելսերը հիսուն մետրի շափ ապակեթղթով մաքրելուն, մինչև նրանց վրայից լիովին վերանա երկաթի հիդրօքսիդը, որ հասարակ լեզվով կոչվում է ժանգ: Այնուհետև պետք է ռելսերի այդ մասը շփեի ու հղկեի, «մինչև կատարելապես փայլեր»:

Ն/ստն ավարտված էր:

\* \* \*

Գահիճը ինձ ուղեկցեց պատժավայր:

էքսի բնակիչները, որ սովոր էին Գաձարների նման ճրնջումներին, ծիծաղելով անցնում էին: Սակայն քաղաքի պատահական այցելուները մայթեզրին կանգնած ապշահար դիտում էին երկաթգծերի վրա թեքված այս խելաոին, որ մի քանի քառակուսի սանտիմետր ապակեթղթով փորձում է քերել մինչև Մարսել ձգվող երկաթգծերին կպած ժանգը:

Արխիական իմ դահիճը խառնվել էր բազմությանը, ինձ անտարբերությամբ մատնելով մենակության, որն ավելի էր ընդգծում իմ մտային խանգարումը և կատարածս աշխատանքի անհեթեթությունը: Անցորդները ցուցամատը դնում էին քունքին, պտուտաձև շարժում, ակնարկելով ուղեղիս խանգարումը:

Այնտեղ, վերջին կանգառում, վարորդը իր տեղը գրավեց շարժիչի բռնակի մոտ: Տրամվայը դանդաղ շարժվեց, վագոն-

ները շարան-շարան անցան աչքիս առջևով: Ժամը 18-ի տրամվայը մեկնեց:

Հաջորդը պիտի մեկնեի մեկ ժամից:

Զեռքերս կորած երկաթգծերի հիվանդության այդ կարմրաթուխ փոշու մեջ, ես ընդամենը մեկ մետր էի առաջացել հակաժանգային իմ խաչակրության մեջ: Արդեն գծի վրա երևում էր ժամը 19-ի տրամվայը: Դեռ քառասունինը մետր կար մաքրելու, երբ հանկարծ արժանացա ներման:

«Արխին» ինձ ազատեց հարկադիր աշխատանքից և մաղթեց բարի ճանապարհ դեպի էլենը:

Ես վազեցի դեպի իմ տրամվայը, դեպի Թյուրենե լուսավորում սպասող իմ երեք «էլենները»:

56.

Լուսնյակ պիշեր էր Մարտելի վրա:

Աստղաշող երկնքի տակ մեր տրամվայը գրավեց աջ պծի վերջին կանգառը՝ Վիյո-Պորը:

Դեռևս առաջին վազոնի լեփ-լեցուն հարթակից, մի հարյուր մետրի վրա մինչև կայան հասնելը, նկատել էի հորս միայնակ կերպարանքը՝ կանգառի ծածկի տակ: Զեռքս հանեցի լուսամուտից, որ հայտնեմ իմ ներկայությունը: Նա պատասխանեց ձեռքի լայն թափահարումով և գոռաց.

— Մի մտածիր... ոչինչ... կընդունվես եկող տարի...

Ըստ երևույթին պարոն Անզանիի հեռախոսի լուսությունը և նախորդ տրամվայում իմ բացակայությունը նրա համար դարձել էին տխուր բոթաբերներ:

Ահա այդպիսին էր հայրս. ջնջել, մոռանալ անհաջողությունից ծնվող հուսախաբությունը, որպեսզի զբաղվեր միայն իմ անփառունակ ընդունելության վշտով:

Հրմշտելով, կոխկրտելով կողքիս ուղևորներին, աշխատեցի գլուխս դուրս հանել, որ հանգստացնեմ իրեն, բայց պողպատյա ուղևորի վրայով գլորվող անիվների դղիրդը խլացնում էր ձայնս:

Երբ վերջին ծառայողը իջեցրեց տրամվայի ձողը, որ մինչև վաղն առավոտյան կանգնեցնի մեկնումը, ամայացած կա-

յանի փայտե նստարանին մնացել էինք միայն հայրս և ես:

Սրտի անտեղի գեղումներ շեղան, որոնք ավարտվում են գրկախառնումներով կամ մեջք թփթփացնելով: Մեր ուրախության կրակները վառվում էին մարմանդ, մեր հոգու խորքում: Երբ վեր էինք կենում նստարանից, հայրս պարզապես ասաց.

— Ապրես, այս երեկո դու լավ նվեր տվեցիր մեզ:

57.

Հայրս խոհարարական իր ողջ հմտությունը թափել էր ընթրիքի վրա, որ վկայում էր նրա անտարակուսելի ինքնավստահության մասին, շնայած անորոշ վերջավորությունը:

Քաղցած չէի: Սակայն այդքան կույր և անխախտ ինքնազնուհույսության դիմաց ստիպված եղա համտեսել նրա պատրաստած բոլոր հստուկ խորտիկները, յուրաքանչյուրի համար հիացական բացականչություններ արձակելով:

Երբ սուրճը մատուցեցին, հայրս կպցրեց երեկոյան իր սիգարետը, օրական ծխում էր երկու հատ, ապա վեհանձնությունամբ տուփը շուռ տվեց իմ կողմը, մի հատ էլ հրամայեցնելով ինձ:

Արևմուտքում սովորական և առօրյա այս շարժումը հայի համար վերածվում էր ծիսակատարության, որ նշանակում էր, թե հայրը այս պահից որդուն թույլ էր տալիս մտնելու «չափահասների» շարքը: Այդ հանդիսությունից առաջ ծխել հոր մոտ՝ անարգանքի նշան էր, որից ես կամովին խուսափել էի մինչև այդ երեկոն: Պարզապես տուն մտնելուց առաջ դեն էի գցում վերջին սիգարետս:

Երկար ժամանակ ես այդ սովորությունը համարում էի ծիծաղելի, որոշ շափով էլ կեղծ, որովհետև մերոնք գիտեին, որ դրսում ծխում եմ... մինչև հակածխախոտային պայքարի այն օրը, երբ առաջարկվում էին հազարավոր հնարամտություններ՝ կրճատելու վնասակար նիկոտինի շարիքները: Այնժամ այդ ավանդույթի մեջ ես հայտնաբերեցի գերագույն խորամանկություն, որ հոր նկատմամբ հարգանքի պատրվակով, թոքերը, գոնե առժամանակ, պաշտպանում է մի քանի հազար սիգարետից, ինչպես կրոնական «ծոմերն» էին ձգտում պահեցողությամբ կրճատել խուլեստերինի տոկոսները:

Մեր սեղանի խմիչքը միշտ ջուրն է եղել:

Շամպայնի շշի հետ, որ ճոճվում էր Գայանեի սկուտեղի վրա, Բարոսը մուտք էր գործում Մալաքյանների տուն:

Գիտե՞ի՞ք, որ տա՛նը կա այդպիսի մի շիշ և պահված է կարևոր առիթի հետ մար, բայց դա այնքան վաղուցվա էր, որ մոռացել էինք, թե որտեղի՞ց էր եկել, Աննա մորաքույրն այլևս չկար, որ հիշեցներ դրա ծագումը:

Կարծում էինք, որ անցնող ժամանակը նպաստավոր է մեր շամպայնի համար, քանի որ, ինչպես բոլորին է հայտնի, գիներները հնամալով լավանում են:

Մենք շրջապատել էինք հորս և հազար ու մի խորհուրդ էինք հուշում, հսկելով նրա զգուշավոր շարժումները՝ պայթյունը մեղմելու համար: Շիշը թեքել էր, հավանական պայթյունից պաշտպանելու լամպերը: Զգույշ հետ էր տալիս ոլորուն մեկադալարը, որ խցանն ամուր միացնում էր շշի բկին: Գայանե մորաքույրն ու Մայրիկը արդեն փակել էին աչքերը, որ պաշտպանվեն անխուսափելի կրակոցից և դրան հաջորդող արատնետումից: Մեր բաժակները պատրաստ էին ընդունելու պղպջակների ճնշման տակ ժայթքելու պատրաստ հեղուկը, որն ազատագրվելով պիտի փրփրեր:

Նման ոչ մի բան տեղի չունեցավ:

Կրճատված տրամագծով խցանը սմբել, մնացել էր շշի բկին և այլևս ոչինչ չէր պահում:

Մեր ենթադրությունները, գիներն իսկապես հնացել էր:

Նույնիսկ այնքան էր հնացել, որ այլևս ոչ պղպջակ էր մնացել, ոչ փրփուր, և հայրս մեր բաժակները լցրեց դեղին ու մածուցիկ դարձած շաքարաջուր: Գիներն համարևող ասպետի լայն շարժումով թույլ չտվեց «բաժակ բարձրացնել» և նվիրվեց համտեսողի դերին: Հազիվ էր շրթունքները թրջել խմիչքով, երբ անտանելի ծամածոություններ վերջնականապես որոշեց հետագայում ձեռնպահ մնալ այդ մեղրածոր նեկտարից: Հայրս եզրակացրեց, թե այս նշանավոր «շամպայն» կոչեցյալը խաբեություն է:

Բաքոսյան տոնը սահմանափակվեց միմիայն բացման արարողությամբ, և մեր բաժակները խղճալիորեն մնացին նույն վիճակում, թեև կարիք չէինք զգում փրփրուն շամպայնի ուրախությանը, քանզի տունն արդեն թրթռում էր մեր բարձր տրամադրությունից:

Նոր էի վերջացրել ապագա դպրոցիս ուրախ ավանդույթների պատմությունը, անտեսելով անհեթեթ ճնշումները, որոնց ենթարկվել էի, երբ Գայանեի և հորս դեմքերին հայտնրվեցին դավադրության համարյա անորսալի նշաններ՝ ուղղված Մայրիկին:

Մարդ պետք է վաղուց վարժ լիներ նրանց աչքերի շարժումներին, որպեսզի կարողանար նկատել լուսազդանշանը, որով մեկը մյուսին հայտնում է, թե ժամանակն է:

Մայրս գնաց, պահարանի դարակից հանեց մետաքսաթղթի մեջ փաթաթված փոքրիկ, քառակուսի մի տուփ, տվեց ինձ և պարզորեն ասաց.

— Մեր երեքի կողմից մի փոքրիկ հիշատակ... բարով գործածես:

Սա արևելյան սովորություն էր. նվերի հետ միշտ բարեմաղթություն էր արվում:

Տուփը բացեցի. բամբակյա ֆոնի վրա դրված էր հրաշալի մատանի՝ «զուտ ոսկուց», ինչպես ընդունված է ասել ոսկերչական համեստ խանութներում: Մատանու լայն, հարթ շրջանակի վրա փորագրված էին իմ անվան սկզբնատառերը:

Երեքն էլ նստււծ էին իմ դիմաց, ազնվասիրտ ու մեծահոգի, աչքերում վախի նշույլներ. «Միայն թե դուր գա»:

Ինձ շատ դուր եկավ մատանին, բայց նվերի շոայությունը և անխոհեմ զոհողությունը, որ արվել էր գինը վճարելիս, ինձ գամել էր տեղում և կաշկանդել իմ երախտագիտական պոռթկումները: Անմիջապես անցկացրի մատնեմատիս: Հանդիպեց այնքան դիմադրության, որքան հարկավոր էր ճիշտ մատովս լինելու համար:

Այս երջանիկ զուգադիպությունը պատահական չէր: Ակամա հիշեցի մի քանի ամիս առաջ տեղի ունեցած մի դեպք, երբ մեր բարեկամ ոսկերիչ Կարպիսը, պատրվակ բռնելով, թե մարդու մատների ձևը ցույց է տալիս նրա բնավորությունը, ուսումնասիրեց մեր ձեռքերը, կանգ առնելով հատկապես իմ ձեռքերի վրա: Իզրակացնելով, թե ես ունեմ արվեստագետի ձեռքեր, մի բան, որ ծիծաղելի էր ապագա ինժեների համար, անտարակույս վերցրել էր մատնեմատիս շափը:

Ժպտացի, մտածելով, թե իմ «բացբերան» Գայանեն որքան քաջաբար պիտի պայքարած լինի գաղտնիքը պահելու

համար: Հիացած հայացքս չէի կարողանում կտրել իմ գեղեցիկ մատանուց, և բառերը կուտակվում, ապա խլանում էին ուղեղիս մեջ, խուճապային վախով, որ հանկարծ սեթևեթանքի չվերածվեն:

Իմ անհեթեթ ամաչկոտության այս լուսթյունը փշրելու և սրտիս զեղումներին ազատ ընթացք տալու համար թևատարած մոտեցա Գայանեին, իբր նրան գրկելու համար: Այտս հպեցի նրա այտին և հանկարծ նրան առա վալսի հորձանապտույտի մեջ, իմ հորինած «Սիրուն, կապույտ Գանուբի» հնչյունների տակ, որ ես երգում էի ձայնս գլուխս զցած, ութմը շեշտելով «պամ, պարիամ, պամ, պամպամ»-ով:

Գայանեի «ույ»-երը ցույց էին տալիս, որ նա դիպչում էր կահույքին, իսկ մեր անկարգ պտույտներից շուռ եկած աթոռներն ապացուցում էին, թե մեզնից ոչ մեկը պարել չգիտեր, բայց կարևորը պտտվելն էր: Մեր բարձր երևակայությամբ ստեղծվող արաբեսկները այնքան ինքնաբուխ էին, որ հաշվի չէին առնում վիեննական վալսի պարտադիր եռաչափ տակտը: Միաժամանակ լինելով թե նվագախումբ, թե կոմպոզիտոր, ինձ բավական էր միայն իմ ինքնատիպ երաժշտությունը հարմարեցնել մեր անճոռնի շարժումներին: Այս հանպատրաստից վալսի խորեոգրաֆիայի մեջ կար տարանտելլայով համեմված բավական ֆանդանգո, մազուրկայի փոշի, մի քիչ շառլստոն, որոնք միաձուլվել էին այս գլխապտույտ շարժման մեջ:

Երբ մեզ շրջապատող առարկաներն սկսեցին ավելի արագ պտտվել, քան մենք, և գլուխներս սկսեց պտտվել, Գայանեն, որ անընդհատ ծիծաղում էր, իր այս առաջին պարի հետ սկսեց ճշալ.

— Սպասիր, հիմա կգցես ինձ:

Այդ ժամանակ ես գրկեցի Մայրիկին և նրան տարա դեպի նոր պտույտներ:

Այն պահին, երբ ձեռք էի մեկնում իմ պարընկերուհուն, շանթահարվեցի, այլևս մորս մատին չէր իր ամուսնական հնաոճ, հաստ մատանին: Գողունի հայացքս խուզարկեց հորս մատները, նրա մատանին նույնպես չբացել էր:

Այդ ժամանակ միայն հասկացա իմ մատանու արժեքը:

5 հունվարի 1980:

Քառասուն տարի է անցել քսան տարեկանիս այդ պարահանդեսից:

Այս երեկո նայում եմ Մայրիկի սպիտակ, գեղեցիկ ձեռքերին, որոնք կրում են ասեղով աշխատելու հին հետքերի, ազնվությունը: Այս նրբին մատների վրա ամուսնական մատանու բացակայությունը թողել է անձնուրացության անջրջելի դրոշմ:

Մենևում է Մայրիկս:

Անխորով, հոժարակամ սպասում է իր վախճանին, որին պատրաստվել է, ինչպես նավազնացության մեկնելուն:

— Ութսունվեց տարեկանից հետո,— ասում էր նա,— այլևս ավելորդ է ապրելը:

Եվ ուրախությամբ ու ամենայն մանրամասնությամբ թվարկում էր, թե ինչ պիտի անեինք իրենից հետո, սկսած զգեստից, սր արդեն ընտրել էր... բայց մենք երբեք թույլ չէինք տալիս, որ շարունակի:

Ես բավական դժվարությամբ պարտադրեցի նրան իր գեղեցիկ տունը:

Այն դժվարին ժամանակներից ի վեր նրա սրտում վախկար վաղվա օրվա նկատմամբ և իր համար տուն գնելու գաղափարը համարում էր «խենթություն, որին ինքը համաձայն չէր»:

Ստիպված եղանք ամառանոցից վերադառնալու առիթով նրան կանգնեցնել փաստի առջև: Իր ունեցածը արդեն տեղափոխած-վերջացրած, նրան դիմավորեցի կատակով.

— Այս կամ ծերանոց: Ո՞րն ես ընտրում:

Մինչև օրս հիշում եմ, թե առաջին անգամ ինչպես մտավ իր հյուրասենյակը:

Դռան շեմին անշարժ կանդնած, շլացած աչքերը հածում էր անզլիական կահ-կարասուն, կրկնակի վարագույրներին, որոնք կրում էին նույն նախշերը, ինչ պատի պաստառները: Եե՞՞ հեռուստացույցը՝ իր ցածրիկ սեղանով, և պահարանի գույգ դռների հետևում տեղավորված իր դժվար տարիներին



առաջին կարի մեքենան, որից բաժանվել չցանկացավ, որպեսզի օգտագործեր միմիայն թոռնիկների համար:

Նա երկշոտ մտավ սենյակ, ոտքը զգույշ դնելով բրդյա հաստ գորգին, ասես վախենալով կեղտոտել:

Բաց լուսամուտից դիտեց իմ տունը, որ բարձրանում էր իր տան դիմաց: Մեզ միմյանցից բաժանում էր միայն հինավուրց ծառերով ու ծաղկանոցներով զարդարված մեր գեղեցիկ այգին: Յասամանի բուրմունքը լցվել էր սենյակ:

Լուռ եկավ նստեց բազմոցի եզրին: Նա տեր չէր դառնում իր սեփականությանը, կարծես հյուր լիներ: Հայացքը ինչ-որ անորոշ կետի հառած, պարզապես ասաց.

— Շատ կուզեի, որ հայրդ, Աննան ու Գայունեն տեսնեին այս ամենը:

Սեղմել էր շրթունքները, որ թաքցներ դրանց դողը: Եվս մի քիչ պայքարեց մեր հինգհոգիանոց ընտանիքի երջանկության կարոտի դեմ, ապա կոպերի տակ հավաքված մարգարտանման կաթիլները սկսեցին գլորվել այտերն ի վար, մայրական զուլալ արցունքներ, որոնք գեթ մի պահ մեզ ստիպում են հավատալ աստծուն:

Իմ արցունքները թաքցնելու համար թեքվեցի բազմաթիվ կոճակներով հեռախոսի վրա և սկսեցի բացատրել դրանց գործունեությունը:

— Երբ սեղմես № 1-ը, քեղ կպատասխանի սպասուհին: № 2-ը իմ գրասենյակն է, № 3-ը երեխաների հարկաբաժինն է, № 4-ը հյուրասրահն է, 5-ը, 6-ը, 7-ը...

Նա օրորում էր գլուխը, առանց ուշք դարձնելու արդիականության այդ հրաշքներին: Հանկարծ դեմքն ուրախությունից փայլեց, լսել էր երկու թոռնիկների ձայները, որոնք վազում էին իր տան կողմը՝ ճշալով.

— Մայրիկը եկել է:

Այդ օրվա յասամանի անուշահոտությունից այս երեկո օդում մնացել է լոկ շորացած ծաղիկների բույր:

Այս տան մեջ, որ նա անվանում էր քաղցրավենու տուփ, կարասիները պահպանել են իրենց թարմությունը, ասես երբեք չեն օգտագործվել: Միայն բազմոցի բարձերից մեկը՝ թեթևակի թեքված ու փոս ընկած, կրում է նրա ապրած տարիների հետքերը: Այդտեղ էր նստում՝ հիշատակների մեջ խճըճ-

ված, մինչև այն բաղձալի պահը, երբ թոռնիկները դարձելից վերադառնալով, գալիս էին համբուրելու նրան:

Տատիկի մոտից հետ էին գնում կարկանդակներով, որ հատուկ պատրաստվում էին իրենց համար. նուշովը թոռնիկի համար, ընկույզովը՝ թոռնուհու, որովհետև նա այդ էր սիրում:

Բայց օրվա երկու ամենակարևոր պահերը ճաշի արարողությունն էին, որին մասնակցում էինք բոլորս՝ մեծ տանը:

Գրասենյակիս լուսամտից նայում էի նրան, երբ անցնում էր պարտեզը՝ թոռնիկի թևը բռնած, որը տասնամյա տղայի հպարտությամբ կարծես ուզում էր ասել. «Քանի ես այստեղ եմ, Մայրիկին ոչինչ չի պատահի»:

Իր երիտասարդ ասպետով հպարտ, Մայրիկը առաջանում էր հանդարտ ու վեհաքայլ, գետինը թակող արծաթյա ծայրասլնակով ձեռնափայտի ութմով:

Եվ այդ անսովոր զույգը՝ սպիտակահեր ծեր տիկինը, մետաքսյա ծոպերով մեծ սև շալը ուսերին, հենված վարդագույն այտերով և կարճ տաբատով երեխային, դալարագեղ պարտեզում կազմում էր իսկական վարպետի կտավ: Կտավ, որ ամեն անգամ ըստ եղանակի փոխում էր լուսավորությունը:

Սա իմ ամենօրյա ռենուարյան բոպեն էր:

Լուսամտից դիտում էի Մայրիկի ծերանալը այդ կարճ ճամփի վրա, երբ ամեն անգամ ստիպված էր լինում կանգ առնել՝ շունչը տեղը բերելու համար:

Այդ կանգառները արդարացնելու համար նա սեթևեթանքով ձեռնափայտն սւղղում էր որևէ ծառի կատարի կամ պարտեզի որևէ ծաղկի, իբր ուզում է իմանալ թոռնիկի կարծիքը, և սա լայն շարժումներով պատասխանում էր:

Այնուհետև զույգը առաջ էր գնում մինչ հաջորդ վարդի կոկոնը, խոսելով, թե վարդը փշերը տնկում է իր թերթիկների հասունացման ու բացման համար, մինչդեռ Մայրիկը գաղտնի հանգստացնում էր սրտի արագացող տրոփյունը:

Այս երեկո լուսթյուն է, և մահն է թափառում սենյակում: Նրա բազմոցի մոտի կարմրափայտի տախտակը, որ դնում էր ծնկներին՝ խաղաթղթերը բացելու համար, այլևս չէր ծառայելու հաջողության որոշակի կանոններին, որոնք, խարդավանքների ուժով, այնքան հաջողություն էին գուշակում

մեր ծրագրերին, որոնք իրագործվում էին, լավագույն դեպքում, երկուսից մեկ անգամ:

Թափեքների վրա ալբոմների տրցակներ, տարիների ընթացքում հավաքված լուսանկարներից ու մասունքներից կազմված կյանքի այս գրքերը իրենց մեջ ամփոփում էին իմ ծերացման անձուկ հայելիները:

Ցածրիկ սեղանին դրված է նրա խոհարարական բաղադրատոմսերի տետրակը, որ ծածկված է խոհանոցապետի՝ հորս ձեռքով արված նշումներով, նա շարունակ փոփոխում էր ալյուրի, շաքարավազի, կարագի, թթխմորի չափերը, կամ դեն էր գցում ձվի սպիտակուցը՝ որոշակի բարեփոխումների համար:

Նրա համեստ գրադարանից, որտեղ «Աթալան», «Դարերի առասպելը», «Թշվառները», «Տիկին Բովարին» ապրում էին բարի հարևանությամբ, դուրս քաշեցի ժամանակի ընթացքում մաշված, կազմը պոկված մի գիրք՝ հայկական պոեզիայի ժողովածուն: Մտնում էր ցույց էին տալիս նրա սիրած բանաստեղծությունները: Գրքից ընկավ ներսում պահված մի նամակ: Մրարի վրա գրված էր. «Որդուս: Կարդալ իմ մահից հետո»:

Գրպանս դրեցի հետմահու այդ ձայնը, որ դեռ պիտի խոսեր ինձ հետ: Գիրքը բացվեց արնանման կարմիր գույնով ընդգծված մի քանի տողի վրա:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ  
Մենք ձեռքում ելանք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես ոռոտցիք վայրագ  
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

Կյանքի վախճանի այս գիշերը, որ լուսավորված էր լուսամփոփով, ինչպես խավարը ցրող լուսարձակ, դժվար տարիների իմ քաջ Մայրիկը այլևս չէր պայքարում: Խաղաղ սպասում էր այն վայրկյանին, երբ պիտի թողներ իր մարմինը, զնար անդրաշխարհ, և ես պիտի մնայի իմ կասկածներով, «մահից հետո ոչինչ չկա»-ներով, սառը մարմարյա շիրմաքարով և մոխրաբույր շոշոփյամբ:

Նոյի-սյուր-Սեն, 7 մայիսի 1985

Գրական-գեղարվեստական հրատարակություն  
ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅ  
Մայրիկ  
Վեպ

Литературно-художественное издание  
АНРИ ВЕРНОЙ  
Майрик  
Роман  
Ереван, издательство «Хорурдаин грох»  
(На армянском языке)

Խմբ. վարիչ՝ Վ. Հ. Բարայան  
Խմբ. Գ. Գ. Հովսեփյան  
Նկարիչ՝ Հ. Մ. Ծատուրյան  
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան  
Տեխ. խմբագիր՝ Ա. Հ. Սևոյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Օ. Ղ. Թերզյան

**ИГ 6511**

Հանձնված է շարվածքի 18. 03. 1989 թ.: Ստորագրված է տպագրության  
25. 10. 1989 թ.: Ծորմատ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝  
«Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 12,6 պայմ. տպ. մամ., 10,9  
հրատ. մամ.: Տպաքանակ՝ 30.000: Պատվեր՝ 1340: Գինը՝ 1 ու. 40 կոպ.:

«Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:

Издательство «Хорурдаин грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի  
պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ,  
Երևան-9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегадарты Госкомитета Арм. ССР  
по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9,  
ул. Теряна, 91.

1

2

3

4

5

6

7

8

9

1 n. 40 y.

УДК 62-50  
УДК 62-50